Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի Գործողության Ծրագիր

Ընդունված Բնակչության և զարգացման միջազգային համաժողովում, Կահիրե, 5-13 սեպտեմբեր, 1994թ.

Նշում

Այս հրատարակությունում ներառված նյութերը չեն պարունակում Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի կողմից արտահայտած ոչ մի կարծիք որևէ երկրի իրավական կարգավիճակի, տարածքի, քաղաքի կամ շրջանի, դրանց լիազորությունների կամ սահմանների սահմանազծման վերաբերյալ:

Այս գիրքը խմբագրվել և կոնսոլիդացվել է Միավորված ազգերի կազմակերպության փորձի և պահանջներին համապատասխան:

Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի Գործողության Ծրագիր

Մաս առաջին

Գլուխ	Բովանդակություն	Պարբերություն
I.	ՆԱԽԱԲԱՆ	1.1 - 1.15
II.	ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	
III.	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ	3.1 - 3.32
	Ա. Բնակչության և զարգացման ռազմավարությունների ինտեգրացում	3.1 - 3.9
	Բ. Բնակչություն, կայուն տնտեսական աճ և աղքատություն	3.10 - 3.22
	Գ. Բնակչություն և շրջակա միջավայր	3.23 - 3.32
IV.	ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱՆԱՆՑ ԴԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ	4.1 - 4.29
	Ա. Կանանց դերի հզորացում և նրանց կարգավիճակը	4.1 - 4.14
	Բ. Աղջիկ երեխա	4.15 - 4.23
	Գ. Տղամարդու պարտավորությունները և մասնակցությունը	4.24 - 4.29
V.	ԸՆՏԱՆԻՔԸ, ԴՐԱ ԴԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԿԱԶՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	5.1 - 5.13
	Ա. Ընտանիքի կազմի և կառուցվածքի բազմազանությունը	5.1 - 5.6
	Բ. Սոցիալ-տնտեսական աջակցությունը ընտանիքին	5.7 - 5.13
VI.	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	6.1 - 6.33
	Ա. Ծնելիություն, մահացություն և բնակչության աճի տեմպեր	6.1 - 6.5
	Բ. Երեխաներ և երիտասարդություն	6.6 - 6.15
	Գ. Տարեց մարդիկ	6.16 - 6.20
	Դ. Բնիկներ	6.21 - 6.27
	Ե. Հաշմանդամություն ունեցող անձինք	6.28 - 6.33
VII.	ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ	7.1 - 7.48
	Ա. Վերարտադրողական իրավունքներ և վերարտադրողական առողջություն	7.2 - 7.11
	Բ. Ընտանիքի պլանավորում	7.12 - 7.26
	Գ. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ և	7.27 - 7.33

	մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) կանխարգելում	
	Դ. Մարդու սեռականություն և գենդերային հարաբերություններ	7.34 - 7.40
	Ե. Դեռահասներ	7.41 - 7.48
VIII.	ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ և ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ	8.1 - 8.35
	Ա. Առաջնային բժշկական օգնություն և առողջապահության սեկտոր	8.1 - 8.11
	Բ. Երեխաների գոյատևում և առողջություն	8.12 - 8.18
	Գ. Կանանց առողջություն և անվտանգ մայրություն	8.19 - 8.27
	Դ. Մարդու իմունային անբավարարության վիրուս (ՄԻԱՎ) և Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՁԻԱՀ)	8.28 - 8.35
IX.	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ, ՈՒՐԲԱՆԻԶԱՑԻԱ և ՆԵՐՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ	9.1 - 9.25
	Ա. Բնակչության բաշխում և կայուն զարգացում	9.1 - 9.11
	Բ. Բնակչության աճ մեծ քաղաքային ագլոմերացիաներում	9.12 - 9.18
	Գ. Ներքին տարահանված մարդիկ	9.19 - 9.25
X.	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ	10.1 - 10.29
	Ա. Միջազգային միգրացիա և զարգացում	10.1 - 10.8
	Բ. Փաստաթղթային միգրանտներ	10.9 - 10.14
	Գ. Ոչ փաստաթղթային միգրանտներ	10.15 - 10.20
	Դ. Փախստականներ, անօթևաններ և տեղահանվածներ	10.21 - 10.29
XI.	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՈՒՄ և ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	11.1 - 11.26
	Ա. Կրթություն, բնակչություն և կայուն զարգացում	11.1 - 11.10
	Բ. Բնակչության տեղեկատվություն, կրթություն և հաղորդակցություն	11.11 - 11.26
XII.	ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԶԱՐԳԱՑՈՒՄ	12.1 - 12.26
	Ա. Հիմնական տվյալների հավաքագրում, վերլուծություն և տարածում	12.1 - 12.9
	Բ. Վերարտադրողական առողջության հետազոտություններ	12.10 - 12.18

	Գ. Սոցիալ և տնտեսական հետազոտություններ	12.19 - 12.26
XIII.	ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	13.1 - 13.24
	Ա. Ազգային քաղաքականություններ և գործողության նախագծեր	13.1 - 13.6
	Բ. Ծրագրի կառավարում և մարդկային ռեսուրսների զարգացում	13.7 - 13.10
	Գ. Միջոցների մոբիլիզացիա և տեղաբաշխում	13.11 - 13.24
XIV.	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14.1 - 14.18
	Ա. Գործընկերների պարտավորությունները զարգացման գործընթացում	14.1 - 14.7
	Բ. Դեպի նոր հանձնարարականներ բնակչության և զարգացման ֆինանսավորման հարցում	14.8 - 14.18
XV.	ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻ ՀԵՏ	15.1 - 15.20
	Ա. Տեղական, ազգային և միջազգային հասարակական կազմակերպություններ	15.1 - 15.12
	Բ. Մասնավոր սեկտոր	15.13 - 15.20
XVI.	ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16.1 - 16.29
	Ա. Գործունեություններ ազգային մակարդակում	16.1 - 16.13
	Բ. Ենթատարածաշրջանային և տարածաշրջանային գործունեություններ	16.14 - 16.17
	Գ. Գործունեություն միջազգային մակարդակում	16.18 - 16.29

Մաս երկրորդ
Գործողության Ծրագրի վերաբերյալ հայտարարություններ և վերապահումներ

I.	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ	
II.	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի Գործողության Ծրագիր

Գլուխ I

ՆԱԽԱԲԱՆ

1.1. 1994 թվականի Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովը տեղի է ունենում միջազգային զարգացման պատմության մեջ որոշիչ պահին: Բնակչության աճի, զարգացման և շրջակա միջավայրի փոխկապակցվածության գլոբալ ճանաչումը բոլոր երկրներում շարունակական զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճ ապահովող պատշաճ մակրո և սոցիալ-տնտեսական քաղաքականությունների ընդունման և մարդկային և ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման հնարավորությունները գլոբալ պրոբլեմներ լուծելու նպատակով երբևէ ավելի բարենպաստ չեն եղել: Համաշխարհային համայնքը երբևէ իր տրամադրության տակ չի ունեցել այսքան ռեսուրսներ, այսքան գիտելիք և այսպիսի զորեղ տեխնոլոգիաներ, որոնք, պատշաճ կերպով օգտագործելու դեպքում, կարող են խթանել կայուն տնտեսական աճ և շարունակական զարգացում: Այդուհանդերձ, միջոցների, գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը տեղական և միջազգային մակարդակներում պայմանավորված է քաղաքական և տնտեսական արգելքներով: Այդ իսկ պատճառով, չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում առկա են զգալի ռեսուրսներ, դրանց օգտագործման հնարավորությունը սոցիալապես անաչառ և էկոլոգիապես ընդունելի զարգացման նպատակով լինում է շատ սահմանափակ:

1.2. Վերջին երկու տասնամյակների ընթացքում աշխարհը մեծ փոփոխությունների է ենթարկվել: Ազգային և միջազգային ջանքերի շնորհիվ բազմաթիվ կարևոր բնագավառներում զգալի առաջխաղացում է նկատվել մարդու բարեկեցության համար: Ինչևէ, զարգացող երկրները դեռ բախվում են տնտեսական դժվարությունների և անբարենպաստ միջազգային տնտեսական միջավայրի հետ, իսկ բացարձակ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը շատ երկրներում բարձրացել է: Աշխարհով մեկ շատ հիմնական միջոցներ, որոնց շնորհիվ ապագա սերունդները պետք է ապահովեն իրենց գոյատևումը և բարօրությունը, սպառվում են և ուժեղանում է շրջակա միջավայրի հետընթացը, կապված արտադրության և սպառման անկայուն համակարգերի, բնակչության աննախադեպ աճի, սփռվող և կայուն աղքատության, սոցիալական և տնտեսական անհավասարության հետ: Էկոլոգիական պրոբլեմները, ինչպիսիք են կլիմայի գլոբալ փոփոխությունները, մեծապես կախված են արտադրության և սպառման անկայունության հետ, գումարվում են ապագա սերունդների բարօրության վտանգներին: Երևան է գալիս գլոբալ համաձայնություն մեծացող միջազգային համագործակցության անհրաժեշտության վերաբերյալ՝ կապված բնակչության կայուն զարգացման հետ, որի նախագիծը ներկայացված է օրակարգի 21(1) կետում: Այս պարագայում մեծ ձեռքբերումների ենք հասել, սակայն դեռ շատ անելիք կա այս բնագավառում:

1.3. Աշխարհի բնակչությունը ներկայումս կազմում է 5.6 միլիարդ մարդ: Չնայած բնակչության քանակի աճի տեմպը անկում է ապրում, բացարձակ աճի ցուցանիշները

ավելանում են՝ ներկայումս գերազանցելով տարեկան 86 միլիոն մարդ ցուցանիշը: Բնակչության տարեկան աճը մինչև 2015թ հավանաբար կմնա 86 միլիոնից բարձր: (2)

1.4. Այս ճգնաժամային տասնամյակի մնացած 6 տարիների ընթացքում աշխարհի ժողովրդագրական իրավիճակի զարգացման ուղղվածությունը կախված կլինի աշխարհի ազգերի գործունեությունից կամ անգործությունից: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումների՝ հաշվարկված բնակչության աճի ցածր, միջին և բարձր ցուցանիշների օգտագործմամբ, բնակչության թիվը 20 տարի հետո կկազմի 7.1 միլիարդ մարդ (ցածր տեմպեր), 7.5 միլիարդ մարդ (միջին տեմպեր) և 7.8 միլիարդ մարդ (բարձր տեմպեր): Այնպիսի կարճ ժամանակահատվածում, ինչպիսին է 20 տարին, բնակչության թվի տարբերությունը կկազմի 720 միլիոն մարդ, որը գերազանցում է ներկայիս Աֆրիկա մայրցամաքի բնակչության թիվը: Ավելի երկարատև ժամանակահատվածի կանխատեսումները ավելի զգալի տարբերություններ են ցուցադրում: Մինչև 2050թ Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումներով բնակչության թիվը կտատանվի 7.9 միլիարդից (ցածր տեմպեր) մինչև 9.8 միլիարդ (միջին տեմպեր) և 11.9 միլիարդ (բարձր տեմպեր): Քսան տարվա համար հաշվարկված ներկա Գործողությունների Ծրագրի մեջ ներառված նպատակների և խնդիրների լուծման իրականացումը, որի շրջանակներում հաշվի են առնվում համընդհանուր մարդկային հանրության բազմաթիվ ֆունդամենտալ խնդիրներ կապված բնակչության, կրթության և զարգացման հետ, կբերի այս ժամանակահատվածում և հետագայում աշխարհի ազգաբնակչության թվի ավելի դանդաղ աճի, ինչպես կանխատեսել է Միավորված ազգերի կազմակերպությունը:

1.5. Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովը մեկուսացված միջոցառում չէ: Դրա Գործողությունների նախագիծը կառուցվում է մի շարք միջազգային համաձայնությունների վրա և զարգացել է 1974թ Բուխարեստում կայացած Համաշխարհային ազգաբնակչության համաժողովից(3) և 1984թ. Մեխիկոյում կայացած Ազգաբնակչության միջազգային համաժողովից (4) հետո՝ ազգաբնակչության, կայուն տնտեսական աճի և զարգացման, կանանց կրթության, տնտեսական կարգավիճակի և նրանց դերի բարելավման հիմնահարցերը վերանայելու նպատակով: 1994թ. Կոնֆերանսին հատուկ վերագրվել էր ավելի լայն մանդատ զարգացման հիմնախնդիրների պարագայում, քան նախորդ Ազգաբնակչության համաժողովներին, ինչը արտացոլվում է նրանով, որ առկա է աճող ըմբռնումն այն փաստի, որ բնակչությունը, աղքատությունը, արտադրության և սպառման համակարգերը և շրջակա միջավայրը այնքան սերտ են փոխկապակցված, որ չեն կարող դիտարկվել մեկը մյուսից մեկուսացված:

1.6. Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովը հետևում է և իրականացվում է հիմնվելով վերջերս կայացած այլ կարևոր միջազգային միջոցառումների վրա, և դրա առաջարկությունները պետք է հաստատեն, հաշվի առնեն և հիմնված լինեն ներքոհիշյալների շրջանակներում ընդունված առաջարկությունների վրա.

(ա) Միավորված ազգերի կազմակերպության կանանց տասնամյակի՝ Հավասարություն, Զարգացում և Խաղաղություն, նվաճումների վերաքննության և գնահատելու Համաշխարհային համաժողով, կայացած 1985թ.Նայրոբիում:(5)

(բ) Երեխաների համաշխարհային համաժողով, կայացած 1990թ. Նյու Յորքում:(6)

(գ) Շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ Միավորված ազգերի համաժողով, կայացած 1992թ. Ռիո դե Ժանեյրիոյում:(7)

(դ) Սնուցման վերաբերյալ միջազգային համաժողով, կայացած 1992թ. Հռոմում:(8)

(ե) Մարդու իրավունքների համաշխարհային համաժողով, կայացած 1993թ. Վիեննայում:(9)

(զ) Աշխարհի բնիկ ժողովուրդների միջազգային տարի, 1993,(10) որից կսկսվի Աշխարհի բնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակը:(11)

(է) Զարգացող փոքր կղզի-նահանգների կայուն զարգացման գլոբալ համաժողով, կայացած 1994թ. Բարբադոսում:(12)

(ը) Ընտանիքի միջազգային տարի, 1994:(13)

1.7. Կոնֆերանսի արդյունքները սերտորեն կապված են և զգալի ազդեցություն կունենան 1995 և 1996թթ կայանալիք մեծ համաժողովների վրա, ինչպես օրինակ Հասարակական զարգացման համաշխարհային գագաթնաժողովը, (14) Կանանց հարցերով չորրորդ համաշխարհային համաժողովը՝ հավասարությանը, զարգացմանը և խաղաղությանն ուղղված գործողություններ(15), Մարդկանց բնակեցվածության (Հաբիթաթ II) հարցով Միավորված ազգերի երկրորդ համաժողովը, «Զարգացման օրակարգի» մշակումը, ինչպես նաև Միավորված ազգերի 50-րդ տարեդարձի տոնակատարությանը նվիրված միջոցառումները: Ակնկալվում է, որ նշված միջոցառումները ավելի կհզորացնեն 1994թ. համաժողովի կոչը՝ ավելացնել մարդկության մեջ ներդրվող միջոցները, ինչպես նաև նոր գործողությունների ծրագիր կմշակեն կանանց դերի բարելավման հիմնահարցի վերաբերյալ՝ երաշխավորելու նրանց լիակատար մասնակցությունը իրենց համայնքների հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր մակարդակներում:

1.8. Անցյալ 20 տարիների ընթացքում աշխարհի շատ մասերում տեղի են ունեցել նկատելի ժողովրդագրական, հասարակական, տնտեսական, էկոլոգիական և քաղաքական փոփոխություններ: Շատ երկրներ էական առաջընթացի են հասել վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության բարելավման և ծնելիության ցուցանիշների նվազեցման հարցերում, ինչպես նաև մահացության ցուցանիշների նվազեցման և կրթության ու եկամուտների մակարդակների բարձրացման հարցերում, ներառյալ կանանց կրթական և տնտեսական կարգավիճակի բարելավումը: Չնայած այն փաստին, որ անցյալ երկու տասնամյակներում նվաճումներ են եղել այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են հակաբեղմնավորիչների օգտագործման ընդարձակումը, մայրական մահացության նվազեցված ցուցանիշները, իրականացված կայուն զարգացման նախագծերն ու ծրագրերը և կրթական ծրագրերը լավատեսության հիմք են տրամադրում ներկա Գործողությունների նախագծի իրականացման հարցում, որ անելիքներ դեռ շատ կան: Ընդհանուր առմամբ աշխարհում տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք նոր լայն հնարավորություններ են ընձեռում ազգաբնակչության և զարգացման հիմնահարցերի լուծման շրջանակներում: Դրանցից առավել նշանակալից են աշխարհի ժողովուրդների և դրանց առաջնորդների վերաբերմունքի շարժերը կապված վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման և բնակչության թվի աճի

հետ, որը մասնավորապես հանգեցրել է վերարտադրողական առողջության նոր համընդհանուր կոնցեպցիայի առաջացմանը՝ ներառելով ընտանիքի պլանավորումը և սեռական առողջությունը, սահմանված ներկա Գործողությունների նախագծում: Առավել հուսադրող միտում է բնակչությանը և ընտանիքի պլանավորմանը վերաբերող ծրագրերի նկատմամբ շատ կառավարությունների քաղաքական ուշադրության կենտրոնացումը: Կապված դրա հետ, կայուն տնտեսական աճը շարունակական զարգացման պարագայում կընդլայնի սպասվելիք բնակչության աճի ճնշումներին դիմակայելու երկրների ունակությունը, կթեթևացնի բնակչության բնական շարժման անցումային փուլը այն երկրներում, որտեղ անհավասարակշռություն է նկատվում ժողովրդագրական ցուցանիշների և հասարակական, տնտեսական և էկոլոգիական նպատակների միջև, և թույլ կտա հավասարակշռել այդ ցուցանիշները և ապահովել զարգացման բնագավառում ժողովրդագրական ասպեկտների հաշվառումը քաղաքականության այլ ուղղությունների շրջանակում:

1.9. Ներկա Գործողությունների նախագծում ներկայացված բնակչության և զարգացման նպատակներն ու գործողությունները միասնորեն կնպաստեն բնակչության և կայուն տնտեսական աճի ճգնաժամային խնդիրների լուծմանը շարունակական զարգացման համակարգի ներքո: Դրա համար անհրաժեշտ կլինի ապահովել ռեսուրսների պատշաճ մոբիլիզացում ազգային և միջազգային մակարդակներում, ինչպես նաև հատկացնել նոր և լրացուցիչ ռեսուրսներ զարգացող երկրներին, օգտագործելով ֆինանսավորման բոլոր առկա մեխանիզմները, ներառելով երկկողմ, բազմակողմ և մասնավոր աղբյուրները: Ֆինանսական միջոցները անհրաժեշտ են նաև ազգային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և միջազգային հաստատությունների հնարավորությունների ընդլայնման նպատակով ներկա Գործողությունների ծրագրի իրականացման համար:

1.10. Առաջիկա երկու տասնամյակների ընթացքում ակնկալվում է գյուղական բնակչության տեղափոխություն դեպի քաղաքային տարածքներ, ինչպես նաև միջերկրային միգրացիայի շարունակվող բարձր մակարդակ: Այս միգրացիաները աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների կարևոր մաս են կազմում, և լուրջ խնդիրներ են առաջացնում: Այդ իսկ պատճառով այս հարցերը պետք է լուծվեն առավել նպատակաուղղված բնակչության և զարգացման քաղաքականությունների ներքո: Ակնկալվում է, որ մինչև 2015թ. աշխարհի բնակչության գրեթե 56 տոկոսը ապրելու է քաղաքային վայրերում, համեմատած 1994թ. 45 տոկոսի հետ: Ուրբանիզացիայի առավել արագ տեմպերը կդիտվեն զարգացող երկրներում: 1975թ. զարգացող երկրների քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմում էր 26 տոկոս, իսկ 2015թ., համաձայն կանխատեսումներին, այն կհասնի 50 տոկոսի: Այս փոփոխությունը ահռելի ճնշում կցուցաբերի հասարակական ծառայությունների գոյություն ունեցող համակարգերի և ենթակառուցվածքների վրա, որոնցից շատերը չեն հասցնի ընդարձակվել այն տեմպերով, որով՝ ուրբանիզացիան:

1.11. Առաջիկա 5,10 և 20 տարիների ընթացքում անհրաժեշտ կլինեն ակտիվ ջանքեր բնակչության և զարգացման միջոցառումների բոլոր ուղղություններում, հաշվի առնելով այն, որ աշխարհի բնակչության աճի շուտափույթ ստաբիլիզացումը որոշիչ ներդրում կունենա կայուն զարգացման հասնելու հարցում: Ներկա Գործողությունների ծրագիրը շոշափում է բոլոր այս և այլ հարցեր՝ համընդհանուր և համակարգված մոտեցմամբ, որոնք կոչված են բարելավելու աշխարհի ներկայիս բնակչության և նրա ապագա սերունդների

կյանքի որակը: Գործունեության հետ կապված որոշումները ընդունվում են համաձայնության և միջազգային համագործակցության ոգով՝ նկատի առնելով այն, որ ժողովրդագրական քաղաքականության մշակումն ու իրականացումը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի պատասխանատվությունը և պետք է հաշվի առնվեն առանձին երկրի տնտեսական, հասարակական և էկոլոգիական տարբերությունները, հաշվի նստելով այդ երկրի ժողովրդի տարբեր կրոնական և էթիկական արժեքների, մշակութային բարքերի և փիլիսոփայական համոզմունքների հետ, ինչպես նաև աշխարհի բնակչության համընդհանուր, բայց տարբերակված պատասխանատվությունը ընդհանուր ապագայի համար:

1.12. Ներկա Գործողությունների ծրագրում միջազգային հանրությանն առաջարկվում է բնակչության և զարգացման նպատակների համալիր, ինչպես նաև փոխկապակցված և այդ նպատակներին չափազանց կարևոր քանակական և որակական նպատակներ: Այդ նպատակների շարքում են՝ կայուն տնտեսական աճը հաստատուն զարգացման պարագայում, կրթությունը, մասնավորապես աղջիկների համար, գենդերային հավասարությունը և արդարությունը, նորածնային, մանկական և մայրական մահացության նվազեցումը, վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության ապահովումը, ներառելով ընտանիքի պլանավորումը և սեռական առողջությունը:

1.13. Ներկա Գործողությունների ծրագրի քանակական և որակական նպատակներից շատերին հասնելու նպատակով անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ, որոնցից շատերը կարելի է մոբիլիզացնել անհատական, ազգային և միջազգային մակարդակներում գերակայությունների տեղաբաշխման դեպքում: Ինչևէ, պահանջվող գործողություններից ոչ մեկը, և նույնիսկ բոլորը միասին վերցրած, ծախսատար չեն համեմատած ներկա համաշխարհային զարգացման կամ ռազմական ծախսերի հետ: Որոշ միջոցառումների իրականացման համար կպահանջվեն շատ քիչ, կամ նույնիսկ ընդհանրապես չեն պահանջվի լրացուցիչ ֆինանսական միջոցներ, քանի որ դրանք ենթադրում են կենսակերպի, հասարակական նորմերի կամ կառավարական քաղաքականությունների փոփոխություններ, որոնց կարելի է հասնել և ապահովել հասարակության գործունեության ակտիվացման և քաղաքական ղեկավարման միջոցով: Սակայն այն գործողությունների իրականացման համար, որոնք հավելյալ ծախսեր կպահանջեն առաջիկա երկու տասնամյակում, անհրաժեշտ կլինեն լրացուցիչ պարտավորություններ, թե զարգացող և թե զարգացած երկրների կողմից: Դա մասնավորապես դժվար կլինի որոշ զարգացող երկրների և որոշ անցումային տնտեսություն ունեցող երկրների համար, որոնք ունեն միջոցների խիստ անբավարարություն:

1.14. Ներկա Գործողությունների ծրագիրը ընդունում է, որ հետագա 20 տարիների ընթացքում կառավարությունները չեն կարողանա ինքնուրույն հասնել Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովի նպատակներին: Հասարակության բոլոր անդամներն ու խմբերը ունեն այդ նպատակներին հասնելու համար ակտիվ դեր կատարելու իրավունք և, առավել ևս, պատասխանատվություն: Հասարակական կազմակերպությունների կողմից ցուցաբերվող աճող հետաքրքրությունը, որն ի հայտ եկավ Շրջակա միջավայրի և զարգացման Միավորված ազգերի կազմակերպության համաժողովի և Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի ժամանակ և այժմ ներկա քննարկումների ընթացքում արտացոլում է կարևոր և, շատ դեպքերում, արագ

փոփոխություն կառավարությունների և բազմազան հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների միջև: Գրեթե բոլոր երկրներում նոր համագործակցություններ են ստեղծվում կառավարության, գործարարների, հասարակական կազմակերպությունների և համայնքային խմբերի միջև, որը իր ուղղակի և դրական ազդեցությունը կունենա ներկա Գործողությունների նախագծի իրականացման վրա:

1.15. Ստեղծելով որևէ նոր միջազգային նորմեր մարդու իրավունքների բնագավառում, Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովը հաստատում է ժողովրդագրական ծրագրերի առումով մարդու իրավունքների նորմերի համընդհանուր ընդունված ստանդարտները: Այն նաև քսաներորդ դարի միջազգային հանրության համար ներկայացնում է վերջին հնարավորությունը միացյալ ուժերով զբաղվելու բնակչության և զարգացման փոխկապակցվածության և վճռական խնդիրներով: Գործողությունների Ծրագրի հետ կապված անհրաժեշտ կլինի մշակել մեկ ընդհանուր հիմք՝ լիովին հաշվի առնելով տարբեր կրոնական և էթիկական արժեքները և բարքերը: Այս համաժողովի ազդեցությունը կգնահատվի այստեղ լիազորված պարտավորությունների ամրությամբ և դրանց հետագա իրականացման համար անհրաժեշտ գործողություններով, որպես աշխարհի բոլոր երկրների և ժողովուրդների նոր գլոբալ համագործակցության մաս, հիմնված ընդհանուր, սակայան տարբերակված պատասխանատվության զգացումով մեկը մյուսի և, ընդհանրապես, մեր մոլորակի հանդեպ:

Գլուխ II

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Գործողությունների նախագծի մեջ տեղ գտած առաջարկությունների իրականացումը յուրաքանչյուր երկրի գերագույն իրավունքն է և երաշխավորվում է ազգային օրենքներով և զարգացման գերակայություններով, ամբողջությամբ հաշվի առնելով բազմազան կրոնական և էթնիկական արժեքները և ժողովուրդների մշակութային պատմությունը, ինչպես նաև համընդհանուր ճանաչված մարդու իրավուքները:

Աշխարհի ժողովուրդների կյանքի որակի բարելավման հարցում կարևոր նշանակություն ունի Միավորված ազգերի կազմակերպության կանոնակարգով ուղղորդվող և միասնական գործունեության ոգով միջազգային համագործակցությունը և համընդհանուր միասնականությունը:

Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովի մանդատի և դրա համընդհանուր թեմայի իրականացման ժամանակ ազգաբնակչության, կայուն տնտեսական աճի և հաստատուն զարգացման փոխկապակցվածության և դրանց քննարկումների ժամանակ մասնակիցները ուղղորդվում և շարունակելու են ուղղորդվել հետևյալ սկզբունքների համակարգով.

Սկզբունք 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և ունեն հավասար իրավունքներ ու արժանապատվություն: Յուրաքանչյուր ոք ունի ապրելու, ազատության և անձնական անվտանգության իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայով հաստատված իրավունքներ, առանց որևէ տարբերություն դնելու ռասայի, գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ գաղափարների, ազգային կամ հասարակական ծագման, ունեցվածքի, ծննդյան կամ այլ կարգավիճակների միջև:

Սկզբունք 2

Մարդկային գոյությունը կայուն զարգացման առանցքային կենտրոնն է: Մարդիկ ունեն բնության հետ ներդաշնակ առողջ և արդյունավետ կյանքի իրավունք: Մարդիկ հանդիսանում են ցանկացած ազգության ամենակարևոր և արժեքավոր աղբյուրը: Երկրները պետք է երաշխավորեն, որ բոլոր անհատները հնարավորություն ունենան ամբողջությամբ իրականացնել իրենց պոտենցիալը: Նրանք ունեն իրենց և իրենց ընտանիքների համար պատշաճ կյանքի ստանդարտ ունենալու իրավունք, ներառյալ պատշաճ սննդի, հագուստի, բնակության պայմանների, ջրի և սանիտարական այլ հնարավորություններ:

Սկզբունք 3

Զարգանալու իրավունքը համընդհանուր և անքակտելի իրավունք է և հանդիսանում է մարդու հիմնական իրավունքների անբաժանելի մասը, ուր մարդը հանդիսանում է զարգացման կենտրոնական սուբյեկտը: Չնայած որ զարգացումը նպաստում է մարդու բոլոր իրավունքների կիրառմանը, զարգացման բացակայությունը չի կարող արդարացում հանդիսանալ միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների սահմանափակման համար: Զարգացման իրավունքը պետք է իրականացվի, որպեսզի ներկա և ապագա սերունդների ազգաբնակչության, զարգացման և շրջակա միջավայրի հետ կապված կարիքները անաչառ կերպով բավարարվեն:

Սկզբունք 4

Գենդերային հավասարության և արդարության խրախուսումը, կանանց դերի բարելավումը, կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացումը, կանանց հնարավորություն ընձեռելը ինքնուրույն ղեկավարելու մանկածնման գործընթացը հանդիսանում են բնակչությանը և զարգացմանը վերաբերվող ծրագրերի հիմնաքարերը: Կանանց և աղջիկների մարդու իրավունքները կազմում են համընդհանուր մարդու իրավունքների անփոփոխ, բաղկացուցիչ և անբաժանելի մասը: Միջազգային հանրության գերակա նպատակներն են՝ ապահովել կանանց հավասար մասնակցությունը քաղաքային, մշակութային, տնտեսական, քաղաքական ու հասարակական կյանքին ազգային, ռեգիոնալ և միջազգային մակարդակներում, ինչպես նաև սեռական հողի վրա ցանկացած խտրականության վերացումը:

Սկզբունք 5

Բնակչությանն առնչվող նպատակները և քաղաքականությունները հանդիսանում են մշակութային, տնտեսական և սոցիալական զարգացման անբաժանելի մասերը, որոնց հիմնական նպատակն է բարելավել մարդկային կյանքի որակը:

Սկզբունք 6

Կայուն զարգացումը որպես մարդկային բարեկեցության հասնելու միջոց ներկայում և ապագայում բոլոր մարդկանց միջև արդար բաշխվածության համար պահանջում է, որպեսզի բնակչության, ռեսուրսների, շրջակա միջավայրի և զարգացման փոխկապակցվածությունը ամբողջովին ճանաչվի, պատշաճ կերպով կառավարվի և հանգեցնի ներդաշնակ ու դինամիկ հավասարակշռվածության: Կայուն զարգացման և մարդկանց կյանքի որակի բարելավման հասնելու նպատակով երկրները պետք է նվազեցնեն ու վերացնեն արտադրության և սպառման անկայուն համակարգերը, խրախուսեն համապատասխան քաղաքականությունների կիրառումը ներկա սերունդների կարիքների բավարարման և նրանց կյանքի որակը բարելավելու համար՝ առանց ապագա սերունդներին իրենց կարիքները հոգալու հնարավորություններից զրկելու:

Սկզբունք 7

Բոլոր պետությունները և մարդիկ պետք է համագործակցեն կայուն զարգացման անբաժանելի մաս հանդիսացող աղքատության նվազեցման էական խնդիրների շուրջ, կյանքի մակարդակներում տարբերությունների նվազեցման և աշխարհի ազգաբնակչության մեծամասնության կարիքները ավելի լավ բավարարելու համար: Հատուկ ուշադրություն կհատկացվի զարգացող երկրների, հատկապես առավել քիչ զարգացած երկրների հատուկ իրավիճակին և կարիքներին:

Սկզբունք 8

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օգտվելու ֆիզիկական և մտավոր առողջության ամենաբարձր հասանելիության չափանիշներից: Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները երաշխավորելու համար տղամարդկանց և կանանց հավասարության գաղափարի վրա հիմնված համընդհանուր հասանելիությունը դեպի առողջապահական ծառայություններ, ներառելով այն ծառայությունները, որոնք վերաբերում են ընտանիքի պլանավորմանը և սեռական առողջությանը: Վերարտադրողական առողջության ապահովման ծրագրերի իրականացման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել լայնածավալ ծառայությունների տրամադրումը՝ առանց որևէ ստիպողականության: Բոլոր զույգերը և անհատները իրավունք ունեն ազատորեն և պատասխանատվությամբ որոշելու իրենց երեխաների քանակը, միջակայքը և ունենալու տեղեկություն, կրթություն և դրանք իրականացնելու միջոցներ:

Սկզբունք 9

Ընտանիքը հասարակության հիմնական մասնիկն է և որպես այդպիսին, պետք է ուժեղացվի: Այն կոչված է ստանալու բազմակողմանի պաշտպանություն և աջակցություն: Տարբեր մշակութային, քաղաքական և սոցիալական համակարգերում գոյություն ունեն

ընտանիքի տարբեր ձևեր: Ամուսնությունը պետք է կնքվի ամուսինների ազատ համաձայնության պայմաններում, և այրն ու կինը պետք է լինեն հավասարազոր զուգընկերներ:

Սկզբունք 10

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, որը պետք է ուղղված լինի մարդկային ռեսուրսների լիակատար զարգացմանը, մարդկանց արժանապատվությանը և պոտենցիալին, հատուկ ուշադրության դարձնելով կանանց և երեխաներին: Կրթությունը պետք է ձևավորվի և ուժեղացնի հարգանքը մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հանդեպ, ներառելով ազգաբնակչությանը և զարգացմանը վերաբերող ազատությունները: Երեխայի բարձրագույն շահերի ապահովումը պետք է լինի այն մարդկանց ուղղորդող սկզբունքը, ովքեր պատասխանատու են նրա կրթության և դաստիարակության համար: Այդ պատասխանատվությունը առաջին հերթին ընկած է ծնողների վրա:

Սկզբունք 11

Բոլոր կառավարությունները և ընտանիքները մաքսիմալ հնարավոր ուշադրության պետք է արժանացնեն երեխաներին: Երեխան իրավունք ունի իր բարեկեցության համար անհրաժեշտ կյանքի բավարար չափանիշների, առողջության և կրթության: Երեխան իրավունք ունի խնամքի, դաստիարակության և ծնողների, ընտանիքների և հասարակության աջակցության, ինչպես նաև իրավունքն ունի ազատ լինելու բոլոր տեսակի ֆիզիկական և մտավոր բռնություններից, վիրավորանքից կամ դաժան վերաբերմունքից, արհամարհանքից կամ արհամարհական վերաբերմունքից, չարաշահումներից կամ շահագործումից, որն իր մեջ ներառում է թրաֆիքինգը, սեռական բռնությունը կամ մարմնի օրգանների վաճառքը:

Սկզբունք 12

Օրինական միգրանտներ ընդունող երկրները պարտավոր են հատուկ վերաբերմունք և համապատասխան սոցիալական ապահովության ծառայություններ տրամադրել միգրանտներին, նրանց ընտանիքներին, ապահովել նրանց ֆիզիկական ապահովությունը և անվտանգությունը՝ հաշվի առնելով երկրների, մասնավորապես զարգացող երկրների, հատուկ պայմաններն ու կարիքները, ձգտելով հասնել այդ նպատակներին և ապահովել այդ պահանջների կատարումը կապված անօրինական միգրանտների հետ՝ համաձայն համապատասխան կոնվենցիաների և միջազգային պայմանագրերի ու փաստաթղթերի դրույթների: Երկրները պետք է երաշխավորեն, որ բոլոր միգրանտները օգտվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ընդունված մարդու իրավունքներից:

Սկզբունք 13

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հետապնդումից ապաստան հայցելու և ստանալու այլ երկրներում: Պետությունները պարտավորություններ ունեն փախստականների հետ կապված, որոնք նշված են Փախստականների կարգավիճակի Ժնևյան կոնվենցիայում և դրա 1967թ.արձանագրությունում:

Սկզբունք 14

Բնիկ ժողովուրդների ազգաբնակչության և զարգացման կարիքները քննարկելիս պետությունները պարտավոր են ճանաչելու և աջակցելու նրանց ինքնությունը, մշակույթը, հետաքրքրությունները և հնարավորություն ընձեռել նրանց լիովին մասնակցելու երկրի տնտեսական,քաղաքական և սոցիալական կյանքին, հատկապես այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է նրանց առողջությանը, կրթությանը և բարեկեցությանը:

Սկզբունք 15

Հաստատուն զարգացման ներքո կայուն տնտեսական աճը և սոցիալական զարգացումը պահանջում է, որպեսզի աճը տեղի ունենա լայն հիմքով և ապահովի հավասար հնարավորություններ բոլոր մարդկանց համար: Բոլոր երկրները պետք է ճանաչեն իրենց համընդհանուր, բայց դիֆերենցված պատասխանատվությունները: Զարգացած երկրները հաստատում են այն պատասխանատվությունը, որն իրենք կրում են միջազգային մակարդակներում իրականացվող կայուն զարգացման կոնտեքստում, և այդ երկրները պետք է շարունակեն բարելավել իրենց ջանքերը՝ նպաստելու կայուն տնտեսական աճին և անհավասարակշռությունների հարթեցմանը այնպիսի կարգով, որից կօգտվեն բոլոր երկրները և մասնավորապես՝ զարգացողները:

Գլուխ III

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Բնակչության և զարգացման ռազմավարությունների ինտեգրացում

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

3.1. Բոլոր մարդկանց, համայնքների և երկրների առօրյա գործունեությունը փոխկապակցված է ժողովրդագրական փոփոխությունների, բնական ռեսուրսների օգտագործման ծավալի և մակարդակների, շրջակա միջավայրի վիճակի և տնտեսական և հասարակական զարգացման տեմպերի ու որակի հետ: Գոյություն ունի ընդհանուր համաձայնություն այն հարցի շուրջ, որ հարատև լայնածավալ աղքատությունը, ինչպես նաև լուրջ հասարակական և գենդերային անհավասարություններն իրենց զգալի ազդեցությունն ունեն, և իրենք էլ իրենց հերթին ազդվում են այնպիսի ժողովրդագրական չափանիշներով, ինչպիսիք են բնական աճը, կառուցվածքը և բաշխումը: Համընդհանուր ընդունված է նաև այն, որ արտադրության և սպառման անկայուն համակարգերը նպաստում են բնական ռեսուրսների վատնմանը և շրջակա միջավայրի հետընթացին, ինչպես նաև հասարակական անհավասարությունների և աղքատության ամրապնդմանը՝ ունենալով ժողովրդագրական տվյալների վրա իրենց ազդեցությունը՝ վերոհիշյալ բոլոր հետևանքներով: Ռիո դե Ժանեյրիոյում կայացած Շրջակա միջավայրի և զարգացման դեկլարացիան և 21-րդ դարի համար հաստատված օրակարգը, որը միջազգային հանրության կողմից ընդունվեց Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի և զարգացման համաժողովի ժամանակ, կոչ է անում ստեղծել զարգացման այնպիսի մոդելներ, որոնք արտացոլում են այս և այլ միջսեկտորային կապերի նոր ըմբռնումը: Հաշվի առնելով ներկա գործունեության երկարատև իրականությունն ու

հետևանքները, զարգացման խնդիրը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է բավարարել ներկա սերունդների կարիքները և բարելավել նրանց կյանքի որակը առանց ապագա սերունդներին իրենց կարիքները հոգալու հնարավորություններից զրկելու:

3.2. Չնայած վերջին ժամանակներում շատ երկրներում գրանցվող ծնելիության ցուցանիշների անկմանը, բնակչության քանակական մեծ աճը անխուսափելի է: Երիտասարդ տարիքային համակարգի հետ կապված բազմաթիվ երկրներում առաջիկա տասնամյակներում կնկատվի բացարձակ թվով բնակչության զգալի աճ: Բնակչության տեղաշարժերը երկրի ներսում և երկրների միջև, ներառելով քաղաքների արագ մեծացումը և բնակչության անհավասարակշռված տարածաշրջանային բաշխումները, կշարունակվեն և կշատանան ապագայում:

3.3. Կայուն զարգացումը իր հերթին ենթադրում է արտադրության և սպառման երկարաժամկետ կայունություն, կապված այնպիսի տնտեսական գործունեությունների հետ, ինչպիսիք են արդյունաբերությունը, էներգետիկան, գյուղատնտեսությունը, անտառաբուծությունը, ձկնորսությունը, տրանսպորտը, տուրիզմը և ենթակառուցվածքները՝ էկոլոգիայի տեսակետից բնական ռեսուրսների օգտագործումը օպտիմալացնելու և դրանց վատնումը նվազեցնելու նպատակով: Մակրոտնտեսական և սեկտորային քաղաքականությունները, ինչևէ, հազվադեպ են իրենց ուշադրությունը բևեռել ժողովրդագրական համոզմունքներին: Ժողովրդագրական հիմնահարցերի ներառումը տնտեսական և զարգացման ռազմավարությունների մեջ ոչ միայն կարագացնի կայուն զարգացման տեմպերը և աղքատության նվազեցումը, այլև կնպաստի ազգաբնակչության բնագավառում նպատակների իրականացմանը և բնակչության կենսակերպի բարելավմանը:

Նպատակներ

3.4. Նպատակներն են՝ ամբողջովին ինտեգրել ազգաբնակչության հարցերը.

(ա) Բոլոր մակարդակների և բոլոր տարածաշրջանների զարգացման ռազմավարություններում, ծրագրերում, զարգացման խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման և ռեսուրսների բաշխման հարցերում նպատակ ունենալ բավարարել ներկա և ապագա սերունդների պահանջները, բարելավել կյանքի որակը.

(բ) Զարգացման պլանավորման բոլոր ասպեկտներում, նպաստել հասարակական արդարության խրախուսմանը և աղքատության վերացմանը հաստատուն զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճի միջոցով:

Գործողություններ

3.5. Միջազգային, տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում ժողովրդագրությանը վերաբերող հարցերը պետք է ինտեգրվեն հաստատուն զարգացմանը վերաբերող բոլոր քաղաքականությունների, ծրագրերի ձևավորման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացի մեջ: Զարգացման ռազմավարությունները պետք է իրատեսորեն արտացոլեն ազգաբնակչության դինամիկայի, ինչպես նաև

արտադրության և սպառման համակարգերի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցություններն ու հետևանքները:

3.6. Կառավարությունները, միջազգային գործակալությունները, հասարակական կազմակերպությունները և մնացած շահագրգռված կողմերը պետք է իրենց զարգացման ռազմավարությունները իրականացնեն ժամանակին և պարբերաբար վերանայումներ կատարեն՝ գնահատելու համար զարգացման և շրջակա միջավայրի պահպանման ծրագրերում բնակչության ինտեգրման առաջընթացը, հաշվի առնելով արտադրության և սպառման համակարգերը, որոնք նպատակ ունեն ձևավորել կայուն զարգացման և կյանքի որակի բարելավման հետ համաձայնեցված ժողովրդագրական միտումներ:

3.7. Կառավարությունները պետք է ստեղծեն անհրաժեշտ ներքին մեխանիզմներ և բարենպաստ միջավայր հասարակության բոլոր մակարդակներում, որպեսզի ապահովեն ժողովրդագրական գործոնների պատշաճ հաշվառումը տնտեսական, էկոլոգիական և հասարակական քաղաքականությունների ու ծրագրերի համար պատասխանատու բոլոր համապատասխան կառավարական գործակալությունների որոշումների ընդունման և ադմինիստրատիվ գործընթացներում:

3.8. Ազգաբնակչության և զարգացման ինտեգրված ռազմավարությունների բնագավառում քաղաքական նվիրվածությունը պետք է ամրապնդվի կրթական և տեղեկատվական ծրագրերով, ինչպես նաև կառավարությունների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր սեկտորի համագործակցությանը հատկացվող ռեսուրսների ավելացման միջոցով, ինչպես նաև գիտելիքների բազայի բարելավմամբ՝ հետազոտությունների և ազգային ու տեղական հնարավորությունների օգտագործման միջոցով:

3.9. Կայուն զարգացման և մարդկանց կյանքի որակի բարելավման հասնելու համար կառավարությունները պետք է նվազեցնեն և վերացնեն արտադրության և սպառման անկայուն համակարգերը և խրախուսեն պատշաճ ժողովրդագրական քաղաքականությունների իրականացումը: Զարգացած երկրները պետք է ստանձնեն հաստատուն սպառման համակարգերի ձևավորման և թափոնների էֆեկտիվ վերացման առաջնահերթությունը:

Բ. Բնակչությունը, կայուն տնտեսական աճը և աղքատությունը

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

3.10. Ազգաբնակչության ոլորտի ռազմավարությունները պետք է, հնարավորության դեպքում, հաշվի առնեն միջազգային ֆորումների ժամանակ ընդունված զարգացման ոլորտի ռազմավարությունները, մասնավորապես՝Միավորված ազգերի կազմակերպության զարգացման տասնամյակի չորրորդ միջազգային զարգացման ռազմավարությունը,(16) 1990-ական թվականների համար մշակված Առավել քիչ զարգացած երկրների գործունեության նախագիծը,(17) Առևտրին և զարգացմանը նվիրված Միավորված ազգերի համաժողովի ութերորդ նստաշրջանը և բազմակողմ առևտրային բանակցությունների Ուրուգվայյան շրջանը, 21-րդ դարի օրակարգը և 1990-

ականներին Աֆրիկայի զարգացմանը նվիրված Միավորված Ազգերի Կազմակերպության նոր օրակարգը(18):

3.11. Չնայած որ վերջին տարիների ընթացքում նկատվող ձեռքբերումները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կյանքի տևողության երկարացումը և ազգային արտադրանքը, զգալի են և հուսադրող, այնուամենայնիվ, դրանք լիովին չեն արտացոլում հարյուր միլիոնավոր տղամարդկանց, կանանց, դեռահասների և երեխաների կյանքի իրական պատկերը: Ի հեճուկս տասնամյակներ շարունակվող ջանքերի, մեծացել է թե հարուստների և աղքատների միջև եղած անդունդը, և թե' երկրների միջև առկա անհավասարությունները: Պահպանվում են լուրջ տնտեսական, սոցիալական, գենդերային և այլ անհավասարությունները, որոնք իրենցից արգելք են ներկայացնում հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքի որակը բարելավելու ջանքերի համար: Աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը կազմում է մոտավորապես 1 միլիարդ մարդ և այդ թիվը դեռ շարունակում է ավելանալ:

3.12. Բոլոր երկրները, և մասնավորապես զարգացող երկրներում, որտեղ տեղի է ունենալու համաշխարհային բնակչության թվի գրեթե ամբողջ աճը, անցումային տնտեսություն ունեցող երկրները բախվում են աճող դժվարությունների հետ՝ փորձելով հաստատուն կերպով բարելավել իրենց բնակչության կյանքի որակը: Շատ զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներ հանդիպում են զարգացման ոլորտի լուրջ արգելքների, որոնց թվին կարելի է դասել առևտրի բնագավառի անհավասարակշռությունների պահպանումը, համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերի դանդաղումը, պարտքերի վերադարձման շարունակվող խնդիրը և տեխնոլոգիաների ու արտաքին աջակցության պահանջմունքի առկայությունը: Հաստատուն զարգացմանը և աղքատության վերացմանը հասնելու միջոցները պետք է հիմնված լինեն մակրոտնտեսական քաղաքականությունների վրա, որոնց նպատակն է ստեղծել համապատասխան միջազգային տնտեսական պայմաններ, ինչպես նաև արդյունավետ կառավարման, ազգային քաղաքականությունների և արդյունավետ ազգային հաստատությունների ապահովում:

3.13. Լայնատարած աղքատությունը շարունակում է մնալ զարգացման բնագավառում գործողությունների իրականացման հիմնական խնդիրը: Աղքատությունը հաճախ ուղեկցվում է գործազրկությամբ, թերսնուցմամբ, անգրագիտությամբ, կանանց ցածր կարգավիճակով, էկոլոգիական ռիսկերով, հասարակական և առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիությամբ, ներառյալ վերարտադրողական առողջության ծառայությունները, որն իր հերթին ներառում է ընտանիքի պլանավորումը: Այս բոլոր գործոնները նպաստում են ծնելիության, հիվանդացության և մահացության ցուցանիշների մակարդակների բարձրացմանը, ինչպես նաև ցածր տնտեսական արտադրողականությանը: Աղքատությունը նաև սերտորեն կապված է բնակչության անհավասարաչափ տարածքային բաշխման հետ, այնպիսի բնական ռեսուրսների անարդար օգտագործման և ոչ ռացիոնալ բաշխման հետ, ինչպիսիք են հողն ու ջուրը, ինչպես նաև շրջակա միջավայրի լուրջ դեգրադացիայի հետ:

3.14. Բնակչության աճը դանդաղեցնելու, աղքատությունը նվազեցնելու, տնտեսական առաջընթացի հասնելու, շրջակա միջավայրի պաշտպանությունը բարելավելու, արտադրության և սպառման համակարգերի անհավասարաչափությունը նվազեցնելու

ջանքերը ունեն միմյանց լրացնող բնույթ: Բնակչության աճի տեմպերը նվազեցնելու շնորհիվ շատ երկրներում հնարավորություն ստեղծվեց ժամանակ շահել ապագայում բնակչության աճին հարմարվելու համար: Դա մեծացրեց այդ երկրների հնարավորությունները պայքարելու աղքատության դեմ, պաշտպանելու և վերականգնելու շրջակա միջավայրը և հիմք նախապատրաստելու հետագայում կայուն զարգացման համար: Նույնիսկ մեկ տասնամյակի միջակայքը ծնելիության հաստատուն մակարդակների անցման դեպքում կարող է ունենալ էական դրական ազդեցություն կյանքի որակի վրա:

3.15. Հաստատուն զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճը չափազանց կարևոր նշանակություն ունի աղքատության վերացման հարցում: Աղքատության վերացումը կնպաստի բնակչության աճի դանդաղեցմանը և վաղ շրջաններում ժողովրդագրական կայունացման ապահովմանը: Ներդրումները աղքատության նվազեցման հարցում կարևոր դեր ունեցող բնագավառներում, ինչպես օրինակ բազային կրթությունը, սանիտարական համակարգը, խմելու ջուրը, բնակարանով ապահովվածությունը, սննդի բավարար պաշարները և արագ տեմպերով աճող բնակչության ենթակառուցվածքները շարունակում են բեռ հանդիսանալ արդեն իսկ թույլ տնտեսությունների համար և սահմանափակում են զարգացման հնարավորությունները: Երիտասարդության չափազանց մեծ մասնաբաժինը, լինելով բնական աճի արագ տեմպերի արդյունք, պահանջում է ավելի ու ավելի մեծ քանակությամբ մարդկանց համար աշխատատեղերի ստեղծում՝ արդեն առկա համատարած գործազրկության պայմաններում: Ապագայում արագ կաճի նաև պետության աջակցության կարիք ունեցող ծեր մարդկանց թիվը: Հաստատուն զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճը անհրաժեշտ կլինի այդ ճնշումներին դիմակայելու համար:

Նպատակը

3.16. Նպատակը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է բարձրացնել ամբողջ բնակչության կյանքի որակը համապատասխան ժողովրդագրական և զարգացման ծրագրերի իրականացման միջոցով, որոնք ուղղված կլինեն աղքատության վերացմանը, հաստատուն զարգացման և հաստատուն արտադրանքի ու սպառման կոնտեքստում կայուն տնտեսական աճի հաստատմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը և մարդու բոլոր իրավունքների պաշտպանման երաշխավորմանը, ներառելով զարգացման իրավունքը, որը հանդիսանում է մարդու հիմնական իրավունքների համընդհանուր և անբաժան մասը: Հատուկ ուշադրության պետք է արժանացնել զարգացած և զարգացող երկրներում ապրող աղքատ կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Քանի որ կանայք հանդիսանում են բնակչության առավել աղքատ մասը և միևնույն ժամանակ զարգացման գործընթացի որոշիչ դերակատարներն են, ապա աղքատության վերացմանը, հաստատուն զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճի խրախուսմանը, ընտանիքի պլանավորման և վերարտադրողական առողջության ծառայությունների որակի բարելավմանը և առկա ռեսուրսների, արտադրանքի ու սպառման միջև հավասարակշռությանը հասնելու նախապայմանն է կանանց հանդեպ հասարակական, մշակութային, քաղաքական և տնտեսական խտրականության վերացումը:

Գործողություններ

3.17. Բոլոր մակարդակներում ազգաբնակչությանը և զարգացմանը վերաբերող ռազմավարություններում և բյուջեներում, համաձայն ազգային քաղաքականությունների, գերակայությունը պետք է տրվի մարդկային ռեսուրսների մեջ ներդրումների կատարմանը՝ իրականացնելով այնպիսի ծրագրեր, որոնք զարգացող և անցումային շրջանում գտնվող տնտեսություններով երկրներում հաստատուն զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճի խրախուսման նպատակով ուղղված են տեղեկատվությանը, կրթությանը, հմտությունների զարգացմանը, պաշտոնական և ոչ պաշտոնական աշխատատեղերի ապահովմանը և բարձր մակարդակի ընդհանուր և վերարտադրողական առողջության բժշկական ծառայությունների՝ ներառյալ ընտանիքի պլանավորումը և սեռական առողջությունը, հասանելիության բարելավումը:

3.18. Աշխատանքի տեղավորման ոլորտում առկա անհավասարությունները և արգելքները կանանց համար պետք է վերացվեն և պետք է խրախուսվի, ամրապնդվի նրանց մասնակցությունը քաղաքականության մշակման և իրականացման հարցերում, ինչպես նաև վերացվի անհասանելիությունն ու արգելքները դեպի արդյունաբերական ռեսուրսներ, հողի սեփականություն և գույքի ժառանգման իրավունք: Կառավարությունները, հասարակական կազմակերպությունները և մասնավոր սեկտորը պետք է ներդրումներ իրականացնեն, օժանդակեն, վերահսկեն և գնահատեն կանանց և աղջիկների կրթության և մասնագիտական զարգացման մակարդակը, ինչպես նաև կանանց իրավաբանական և տնտեսական իրավունքները վերարտադրողական և սեռական առողջության բոլոր ոլորտներում, ներառելով ընտանիքի պլանավորումը, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի արդյունավետ կերպով օժանդակելու տնտեսական աճին և հաստատուն զարգացմանը:

3.19. Կառավարությունները, հասարակական կազմակերպությունները և մասնավոր սեկտորը պետք է առաջնային տեղ հատկացնեն հասարակության բոլոր լքված անդամների կարիքների բավարարմանը, տեղեկատվության, կրթության, աշխատանքի տեղավորման, հմտությունների ձեռքբերման և պատշաճ վերարտադրողական առողջության ծառայությունների ոլորտներում նրանց համար հնարավորությունների ընդլայնմանը:(19)

3.20. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ պարենի, սնուցման և գյուղատնտեսական ոլորտներում իրականացվող քաղաքականությունների և ծրագրերի ամրապնդման, ինչպես նաև արդար առևտրային հարաբերությունների ձևավորման հարցում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բոլոր մակարդակներում սննդի անվտանգության հարցերի ձևավորմանն ու ուժեղացմանը:

3.21. Կառավարությունները և մասնավոր սեկտորը պետք է աջակցեն արտադրական, գյուղատնտեսական և ծառայությունների մատուցման ոլորտներում աշխատատեղերի ստեղծման գործընթացին՝ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելով էկոլոգիապես ռացիոնալ հիմքերով առևտրի ընդլայնման և ներդրումների իրականացման միջոցով, մարդկային ռեսուրսների զարգացման մեջ ավելի մեծ ներդրումներ կատարելով և դեմոկրատական հաստատությունների ստեղծման և լավ կառավարում ապահովելու միջոցով: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի նոր աշխատատեղերի ստեղծմանը արդյունաբերության արդյունավետ և, անհրաժեշտության դեպքում, աշխատատար

ոլորտների և ժամանակակից տեխնոլոգիաների փոխանցումը խրախուսող քաղաքականությունների միջոցով:

3.22. Միջազգային հանրությունը պետք է շարունակի աջակցել բարենպաստ տնտեսական միջավայրի ստեղծմանը, մասնավորապես զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում, խրախուսելով աղքատությունը վերացնելու և հաստատուն զարգացման կոնտեքստում կայուն տնտեսական աճի հասնելու նրանց ջանքերը: Համապատասխան միջազգային համաձայնությունների և պարտավորությունների կոնտեքստում ջանքեր պետք է գործադրվեն աջակցելու այդ երկրներին, մասնավորապես զարգացող երկրներին, բաց, արդար, անվտանգ, խտրականությունից զերծ և կանխատեսելի միջազգային առևտրային համակարգի ձևավորման, ուղղակի միջազգային ներդրումների խրախուսման, պարտքերի բեռը նվազեցնելու հարցերում, տրամադրելու նոր և լրացուցիչ ֆինանսական միջոցներ բոլոր առկա ֆինանսավորման աղբյուրներից և մեխանիզմներից, ներառելով բազմակողմանի, երկկողմանի և մասնավոր աղբյուրները, այդ թվում զիջողական և նվիրատվական պայմաններով, համաձայն հիմնավորված և արդար չափանիշների, ապահովելով հասանելիություն դեպի տեխնոլոգիաներ և երաշխավորելով այն, որ համակարգային հարմարեցման ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ հաշվի առնվեն սոցիալ և էկոլոգիական խնդիրները:

Գ. Բնակչություն և շրջակա միջավայր

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

3.23. Շրջակա միջավայրի զարգացման Միավորված ազգերի համաժողովի ժամանակ միջազգային հանրությունը համաձայնության եկավ 21-րդ դարի օրակարգի, համաժողովի այլ արդյունքների և այլ միջազգային էկոլոգիական համաձայնությունների մեջ տեղ գտած շրջակա միջավայրի և զարգացման ինտեգրմանն ուղղված նպատակների ու գործողությունների հարցերի շուրջ: 21-րդ դարի օրակարգը մշակվել էր ի պատասխան շրջակա միջավայրի և զարգացման մեծ խնդիրների, ներառելով կայուն զարգացման տնտեսական ու սոցիալական այնպիսի կողմերը, ինչպիսիք են աղքատությունը, սպառումը, ժողովրդագրական դինամիկան, մարդու առողջության պահպանումը և մարդկանց բնակեցվածությունը, ինչպես նաև ի պատասխան շրջակա միջավայրի ու բնական միջոցների լայնածավալ խնդիրների: 21-րդ դարի օրակարգը Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովի վրա է թողնում ազգաբնակչության և շրջակա միջավայրի փոխկապակցվածության հետագա քննարկումները:

3.24. Աճող ազգաբնակչության հիմնական կարիքների բավարարումը կախված է առողջ շրջակա միջավայրի պահպանումից: Այս մարդկային ասպեկտներին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ազգաբնակչության թվի աճի ներքո կայուն զարգացման ոլորտում համապարփակ քաղաքականությունների մշակման ժամանակ:

3.25. Որոշ ոլորտներում աղքատության և որոշ բնագավառներում հասանելիության սահմանափակման հետ զուգակցված ժողովրդագրական գործոնները, և ավելորդ սպառումն ու վատնող արտադրության համակարգերը մյուս ոլորտներում, պատճառ են հանդիսանում կամ խորացնում են շրջակա միջավայրի դեգրադացիայի և ռեսուրսների վատնման խնդիրները և սույնով արգելակում են հաստատուն զարգացումը:

3.26. Շրջակա միջավայրի ճնշումը կարող է բնակչության թվի արագ աճի, բաշխման և միգրացիայի պատճառ լինել, մասնավորապես էկոլոգիապես խոցելի էկոհամակարգերում: Ուրբանիզացիան և գյուղական վայրերի զարգացման անհրաժեշտությունը չընդունող քաղաքականությունները նույնպես կարող են էկոլոգիական խնդիրների պատճառ դառնալ:

3.27. Հաստատուն զարգացման կնոտեքստում ազգաբնակչության ոլորտում արդյունավետ քաղաքականությունների իրականացումը, ներառյալ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ծրագրերը, պահանջում են տարբեր մասնակիցների ընդգրկման նոր ձևեր բոլոր մակարդակների քաղաքականության մշակման գործընթացներում:

Նպատակներ

3.28. Համաձայն 21-րդ դարի օրակարգի՝ նպատակներն են.

(ա) Երաշխավորել ազգաբնակչության, շրջակա միջավայրի և աղքատության վերացման գործոնների ինտեգրումը կայուն զարգացման ոլորտի քաղաքականություններում, նախագծերում և ծրագրերում,

(բ) Նվազեցնել, թե անկայուն արտադրանքի և սպառման համակարգերը, թե շրջակա միջավայրի վրա ժողովրդագրական գործոնների ազդեցությունը՝ բավարարելու ներկա սերունդների կարիքները, բարելավելու նրանց կյանքի որակը առանց ապագա սերունդներին իրենց կարիքները հոգալու հնարավորություններից զրկելու:

Գործողություններ

3.29. Համապատասխան մակարդակների կառավարությունները, միջազգային հանրության և տարածաշրջանային ու ենթատարածաշրջանային կազմակերպությունների աջակցությամբ, պետք է մշակվեն և իրականացվեն 21-րդ դարի օրակարգում, Կոնֆերանսի այլ արդյունքներում և շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող այլ միջազգային համաձայնություններում ընդունված նպատակներին սատարող ազգաբնակչության քաղաքականություններ և ծրագրեր՝ հաշվի առնելով այդ համաձայնություններում արտացոլված համընդհանուր, բայց տարբերակված պարտավորությունները: Համաձայն 21-րդ դարի օրակարգում առաջ քաշված համակարգի և գերակայությունների, ազգաբնակչության և շրջակա միջավայրի ինտեգրմանը հասնելու համար առաջարկվում է հետևյալ գործողությունների իրականացումը:

(ա) Հաշվի առնել ժողովրդագրական գործոնները շրջակա միջավայրի ազդեցությունների գնահատման և այլ որոշումներ ընդունող գործընթացների ընթացքում՝ ուղղված հաստատուն զարգացման նվաճմանը:

(բ) Միջոցներ ձեռնարկել աղքատության վերացման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով հեռավոր վայրերում ապրող աղքատ և փխրուն էկոհամակարգերում ապրողների եկամուտների ձևավորման և աշխատանքի տեղավորման ռազմավարությունները,

(գ) Օգտագործել ժողովրդագրական տվյալները հաստատուն ռեսուրսների կառավարման համար, մասնավորապես էկոլոգիապես փխրուն համակարգերում:

(դ) Փոխակերպել անկայուն արտադրանքի և սպառման համակարգերը՝ ռեսուրսների հաստատուն օգտագործմանը և շրջակա միջավայրի դեգրադացիայի կանխարգելմանը ուղղված տնտեսական, իրավական և վարչական միջոցների շնորհիվ:

(ե) Իրականացնել ապագայում ազգաբնակչության թվի անխուսափելի ավելացման և բնակչության համակենտրոնացման ու բաշխման փոփոխությունների էկոլոգիական ազդեցություններին ուղղված քաղաքականություններ, հատկապես էկոլոգիապես խոցելի վայրերում և քաղաքային ագլոմերացիաներում:

3.30. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, որպեսզի բոլոր համապատասխան խմբերը, և հատկապես կանայք, լիակատար մասնակցություն ունենան ազգաբնակչության և շրջակա միջավայրի հարցերում որոշումների ընդունման բոլոր մակարդակներում՝ բնական ռեսուրսների կայուն կառավարմանը հասնելու նպատակով:

3.31. Անհրաժեշտ է իրականացնել հետազոտություններ ազգաբնակչության, արտադրության և սպառման, շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների և մարդու առողջության միջև եղած կապերը ուսումնասիրելու նպատակով, որպես ուղեցույց հաստատուն զարգացմանը հասնելու համար:

3.32. Կառավարությունները, հասարակական կազմակերպությունները և մասնավոր սեկտորը պետք է աջակցեն հասարակության տեղեկացվածության բարձրացմանը և վերջինիս կողմից վերոհիշյալ գործողությունների իրականացման կարևորության գիտակցմանը:

Գլուխ IV

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱՆԱՆՑ ԴԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Ա. Կանանց դերի հզորացում և նրանց կարգավիճակը

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

4.1. Կանանց դերի հզորացումը և նրանց անկախության ապահովումը, նրանց քաղաքական, հասարակական, տնտեսական և առողջապահական կարգավիճակի բարելավումը իրենով իսկ արդեն շատ կարևոր նպատակ է: Բացի այդ, դա կարևոր է հաստատուն զարգացման հասնելու համար: Անհրաժեշտ է կանանց և տղամարդկանց լիակատար մասնակցությունն ու համագործակցությունը արդյունաբերական և վերարտադրողական կյանքում, ներառելով երեխաների խնամքի և սնուցման, ինչպես նաև տնային տնտեսության վարման հավասար պարտավորությունները: Աշխարհի բոլոր մասերում կանայք բախվում են իրենց կյանքին, առողջությանը և բարեկեցությանը սպառնացող վտանգների, որի պատճառն այն է, որ նրանք զերբեռնված են աշխատանքով և չունեն իշխանություն ու ազդեցություն: Աշխարհի տարածաշրջաններից շատերում

կանայք, համեմատած տղամարդկանց հետ, ավելի քիչ են ստանում ֆորմալ կրթություն, բայց միևնույն ժամանակ իրենց գիտելիքները, ունակությունները և իրենց առջև կայացած խնդիրների լուծման ունակությունները հաճախ մնում են չճանաչված: Իրավունքների և հնարավորությունների այդպիսի հարաբերակցությունը, որը թույլ չի տալիս կանանց ունենալ առողջ և լիարժեք կյանք, բնորոշ է հասարակական փոխհարաբերությունների շատ մակարդակներին՝ սկսած անձնական և վերջացրած ընդհանուր առմամբ հասարակական հարաբերություններով: Իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ են այնպիսի քաղաքականություններ և ծրագրային միջոցներ, որոնք կբարելավեն կանանց համար հուսալի ապրուստի և տնտեսական միջոցների հասանելիությունը, կնվազեցնեն նրանց գերբեռնվածությունը տնային աշխատանքով, կվերացնեն իրավական արգելքները դեպի հասարակական կյանքի մասնակցություն և կբարձրացնեն հասարակական տեղեկացվածության մակարդակը՝ կրթության արդյունավետ ծրագրերի և զանգվածային լրատվամիջոցներով: Բացի այդ, կանանց կարգավիճակի բարելավումը նաև նպաստում է կյանքի բոլոր բնագավառների մակարդակներում որոշումներ ընդունելու հնարավորությունների ընդլայնմանը, մասնավորապես սեռական և վերարտադրողականության ոլորտներում: Իր հերթին, դա անհրաժեշտ է ազգաբնակչության ոլորտի ծրագրերի երկարատև հաջողության համար: Փորձը ցույց է տալիս, որ ազգաբնակչության և զարգացման ծրագրերը առավել հաջողության են հասնում այն դեպքում, երբ միաժամանակ իրականացվում են միջոցներ կանանց կարգավիճակի բարելավման նպատակով:

4.2. Կրթությունը կանանց գիտելիքներ, հմտություններ և ինքնավստահություն փոխանցելու ամենաարդյունավետ միջոցն է, որը անհրաժեշտ է զարգացման գործընթացում նրանց լիակատար մասնակցության համար: Ավելի քան 40 տարի առաջ, Մարդու իրավունքների հանրընդհանուր հռչակագիրը հայտարարեց, որ «յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»: 1990թ. Թաիլանդի Ջոմտյեն քաղաքում կայացած Կրթություն բոլորի համար համաշխարհային համաժողովին մասնակցող կառավարությունները հայտարարեցին բազային կրթության հասանելիության նպատակին հասնելու իրենց պատրաստակամության մասին: Սակայն չնայած ամբողջ աշխարհի երկրների կողմից գործադրված զգալի ջանքերին, որը գնահատելիորեն ընդարձակել էր դեպի բազային կրթություն հասանելիությունը, աշխարհում դեռ կա մոտավորապես 960 միլիոն անգրագետ մարդ, որի 2/3 -ը կանայք են: Աշխարհի մեծահասակների մեկ երրորդը, մեծամասսամբ՝ կանայք, զրկված են տպագրված գիտելիքի, նոր հմտությունների կամ նոր տեխնոլոգիաների հասանելիությունից, որոնք կբարելավեին նրանց կյանքի որակը և կօգնեին նրանց մշակել սոցիալ և տնտեսական ռեֆորմներ և հարմարվել դրանց իրականացմանը: 130 միլիոն երեխա չի ընդգրկված տարրական դպրոցի համակարգում և նրանց 70% աղջիկներ են:

Նպատակներ

4.3. Նպատակներն են.

(ա) Հասնել տղամարդկանց և կանանց ներդաշնակ համագործակցության վրա հիմնված հավասարության և արդարության, թույլատրել կանանց լիովին իրագործել իրենց պոտենցիալը:

(բ) Երաշխավորել կանանց ներդրումի ընդլայնումը կայուն զարգացման գործընթացում, ապահովելով նրանց լիակատար ներգրավվածությունը քաղաքականության մշակման և որոշումների ընդունման հարցերի բոլոր մակարդակներում, մասնակցությունը արտադրության, աշխատանքի տեղավորման, եկամուտների ձևավորման գործունեության, կրթության, առողջապահության, գիտության և տեխնոլոգիաների, սպորտի, մշակույթի ու բնակչության հետ առնչվող այլ ոլորտներում, որպես ակտիվ որոշում ընդունողներ, մասնակիցներ և շահառուներ:

(գ) Երաշխավորել, որ կանայք, ինչպես և տղամարդիկ, ստանան իրենց հիմնական մարդկային կարիքները հոգալու համար անհրաժեշտ կրթություն և օգտվեն իրենց մարդու իրավունքներից:

Գործողություններ

4.4. Երկրները պետք է հնարավորինս շուտ միջոցներ ձեռնարկեն կանանց դերի բարելավման և տղամարդկանց և կանանց միջև անհավասարությունների վերացման հարցերում՝

(ա) ստեղծելով յուրաքանչյուր համայնքի և հասարակության քաղաքական գործընթացի և հասարակական կյանքի բոլոր մակարդակներում կանանց հավասարազոր մասնակցության և արդար ներկայացուցչության մեխանիզմներ՝ հնարավորություն տալով կանանց արտահայտվել իրենց մտածմունքների ու կարիքների մասին,

(բ) խրախուսելով կանանց պոտենցիալի կայացմանը կրթության, մասնագիտական պատրաստվածության և աշխատելու միջոցով, գերագույն ուշադրություն դարձնելով կանանց աղքատության, անգրագիտության և վատառողջության հարցերին,

(գ) վերացնելով կանանց դեմ խտրականությանը նպաստող բոլոր սովորույթները, աջակցելով նրանց իրավունքների ամրապնդման և կիրառման հարցերում, ներառելով վերարտադրողական առողջության և սեռականությանը առնչվող իրավունքները,

(դ) ընդունելով համապատասխան միջոցներ ընդլայնելու համար ոչ ավանդական զբաղմունքներից կանանց եկամուտ ստանալու հնարավորությունները, հասնելու տնտեսական ինքնուրույնության և երաշխավորելու կանանց հավասարազոր իրավունքները աշխատաշուկայում և սոցիալական ապահովության համակարգում,

(ե) վերացնելով կանանց նկատմամբ բռնությունը,

(զ) վերացնելով կանանց նկատմամբ գործատուների կողմից կիրառվող խտրականության սովորությունները, ինչպես օրինակ՝ հակաբեղմնավորիչների օգտագործման կամ հղիության կարգավիճակի ապացույցների պահանջումը,

(է) օրենքների, կարգավորումների և համապատասխան այլ միջոցառումների միջոցով երաշխավորել կանանց համար հնարավորություններ՝ համատեղելու երեխաների խնամքի, կրծքով կերակրելու և դաստիարակության հարցերը աշխատանքային գործունեության հետ,

4.5. Բոլոր երկրները պետք է ավելի ակտիվ ջանքեր գործադրեն իրենց կողմից մասնակցություն ունեցող ազգային օրենքների և միջազգային կոնվենցիաների ժողովրդականացման, իրականացման և կիրառման ապահովման համար, ինչպես օրինակ՝ Կանանց հանդեպ բոլոր տեսակի խտրականության վերացման կոնվենցիան, որը կանանց պաշտպանում է բոլոր տեսակի տնտեսական խտրականությունից և սեռական ոտնձգություններից, ինչպես նաև ամբողջությամբ իրականացնել 1993թ.կայացած Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի ժամանակ ընդունված Կանանց դեմ բռնության վերացման հռչակագիրը և Վիեննայի հռչակագիրը ու Գործողության ծրագիրը: Երկրները պարտավորվում են ստորագրել, հաստատել և իրականացնել կանանց իրավունքները պաշտպանող բոլոր գոյություն ունեցող համաձայնագրերը:

4.6. Բոլոր մակարդակների կառավարությունները պետք է երաշխավորեն, որ տղամարդկանց հետ հավասար իրավունքներով կանայք կարող են գնել, տիրել ու վաճառել հող և սեփականություն, ինչպես նաև վարկեր ստանալ, պայմանագրեր կնքել իրենց անունով և օգտվել ժառանգության իրենց իրավունքներից:

4.7. Կառավարություններին ու գործատուներին կոչ է արվում վերացնել գենդերային խտրականությունը աշխատանքի ընդունելուց, աշխատավարձ ձևակերպելուց, նպաստներ տրամադրելուց, մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելուց և աշխատանքի երաշխիքներ տրամադրելուց՝ եկամուտների հարցերում գենդերային տարբերությունները վերացնելու նպատակով:

4.8. Կառավարությունները, միջազգային և հասարակական կազմակերպությունները պետք է երաշխավորեն, որ իրենց կադրային քաղաքականությունը և պրակտիկան համաձայնեցված է երկու սեռերի հավասարազոր ներկայացման սկզբունքով, հատկապես ղեկավարման և քաղաքականության մշակման մակարդակներում, ազգաբնակչությանը և զարգացմանը վերաբերող բոլոր ծրագրերում: Անհրաժեշտ է մշակել հատուկ գործընթացներ և ցուցանիշներ զարգացման ծրագրերում կանանց դերը հաշվի առնող վերլուծությունների և կանանց սոցիալական, տնտեսական և առողջապահական կարգավիճակի վրա դրանց ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև նրանց համար ռեսուրսների հասանելիությունը ապահովելու նպատակով:

4.9. Երկրները պետք է ձեռնարկեն ցանկացած միջոցներ՝ կանանց, դեռահասների և երեխաների նկատմամբ բոլոր տեսակի շահագործումը, դաժանությունը, ոտնձգությունը և բռնությունը վերացնելու համար: Դա ենթադրում է թե կանխարգելման միջոցառումները, և թե զոհերի ռեաբիլիտացիան: Երկրները պետք է արգելեն այնպիսի նվաստացնող սովորությունները, ինչպիսիք են կանանց, դեռահասների և երեխաների թրաֆիքինգը, մարմնավաճառության դրդելու ստիպողական շահագործումը, հատուկ ուշադրություն դարձնեն այդպիսի հանցագործությունների զոհ դարձած անձանց անվտանգությանը և իրավունքների պաշտպանմանը, ինչպես նաև այն կանանց, ովքեր կարող են դառնալ պոտենցիալ չարաշահումների զոհ, ինչպես օրինակ՝ միգրանտ կանայք, տնային ծառայող, աշխատող կանայք և աշակերտուհիները: Այս պարագայում անհրաժեշտ է ներդնել միջազգային երաշխիքներ և համագործակցության մեխանիզմներ՝ այդ միջոցառումների իրականացումը երաշխավորելու համար:

4.10. Երկրներին կոչ է արվում ճանաչել և դատապարտել բռնաբարությունների համակարգված պրակտիկայի և կանանց դեմ իրականացվող այլ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի տեսակները, որոնք գիտակցաբար օգտագործվում են որպես պատերազմի կամ էթնիկ մաքրման միջոց, և քայլեր ձեռնարկել երաշխավորելու լիակատար օժանդակություն այդպիսի բռնության զոհերի ֆիզիկական և մտավոր ռեաբիլիտացիայի համար:

4.11. Ընտանեկան առողջության և զարգացման բնագավառի այլ միջոցառումների մշակման ժամանակ պետք է հաշվի առնել կանանց ժամանակի պակասը կապված երեխաների դաստիարակության, տնային աշխատանքի և եկամուտի աղբյուր հանդիսացող գործունեության հետ: Անհրաժեշտ է կենտրոնացնել ուշադրությունը երեխաների դաստիարակության և տնային աշխատանքում տղամարդկանց մասնակցության վրա: Ավելի շատ միջոցներ է անհրաժեշտ ներդնել նվազեցնելու տնային պարտավորությունների բեռը, որոնց մեծ մասը ընկած է կանանց ուսերին: Ավելի մեծ ուշադրություն է պետք դարձնել այն բանին, թե ինչպես են շրջակա միջավայրի դեգրադացիայի բացասական հետևանքները և հողի օգտագործման բնույթի փոփոխությունները ազդում կանանց ժամանակի բաշխման վրա: Կանանց առողջության վրա չպետք է բացասական ազդեցություն ունենան այն պայմանները, որտեղ նրանք կատարում են իրենց տնային աշխատանքները:

4.12. Անհրաժեշտ է ձեռնարկել ցանկացած ջանքեր կանանց շահերը պաշտպանող համայնքային և ակտիվիստական խմբերի, հասարակական կազմակերպությունների ընդլայնման ու ամրապնդման համար: Այդպիսի խմբերը պետք է լինեն կանանց ազգային շարժումների ուշադրության կենտրոնում՝ ընդլայնելու համար նրանց տեղեկացվածությունը իրենց օրենսդրական իրավունքների ամբողջ համակարգում, ներառելով իրենց իրավունքները ընտանիքում և օժանդակել կանանց՝ ստեղծելու իրենց կազմակերպությունները այդ իրավունքների ապահովման համար:

4.13. Երկրներին խստորեն կոչ է արվում ընդունել օրենքներ և իրականացնել այնպիսի ծրագրեր և քաղաքականություններ, որոնք թույլ կտան երկու սեռերի աշխատողներին կազմակերպել իրենց ընտանեկան և աշխատանքային պարտականությունները ճկուն աշխատաժամերի միջոցով, ունենալու ծնողական արձակուրդ, հնարավորություն ունենալու երեխաներին թողնել մանկական ցերեկային խնամքի հաստատություններում, ունենալու ֆիզիոլոգիական արձակուրդ, աշխատող մայրերին երեխաներին կրծքով կերակրելու, առողջապահական ապահովագրություն և այլ նմանօրինակ մեխանիզմների հնարավորություններ: Նման իրավունքներ պետք է ունենան նաև ոչ ֆորմալ սեկտորում աշխատող անձինք:

4.14. Տարեց մարդկանց կարիքները հոգալուն ուղղված ծրագրերը պետք է հաշվի առնեն այն, որ տարեց մարդկանց մեծ մասնաբաժինը կազմում են տարեց կանայք և որ տարեց կանայք սովորաբար ունեն ավելի ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ, քան տարեց տղամարդիկ:

Բ. Աղջիկ երեխա

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

4.15. Քանի որ բոլոր հասարակություններում սեռի վրա հիմնված խտրականությունը սկսվում է կյանքի ամենավաղ շրջաններում, ապա առաջին անհրաժեշտ քայլը, որ կանայք կարողանան ի կատար ածել իրենց հնարավորությունները և զարգացման գործընթացում դառնան հավասարազոր անդամներ, հանդիսանում է աղջիկ երեխայի կյանքի որակի բարելավումը: Մի շարք երկրներում ապագա երեխայի սեռի որոշման սովորությունը, շատ փոքր տարիքի աղջիկների մահացության բարձր ցուցանիշները և տղաների հետ համեմատած աղջիկների ցածր ներգրավվածությունը դպրոցներում ենթադրում է, որ տղաների հանդեպ նախընտրելի վերաբերմունքը սահմանափակում է աղջիկների հասանելությունը դեպի սնունդ, կրթություն և առողջապահություն: Իրավիճակը հաճախ ավելի է խորանում պտղի սեռը որոշող տեխնոլոգիաների կիրառման ավելացմամբ, ինչի հետևանքով որոշ դեպքերում, երբ կինը իմանում է, որ աղջիկ է ունենալու, դիմում է աբորտի: Չափազանց կարևոր են նորածնայինից մինչև դեռահասության տարիքը աղջիկների առողջության, սնուցման և կրթության ոլորտներում կատարվող ներդրումները:

Նպատակներ

4.16. Նպատակներն են.

(ա) Վերացնել աղջիկ երեխայի նկատմամբ ցանկացած տեսակի խտրականությունը և տղաների նկատմամբ առաջնահերթային վերաբերմունքի նախադրյալները, որոնք հանգեցնում են նորածին աղջիկ երեխաների սպանդի և ապագա երեխայի սեռի ընտրության վնասակար և անբարոյական սովորությունների կիրառմանը:

(բ) Հասարակության մեջ քարոզել ընտանիքում աղջիկ երեխայի արժեքի գաղափարը և միևույն ժամանակ բարձրացնել աղջիկ երեխաների ինքնագիտակցման և ինքնահարգանքի զգացումը և կարգավիճակը:

(գ) Բարելավել աղջիկ երեխայի բարեկեցությունը, մասնավորապես առողջության, սնուցման և կրթության պարագայում:

Գործողություններ

4.17. Ընդհանուր առմամբ աղջիկ երեխաների դերը ընտանիքում և հասարակության մեջ պետք է ընդունվի ավելի լայն առումով և չսահմանափակվի միայն երեխա ունենալու և հարազատներին խնամելու նրանց ֆունկցիայով: Այդ գաղափարները պետք է ամրապնդվեն կրթական և սոցիալական ոլորտի քաղաքականությունների ընդունման և իրականացման միջոցով, որոնք ապահովում են նրանց լիակատար մասնակցությունը այն հասարակությունների զարգացման մեջ, որտեղ նրանք ապրում են: Հասարակության բոլոր մակարդակների ղեկավարները պետք է ելույթներ ունենան և ակտիվորեն գործեն ընտանիքում տղաների հանդեպ նախընտրելի վերաբերմունքի վրա հիմնված սեռական խտրականության դեմ: Նպատակներից մեկը պետք է լինի աղջիկների մահացության ցուցանիշի նվազեցումը այն վայրերում, որտեղ նկատվում է այդպիսի իրավիճակ: Անհրաժեշտ է իրականացնել հատուկ կրթական և տեղեկատվական միջոցառումներ աղջիկների և տղաների հավասար վերաբերմունքը խրախուսելու համար այնպիսի հարցերում, ինչպիսիք են սնուցումը, առողջապահությունը, կրթական և հասարակական,

տնտեսական և քաղաքական գործունեությունը, ինչպես նաև հավասար ժառանգական իրավունքները:

4.18. Բացի մինչև 2015թ. բոլոր երկրներում տարրական կրթության ապահովման նպատակին հասնելուն, բոլոր երկրները հարկադրվում են ապահովել աղջիկների և կանանց լայնածավալ և հնարավորին կերպ վաղ հասանելիությունը դեպի միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգեր, ինչպես նաև դեպի մասնագիտական և տեխնիկական կրթություն, չմոռանալով այդ կրթության որակի և հարմարության բարելավման մասին:

4.19. Դպրոցները, զանգվածային լրատվամիջոցները և այլ հասարակական կառույցները պետք է ձգտեն վերացնել հաղորդակցության և կրթական նյութերից բոլոր տեսակի կարծրատիպերը, որոնք ամրապնդում են սեռերի միջև գոյություն ունեցող անհավասարությունները և նվաստացնում են աղջիկների ինքնագնահատականը: Երկրները պետք է գիտակցեն, որ անհրաժեշտ է ոչ միայն ընդլայնել աղջիկների համար կրթական հնարավորությունները, այլև փոխել ուսուցիչների վերաբերմունքը և նրանց աշխատանքի մեթոդները, ուսուցման պլանը և հարմարությունները այնպես, որպեսզի վերջիններս արտացոլեն բոլոր տեսակի սեռական անհավասարությունների դեմ գործելու իրենց պատրաստակամությունը՝ հաշվի առնելով աղջիկ երեխայի հատուկ կարիքները:

4.20. Երկրները պետք է մշակեն ինտեգրված մոտեցումներ աղջիկների և երիտասարդ օրիորդների սնուցման, ընդհանուր և վերարտադրողական առողջության, կրթության և սոցիալական կարիքների վերաբերյալ, քանի որ այդպիսի լրացուցիչ ներդրումները դեռահաս աղջիկների զարգացման մեջ կարող են հաճախ փոխհատուցել նրանց սնուցման և խնամքի ավելի վաղ բացթողումները:

4.21. Կառավարությունները պետք է խստորեն հետևեն այն օրենքների կատարմանը, որոնք երաշխավորում են, որ երկու անձանց միջև գրանցվող ամուսնությունը տեղի է ունենում երկու կողմերի լիակատար և ազատ համաձայնությամբ: Բացի այդ, կառավարությունները պետք է խստորեն հետևեն այն օրենքների կիրառմանը, որոնք նախատեսում են ամուսնության մինիմալ տարիքը, և, անհրաժեշտության դեպքում, բարձրացնեն այդ տարիքային սահմանը: Կառավարությունները և հասարակական կազմակերպությունները պետք է համախմբեն հասարակության աջակցությունը ամուսնության մինիմալ տարիքը նախատեսող օրենքների կիրառման համար, մասնավորապես տրամադրելով կրթական և աշխատանքի տեղավորման հնարավորություններ:

4.22. Կառավարություններին անհրաժեշտ է հարկադրել կանանց սեռական օրգանների հաշմեցման արգելումը, որտեղ, որ կատարվում է և ապահովել հզոր աջակցություն հասարակական և համայնքային կազմակերպություններին կրոնական հաստատություններին այդպիսի սովորությունների վերացման համար:

4.23. Կառավարություններին անհրաժեշտ է դրդել սկսելու անհրաժեշտ միջոցառումներ՝ նորածնային սպանդի, ապագա երեխայի սեռի որոշման, աղջիկ երեխաների թրաֆիքինգի և աղջիկներին մարմնավաճառության և պոռնոգրաֆիայի մեջ ներքաշելու կանխարգելման համար:

Գ. Տղամարդու պարտավորությունները և մասնակցությունը

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

4.24. Տղամարդկանց և կանանց ներդաշնակ համագործակցության հասնելու անհրաժեշտ նախապայմաններն են թե տղամարդկանց և թե կանանց գիտելիքների, վերաբերմունքի և վարքի մեջ փոփոխությունների իրականացումը: Տղամարդիկ որոշիչ դեր են խաղում գենդերային հավասարության հարցերում, քանի որ շատ հասարակություններում տղամարդկանց ձեռքում է կյանքի գրեթե բոլոր բնագավառների գերակշռող իշխանությունը, սկսած ընտանիքի մեծությանը վերաբերող անձնական հարցերից և վերջացրած կառավարական տարբեր մակարդակներում ընդունվող քաղաքականություններով ու ծրագրերով: Զափազանց կարևոր է բարելավել սեռականության և վերարտադրողական հարցերի շուրջ կանանց և տղամարդկանց փոխհամաձայնությունը և անել այնպես, որ նրանք ավելի լավ գիտակցեն իրենց համատեղ պարտավորությունները, դրանով իսկ դառնալով հավասարազոր գործընկերներ հասարակական և անձնական կյանքում:

Նպատակ

4.25. Նպատակը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է նպաստել գենդերային հավասարությանը կյանքի բոլոր բնագավառներում, ընտանեկան և համայնքային կյանքը ներառյալ, և տղամարդկանց խրախուսել, հնարավորություն տալ ստանձնելու պատասխանատվություններ իրենց սեռական ու վերարտադրողական, ինչպես նաև հասարակական և ընտանեկան դերերում:

Գործողություններ

4.26. Կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը ընտանեկան և տնային տնտեսության բոլոր ոլորտներում, ներառյալ ընտանիքի պլանավորումը, երեխաների դաստիարակությունը, տնային աշխատանքը, պետք է աջակցվի և խրախուսվի կառավարությունների կողմից: Դրան կարելի է հասնել տեղեկատվության, կրթության, հաղորդակցության, աշխատանքային օրենսդրության միջոցով, խթանելով տնտեսապես բարենպաստ միջավայր, ինչպես օրինակ՝ ընտանեկան արձակուրդի տրամադրումը կանանց և տղամարդկանց, որպեսզի նրանք ավելի մեծ հնարավորություններ ունենան համատեղելու իրենց տնային և հասարակական պատասխանատվությունները:

4.27. Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն կանանց և տղամարդկանց համատեղ պատասխանատվությունների գաղափարը տարածելու նպատակով, խրախուսելով տղամարդկանց ակտիվ մասնակցությունը հայրության, սեռական և վերարտադրողական առողջության հարցերում, ներառելով ընտանիքի պլանավորումը, պրենատալ, մայրական և երեխաների առողջության, սեռավարակների, ինչպես նաև ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման, անցանկալի և բարձր ռիսկի հղիությունների կանխարգելման հարցերում, ընտանեկան եկամուտի համատեղ ղեկավարման, երեխաների կրթության, առողջության և սնուցման, ինչպես նաև երկու սեռերի երեխաների հանդեպ հավասար վերաբերմունքի հարցերում: Տղամարդկանց պատասխանատվությունը ընտանեկան կյանքում պետք է ներառի վաղ տարիքից երեխաների կրթության հարցերում նրանց մասնակցությունը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց և երեխաների դեմ բռնության կանխարգելմանը:

4.28. Կառավարությունները պետք է քայլեր ձեռնարկեն երաշխավորելու, որ երեխաները պատշաճ ֆինանսական աջակցություն ստանան իրենց ծնողներից, հետևելով հատկապես երեխաների իրավունքները պաշտպանող օրենքների իրականացմանը: Կառավարությունները պետք է մտածեն օրենսդրության և քաղաքականությունների մեջ փոփոխություններ մտցնելու մասին՝ կապված տղամարդկանց պատասխանատվության և նրանց կողմից իրենց երեխաներին և ընտանիքներին ցուցաբերվող ֆինասական օժանդակության հարցերի հետ: Այդպիսի օրենքները և քաղաքականությունները պետք է խրախուսեն ընտանիքի, որպես հասարակության մասնիկի, պահպանումը և վերականգնումը: Անհրաժեշտ է պաշտպանել ընտանեկան բռնության ենթարկվող կանանց անվտանգությունը:

4.29. Ազգային և համայնքային ղեկավարները պետք է խրախուսեն ընտանեկան կյանքում տղամարդկանց լիակատար ներգրավվածությունը և կանանց ինտեգրումը համայնքի կյանքում: Ծնողները և դպրոցները պետք է երաշխավորեն, որ տղաների մոտ կանանց և աղջիկների հանդեպ որպես հավասարազորի վերաբերմունքը ձևավորվի հնարավորինս վաղ տարիքից, ինչպես նաև ձևավորվի ապահով, անվտանգ և ներդաշնակ ընտանեկան կյանքի բոլոր ոլորտներում համատեղ պատասխանատվությունների գիտակցումը: Շատ կարևոր է այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք երաշխավորում են տղաների ներգրավվածությունը մինչև սեռական հասունացում:

Գլուխ V

ԸՆՏԱՆԻՔԸ, ԴՐԱ ԴԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԿԱՋՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Ընտանիքի կազմի և կառուցվածքի բազմազանությունը

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

5.1. Չնայած որ տարբեր սոցիալական, մշակութային, իրավաբանական և քաղաքական համակարգերին բնորոշ են ընտանիքի տարբեր տեսակներ, ընտանիքը հանդիսանում է հասարակության հիմնական միավորը և դրանով իսկ իրավունք ունի ստանալու բազմակողմանի պաշտպանություն և աջակցություն: Աշխարհում տեղի ունեցող արագ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները իրենց ազդեցությունն են ունեցել ընտանիքի ձևավորման և ընտանեկան կյանքի մոդելի վրա, ձևավորելով զգալի փոփոխություններ ընտանիքի կազմավորման և համակարգի մեջ: Գենդերային հիմքերով ծնողական և ընտանեկան դերի ավանդական բաժանվածությունը և վճարվող աշխատանքներին մասնակցությունը չեն արտացոլում արդի իրականության պատկերը և ձգտումները, քանզի ավելի ու ավելի շատ թվով կանայք, աշխարհի տարբեր մասերում, վարձատրվող աշխատանքի են անցնում տնից դուրս: Միևնույն ժամանակ ընդհարումների և պատերազմների, ուրբանիզացիայի, աղքատության, բնական աղետների և այլ պատճառների հետևանքով տեղի ունեցող լայնածավալ միգրացիան և պարտադրված տեղահանումները մեծ լարվածություն են ստեղծել ընտանիքի համար, քանի որ նրանք արդեն չեն ստանում ընդլայնված ընտանիքների կողմից կատարվող աջակցությունը: Շատ

ծնողներ աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հարցում ավելի հաճախ են կախված երրորդ կողմից ստացվող աջակցության ցուցաբերումից: Այս խնդիրը առավել սուր է նկատվում այն դեպքերում, երբ ընտանիքների համար մշակվող քաղաքականություններում և ծրագրերում հաշվի չի առնվում գոյություն ունեցող ընտանիքների բազմազանության գաղափարը, կամ դրանք բավարար կերպով չեն արտացոլում կանանց և երեխաների պահանջները:

Նպատակներ

5.2. Նպատակներն են.

(ա) Մշակել այնպիսի քաղաքականություններ և օրենքներ, որոնք ավելի լավ են աջակցում ընտանիքին, նպաստում են դրա կայունությանը և հաշվի են առնում դրա բազմազանությունը, մասնավորապես միայնակ ծնողով տնային տնտեսությունների թվի աճը:

(բ) Մշակել սոցիալ ապահովության այնպիսի միջոցներ, որոնք հաշվի են առնում երեխաների դաստիարակության աճող ծախսերի սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնները:

(գ) Խրախուսել ընտանիքի անդամների հնարավորությունների հավասարությունը, մասնավորապես, ընտանիքում կանանց և աղջիկների իրավունքների հարցերում:

Գործողություններ

5.3. Կառավարությունները համագործակցելով գործատուների հետ, պետք է նպաստեն և խրախուսեն բոլոր այն միջոցները, որոնք օժանդակում են աշխատանքային և ծնողական պարտականությունների համատեղմանը, հատկապես փոքր երեխաներ ունեցող միայնակ ծնողով տնային տնտեսությունների համար: Այդպիսի միջոցների թվի մեջ կարող են մտնել առողջական ապահովագրությունը և սոցիալական ապահովագրական համակարգը, աշխատավայրի տարածքում երեխաների խնամքի և կերակրող մայրերի համար հատուկ սենյակների առկայությունը, մանկապարտեզները, կես դրույքով աշխատելու հնարավորությունները, երեխայի խնամքի համար վճարվող արձակուրդի տրամադրումը, վճարվող ֆիզիոլոգիական արձակուրդը, ճկուն աշխատաժամերը և վերարտադրողական ու երեխաների առողջության պաշտպանման ծառայությունների մատուցումը:

5.4. Սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունների մշակման ժամանակ հատուկ ուշադրություն է անհրաժեշտ հատկացնել տնտեսապես անբարենպաստ պայմաններում ապրող ընտանիքների բոլոր չափահաս անդամների համար աշխատելու հնարավորությունների բարձրացմանը, ներառելով տանը աշխատող տարեցներին և կանանց և ստեղծելու այնպիսի պայմաններ, որ երեխաները կրթություն ստանան և ոչ թե ստիպված լինեն աշխատել: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կարիքավոր միայնակ ծնողներին, հատկապես նրանց, ովքեր ամբողջությամբ կամ մասնակիորեն պատասխանատու են երեխաների և իրենցից կախվածություն ունեցողների համար, ապահովելով նրանց առնվազն մինիմալ աշխատավարձով կամ նպաստով, վարկերի

տրամադրումով, կանացի ինքնաօժանդակման խմբերի ֆինանսավորմամբ և տղամարդկանց ծնողական ֆինանսական պարտավորությունների կատարումը երաշխավորող ավելի խիստ իրավական դաշտի ապահովմամբ:

5.5. Կառավարությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն վերացնելու բոլոր տեսակի պարտադրական և խտրականության քաղաքականություններն ու սովորությունները: Անհրաժեշտ է կիրառել այնպիսի միջոցառումներ, որոնք կարգելեն հասունության տարիքի չհասած երեխաների ամուսնությունները և կանանց սեռական օրգանների հաշմությունը: Օժանդակություն պետք է տրամադրվի հաշմանդամություն ունեցող անձանց իրենց վերարտադրողական և ընտանեկան իրավունքների և պարտավորությունների իրականացման հարցերում:

5.6. Կառավարությունները պետք է սատարեն և հետագայում զարգացնեն փաստաթղթային փոփոխությունների մեխանիզմները և կատարեն հետազոտություններ ընտանիքի կազմի ու համակարգի վերաբերյալ, մասնավորապես մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունների և միայնակ ծնողով ու բազմասերունդ ընտանիքների տարածվածության ուսումնասիրության համար:

Բ. Սոցիալ-տնտեսական աջակցությունն ընտանիքին

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

5.7. Ընտանիքների վրա լարվածություն են ստեղծում սոցիալ-տնտեսական փոփոխությունները: Անհրաժեշտ է յուրահատուկ աջակցություն ցուցաբերել անբարենպաստ պայմաններում գտնվող ընտանիքներին: Վերջին տարիների ընթացքում շատ ընտանիքների կենսապայմանները վատթարացել են՝ կապված եկամտաբեր աշխատանքի պակասի, ինչպես նաև կառավարությունների կողմից ձեռնարկված սոցիալական ծախսերը քչացնելու միջոցով բյուջեի հավասարակշռության հասնելու համար կիրառվող միջոցառումների պատճառով: Աճում է խոցելի, կանանց կողմից ղեկավարվող միայնակ ծնողով ընտանիքների, տարեց անդամներ կամ հաշմանդամություն ունեցող անդամներով աղքատ ընտանիքների, փախստական կամ տեղահանված, ՁԻԱՀ-ով կամ այլ մահացու հիվանդությամբ տառապող ընտանիքների, ընտանիքում ալկոհոլային կամ թմրանյութային կախվածությամբ տառապող անձինք ունեցողների, երեխաների հետ դաժան վերաբերմունքի և ընտանեկան բռնության դեպքերով ընտանիքների թիվը: Աշխատանքային միգրացիայի ծավալների ընդլայնումը և փախստականների տեղաշարժերը լրացուցիչ լարվածություն են ստեղծում ընտանիքներում և բերում են դրա փլուզմանը, ինչպես նաև նպաստում են կանանց պարտավորությունների ավելացմանը: Շատ քաղաքներում միլիոնավոր երեխաներ և դեռահասներ ընտանիքների փլուզման պատճառով անուշադրության են մատնվում, որի հետևանքով նրանք ավելի խոցելի են դառնում այնպիսի վտանգների համար, ինչպիսիք են դպրոցից դուրս մնալը, աշխատանքի շուկայում շահագործման ենթարկվելը, սեռական շահագործումը, անցանկալի հղիությունները և սեռավարակները:

Նպատակներ

5.8. Նպատակը կայանում է նրանում,որ անհրաժեշտ է երաշխավորել, որպեսզի սոցիալ և տնտեսական զարգացման քաղաքականությունները ամբողջությամբ հաշվի նստեն ընտանիքների և նրանց անհատ անդամների բազմազան և փոփոխվող կարիքների ու իրավունքների հետ և տրամադրեն անհրաժեշտ օժանդակություն և պաշտպանություն հատկապես ամենախոցելի ընտանիքներին ու ընտանիքների առավել խոցելի անդամներին:

Գործողություններ

5.9. Կառավարությունները պետք է մշակեն այնպիսի քաղաքականություններ, որոնք հաշվի կառնեն ընտանիքների կարիքները բնակարանային պայմանների, աշխատանքի, առողջապահության,սոցիալական ապահովության և կրթության ոլորտներում, որպեսզի ընտանիքի համար ստեղծվի աջակցող միջավայր՝ հաշվի առնելով նրա տեսակների և ֆունկցիաների տարբերությունները և պետք է օժանդակվեն կրթական ծրագրերը կապված ծնողների դերի, ծնողական պարտավորությունների և երեխայի զարգացման հետ: Այլ համապատասխան կողմերի հետ համատեղ կառավարությունները պետք է զարգացնեն ընտանիքների բարեկեցության, ընտանիքներում կանանց կարգավիճակի, ընտանիքներում իրենց անդամների կարիքները հոգալու հնարավորությունների վրա ազդող սոցիալ-տնտեսական որոշումների և գործունեության ներուժը:

5.10. Բոլոր մակարդակների կառավարությունները, հասարակական կազմակերպությունները և համապատասխան համայնքային հաստատությունները պետք է մշակեն նորանոր ճանապարհներ՝ ցուցաբերելու ավելի արդյունավետ օժանդակություն այն ընտանիքներին և նրանց մաս կազմող անհատներին, որոնց վրա կարող է ներգործել այնպիսի յուրահատուկ խնդիրներ, ինչպիսիք են ծայրահեղ աղքատությունը, քրոնիկ գործազրկությունը, հիվանդությունները, ընտանեկան և սեռական բռնությունը, օժիտի վճարումները, թմրանյութերի կամ ալկոհոլի կախվածությունը, ինցեստը, երեխաների բռնությունը, անտեսումը կամ լքումը:

5.11. Կառավարությունները պետք է օժանդակեն և զարգացնեն համապատասխան մեխանիզմներ այնպիսի ընտանիքներին աջակցելու համար, որոնք ունեն երեխաներ, տարեց և հաշմանդամություն ունեցող անդամներ, ներառելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված հաշմանդամությունը, ինչպես նաև խրախուսել այդ պատասխանատվությունների հավասար բաշխումը կանանց և տղամարդկանց միջև և աջակցել բազմասերունդ ընտանիքների գոյատևմանը:

5.12. Կառավարությունները և միջազգային հանրությունը պետք է ավելի մեծ ուշադրության արժանացնեն աղքատ և պատերազմի, երաշտի, սովի, բնական աղետների, ռասայական ու էթնիկական խտրականության, բռնության զոհ դարձած ընտանիքներին և ավելի մեծ միասնություն ցուցաբերեն նրանց հանդեպ: Անհրաժեշտ է անել ամեն ինչ, որ այդ ընտանիքների անդամները լինեն միասին, բաժանության դեպքում աջակցեն նրանց միավորմանը և երաշխավորեն այդպիսի խոցելի ընտանիքների աջակցությանն ուղղված կառավարության ծրագրերի հասանելիությունը:

5.13. Կառավարությունները պետք է աջակցեն միայնակ ծնողներով ընտանիքներին և հատուկ ուշադրություն դարձնեն այրիների և որբերի կարիքների բավարարմանը: Ամեն

ջանք պետք է գործադրվի բարդ իրավիճակներում, օրինակ փողոցային երեխաների շրջանում ընտանեկան բնույթի կապերի ստեղծման օժանդակման համար:

Գլուխ VI

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Ծնելիություն, մահացություն և բնակչության աճի տեմպեր

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

6.1. Աշխարհի ազգաբնակչության թվի ավելացումը բացարձակ թվերով հասել է աննախադեպ մակարդակի և ներկայումս աճի տեմպերը հասնում են տարեկան 90 միլիոն մարդու: Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումների համաձայն բնական աճի տարեկան տեմպերը ամենայն հավանականությամբ մինչև 2015թ. 90 միլիոնին մոտ կմնան: Եթե աշխարհի բնակչության թվի 1 միլիոնից մինչև 2 միլիոնը հասնելը տևել է 123 տարի, հաջորդ մեկ միլիոնի աճը տևել է 33 տարի, 14 և 13 տարի: Հինգ միլիոնից մինչև 6 միլիոնը ներկայումս ընթացքի մեջ է և նախատեսվում է, որ դա կտևի 11 տարի և այդ գործընթացը կավարտվի մինչև 1998 թվականը: 1985-1990թթ աշխարհի բնակչության թիվը աճել է տարեկան 1.7տոկոսով, սակայն նախատեսվում է, որ մոտակա տասնամյակների ընթացքում այն կնվազի և մինչև 2020-2025թթ կհասնի տարեկան 1.0 տոկոս ցուցանիշին: Ինչևէ, 21-րդ դարում ազգաբնակչության թվի աճի տեմպերի կայունացման հասնելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել ներկա Գործողությունների նախագծում նշված բոլոր քաղաքականությունները և առաջարկությունները:

6.2. Աշխարհի երկրների մեծամասնությունում նկատվում է ցածր ծնելիության և մահացության ցուցանիշների նվազման միտում, բայց քանի որ այդ երկրներում տեղի ունեցող շարժերի տեմպերը տարբեր են, ուստի ժողովրդագրական իրավիճակների պատկերն էլ համապատասխանաբար տարբեր է: Եթե դիտարկենք միջին ցուցանիշներն ըստ երկրների, ապա 1985-1990թթ ժամանակահատվածում ծնելիության ցուցանիշը մեկ կնոջ հաշվարկով տատանվում էր Ռվանդայում 8.5-ից մինչև Իտալիայում 1.3 երեխա, մինչդեռ ծնվելու պահին կյանքի տևողությունը՝ հանդիսանալով մահացության պայմանների ցուցանիշ, տատանվում էր 41 տարուց՝ Սիեռա Լեոնեյում, մինչև 78.3 տարի՝ Ճապոնիայում: Շատ տարածաշրջաններում, ներառյալ անցումային տնտեսություն ունեցող որոշ երկրները, համաձայն գնահատումների, ծնվելու պահին կյանքի միջին տևողության ցուցանիշը կրճատվել է: 1985-1990թթ ընկած ժամանակահատվածում աշխարհի ազգաբնակչության 44 տոկոսը ապրում էր 114 երկրներում, որոնցում բնակչության աճի տեմպերը գերազանցում էին տարեկան 2 տոկոսը: Դրանց թվի մեջ էին մտնում Աֆրիկայի գրեթե բոլոր երկրները, որտեղ բնակչության թիվը կրկնապատկվում է միջինը 24 տարին մեկ, Ասիայի երկրների երկու երրորդը և Լատինական Ամերիկայի երկրների մեկ երրորդը: Մյուս կողմից, աշխարհի բնակչության թվի 23 տոկոսը կազմող 66 երկրներում (մեծամասնությունը Եվրոպայում) բնակչության աճի տեմպերը կազմում են տարեկան 1 տոկոսից պակաս: Այս պայմաններում Եվրոպայի բնակչության թվի կրկնապատկման համար կպահանջվի 380 տարի: Այսպիսի անհամաչափ մակարդակները և դիֆերենցիալները ազդում են աշխարհի բնակչության քանակի և

ռեգիոնալ բաշխման, ինչպես նաև կայուն զարգացման հեռանկարների վրա: Նախատեսվում է, որ 1995 և 2015թթ միջև ընկած ժամանակահատվածում ավելի զարգացած եկրների բնակչությունը կավելանա մոտ 120 միլիոնով, մինչդեռ ավելի պակաս զարգացած երկրների բնակչությունը կավելանա 1,727 միլիոնով:

Նպատակ

6.3. Գիտակցելով այն, որ վերջնական խնդիրը ներկա և ապագա սերունդների կյանքի որակի բարելավումն է, նպատակը կայանում է հնարավորինս շուտ օժանդակել ժողովրդագրական ցուցանիշների անհավասարություն և սոցիալական, տնտեսական և էկոլոգիական նպատակներ ունեցող երկրների ժողովրդագրական անցմանը՝ մարդու իրավունքների լիակատար կիրառման ներքո: Այս գործընթացը կնպաստի աշխարհի ազգաբնակչության թվի կայունացմանը, և արտադրանքի ու սպառման անկայուն համակարգերի ներքո՝ հաստատուն զարգացմանը և կայուն տնտեսական աճին:

Գործողություններ

6.4. Երկրները պետք է ավելի մեծ ուշադրության արժանացնեն զարգացման հարցում ժողովրդագրական միտումների կարևորությանը: Այն երկրները,որտեղ չի ավարտվել ժողովրդագրական անցումը, պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն, այս պարագայում՝ իրենց սոցիալական և տնտեսական զարգացման համատեքստում և մարդու իրավունքների լիակատար կիրառմամբ: Այդ քայլերը ներառում են տնտեսության զարգացումը և աղքատության նվազեցումը, մասնավորապես գյուղական շրջաններում, կանանց կարգավիճակի բարելավումը, որակյալ տարրական կրթության, առաջնային առողջապահության հասանելիությունը, ներառյալ վերարտադրողական առողջությունը և ընտանիքի պլանավորման ծառայությունները, և ծնողական պարտականությունների վերաբերյալ պատասխանատու վերաբերմունքը և սեռական կրթությանն ուղղված կրթական ռազմավարությունները: Դրանց հասնելու համար երկրները պետք է մոբիլիզացնեն հասարակության բոլոր խավերին, ներառելով հասարակական կազմակերպությունները, տեղական համայնքային խմբերը և մասնավոր սեկտորը:

6.5. Ազգաբնակչության թվի ավելացման խնդիրները լուծելու փորձեր կատարելու ժամանակ երկրները պետք է ճանաչեն ծնելիության և մահացության մակարդակների փոխկապակցվածությունը, ձգտեն նվազեցնել նորածնային, մանկական և մայրական մահացությունը, որը իր հերթին կնվազեցնի բարձր ծնելիության անհրաժեշտությունն ու բարձր ռիսկի ծննդաբերությունների թիվը:

Բ. Երեխաներ և երիտասարդություն

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

6.6. Մահացության մակարդակների նվազման և ծնելիության բարձր մակարդակների պատճառով շատ զարգացող երկրներում բնակչության մեծ մասնաբաժինը շարունակում են կազմել երեխաները և երիտասարդները: Ավելի քիչ զարգացած երկրներում ընդհանուր առմամբ բնակչության 36 տոկոսը կազմում են մինչև 15 տարեկան երեխաները և նույնիսկ ծնելիության ցուցանիշների կանխատեսված նվազեցման պայմաններում, երեխաների

մասնաբաժինը մինչև 2015թ. դեռ կկազմի 30 տոկոս: Աֆրիկայում մինչև 15 տարեկան բնակչության մասնաբաժինը կազմում է 45 տոկոս, ակնկալվում է, որ այդ ցուցանիշը միայն թեթևակի կնվազի մինչև 2015թ.: Աղքատությունը աղետալի հետևանքներ է թողնում երեխաների առողջության և բարեկեցության վրա: Աղքատության մեջ ապրող երեխաներին սպառնում է թերսնուցման և հիվանդացության, աշխատանքային շահագործման, թրաֆիքինգի, անտեսումի, սեռական բռնության և թմրամոլության վտանգները: Երիտասարդության մեծ քանակի հետ կապված ընթացիկ և ապագա պահանջները, հատկապես առողջապահության, կրթության և աշխատանքի հարցերը, իրենցից մեծ խնդիրներ և պատասխանատվություն են ներկայացնում ընտանիքների, տեղական համայնքների, երկրների ու միջազգային հանրության համար: Այդ պարտավորություններից առաջինը և ամենաառաջնայինը երաշխավորումն է այն բանի, որ յուրաքանչյուր երեխա լինի ցանկալի: Երկրորդ պարտավորությունը այն է, որը պետք է ճանաչի այն փաստը, որ երեխաները ապագայի ամենակարևոր աղբյուրն են և նրանց մեջ կատարած ներդրումները ծնողների ու հասարակության կողմից էական են կայուն տնտեսական աճի և զարգացման հասնելու համար:

Նպատակներ

6.7. Նպատակներն են՝

(ա) Լիովին նպաստել երեխաների, դեռահասների և երիտասարդության առողջապահության ու բարեկեցության ապահովմանը, քանզի նրանք ներկայացնում են աշխարհի մարդկային ռեսուրսների ապագան, համաձայն Երեխաների հարցերով հրավիրված համաշխարհային գագաթնաժողովի և Երեխայի իրավունքների կոնվենցիայի ժամանակ ընդունված դրույթների:

(բ) Երաշխավորել դեռահասների և երիտասարդների, մասնավորապես, երիտասարդ կանանց, հատուկ կարիքների ապահովումը, հաշվի առնելով նրանց ստեղծագործական ունակությունները սոցիալական, ընտանեկան և համայնքային աջակցությունը, աշխատանքի տեղավորման հնարավորությունները, մասնակցությունը քաղաքական գործընթացին, կրթության, առողջապահության, խորհրդատվության և բարձր մակարդակի վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիությունը:

(գ) Խրախուսել երեխաներին, դեռահասներին և երիտասարդներին, հատկապես երիտասարդ կանանց, շարունակել իրենց կրթությունը՝ զինելու նրանց ավելի լավ կյանքի համար, բարձրացնելու նրանց մարդկային պոտենցիալը, օգնելու խուսափել վաղ ամուսնություններից և բարձր ռիսկի հղիություններից, դրանով իսկ նվազեցնելով հիվանդացությունը և մահացությունը:

Գործողություններ

6.8. Երկրները պետք է առաջնայնություն և մեծ ուշադրություն հատկացնեն երեխաների և երիտասարդների, մասնավորապես փողոցային երեխաների, երիտասարդների, պաշտպանության, գոյատևման և զարգացման բոլոր ասպեկտներին, պետք է ամեն ջանք գործադրեն երեխաների և երիտասարդների վրա աղքատության թողած ազդեցության նվազեցման համար, ներառելով թերսնուցումը, կանխարգելվող հիվանդությունները:

Կրթության հավասար հնարավորություններ պետք է տրամադրվեն տղաներին և աղջիկներին բոլոր մակարդակներում:

6.9. Երկրները պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն վերացնելու համար երեխաների, դեռահասների և երիտասարդների անտեսումը, շահագործման և բռնության բոլոր տեսակները, որոնց թվում են առևանգումը, բռնաբարությունը, ինցեստը, պոռնոգրաֆիան, թրաֆիքինգը, լքումը և մարմնավաճառությունը: Առավել մեծ ջանքեր երկրները պետք է գործադրեն իրենց երկրում և երկրից դուրս երեխաների սեռական բռնությունը վերացնելու համար:

6.10. Բոլոր երկրները պետք է ընդունեն և խստորեն հետևեն երեխաների տնտեսական շահագործման, ֆիզիկական և հոգևոր բռնության կամ լքվածության դեմ պայքարող օրենքներին՝ համաձայն Երեխայի իրավունքների կոնվենցիայի և Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված այլ համապատասխան դրույթների: Երկրները պետք է աջակցություն ցուցաբերեն և օժանդակեն այդպիսի բռնությունների զոհ դարձած անձանց ֆիզիկական և հոգևոր վերականգնմանը:

6.11. Երկրները պետք է ստեղծեն այնպիսի սոցիալ-տնտեսական միջավայր, որը կնպաստի երեխաների ամուսնությունների և շուտափույթ կնքված այլ կապերի վերացմանը և պետք է ընդդիմանա վաղ ամուսնությունների սովորությունների շարունակմանը: Երկրների կրթական ծրագրերը պետք է շեշտեն այն սոցիալ պատասխանատվությունը, որը կրում է ամուսնությունը: Կառավարությունները պետք է միջոցներ ձեռնարկեն երիտասարդ հղի կանանց հանդեպ խտրականության վերացման ուղղությամբ:

6.12. Բոլոր երկրները պետք է ընդունեն համատեղ միջոցներ՝ զինված հակամարտություններում կամ այլ աղետներում երեխաների տառապանքները թեթևացնելու համար և օժանդակություն ցուցաբերեն այդպիսի հակամարտություններին, աղետներին զոհ դարձած երեխաներին:

6.13. Երկրների նպատակը պետք է լինի երիտասարդների, մասնավորապես ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության, վարժանքների, աշխատանքի տեղավորման, բնակեցվածության և առողջապահության կարիքների ու ցանկությունների բավարարումը, դրանով իսկ երաշխավորելով նրանց ինտեգրացիան և մասնակցությունը հասարակության բոլոր ոլորտներին, ներառյալ մասնակցությունը քաղաքական գործընթացին և ղեկավարման դերերի համար նախապատրաստմանը:

6.14. Հասարակական կազմակերպությունների և մասնավոր սեկտորի ակտիվ մասնակցությամբ կառավարությունները պետք է մշակեն մասնագիտական պատրաստվածություն և կրթական ծրագրեր: Գերակայությունը պետք է տրվի երիտասարդների հիմնական կարիքների բավարարմանը, նրանց կյանքի որակի բարելավմանը՝ մեծացնելով նրանց ներդրումը հաստատուն զարգացման գործընթացում:

6.15. Երիտասարդությունը պետք է իր ակտիվ մասնակցությունը ունենա զարգացման ոլորտում գործունեության պլանավորման, իրականացման և գնահատման հարցերում, որը ուղղակի ազդեցություն ունի իրենց առօրյա կյանքի վրա: Դա հատկապես կարևոր է վերարտադրողական և սեռական առողջությանը վերաբերող տեղեկատվական, կրթական և

հաղորդակցության գործունեության հարցերում, ներառյալ վաղ հղիությունների կանխարգելումը, սեռական դաստիարակությունը, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ սեռավարակների կանխարգելումը: Այդպիսի ծառայությունների հասանելիությունն ու կոնֆիդենցիալությունը պետք է երաշխավորված լինի նրանց ծնողների օժանդակությամբ՝ համաձայն Երեխայի իրավունքների կոնվենցիայի դրույթների: Բացի այդ, նկատվում է կյանքի պլանավորման հմտությունների, առողջ ապրելակերպի խրախուսման և թմրանյութերի չարաշահման դեմ ակտիվ պայքարի վերաբերյալ կրթական ծրագրերի անհրաժեշտություն:

Գ. Տարեց մարդիկ

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

6.16. Ծնելիության մակարդակների նվազումը մահացության մակարդակների իջեցման հետ մեկտեղ բերում են շատ հասարակությունների տարիքային համակարգի հիմնովին փոփոխությունների, որոնցից ամենանշանակալին տարեց մարդկանց թվի և մասնաբաժնի ավելացումն է, ներառյալ շատ ծեր մարդկան թիվը: Ավելի զարգացած տարածաշրջաններում իրավիճակը հետևյալն է. բնակիչների վեցից մեկը առնվազն 60 տարեկան է և մինչև 2025թ. այդ պատկերը կհասնի չորսից մեկը տվյալին: Հատուկ ուշադրության է արժանի զարգացող երկրների իրավիճակը, որտեղ տեղի են ունեցել ծնելիության մակարդակների կտրուկ իջեցումներ: Շատ երկրներում տարեց բնակչության գերակշռող մասը կազմում են տարեց կանայք, քանի որ նրանց կյանքի տևողությունը ավելի երկար է, քան տղամարդկանց մոտ և շատ երկրներում հատկապես խոցելի են տարեց աղքատ կանայք : Տարբեր երկրների բնակչության ընդհանուր քանակի մեջ տարեց մարդկանց թվի հաստատուն ավելացումը թե բացարձակ թվերով և թե համեմատած աշխատունակ բնակչության հետ, զգալի ազդեցություն է ունենում երկրների մեծամասնության վրա, մասնավորապես կապված տարեց մարդկանց աջակցություն ցուցաբերելու գոյություն ունեցող ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերի ապագա կենսունակության հետ: Այսպիսի «բնակչության ծերացման» տնտեսական և սոցիալական ազդեցությունը հանդիսանում է ինչպես խնդիր, այնպես էլ՝ հնարավորություն, բոլոր երկրների համար: Շատ երկրներ ներկայումս վերանայում են իրենց քաղաքականությունները այն սկզբունքի ներքո, որ տարեց մարդիկ հանդիսանում են հասարակության մարդկային ռեսուրսների արժեքավոր և կարևոր մաս: Նրանք նաև ձգտում են գտնել երկարատև աջակցության կարիք ունեցող տարեց մարդկանց աջակցելու լավագույն տարբերակը:

Նպատակներ

6.17. Նպատակներն են.

(ա) Համապատասխան մեխանիզմների միջոցով ամրապնդել տարեց մարդկանց ինքնավստահությունը և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կբարելավեն նրանց կյանքի որակը և հնարավորություն կտան նրանց անկախ աշխատել, ապրել իրենց համայնքներում, որքան որ հնարավոր է կամ որքան որ կցանկանան:

(բ) Զարգացնել առողջապահության համակարգերը, ինչպես նաև ծեր տարիքում տնտեսական և սոցիալական ապահովության համակարգերը, պատշաճ տեղերում հատուկ ուշադրություն դարձնելով տարեց կանանց պահանջներին:

(գ) Զարգացնել սոցիալական աջակցության համակարգը, ֆորմալ և ոչ ֆորմալ ընտանիքի շրջանակներում տարեց անդամների մասին հոգ տանելու հնարավորությունները բարելավելու նպատակով:

Գործողություններ

6.18. Միջնաժամկետ և երկարաժամկետ սոցիալ-տնտեսական նախագծում կատարելիս՝ կառավարության բոլոր մակարդակներում պետք է հաշվի առնվեն ազգաբնակչության ընդհանուր քանակի մեջ տարեց մարդկանց աճող թիվը և մասնաբաժինը: Կառավարությունները պետք է մշակեն այնպիսի սոցիալ-տնտեսական համակարգեր, որոնք երաշխավորում են տարբեր տարիքային խմբերի մարդկանց մեջ ավելի մեծ հավասարություն և միասնություն, տարեց մարդկանց աջակցության տրամադրում բազմասերունդ ընտանիքների խրախուսման միջոցով, ինչպես նաև աճող թվով հիվանդ տարեց մարդկանց երկարաժամկետ աջակցություն և ծառայություններ մատուցման միջոցով:

6.19. Կառավարությունները պետք է ձգտեն ամրապնդել տարեց մարդկանց ինքնավստահությունը՝ հասարակության մեջ նրանց շարունակական մասնակցությունը ապահովելու նպատակով: Տարեց մարդկանց հետ խորհրդակցելիս, կառավարությունները պետք է երաշխավորեն այնպիսի անհրաժեշտ պայմանների ստեղծում, որոնք թույլ կտան տարեց մարդկանց վարել անկախ, առողջ և կենսունակ կյանք և հնարավորություն ունենան ամբողջությամբ օգտվել հասարակության բարօրության համար իրենց կյանքի ընթացքում ձեռք բերած հմտություններից և ունակություններից: Պատշաճ ճանաչում և խրախուսում պետք է տրվի այն արժեքավոր ներդրմանը, որը տարեց մարդիկ ցուցաբերում են ընտանիքին և հասարակությանը, հատկապես որպես կամավոր խնամք տանող:

6.20. Համագործակցելով հասարակական կազմակերպությունների և մասնավոր սեկտորի հետ՝ կառավարությունները պետք է ամրապնդեն պաշտոնական և ոչ պաշտոնական աջակցության համակարգերը, տարեց մարդկանց շահերը պաշտպանող մեխանիզմները, ինչպես նաև նպաստեն բոլոր երկրներում տարեց մարդկանց հանդեպ բռնությունն ու խտրականությունը, հատուկ ուշադրություն դարձնելով տարեց կանանց կարիքներին:

Դ. Բնիկներ

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

6.21. Բնիկ ժողովուրդները առանձնակի և կարևոր հայացքներ ունեն ազգաբնակչության ու զարգացման փոխհարաբերությունների վրա, որոնք հաճախ էապես տարբերվում են այն ժողովուրդների հայացքներից, որոնց հետ նրանք առնչվում են ազգային սահմանների ներքո: Աշխարհի որոշ տարածաշրջաններում երկար ժամանակահատվածներում բնակչության կորուստներից հետո բնիկ ժողովուրդների շրջաններում նկատվում է ազգաբնակչության աճի հաստատուն և, որոշ մասերում, արագ ավելացում, ինչը հետևանք

է մահացության ավելի ցածր ցուցանիշների, չնայած որ հիվանդացությունը և մահացությունը որպես կանոն ավելի բարձր է, քան ազգաբնակչության մնացած հատվածներում: Այլ տարածաշրջաններում նկատվում է բնիկ ժողովուրդների բնակչության թվի հաստատուն նվազում արտաքին հիվանդությունների, հողի և միջոցների կորստի, էկոլոգիական հետընթացի, տեղահանման, տեղափոխման և ընտանիքների, համայնքների ու սոցիալական համակարգերի քայքայման պատճառով:

6.22. Բնիկների խմբերի իրավիճակը հաճախ բնորոշվում է խտրականությամբ և հալածանքով, որը երբեմն ամրագրված է ազգային օրենսդրությամբ և կառավարական համակարգերով: Շատ դեպքերում հասարակությունում արտադրության և սպառման անկայուն համակարգերը ընդհանուր առմամբ հանդիսանում են նրանց հողատարածքների էկոլոգիական քայքայմանը նպաստող հիմնարար գործոն, ինչպես նաև նրանց իրենց հողերից տարհանելու նպատակով ճնշում գործադրելու պատճառ: Բնիկ ժողովուրդները համոզված են, որ կայուն զարգացման ապահովումը անմիջականորեն կապված է իրենց նախնիների հողերի նկատմամբ բնիկների իրավունքների ճանաչման հետ: Բնիկ ժողովուրդները կոչ են անում հարգանքով վերաբերվել իրենց մշակույթին, դավանանքին, կենսակերպին և կայուն զարգացման այն մոդելներին, որոնք ներառում են հողի օգտագործման, գենդերային հարաբերությունների, ռեսուրսների և գիտելիքների օգտագործման, ինչպես նաև ընտանիքի պլանավորման ավանդական համակարգերը: Ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում բնիկ ժողովուրդների հեռանկարները ձեռք են բերել աճող ճանաչում, ինչը, մասնավորապես, արտացոլվում է նրանով, որ Շրջակա միջավայրի և զարգացման Միավորված ազգերի կազմակերպության համաժողովի ժամանակ մասնակցել է բնիկ ժողովուրդների հարցերով աշխատանքային խումբ և Գլխավոր Ասամբլեան 1993թ. հայտարարել է Աշխարհի բնիկ ժողովուրդների միջազգային տարի:

6.23. 1994թ. դեկտեմբերի 10-ից մեկնարկող Բնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակի հայտարարումը միջազգային հանրության կողմից իրենից ներկայացնում է բնիկ ժողովուրդների երազանքների իրականացման ևս մեկ կարևոր քայլ: Ընդունվել է, որ տասնամյակի նպատակն է՝ բնիկ ժողովուրդների պրոբլեմների լուծման նպատակով միջազգային հանրության համագործակցության ամրապնդումը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, շրջակա միջավայրը, զարգացումը, կրթությունը և առողջապահությունը, որը անմիջականորեն կապված է Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովի և ներկա Գործողությունների ծրագրի նպատակների հետ: Համապատասխանաբար, բնիկ ժողովուրդների առանձնահատուկ հեռանկարները հաշվի են առնվում ներկա Գործողությունների նախագծի հատուկ գլուխների տեքստերում:

Նպատակներ

6.24. Նպատակներն են.

(ա) Բնիկ համայնքների հեռանկարները և կարիքները ընդգրկել ազգաբնակչության, զարգացման և շրջակա միջավայրի ոլորտներում զարգացման ծրագրերի մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներում:

(բ) Երաշխավորել բնիկ ժողովուրդների ազգաբնակչության և զարգացման հետ կապված ծառայությունների ապահովումը, որը նրանց կարծիքով սոցիալապես, մշակութապես և էկոլոգիապես պատշաճ է:

(գ) Զննել սոցիալական և տնտեսական գործոնները, որոնք անբարենպաստ ազդեցություն են ունենում բնիկ ժողովուրդների վրա:

Գործողություններ

6.25. Կառավարությունները և հասարակության այլ կարևոր հաստատությունները պարտավոր են ճանաչել ազգաբնակչության և զարգացման առումով բնիկ ժողովուրդների առանձնացող հեռանկարները, համագործակցելով համապատասխան հասարակական կազմակերպությունների և միջկառավարական կազմակերպությունների հետ, պետք է նպաստեն նրանց յուրահատուկ կարիքների բավարարմանը, ներառելով առաջնային առողջապահական և վերարտադրողական առողջության ծառայությունները: Մարդու իրավունքների բոլոր խախտումները և խտրականությունները, մասնավորապես պարտադրանքը, պետք է վերացվեն:

6.26. Բնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակի գործունեության ներքո Միավորված ազգերի կազմակերպությունը բնիկ ժողովուրդների և համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցելով, պետք է հասնի բնիկ ժողովուրդների համատարած ճանաչման, հավաքի տվյալներ նրանց ժողովրդագրական բնորոշումների վերաբերյալ, թե ներկա և թե պատմական՝ բնիկ ժողովուրդների բնակչության կարգավիճակը հասկանալու նպատակով: Անհրաժեշտ են հատուկ ջանքեր ազգային տվյալների հավաքագրման համակարգի մեջ բնիկ ժողովուրդներին վերաբերող վիճակագրության ինտեգրման համար:

6.27. Կառավարությունները պարտավոր են հարգել բնիկ ժողովուրդների մշակույթները և հնարավորություն տան նրանց, տիրել իրենց հողերին, օգտագործել դրանք, պաշտպանել և վերականգնել իրենց գոյատևման ու բարօրության համար կարևոր բնական ռեսուրսները, էկոհամակարգերը և խորհրդակցելով բնիկ ժողովուրդների հետ՝ հաշվի առնեն դրանք ազգաբնակչության և զարգացման քաղաքականությունների մշակման ժամանակ:

Ե. Հաշմանդամություն ունեցող անձինք

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

6.28. Հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են ազգաբնակչության զգալի մասնաբաժինը: Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող Համաշխարհային ծրագրի (1983-1992թթ) իրականացումը նպաստեց հաշմանդամության հարցերի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը և գիտելիքների ընդլայնմանը: Բարձրացրեց այն դերը, որը ունեն հաշմանդամություն ունեցող անձինք և համապատասխան կազմակերպությունները և նպաստեց հաշմանդամության հետ կապված օրենսդրության բարելավմանն ու ընդլայնմանը: Ինչևէ, դեռևս առկա է հաշմանդամության կանխարգելմանն ուղղված միջոցառումների ճնշող անհրաժեշտություն, այդ մարդկանց ռեաբիլիտացիայի, նրանց լիակատար

մասնակցության նպատակների իրականացման և հավասար իրավունքներ ունենալու համար: 1992թ.դեկտեմբերի 16-ի թիվ 47/88 որոշման մեջ Գլխավոր Ասամբլեան ողջունեց, մասնավորապես, Ազգաբնակչության և զարգացման միջազգային համաժողովի ժամանակ համաժողովի թեմատիկայի հետ առնչվող հաշմանդամության խնդիրների դիտարկումը:

Նպատակներ

6.29. Նպատակներն են.

(ա) Երաշխավորել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց իրավունքների իրականացումը, նրանց մասնակցությունը սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում:

(բ) Ստեղծել, բարելավել և զարգացնել անհրաժեշտ պայմաններ, ապահովել հավասար հնարավորություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար և արժևորել նրանց ունակությունները տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացի ժամանակ:

(գ) Երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվությունը և նպաստել նրանց ինքնապահովմանը:

Գործողություններ

6.30. Բոլոր մակարդակների կառավարությունները պետք է դիտարկեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները՝ էթիկական և մարդու իրավունքների տեսանկյունից: Կառավարությունները պետք է ճանաչեն վերարտադրողական առողջությանը, ներառյալ ընտանիքի պլանավորումը և սեռական առողջությունը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին, տեղեկատվությանը, կրթությանը և հաղորդակցմանը վերաբերող կարիքները: Կառավարությունները պետք է վերացնեն խտրականության այն յուրահատուկ ձևերը, որոնց հետ կարող են բախվել հաշմանդամություն ունեցող անձինք ՝ կապված վերարտադրողական իրավունքների, տնային տնտեսության և ընտանիքի կազմության, միջազգային միգրացիայի հետ, հաշվի առնելով ազգային ներգաղթի պայմանների և դրույթների առողջապահական և այլ նկատառումները:

6.31. Բոլոր մակարդակների կառավարությունները պետք է մշակեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների դիտարկման ենթակառուցվածքը, մասնավորապես, նրանց կրթության, մասնագիտական պատրաստվածության և հասարակության կյանքին վերադառնալու հարցերը:

6.32. Բոլոր մակարդակների կառավարությունները պետք է խրախուսեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը երաշխավորող մեխանիզմների իրականացմանը և ամրապնդեն նրանց ինտեգրման հնարավորությունները:

6.33. Բոլոր մակարդակների կառավարությունները պետք է իրականացնեն և խրախուսեն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ և տնտեսական ինտեգրման հետագա միջոցառումների համակարգը:

Գլուխ VII

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

7.1. Այս գլխում հատուկ հաշվի են առնվում երկրորդ գլխում և հատկապես ներածական հատվածներում ընդգրկված սկզբունքները:

Ա. Վերարտադրողական իրավունքներ և վերարտադրողական առողջություն

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

7.2. Վերարտադրողական առողջությունը բնութագրվում է որպես վերարտադրողական ֆունկցիայի իրականացման հետ կապված լիակատար ֆիզիկական ու սոցիալական բարեկեցության վիճակ և ոչ թե միայն վերարտադրողական համակարգի հիվանդությունների կամ արատի բացակայություն: Այդ իսկ պատճառով վերարտադրողական առողջությունը ենթադրում է, որ մարդիկ ունեն բավարարվածություն տրամադրող և անվտանգ սեռական կյանքի հնարավորություն և, որ նրանք ունեն վերարտադրվելու հնարավորություն և կարող են ազատ որոշել՝ անե՞լ դա, ե՞րբ անել և ինչպիսի՞ հաճախականությամբ: Վերջին պայմանը ենթադրում է, որ տղամարդիկ և կանայք ունեն իրենց ընտրությամբ ընտանիքի պլանավորման անվտանգ, արդյունավետ, մատչելի և ընդունելի մեթոդների մասին տեղեկացվածության ու հասանելիության իրավունք, ինչպես նաև օրենքների սահմաններում մանկածնման կարգավորման մեթոդի ընտրության այլ ձևեր և պատշաճ առողջապահական այնպիսի ծառայությունների հասանելիություն, որոնք կնոջը թույլ կտան բարեհաջող անցնել անվտանգ հղիության և ծննդաբերության փուլերով և ամուսնական զույգին կընձեռեն առողջ նորածին ունենալու լավագույն հնարավորություն: Համաձայն վերարտադրողական առողջության վերոհիշյալ բնորոշմանը, վերարտադրողական առողջության ապահովումը բնութագրվում է որպես վերարտադրողական առողջության խնդիրները կանխարգելելու և լուծելու միջոցով՝ վերարտադրողական առողջությանն ու բարեկեցությանը նպաստող մեթոդների, տեխնիկաների և ծառայությունների համատեղություն: Այն նաև ներառում է սեռական առողջությունը, որի նպատակն է կյանքի և անձնական հարաբերությունների ամրապնդումը, և ոչ թե միայն վերարտադրողականությանը ու սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության և ծառայությունների տրամադրումը:

7.3. Հաշվի առնելով վերոհիշյալ բնութագրումը, վերարտադրողական իրավունքները ընդգրկում են մարդու որոշակի իրավունքներ, որոնք արդեն ընդունված են ազգային օրենսդրություններով, մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով և Միավորված ազգերի կազմակերպության համաձայնագրերի այլ փաստաթղթերով: Այս իրավունքները հենվում են այն գաղափարի վրա, որ բոլոր զույգերը և անհատները ունեն իրավունք՝ ազատ և պատասխանատվորեն որոշելու իրենց երեխաների քանակը,

ծնունդների միջև միջակայքը և ժամկետները, ունեն տեղեկություններ և միջոցներ դա անելու համար, ինչպես նաև ունեն առավել որակյալ սեռական ու վերարտադրողական առողջության իրավունք: Դա նաև ներառում է նրանց իրավունքը՝ ընդունելու խտրականությունից, հարկադրանքից և բռնությունից զերծ վերարտադրողականությանը վերաբերող որոշումներ, ինչպես ներկայացված է մարդու իրավունքների մասին փաստաթղթերում: Այդ իրավունքի կիրառման ժամանակ նրանք պետք է հաշվի առնեն ծնված և ապագա երեխաների կարիքները և իրենց պարտավորությունները համայնքի առջև: Այդ իրավունքներից պատասխանատվությամբ օգտվելու խրախուսումը պետք է լինի վերարտադրողական առողջության, այդ թվում ընտանիքի պլանավորման ոլորտում, կառավարության և համայնքների կողմից աջակցվող քաղաքականությունների և ծրագրերի հիմնակետը: Նրանց պարտավորությունների շրջանակներում անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել հավասար գենդերային հարաբերությունների խրախուսմանը և մասնավորապես դեռահասների համար տեղեկատվության և ծառայությունների բավարարմանը՝ հնարավորություն տալով նրանց դրական և պատասխանատու կերպով վերաբերվել իրենց սեռականությանը: Աշխարհի շատ ժողովուրդների համար վերարտադրողական առողջությունը դեռ շարունակում է մնալ անհասանելի հետևյալ գործոնների պատճառով. մարդու սեռականության և վերարտադրողական առողջության տեղեկությունների և ծառայությունների ոչ պատշաճ ու ցածրորակ մակարդակ, բարձր ռիսկի հետ կապված սեռական վարքագծի տարածվածություն, խտրական սոցիալ պրակտիկա, բացասական վերաբերմունք կանանց և աղջիկների հանդեպ, շատ կանանց և աղջիկների հնարավորությունների սահմանափակություն՝ իրենց սեռական և վերարտադրողական կյանքը ղեկավարելու հարցերում: Հատկապես խոցելի են դեռահասները՝ որոշ երկրներում տեղեկատվության պակասի և համապատասխան ծառայությունների անհասանելիության պատճառով: Տարեց կանայք և տղամարդիկ բախվում են վերարտադրողական և սեռական առողջության որոշակի խնդիրների հետ, որոնք հաճախ նույնական լուծում չեն ստանում:

7.4. Ներկա Գործողությունների ծրագրի իրականացումը ուղղորդվում է վերարտադրողական առողջության վերոհիշյալ բնորոշմամբ, որը ներառում է նաև սեռական առողջությունը:

Նպատակներ

7.5. Նպատակներն են՝

(ա) Երաշխավորել վերարտադրողական առողջության հասանելի, մատչելի, ընդունելի և բոլորի համար հարմար ծառայությունների, այդ թվում ընտանիքի պլանավորման վերաբերյալ բազմազան և հստակ տեղեկությունների տրամադրումը:

(բ) Խրախուսել և աջակցել երեխաներ ունենալու և ընտանիքի պլանավորման մեթոդների հարցերում կամավոր պատասխանատու որոշումներ կայացնելու, մանկածնման կարգավորման այլ մեթոդների ընտրությունը, որոնք չեն հակասում օրենքին, ինչպես նաև դրա համար տեղեկություններ, կրթություն և միջոցներ ունենալու պայմանները:

(գ) Բավարարել կյանքի ընթացքում փոփոխվող վերարտադրողական առողջության կարիքները և դա իրականացնել՝ հաշվի առնելով տեղական համայնքներում հանգամանքների տարբերությունները:

Գործողություններ

7.6. Մինչև 2015թ. բոլոր երկրները պետք է ձգտեն հնարավորինս արագ կարգով առաջնային բուժօգնության շրջանակներում ապահովել վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիությունը բոլոր տարիքային խմբերի անհատների համար: Առաջնային բուժօգնության կոնտեքստում վերարտադրողական առողջության ծառայությունները պետք է նախատեսեն ընտանիքի պլանավորման վերաբերյալ խորհրդատվություն, տեղեկատվություն, խորհրդատվության ծառայություններ, մինչծննդյան խնամքին վերաբերող կրթական ծառայություններ, անվտանգ ծննդաբերություն և հետծննդյան խնամք, մասնավորապես կրծքով կերակրում և նորածնի ու մոր առողջության պահպանում, չբերության կանխարգելում և պատշաճ բուժում, 8.25 կետում նշված աբորտների պայմանների իրականացում, ներառելով աբորտների կանխարգելումը և աբորտների հետևանքների վերացումը, վերարտադրողական օրգանների ինֆեկցիաների, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և վերարտադրողական առողջության հետ կապված այլ իրավիճակների բուժում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում մարդու սեռականության, վերարտադրողական առողջության և ծնողական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության, լուսաբանման և խորհրդատվության տրամադրում: Անհրաժեշտության դեպքում, միշտ պետք է հասանելի լինի ուղեգրման հնարավորությունը ընտանիքի պլանավորման ծառայությունների և հղիության, ծննդաբերության և աբորտների, չբերության, վերարտադրողական օրգանների ինֆեկցիաների, կրծքի և վերարտադրողական օրգանների քաղցկեղի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքերում: Առաջնային բուժօգնության և վերարտադրողական առողջության ծրագրերի անբաժանելի բաղադրիչ պետք է լինի այնպիսի վնասակար սովորությունների վերացումը, ինչպիսին է կանանց սեռական օրգանների հաշմեցումը:

7.7. Վերարտադրողական առողջության ապահովման ծրագրերը պետք է ուղղված լինեն կանանց, ինչպես նաև դեռահասների, կարիքների բավարարմանը և պետք է երաշխավորեն կանանց ներգրավվածությունը այդ ծառայությունների ղեկավարման, նախագծման, կառավարման, իրականացման, կազմակերպման և գնահատման հարցերում: Կառավարությունները և մյուս կազմակերպությունները պետք է արդյունավետ քայլեր կատարեն՝ առողջապահության ապահովման համակարգի բոլոր մակարդակներում կանանց ընդգրկելու հարցում:

7.8. Վերարտադրողական առողջությունը դեռահասների և տղամարկանց համար հասանելի դարձնելու համար անհրաժեշտ է մշակել նորարարական ծրագրեր: Այդպիսի ծրագրերը պետք է կրթեն տղամարդկանց և նրանց հնարավորություն ընձեռեն ստանձնելու հավասար պարտավորություններ ընտանիքի պլանավորման, տնային տնտեսության վարման և երեխաների դաստիարակության, ինչպես նաև սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելման հարցերում: Տղամարդիկ այդ ծրագրերի ազդեցության ներքո պետք է լինեն իրենց աշխատավայրերում, տանը և հանգստի

վայրերում: Տղաները և դեռահասները, իրենց ծնողների աջակցության և ուղղորդման ներքո, ինչպես նաև Երեխայի իրավունքների կոնվենցիայի դրույթների համաձայն, պետք է նույնպես ներգրավվեն դպրոցների, երիտասարդական կազմակերպությունների միջոցով կամ ժամանցի վայրերում: Անհրաժեշտ է խրախուսել և տեղեկատվության ու խորհրդատվության միջոցով հասանելի դարձնել տղամարդկանց կողմից օգտագործվող հակաբեղմնավորման և սեռավարակների, այդ թվում ՁԻԱՀ-ի, կանխարգելման համար կամավոր և համապատասխան մեթոդների կիրառումը:

7.9. Կառավարությունները պետք է նպաստեն վերարտադրողական առողջության հարցերում համայնքների ավելի մեծ մասնակցությանը՝ հասարակական առողջապահական ծրագրերի ղեկավարման ապակենտրոնացման, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների և մասնավոր առողջապահական ծառայություններ տրամադրող կենտրոնների հետ համագործակցության միջոցով: Վերարտադրողական առողջության բարելավման հարցերում անհրաժեշտ է ներգրավել բոլոր տեսակի հասարակական կազմակերպություններին, ներառելով տեղում գործող կանանց խմբերը, արհմիությունները, կոոպերատիվները, երիտասարդական ծրագրերը և կրոնական խմբերը:

7.10. Առանց զարգացող երկրներում միջազգային օժանդակության ծրագրերին վնասելու, միջազգային հանրությունը պետք է, ըստ պահանջի իր ուշադրությունը բևեռի այն կարիքների բավարարման վրա, որոնք կապված են մասնագիտական վերապատրաստման, տեխնիկական աջակցության, հակաբեղմնավորիչների կարճատև ապահովման հետ, ինչպես նաև այն երկրների կարիքների բավարարման վրա, որոնք գտնվում են կենտրոնացված ղեկավարումից դեպի շուկայական տնտեսություն անցումային փուլում, որտեղ վերարտադրողական առողջության իրավիճակը շատ անբարենպաստ է և , որոշ դեպքերում, ավելի է վատթարանում: Միևնույն ժամանակ այդ երկրները իրենք պետք է առաջնային գերակայություն համարեն վերարտադրողական առողջության ծառայությունների բարելավումը, ներառելով հակաբեղմնավորիչ պարագաների լայն սպեկտրը, և պետք է զբաղվեն ծնելիության կարգավորման հարցում աբորտների դերի նվազեցման հարցերով, բավարարելով այդ երկրների կանանց կարիքները ավելի լայն տեղեկատվության և ավելի մեծ ընտրությունների վերաբերյալ:

7.11. Աշխարհի շատ մասերում միգրանտները և տեղահանված մարդիկ ունեն սահմանափակ հասանելիություն դեպի վերարտադրողական առողջության ոլորտի ծառայություններ և նրանց վերարտադրողական առողջությունը և իրավունքները որոշակի լուրջ վտանգների կարող են ենթարկվել: Ծառայությունների մատուցման ժամանակ առավել ուշադիր պետք է լինել որոշ կանանց և դեռահասների կարիքների, նրանց, հաճախ անզոր, իրավիճակների նկատմամբ, հատուկ ուշադրություն դարձնելով նրանց, որքեր դարձել են սեռական բռնության զոհ:

Բ. Ընտանիքի պլանավորում

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

7.12. Ընտանիքի պլանավորման բնագավառում իրականացվող ծրագրերի նպատակը պետք է լինի զույգերին և անհատներին հնարավորություն տալու ազատ և

պատասխանատու որոշումներ կայացնել իրենց երեխաների քանակի, նրանց միջև միջակայքի վերաբերյալ և ունենալ դա իրականացնելու համար տեղեկությունների ու միջոցների, ազատ ընտրություն կատարելու, ինչպես նաև անվտանգ և արդյունավետ մեթոդների օգտագործման հնարավորություն: Հանրակրթական և ընտանիքի պլանավորման տարբեր ծրագրերի իրականացման հաջողությունը ցույց է տալիս, որ տեղեկացված անհատները, որտեղ որ լինեն, կարող են գործել և կգործեն մեծ պատասխանատվությամբ, հաշվի առնելով իրենց, իրենց ընտանիքների և համայնքների կարիքները: Գիտակցված ազատ ընտրության սկզբունքը մեծ նշանակություն ունի ընտանիքի պլանավորման ծրագրերի երկարաժամկետ հաջողության համար: Պետք է բացառել ցանկացած ձևի հարկադրանքը: Յուրաքանչյուր հասարակությունում կան բազմաթիվ սոցիալական և տնտեսական խթանիչ և ապախթանիչ գործոններ, որոնք ազդում են երեխաներ ունենալու և ընտանիքի կազմերին վերաբերող որոշումներ կայացնելու վրա: Վերջին դարի ընթացքում շատ կառավարություններ այդպիսի համակարգերի հետ փորձարկումներ են կատարել, ներառելով որոշակի խթանների և ապախթանների օգտագործումը՝ ծնելիության ցուցանիշները բարձրացնելու կամ նվազեցնելու նպատակով: Այդ համակարգերից շատերը միայն աննշան ազդեցություն են թողել ծնելիության վրա, մինչդեռ մյուսները եղել են չափազանց արդյունավետ: Կառավարության նպատակները ընտանիքի պլանավորման հարցերում պետք է սահմանվեն՝ ելնելով տեղեկությունների և ծառայությունների տրամադրման չբավարարված կարիքներից: Լինելով զարգացման բնագավառում պետական ռազմավարությունների օբյեկտ՝ ժողովրդագրական նպատակները չպետք է հարկադրվեն ընտանիքի պլանավորման ծառայություն մատուցողների վրա հաճախորդների հավաքագրման կամ քվոտաների հավաքման նպատակով:

7.13. Անցած երեք տասնամյակների ընթացքում բեղմնականխման ավելի ապահով, չնայած դեռ որոշ առումներով ոչ նույնական, մեթոդների աճող հասանելիության շնորհիվ, աշխարհում ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվել մարդու համար՝ վերարտադրողականության հարցերում ընտրություն կատարելու և պատասխանատու որոշումներ կայացնելու հարցերում: Ներկայումս զարգացող տարածաշրջաններում ապրող զույգերի մոտ 55 տոկոսը օգտագործում են ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ: Այս թիվը խոսում է 60-ականներից հետո գրեթե հնգակի ավելացման մասին: Ընտանիքի պլանավորման ծրագրերը զգալիորեն նպաստել են զարգացող երկրների ծնելիության միջին ցուցանիշների նվազմանը՝ 1960թ. մեկ կնոջը հասնող 6-7 երեխայից, այսօր՝ մոտավորապես 3-4 երեխա: Ինչևէ, ժամանակակից բեղմնականխման մեթոդների ամբողջ ընտրանին դեռևս անհասանելի է աշխարհում առնվազն 350 միլիոն զույգերի համար, որոնցից շատերը կցանկանային հետաձգել մյուս հղիությունը կամ խուսափել դրանից: Հետազոտության տվյալները վկայում են այն մասին, որ աշխարհում մոտավորապես ևս 120 միլիոն կին կօգտագործեր ընտանիքի պլանավորման որևէ ժամանակակից մեթոդ, եթե տիրապետեր հստակ տեղեկությունների և հնարավորություն ունենար օգտվելու համապատասխան ծառայություններից, և եթե իր զուգընկերը, ընտանիքի անդամները կամ համայնքները լինեին ավելի օժանդակող: Այս թվերը չեն ներառում ակտիվ սեռական կյանք վարող չամուսնացած անհատների զգալի և շարունակ աճող բանակը, որոնք տեղեկություններ և ծառայություններ ստանալու ցանկություն ունեն: 90-ականների ընթացքում վերարտադրողական տարիքի զույգերի թիվը ավելանալու է մոտավորապես տարին 18 միլիոն մարդ տեմպերով: Նրանց կարիքները բավարարելու համար հաջորդ մի քանի տարիների ընթացքում անհրաժեշտ կլինի ընտանիքի

պլանավորման և հակաբեղմնավորիչ պարագաների արագ տարածում: Ընտանիքի պլանավորման ծառայությունների որակը հաճախ ուղղակիորեն կապված է հակաբեղմնավորիչների օգտագործման մակարդակի և շարունակականության, ինչպես նաև ծառայությունների նկատմամբ պահանջարկի ավելացման հետ: Ընտանիքի պլանավորման ծրագրերը ավելի լավ արդյունքների են հասնում այն դեպքերում, երբ մաս են հանդիսանում կամ կապված են լինում վերարտադրողական առողջության այնպիսի լայն ծրագրերի հետ, որոնք ուղղված են դրա հետ սերտորեն առնչվող առողջապահական կարիքների բավարարմանը և երբ կանայք լիովին ներգրավված են ծառայությունների նախագծման, տրամադրման, ղեկավարման կամ գնահատման հարցերում:

Նպատակներ

7.14. Նպատակներն են՝

(ա) Օգնել զույգերին և անհատներին հասնելու իրենց վերարտադրողական առողջության հետ կապված նպատակներին, այնպես, որ դա նպաստի օպտիմալ առողջության, պատասխանատվության և ընտանիքի բարօրության ապահովմանը, հարգի բոլոր մարդկանց արժանապատվությունը և նրանց իրավունքը՝ ընտրելու իրենց երեխաների քանակը, նրանց միջև միջակայքը և երեխաների ծնվելու ժամանակը:

(բ) Կանխել անցանկալի հղիությունները և նվազեցնել բարձր ռիսկի հղիությունների, ինչպես նաև հիվանդացության և մահացության դեպքերը:

(գ) Ապահովել բարձրորակ, ընդունելի և հասանելի ընտանեկան առողջության ծառայությունների ապահովումը բոլոր նրանց համար, ովքեր ունեն դրանց կարիքը և ունեն դրանցից օգտվելու ցանկություն՝ գաղտնիության ապահովման պայմաններում:

(դ) Բարելավել ընտանիքի պլանավորման ոլորտում առաջարկությունների, տեղեկատվության, կրթության, հաղորդակցման, խորհրդատվության և ծառայությունների որակը:

(ե) Բարձրացնել տղամարդկանց մասնակցությունը ընտանիքի պլանավորման գործնական կիրառման հարցերում և նրանց կողմից այդ պարտավորությունների որոշակի մասի ստանձնումը:

(զ) Խրախուսել կրծքով կերակրումը՝ երեխաների ծնունդների միջև միջակայքի ավելացման նպատակով:

Գործողություններ

7.15. Կառավարությունները և միջազգային հանրությունը պետք է օգտագործեն իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ ընտանիքի պլանավորման ազատ ընտրության սկզբունքը սատարելու համար:

7.16. Հաջորդ մի քանի տարիների ընթացքում բոլոր երկրները պետք է գնահատեն իրենց երկրներում ընտանիքի պլանավորման բարձրորակ ծառայությունների չբավարարված

կարիքների ծավալը և դրանց ինտեգրումը վերարտադրողական առողջության ապահովման կոնտեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնակչության առավել խոցելի և ծառայությունների ոլորտից դուրս մնացած խմբերին: Բոլոր երկրները պետք է քայլեր ձեռնարկեն հնարավորինս շուտ բավարարելու իրենց բնակչության ընտանիքի պլանավորման կարիքները և բոլոր դեպքերում, մինչև 2015թ, պետք է ձգտեն ապահովելու համընդհանուր հասանելիություն դեպի ընտանիքի պլանավորման անվտանգ և հուսալի մեթոդներ, ինչպես նաև դեպի օրենքի սահմաններում վերարտադրողական առողջության հետ առնչվող համապատասխան ծառայություններ: Նպատակը պետք է լինի օժանդակել զույգերին և անհատներին, որ նրանք հասնեն իրենց վերարտադրողական նպատակների իրականացմանը և տալ նրանց հնարավորություն՝ օգտվելու երեխաներ ունենալու ընտրության իրավունքից:

7.17. Բոլոր մակարդակների կառավարական մարմիններին առաջարկվում է ստեղծել սպառողի շահերից բխող ծառայությունների մոնիտորինգի և գնահատման համակարգեր՝ նպատակ ունենալով բացահայտել, կանխարգելել ու վերահսկել ընտանիքի պլանավորման ծառայությունների ղեկավարների, ծառայություն մատուցողների խախտումները և երաշխավորել ծառայությունների որակի շարունակական բարելավումը: Այդ նպատակով կառավարական մարմինները պարտավոր են երաշխավորել մարդու իրավունքների կիրառումը և ընտանիքի պլանավորման ծառայությունների, ինչպես նաև դրա հետ կապակցված վերարտադրողական առողջության ծառայությունների մատուցման շրջանակներում էթիկական և մասնագիտական նորմերի պահպանումը, որպեսզի մարդը հնարավորություն ունենա տալու իր պատասխանատու, կամավոր և իրազեկված համաձայնությունը: In-vitro բեղմնավորման տեխնիկայի կիրառումը անհրաժեշտ է իրականացնել բոլոր էթիկական և բժշկական ստանդարտներին համապատասխան:

7.18. Հասարակական կազմակերպությունները պետք է ակտիվ դեր ունենան համայնքի և ընտանիքի կողմից աջակցության ցուցադրման համախմբման, վերարտադրողական առողջության, այդ թվում ընտանիքի պլանավորման, հասանելիության և ընդունման բարձրացման հարցերում և պետք է համագործակցեն կառավարությունների հետ ծառայությունների նախապատրաստման և տրամադրման գործընթացում՝ հիմնվելով գիտակցված ընտրության գաղափարի վրա, ինչպես նաև աջակցեն հասարակական ու մասնավոր սեկտորի ծրագրերի մոնիտորինգի իրականացմանը:

7.19. Որպես չբավարարված կարիքների բավարարման մաս, բոլոր երկրները պետք է ձգտեն բացահայտելու և վերացնելու այն բոլոր արգելքները, որոնք խոչընդոտում են ընտանիքի պլանավորման ծառայությունների օգտագործմանը: Այդ արգելքների մի մասը կապված է գոյություն ունեցող ընտանիքի պլանավորման ծառայությունների ոչ բավարար և ցածր որակի, ինչպես նաև առկա գների հետ: Ընտանիքի պլանավորման բնագավառում իրականացվող բոլոր պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների նպատակը պետք է լինի մինչև 2005թ. ապահովել ընտանիքի պլանավորման օգտագործման ծրագրերի իրականացման հետ առնչվող բոլոր արգելքների վերացումը՝ տեղեկատվության և ծառայությունների վերափոխման և տարածման միջոցով, ինչպես նաև օգտագործելով այլ մեթոդներ, որպեսզի զույգերն ու անհատները հնարավորություն ունենան ազատ և տեղեկացված որոշումներ կայացնել իրենց երեխաների քանակի, նրանց

միջև միջակայքի, երեխաների ծնվելու ժամկետների միջև ժամանակահատվածի որոշման հարցերում և զերծ մնան սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից:

7.20. Ավելի կոնկրետ, կառավարությունները պետք է այնպես անեն, որ ամուսնական զույգերի և անհատների համար ավելի հեշտ լինի պատասխանատվություն ստանձնելը իրենց վերարտադրողական առողջության հարցերում՝ վերացնելով ընտանիքի պլանավորման ծառայությունների և մեթոդների օգտագործմանը խանգարող ավելորդ իրավական, բժշկական, կլինիկական և այլ արգելքները :

7.21. Բոլոր քաղաքական և համայնքային ղեկավարները պարտավոր են կատարել ուժեղ, կայուն և լավ տեսանելի դեր՝ ընտանիքի պլանավորման և վերարտադրողական առողջության ծառայությունների խրախուսման և օրինականացման հարցերում: Բոլոր մակարդակների կառավարական մարմիններին կոչ է արվում բոլոր հնարավոր միջոցներով բարենպաստ պայմաններ ստեղծել ընտանիքի պլանավորման և վերարտադրողական առողջության բարձորակ ծառայությունների և իրազեկման համար: Եվ վերջապես, բոլոր մակարդակների ղեկավար և օրինապահ մարմինները պետք է հաստատեն իրենց օժանդակությունը վերարտադրողական առողջության, այդ թվում ընտանիքի պլանավորման ապահովման ոլորտին, հատկացնելով բավարար բյուջետային, մարդկային և վարչական ռեսուրսներ՝ բավարարելու այն մարդկանց կարիքները, որոնք հնարավորություն չունեն ամբողջությամբ վճարելու ծառայությունների համար:

7.22. Բնակչության և զարգացման նպատակներին հասնելու համար կառավարություններին կոչ է արվում կենտրոնացնել ջանքերը ոչ թե խրախուսման և ապախրախուսման համակարգերի, այլ կրթական և կամավոր միջոցառումների կիրառման վրա:

7.23. Առաջիկա տարիների ընթացքում ընտանիքի պլանավորման ծրագրերի կողմից զգալի ջանքեր պետք է գործադրվեն ծառայությունների որակի բարելավման նպատակով: Այլ միջոցառումների հետ մեկտեղ ծրագրերը պետք է.

(ա) Ընդունեն, որ ամուսնական զույգերի և անհատների համար համապատասխան մեթոդները տարբերվում են, կախված նրանց տարիքից, ընտանիքում երեխաների քանակից, ընտանիքի չափերի հետ կապված նախընտրություններից և այլ գործոններից: Պետք է երաշխավորեն, որ կանայք և տղամարդիկ ունենան դեպի անվտանգ և արդյունավետ ընտանիքի պլանավորման մեթոդների տեղեկացվածության և հասանելիության հնարավորություն, որպեսզի նրանք կարողանան կատարել ազատ և իրազեկ ընտրություն:

(բ) Ապահովել ընտանիքի պլանավորման վերաբերյալ հասանելի, ամբողջական և հստակ տեղեկատվություն, այդ թվում առողջության վրա դրանց ունեցած ռիսկերի և օգտակարության, հնարավոր կողմնակի ազդեցությունների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների տարածման կանխարգելման հարցում դրանց արդյունավետությունը:

(գ) Դարձնել ծառայությունները օգտվողների համար ավելի անվտանգ, հասանելի, հարմար և ընդունելի և նյութատեխնիկական համակարգերի ամրապնդման միջոցով

երաշխավորել անհրաժեշտ բարձրորակ հակաբեղմնավորիչների բավարար և շարունակական մատակարարում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է պահպանել գաղտնիությունը:

(դ) Ընդլայնել և զարգացնել սեռական և վերարտադրողական առողջության հարցերով բոլոր ծառայություն մատուցողների, բժշկական լուսաբանման ծառայությունների աշխատողների և առողջապահական համակարգի ղեկավարների ֆորմալ և ոչ ֆորմալ պատրաստվածությունը:

(ե) Երաշխավորել հետագա համապատասխան խնամք՝ ներառելով հակաբեղմնավորիչների կողմնակի ազդեցությունների բուժումը:

(զ) Երաշխավորել համապատասխան վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիությունը տեղում կամ ապահովել ուղեգրման լավ մեխանիզմի կիրառում:

(է) Ցսահմանափակվելով քանակական ցուցանիշներով, ավելի մեծ ուշադրություն ցուցաբերել որակական այնպիսի ցուցանիշներին, որոնք հաշվի են առնում ներկա և ապագա ծառայություններից օգտվողների կարիքներն այնպիսի միջոցների օգտագործմամբ, ինչպիսիք են տեղեկատվական համակարգերի և հետազոտման մեթոդների արդյունավետ ղեկավարումը, ծառայությունների օգտագործման գնահատումը ժամանակին իրականացնելու միջոցով:

(ը) Ընտանիքի պլանավորման և վերարտադրողական առողջության ծրագրերը պետք է խրախուսեն կրծքով կերակրումը և համապատասխան ծառայությունները, որը միաժամանակ նպաստում է երեխաների ծնունդների միջև միջակայքի ավելացմանը, մայրական և նորածնային առողջության պահպանմանը և երեխայի գոյատևման մակարդակի բարձրացմանը:

7.24. Կառավարությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ օգնելու կանանց խուսափել աբորտից, որը երբևէ չի կարող խրախուսվել որպես ընտանիքի պլանավորման մեթոդ և բոլոր դեպքերում երաշխավորել մարդկային վերաբերմունքի և խորհրդատվության ապահովում այն կանանց համար, որոնք դիմել են բժշկի՝ հղիության արհեստական ընդհատման համար:

7.25. Առաջիկա տասնամյակի ընթացքում և հետագայում, հակաբեղմնավորիչների աճող պահանջը բավարարելու նպատակով, միջազգային հանրությունը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի՝ հիմնելու հակաբեղմնավորիչ միջոցները և զարգացող ու անցումային տնտեսություն ունեցող երկրներում իրականացվող վերարտադրողական առողջության ծրագրերի հետ առնչվող այլ պարագաները կոորդինացնող համակարգեր, և ստեղծել գլոբալ, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային պայմաններ՝ դրանց մատակարարումը ապահովելու համար: Միջազգային հանրությունը նաև պետք է դիտարկի այնպիսի միջոցների իրականացումը, ինչպիսիք են զարգացող երկրներին նորագույն տեխնոլոգիաների փոխանցումը՝ հնարավորություն ընձեռելով արտադրել և բաժանել բարձրորակ հակաբեղմնավորիչներ և վերարտադրողական առողջության ապահովման համար անհրաժեշտ այլ պարագաներ, նպատակ ունենալով ամրապնդել

այդ երկրների ինքնապահովումը: Ըստ հետաքրքրված երկրների պահանջի, Համաշխարհային առողջապահության կազմակերպությունը պետք է շարունակի տրամադրել խորհրդատվություն ընտանիքի պլանավորման մեթոդների որակի, ապահովության և արդյունավետության մասին:

7.26. Վերարտադրողական առողջության ապահովման ծրագրերի իրականացման ընթացքում պետք չէ սահմանափակվել միայն պետական սեկտորով, այլ հարկավոր է ներգրավել մասնավոր սեկտորը և հասարակական կազմակերպություններին, հաշվի առնելով համայնքների կարիքները և միջոցները, անհրաժեշտության դեպքում ընդգրկել արդյունավետ ռազմավարություններ ծախսերի փոխհատուցման և ծառայությունների մատակարարման համար, ներառելով սոցիալական մարկետինգի և համայնքային մակարդակում տրամադրվող ծառայությունները: Հասանելիությունը բարելավելու համար պետք է գործադրել հատուկ ջանքեր բնակչության ներգարավվածության ընդլայնման միջոցով:

Գ. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ և մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) կանխարգելում

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

7.27. Աշխարհում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների տարածվածության ցուցանիշը բարձր է և այն դեռ շարունակում է բարձրանալ: Իրավիճակը ավելի է ծանրացել ՄԻԱՎ-ի համաճարակի առաջ գալուն պես: Չնայած նրան, որ սեռական ճանապարհով փոխանցվող որոշ հիվանդությունների տարածվածության ցուցանիշները կայունացել են, շատ տարածաշրջաններում դեռ նկատվում է հիվանդացության դեպքերի քանակի աճ:

7.28. Կանանց հանդիպող սոցիալ-տնտեսական դժվարությունները վերջիններիս առավել խոցելի են դարձնում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ-ի նկատմամբ, ինչի մասին, օրինակ, վկայում է այն, որ նրանց զուգընկերները վարում են սեռական անվտանգ կյանք: Ի տարբերություն տղամարդկանց, կանանց մոտ հաճախ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ախտանշանները թաքնված են լինում, ինչը ավելի է բարդացնում դրանց ախտորոշումը, իսկ դրա հետևանքները շատ ավելի ծանր են լինում կանանց առողջության համար, ներառելով չբերության և արտարգանդային հղիության բարձր հավանականությունը: Վարակված տղամարդուց կնոջը հիվանդության փոխանցման վտանգը նույնպես ավելի մեծ է, քան հակառակ դեպքում և շատ կանայք անզոր են ինքնապաշտպանության համար որևէ քայլեր ձեռնարկելու համար:

Նպատակներ

7.29. Նպատակը հետևյալն է. ակտիվացնել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ինչպես նաև սեռավարակների հետևանքով առաջացող բարդությունների կանխարգելման, նվազեցման և բուժմանն ուղղված ջանքերը, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և աղջիկների խնդիրներին:

Գործողություններ

7.30. Վերարտադրողական առողջության ծրագրերը պետք է ակտիվացնեն իրենց ջանքերը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և վերարտադրողական օրգանների այլ վարակների կանխարգելման, հայտնաբերման և բուժման հարցերում, հատկապես առաջնային բուժօգնության մակարդակում: Հատուկ տեղեկատվական և քարոզչական միջոցառումներ պետք է իրականացվեն ազգաբնակչության այն խավերի համար, որոնք չունեն վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության հնարավորություն:

7.31. Բոլոր բուժաշխատողները, այդ թվում ընտանիքի պլանավորման ծառայություն մատուցողները, պետք է մասնագիտացված դասընթացներ անցնեն սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը, հայտնաբերմանը և խորհրդատվությանը վերաբերող թեմաներով, հատկապես կանանց և երիտասարդներին ախտահարող հիվանդությունների թեմաներով:

7.32. Վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունների անբաժանելի մաս պետք է դառնան պատասխանատու սեռական վարքագծի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ-ի մասին տեղեկացվածությունը, ուսուցումը և խորհրդատվությունը:

7.33. Վերարտադրողական առողջության ապահովման բոլոր ծառայությունների անբաժանելի մաս պետք է լինի բարձրորակ պահպանակների մատակարարումը և տարածումը: Բոլոր համապատասխան միջազգային կազմակերպությունները, այդ թվում Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, պետք է զգալիորեն ավելացնեն իրենց մատակարարման ծավալները: Կառավարությունները և միջազգային հանրությունը պետք է օգտագործեն բոլոր հնարավորությունները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումը և ցուցանիշները նվազեցնելու նպատակով:

Դ. Մարդու սեռականություն և գենդերային հարաբերություններ

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

7.34. Մարդու սեռականությունը և գենդերային հարաբերությունները սերտորեն կապված են միմյանց հետ և միասին ազդում են կնոջ և տղամարդու սեռական առողջության ապահովման և պահպանման, ինչպես նաև նրանց վերարտադրողական կյանքը ղեկավարելու հնարավորությունների վրա: Սեռական հարաբերությունների և վերարտադրողականության հարցերում կանանց և տղամարդկանց հավասարազոր հարաբերությունները, այդ թվում լիակատար հարգանքը՝ մարդու ֆիզիկական անձեռնմխելիության հարցում, պահանջում են փոխադարձ հարգանք և սեռական վարքագծի հետևանքների համար պատասխանատվության ընդունում: Սեռական վարքագծի հարցերում պատասխանատու վերաբերմունքը, գենդերային հարաբերությունների հարցերում նրբանկատությունը և հավասարությունը, մասնավորապես ձևավորված լինելով անձի կայացմանը տարիների ընթացքում, նպաստում են կանանց և տղամարդկանց միջև հարգալից և ներդաշնակ հարաբերությունների հաստատմանը:

7.35. Կանանց հանդեպ բռնությունը, հատկապես ընտանեկան բռնությունը և բռնաբարությունը, ունի լայն տարածվածություն և ավելի ու ավելի շատ կանայք հայտնվում են ՁԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների վտանգի առջև՝ իրենց զուգընկերների անվտանգ սեռական վարքագծի պատճառով: Մի շարք երկրներում կանանց սեռականությունը զսպելու նպատակով կիրառվող վնասակար սովորությունները հանգեցրել են ահռելի տառապանքների: Դրանց շարքին են դասվում կանանց սեռական օրգանների հաշմեցումը, որը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում և կնոջ կյանքի ողջ ընթացքում առողջության համար մեծ վտանգ է ներկայացնում:

Նպատակներ

7.36. Նպատակներն են՝

(ա) Նպաստել սեռականության, տղամարդկանց և կանանց միջև համատեղ հարգանքի և պատասխանատու հավասարազոր հարաբերությունների նույնական ձևավորմանը և անհատների կյանքի որակի բարելավմանը:

(բ) Երաշխավորել, որ կանայք և տղամարդիկ ունենան հասանելիություն դեպի այնպիսի տեղեկություններ, ուսուցում և ծառայություններ, որոնք անհրաժեշտ են ներդաշնակ սեռական հարաբերությունների, ինչպես նաև վերարտադրողական իրավունքների և պարտավորությունների համար:

Գործողություններ

7.37. Անհրաժեշտ է օժանդակել համալիր սեռական դաստիարակությանը և ծառայությունների մատուցմանը երիտասարդներին,երաշխավորելով նրանց ծնողների աջակցությունը և սատարումը՝ համաձայն Երեխայի իրավունքների պաշտպանության կոնվենցիայի, հատուկ շեշտելով իրենց սեռական առողջության և պտղաբերության համար տղամարդկանց ունեցած պատասխանատվությունը, ինչպես նաև օգնելու նրանց այդ պատասխանատվության իրականացման հարցերում: Լուսաբանման աշխատանքները պետք է սկսեն ընտանիքում, համայնքում և դպրոցում համապատասխան տարիքում, սակայն ոչ ֆորմալ կրթության և համայնքային բազմազան գործունեության միջոցով պետք է ընդգրկեն նաև տղամարդկանց:

7.38. Անցանկալի հղիությունների կանխարգելման, ՁԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների արագ տարածման, սեռական բռնության և չարաշահումներից ելնելով, կառավարությունները պետք է կառուցեն իրենց ազգային քաղաքականությունները հիմնվելով սեռականության հանդեպ մարդու պատասխանատու վերաբերմունքի և ներկա սեռական վարքագծի իրականության ավելի լավ գիտակցման անհրաժեշտության պայմաններում:

7.39. Կանանց, երիտասարդներին և երեխաներին ցանկացած տեսակի բռնությունից,այդ թվում սեռական բռնությունից, շահագործումից, թրաֆիքինգից և դաժանությունից պաշտպանելու անհրաժեշտության վերաբերյալ ակտիվ և բաց քննարկումները պետք է խրախուսվեն, օժանդակվեն ազգային և համայնքային մակարդակներում իրականացվող

կրթական ծրագրերի կողմից: Կառավարությունները պետք է ստեղծեն անհրաժեշտ պայմաններ և գործընթացներ՝ խրախուսելու համար զոհերին, հայտնելու իրենց իրավունքների խախտման մասին: Պետք է բացակայության դեպքում ընդունվեն այդ խնդիրներին վերաբերող օրենքներ, հստակեցվեն, ամրապնդվեն և ի կատար ածվեն, ինչպես նաև կազմակերպվի անհրաժեշտ ռեաբիլիտացիա: Կառավարությունները պարտավոր են նաև արգելել մանկական պոռնոգրաֆիայի արտադրությունը և վաճառքը:

7.40. Կառավարությունները և համայնքները պետք է անհապաղ քայլեր ձեռնարկեն կանանց սեռական օրգանների հաշմեցման սովորությունները վերացնելու և պաշտպանեն կանանց և աղջիկներին նմանօրինակ չարդարացված և վտանգավոր գործողություններից: Այդպիսի գործողությունների դադարեցումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է ծավալել հզոր իրազեկման և քարոզչական գործունեություն, ներգրավելով գյուղապետերին և կրոնական առաջնորդներին՝ տրամադրելով տեղեկություններ և խորհրդատվություն կանանց և աղջիկների վրա սեռական օրգանների հաշմեցման ազդեցության վերաբերյալ և կազմակերպել համապատասխան բուժում ու ռեաբիլիտացիա այդպիսի գործողությունների զոհ դարձած աղջիկների և կանանց համար: Ծառայությունները պետք է ներառեն կանանց և տղամարդկանց խորհրդատվություն՝ այդպիսի սովորությունների իրականացման կանխարգելման նպատակով:

Ե. Դեռահասներ

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

7.41. Առ այսօր դեռահասների, որպես խմբի, վերարտադրողական առողջության կարիքները անտեսվել են գոյություն ունեցող վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունների կողմից: Կառավարությունների կողմից դեռահասների վերարտադրողական առողջության կարիքների բավարարման ջանքերը պետք է հիմնվեն այնպիսի տեղեկությունների վրա, որոնք օգնում են նրանց հասնելու հասունության այնպիսի մակարդակի, որը թույլ է տալիս ընդունել պատասխանատու որոշումներ: Մասնավորապես, պետք է ապահովվի տեղեկատվության և ծառայությունների մատուցման հասանելիություն դեռահասների համար՝ օգնելու նրանց հասկանալ իրենց սեռականությունը և պաշտպանել նրանց անցանկալի հղիություններից, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից և դրանից բխող չբերության վտանգից: Այդ ամենը պետք է համատեղել երիտասարդ տղաների համար ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման հետ, որը նրանց կսովորեցնի հարգել կանանց ինքնուրույնությունը և կիսել կանանց հետ սեռականությանը և վերարտադրողականությանը վերաբերող հարցերի պատասխանատվությունը: Այս ջանքերը չափազանց կարևոր են երիտասարդ կանանց և նրանց երեխաների առողջության համար, կանանց կողմից իրենց կյանքը ղեկավարելու, իսկ շատ երկրներում՝ ազգաբնակչության աճի տեմպերը դանդաղեցնելու համար: Շատ վաղ տարիքում մայրանալը սովորականից ավելի հաճախ է կապված մայրական մահացության վտանգի հետ, իսկ երիտասարդ մայրերի երեխաների շրջանում նկատվում է հիվանդացության և մահացության ավելի բարձր ցուցանիշ: Վաղ տարիքում հղիությունը աշխարհի բոլոր հատվածներում շարունակում է մնալ կանանց կրթական, տնտեսական և սոցիալական կարգավիճակի խանգարող գործոններից մեկը: Ընդհանուր առմամբ վաղ ամուսնությունը և վաղ մայրությունը երիտասարդ կանանց համար լրջորեն սահմանափակում է կրթական և

աշխատելու հնարավորությունները, կարող է երկարատև անբարենպաստ ազդեցություն ունենալ նրանց և իրենց երեխաների կյանքի որակի վրա:

7.42. Դեռահասների վաղ հղիությունների կարևոր գործոն են հանդիսանում սահմանափակ կրթական ու տնտեսական հնարավորությունները և սեռական շահագործումը: Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում՝ կյանքի ընթացքում բախվելով ընտրություն կատարելու սահմանափակ հնարավորությունների հետ, դեռահասներին չի հետաքրքրում այն, թե ինչպես կարելի է խուսափել հղիությունից և երեխա ունենալուց:

7.43. Շատ երկրներում դեռահասների վրա գործադրվում է ճնշում սեռական կյանք սկսելու նպատակով: Հատկապես խոցելի են երիտասարդ կանայք, մասնավորապես ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների դեռահասները: Երկու սեռերի սեռական ակտիվ կյանքով ապրող դեռահասները հայտնվում են սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ձեռքբերման և տարածման վտանգի առջև և որպես օրենք նրանք շատ սուղ տեղեկություններ ունեն այդպիսի հիվանդություններից պաշտպանվելու միջոցների մասին: Դեռահասների համար ծրագրերը առավել արդյունավետ են լինում այն դեպքում, երբ նախատեսում են դեռահասների ակտիվ ներգրավվածությունը իրենց վերարտադրողական և սեռական առողջության կարիքների ճանաչման և այդ կարիքների բավարարմանը ուղղված ծրագրերի մշակման հարցերում:

Նպատակներ

7.44. Նպատակներն են՝

(ա) Լուծել դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության խնդիրները, ներառյալ անցանկալի հղիությունը, վտանգավոր պայմաններում աբորտների կատարումը և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը՝ պատասխանատու և առողջ վերարտադրողական և սեռական վարքագծի, այդ թվում կամավոր ինքնազսպման խրախուսման և հատուկ այդ նպատակային խմբի համար համապատասխան պատշաճ ծառայությունների մատուցման ու խորհրդատվության ապահովման միջոցով:

(բ) Զգալիորեն նվազեցնել դեռահասության տարիքի հղիությունները.

Գործողություններ

7.45. Ընդունելով դեռահասի զարգացման մակարդակին համապատասխան սեռական և վերարտադրողական վարքագծի հարցերով պատշաճ դաստիարակության ու խորհրդատվության ապահովման առումով ծնողների և դեռահասների համար իրավական պատասխանատվություն կրող, այլ անձանց իրավունքները և պարտավորությունները՝ երկրները պետք է երաշխավորեն, որ բուժաշխատողների կողմից կիրառվող ծրագրերն ու մեթոդները չեն սահմանափակում դեռահասների հասանելիությունը դեպի համապատասխան ծառայություններ և իրենց համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալուն, ներառյալ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները և սեռական բռնությունը: Այդ ամենի իրականացման ընթացքում, և սեռական

ոտնձգությունների կանխարգելման նպատակով, այդ ծառայությունները պետք է պաշտպանեն դեռահասների իրավունքները անձնական կյանքի, գաղտնիության, հարգանքի ու իրազեկ համաձայնության, մշակութային արժեքների և կրոնական համոզմունքների հարգանքի վերաբերյալ: Այդ առումով երկրները պետք է, ըստ անհրաժեշտության, վերացնեն իրավական, կանոնակարգող և սոցիալական արգելքները, որոնք խոչընդոտում են դեռահասների համար վերարտադրողական առողջության մասին տեղեկությունների և օգնության հասանելիության ապահովմանը:

7.46. Միջազգային հանրության օժանդակության ներքո երկրները պետք է պաշտպանեն և խրախուսեն դեռահասների իրավունքները վերարտադրողական առողջության հարցերում՝ իրազեկման, տեղեկացվածության և օգնության վերաբերյալ և զգալիորեն նվազեցնեն դեռահասության տարիքի հղիությունները:

7.47. Համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ կառավարություններին կոչ է արվում բավարարել դեռահասների կարիքները և ստեղծել համապատասխան ծրագրեր այդ կարիքների բավարարման նպատակով: Այդ ծրագրերը պետք է ներառեն օժանդակող մեխանիզմներ՝ գենդերային հարաբերությունների և հավասարության, դեռահասների հանդեպ բռնության, պատասխանատու սեռական վարքագծի, պատասխանատու ընտանիքի պլանավորման պրակտիկայի, ամուսնական կյանքի, վերարտադրողական առողջության, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի կանխարգելման հարցերում դեռահասների ուսուցման և խորհրդատվության համար: Անհրաժեշտ է մշակել սեռական բռնության կանխարգելման և ինցեստի, ինչպես նաև վերարտադրողական առողջության այլ ծառայությունների ապահովման ծրագրեր: Այդպիսի ծրագրերը պետք է նախատեսեն տեղեկությունների ապահովումը դեռահասների համար և նպատակաուղղված միջոցներ ձեռնարկեն դրական սոցիալական և մշակութային արժեքների ամրապնդման համար: Սեռական կյանքով ապրող դեռահասները կունենան ընտանիքի պլանավորման վերաբերյալ հատուկ տեղեկատվության, խորհրդատվության և ծառայությունների անհրաժեշտություն, իսկ հղիանալու դեպքում՝ կունենան իրենց ընտանիքների և համայնքի հատուկ ուշադրության կարիքը հղիության ընթացքում և նորածնի խնամքի ժամանակ: Դեռահասները պետք է լիովին ներգրավված լինեն այդպիսի տեղեկատվության և ծառայությունների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծնողական ուղղորդմանը և պարտավորություններին:

7.48. Ծրագրերի իրականացման ժամանակ անհրաժեշտ է ներգրավել և վերապատրաստել բոլոր նրանց, ովքեր հնարավորություն ունեն ուղղություն ցուցաբերելու դեռահասներին սեռական և վերարտադրողական վարքագծի հարցերում, մասնավորապես ծնողներին և ընտանիքներին, ինչպես նաև համայնքներին, կրոնական կազմակերպություններին, դպրոցներին, լրատվամիջոցներին և հասակակից խմբերին: Կառավարական մարմինները և հասարակական կազմակերպությունները պետք է խրախուսեն այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք ուղղված կլինեն բարելավելու երեխաների և ծնողների փոխհարաբերությունները, նպատակ ունենալով ապահովել այնպիսի պայմաններ, որ ծնողները կարողանան հաջողությամբ իրականացնել երեխաների դաստիարակությունը հասունացման ընթացքում, մասնավորապես սեռական վարքագծի և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ:

Գլուխ VIII

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ և ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ

Ա. Առաջնային բժշկական օգնություն և առողջապահության սեկտոր

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

8.1. Քսաներորդ դարի հիմնական նվաճումներից մեկը մարդու կյանքի տևողության աննախադեպ ավելացումն էր: Անցած հիսուն տարիների ընթացքում աշխարհում ընդհանուր առումով մոտավորապես 20 տարով ավելացել է ծննդյան պահին կյանքի սպասվելիք միջին տևողությունը, իսկ կյանքի առաջին տարվա ընթացքում մահանալու վտանգը նվազել է մոտ երու երրորդով: Ինչևէ, այս նվաճումները թույլ չեն տվել ապահովել շատ ավելի զգալի բարելավումներ, որոնք նախատեսված էին ազգաբնակչության ոլորտում Գործողությունների համաշխարհային նախագծում և Ալմա-Աթայի հռչակագրում, որը ընդունվել էր Առաջնային բուժօգնության միջազգային համաժողովի ժամանակ՝ 1978թ.: Դեռևս կան երկրներ և որոշ երկրներում մեծածավալ բնակչության խմբեր, որոնց համար դեռ բնորոշ են շատ բարձր մահացության և հիվանդացության ցուցանիշները: Հաճախ շատ էական են սոցիալ-տնտեսական կամ էթնիկական կարգավիճակի հետ կապված տարբերությունները: Անցումային տնտեսություն ունեցող շատ երկրներում մահացության ցուցանիշը զգալիորեն բարձրացել է պատահարների և բռնության արդյունքով մահերի պատճառով:

8.2. Աշխարհի շատ տարածաշրջաններում գրանցված կյանքի ակնկալվող տևողության ավելացումը արտացոլում է առողջապահության ոլորտում և առաջնային բուժօգնության հասանելիության ապահովման զգալի հաջողությունները: Ակնառու նվաճումների շարքին կարելի է դասել աշխարհում երեխաների մոտավորապես 80 տոկոսի պատվաստումները, ինչպես նաև ցածր արժեք ունեցող բուժումների լայն տարածումը, որոնց թվին են պատկանում օրալ ռեհիդրադացիայի թերապիան, որի արդյունքում հնարավոր է ապահովել ավելի շատ երեխաների գոյատևման հնարավորությունները: Միևնույն ժամանակ ոչ բոլոր երկրներում է հաջողվել հասնելու այսպիսի հաջողությունների, և կանխարգելվող ու բուժվող հիվանդությունները շարունակում են մնալ փոքր տարիքի երեխաների մահացության առաջնային պատճառ: Առավելևս, շատ բնակչության զգալի խմբեր դեռևս չունեն մաքուր խմելու ջրի և սանիտարական պայմանների հասանելիություն, ստիպված են ապրել գերբնակեցված պայմաններում և չեն ստանում պատշաճ սնուցում: Մեծ թվով մարդիկ շարունակ ենթարկվում են վարակների, պարազիտար և ջրածին հիվանդությունների, այդ թվում տուբերկուլյոզի,մալարիայի և շիստոսոմոզի ձեռքբերման վտանգի: Բացի այդ, էկոլոգիական դեգրադացիայի առողջապահական հետևանքները և աշխատավայրում վտանգավոր նյութերի հետ առնչվելու հանգամանքը մեծացող մտահոգության պատճառ են դառնում շատ երկրներում նմանապես: Ծխախոտի, ալկոհոլի և թմրանյութերի ածող օգտագործումը կհանգեցնի բուժման թանկ արժեք ունեցող քրոնիկ հիվանդությունների ավելացմանը աշխատունակ տարիքի և տարեց մարդկանց շրջաններում: Շատ երկրներում պետական սեկտորի դերի սահմանափակման, առկա առողջապահական ռեսուրսների ոչ ճիշտ բաշխման պատճառով կատարվող առողջապահական և այլ սոցիալական ծառայությունների ոլորտում ծախսերի կրճատումները, համակարգային վերափոխումները և շուկայական

տնտեսության անցնելու գործընթացը զգալի փոփոխությունների պատճառ է հանդիսացել մարդկանց ապրելակերպի, գոյատևման միջոցներ հայթայթելու և սպառման մոդելների կիրառման հարցերում, նույնպես դառնալով հիվանդացության և մահացության ավելացման գործոն: Չնայած, որ տնտեսական բարեփոխումները կարևոր են կայուն տնտեսական աճի համար, նմանապես կարևոր է,որ համակարգային բարեփոխումների ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ հաշվի առնվեն սոցիալական ասպեկտները:

Նպատակներ

8.3. Նպատակներն են՝

(ա) Ընդլայնել առողջապահական ծառայությունների և բուժհիմնարկների հասանելիությունը, առկայությունը, ընդունելիությունը և մատչելիությունը բոլոր մարդկանց համար, որպեսզի հնարավոր լինի ապահովել բազային առողջապահության տրամադրումը բոլորի համար՝ համաձայն ազգային պարտավորությունների:

(բ) Ավելացնել կյանքի տևողությունը և բարելավել բոլոր մարդկանց կյանքի որակը, ինչպես նաև երկրների ներսում և երկրների միջև առկա կյանքի սպասվելիք միջին տևողության ցուցանիշների տարբերությունները:

Գործողություններ

8.4. Բոլոր երկրները բազալ առողջապահության ծառայությունների հասանելիության և առողջության ամրապնդման խրախուսման ապահովումը պետք է դարձնեն մահացության և հիվանդացության նվազեցման ռազմավարությունների նախապայման: Առաջնային բուժօգնությանը հատկացվող միջոցները պետք է բավարար լինեն ապահովելու բնակչության լիակատար ընդգրկումը: Կառավարությունները պետք է ամրապնդեն իրենց գործունեությունը առողջապահության և սնուցման ոլորտներում, տեղեկատվության, կրթության և հաղորդակցության հարցերում, որպեսզի մարդիկ ավելի լայն հնարավորություններ ունենան իրենց առողջությունը վերահսկելու և բարելավելու համար: Կառավարությունները պետք է տրամադրեն համապատասխան օժանդակ միջոցներ՝ ստեղծված կարիքների բավարարման համար:

8.5. Ըստ Ալմա-Աթայի հռչակագրի, բոլոր երկրները պետք է նվազեցնեն հիվանդացությունը և մահացությունը և ձգտեն առաջնային, այդ թվում վերարտադրողական առողջության ծառայությունները հասանելի դարձնելու բոլորի համար մինչև ներկա տասնամյակի վերջը: Մինչև 2005թ. երկրները պետք է ձգտեն հասնելու ծնվելու պահին կյանքի սպասվելիք միջին տևողության 70 տարուց բարձր ցուցանիշի, իսկ մինչև 2015թ.՝ ծնվելու պահին կյանքի սպասվելիք միջին տևողության 75 տարուց բարձր ցուցանիշի: Մահացության բարձր ցուցանիշ ունեցող երկրները պետք է ձգտեն մինչև 2005թ. հասնելու ծնվելու պահին կյանքի սպասվելիք միջին տևողության 65 տարուց բարձր, իսկ մինչև 2015թ.՝ 70 տարուց բարձր ցուցանիշների: Բոլորի համար ավելի երկար և առողջ կյանք ապահովելու ջանքերի շրջանակում կարևոր դեր պետք է զբաղեցնեն տղամարդկանց և կանանց, ինչպես նաև աշխարհագրական տարածաշրջանների, հասարակական կարգերի և բնիկ ու էթնիկական խմբերի միջև գոյություն ունեցող

հիվանդացության և մահացության ցուցանիշների տարբերությունների նվազեցմանը ուղղված միջոցառումները:

8.6. Անհրաժեշտ է և ճանաչել և սատարել կանանց՝ որպես ընտանեկան առողջության հիմնական պահապանների դերը: Անհրաժեշտ է ապահովել հասանելիությունը դեպի հիմնական բուժծառայություններ, առողջապահական կրթական ծրագրեր, պարզ և քիչ ծախսեր պահանջող բուժումներ, ինչպես նաև իրականացնել առաջնային բուժօգնության ծառայությունների, այդ թվում վերարտադրողական առողջության ծառայությունների վերագնահատում՝ կանանց ժամանակի ճիշտ օգտագործման նպատակով:

8.7. Կառավարությունները պետք է երաշխավորեն համայնքի մասնակցությունը առողջապահական քաղաքականության մշակման հարցում, մասնավորապես հաշվի առնելով տարեց մարդկանց, հաշմանդամություն ունեցող անձանց և ՄԻԱՎ վարակ և այլ հիվանդություններ ունեցողների երկարատև խնամքի անհրաժեշտությունը: Նմանօրինակ մասնակցությունը պետք է նաև խրախուսվի երեխաների գոյատևման և մայրական առողջության ոլորտում իրականացվող ծրագրերում, կրծքով կերակրման ծրագրերում, վերարտադրողական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերման և բուժման ծրագրերում, ինչպես նաև ՄԻԱՎ-ի և այլ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելմանն ուղղված ծրագրերում:

8.8. Բոլոր երկրները պետք է վերանայեն ուսումնական ծրագրերը և առողջապահության ոլորտում պարտավորությունների բաշխումը, որպեսզի հնարավոր լինի նվազեցնել հիվանդների հաճախակի, անիմաստ և մեծ ծախսերի հետ կապված կախվածությունը բժիշկներից և մասնագիտացված ու երրորդ մակարդակի բժշկական հաստատություններից՝ պահպանելով արդյունավետ ուղեգրման ծառայությունների համակարգը: Անհրաժեշտ է երաշխավորել բոլոր մարդկանց և մասնավորապես խոցելի և ծառայությունների մատուցման ոլորտից դուրս մնացած խմբերի համար առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Կառավարությունները պետք է ձգտեն հիմնական առողջապահական ծառայությունները դարձնել ֆինանսապես ավելի կայուն, միևնույն ժամանակ երաշխավորելով հավասար հասանլիություն՝ վերարտադրողական առողջության, այդ թվում մոր և մանկան առողջության պահպանման և ընտանիքի պլանավորման ծառայությունների ինտեգրման միջոցով, ինչպես նաև համայնքային ծառայությունների, սոցիալական մարքեթինգի և ծախսերի փոխհատուցման համակարգերի պատշաճ օգտագործման միջոցով՝ առկա ծառայությունները քանակական և որակական բանելավման նպատակով: Անհրաժեշտ է նաև խրախուսել օգտվողների և համայնքի ներգրավումը առողջապահական ծրագրերի ֆինանսական միջոցների կառավարման հարցերում:

8.9. Զարգացող երկրներին տեխնոլոգիաների փոխանցման միջոցով խրախուսվում է հիմնել տեղական շուկայում օգտագործելու համար դեղագործության արտադրություն այդ երկրներում և պետք է նպաստել այդ դեղամիջոցների լայն հասանելությունը և մատչելիությունը: Հաջորդ տասնամյակի ընթացքում և հետագայում պատվաստանյութերի, հակաբիոտիկների և այլ պարագաների աճող անհրաժեշտությունը բավարարելու նպատակով, միջազգային հանրությունը պետք է հնարավորության դեպքում զարգացող երկրներում ամրապնդի գլոբալ, տարածաշրջանային և տեղական մեխանիզմները այդ պարագաների արտադրության, որակի հսկողության և

մատակարարման համար: Միջազգային հանրությունը պետք է աջակցի տարածաշրջանային համագործակցությանը՝ պատվաստանյութերի արտադրման, որակի հսկողության և բաշխման հարցերում:

8.10. Բոլոր երկրները պետք է գերակա դեր հատկացնեն այնպիսի միջոցառումների իրականացմանը, որոնք նպաստում են մարդու կյանքի և առողջության որակի բարելավմանը՝ երաշխավորելով անվտանգ և սանիտարական նորմերին համապատասխանող կյանքի պայմաններ ազգաբնակչության բոլոր խմբերի համար, ուղղված գերբնակեցված տնային տնտեսությունների, մթնոլորտային ախտոտվածության նվազեցմանը, մաքուր ջրի և սանիտարական պայմանների հասանելիության, թափոնների վերացման համակարգի բարելավման ապահովմանը, ինչպես նաև աշխատավայրերում անվտանգության ապահովմանը: Հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լինեն քաղաքային կամ գյուղական վայրերում ապրող աղքատ և առավել քիչ պաշտպանված բնակչության կյանքի պայմանները: Կառավարությունները պարտավոր են կանոնավոր կերպով վերահսկել առողջության, մասնավորապես խոցելի խմբերի առողջության վրա բնապահպանական խնդիրների ազդեցությունը:

8.11. Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար պետք է խրախուսվեն առողջապահական ոլորտի և առողջապահական քաղաքականության, այդ թվում միջոցների ռացիոնալ բաշխման բարեփոխումները: Բոլոր կառավարությունները պետք է ուսումնասիրեն առողջապահական ծրագրերի ծախսերի փախհատուցումը բարձրացնելու, հիվանդացությունը և մահացությունը նվազեցնելու և ընդհանուր առողջապահական ծառայությունների հասանելիությունը ապահովելու միջոցները:

Բ. Երեխաների գոյատևում և առողջություն

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

8.12. Ամբողջ աշխարհում զգալի առաջընթաց է նկատվում նորածնային և մանկական հիվանդացության ցուցանիշների նվազեցման հարցում: Անցյալ դարի ընթացքում երեխաների գոյատևման ցուցանիշների բարելավումը դարձել է կյանքի սպասվելիք միջին տևողության բարձրացման հիմնական գործոնը, առաջին հերթին զարգացած երկրներում և վերջին 50 տարիների ընթացքում՝ զարգացող երկրներում: Աշխարհում նորածնային մահերի քանակը (մինչև 1 տարեկան) 1,000 կենդանածինների հաշվով նվազել է 1970-1975թթ 92-ից մինչև մոտավորապես 62՝ 1990-1995թթ: Զարգացած տարածաշրջաններում անկումը եղել է 22-ից մինչև 12 նորածնային մահ 1,000 ծնունդի հաշվով, իսկ զարգացող երկրներում՝ 105-ից 69 նորածնային մահ 1,000 ծնունդի հաշվով: Բարելավումների տեմպերը ավելի դանդաղ էին Աֆրիկայում, Սահարա անապատից հարավ ընկած պետություններում և որոշ ասիական երկրներում, որտեղ 1990-1995թթ 10 կենդանածին նորածիններից ավելի քան 1-ը կմահանա մինչև 1 տարեկան լրանալը: Մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը բնութագրվում է տարածաշրջանների և երկրների ներսում և նրանց միջև առկա զգալի տարբերություններով: Բնիկ ժողովուրդների շրջանում նորածնային և մանկական մահացության ցուցանիշները հաճախ նորմայից բարձր են լինում: Աղքատությունը, թերսնուցումը, կրծքով կերակրման նվազումը, սանիտարական պայմանների և առողջապահական ծառայությունների անբավարարությունը կամ բացակայությունը հանդիսանում են նորածնային և մանկական մահացության բարձր

ցուցանիշների նախադրյալ: Որոշ երկրներում քաղաքացիական անհանգստությունները և պատերազմները նույնպես ունեցել են իրենց բացասական ազդեցությունը երեխաների գոյատևման վրա: Մանկական մահացության ավելացմանը նպաստող նախադրյալ գործոններ են նաև անցանկալի ծնունդները, երեխաների նկատմամբ դաժանության և բռնության գործադրումը: Բացի այդ, ՄԻԱՎ վարակը կարող է փոխանցվել մորից երեխային հղիության կամ ծննդաբերության ժամանակ, իսկ այն փոքր երեխաները, որոնց մայրերը մահանում են, հայտնվում են մանուկ տարիքում մահանալու վտանգի առջև:

8.13. 1990թ. կայացած Երեխաների հարցերով համաշխարհային գագաթնաժողովի ժամանակ մի շարք նպատակներ առաջադրվեցին երեխաների շահերի պաշտպանման վերաբերյալ, որոնք պետք է իրականացվեին մինչև 2000թ. և ներառում էին նորածնային և մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշների նվազեցում 1/3-ով կամ համապատասխանաբար 50 կամ 70՝ 1,000 կենդանածնի հաշվով, կախված այն փաստից, թե որը ավելի ցածր կլինի: Այս նպատակները հիմնված են 1980-ական թվականներին երեխաների գոյատևմանն ուղղված ծրագրերի հաջողությունների վրա, ինչը վկայում է այն բանի մասին, որ ոչ միայն կան արդյունավետ և ոչ թանկ տեխնոլոգիաներ, այլ նաև դրանք հնարավոր է արդյունավետ կիրառել բնակչության մեծ խմբերի պարագայում: Ինչևէ, կա վտանգ, որ 1980-ական թվականներին նվաճած հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցումը կարող է վերացվել, եթե այդ տասնամյակի ընթացքում ստեղծված բուժօգնության ծառայությունների լայնածավալ տրամադրման համակարգերը չհիմնավորվեն և չպահպանվեն:

8.14. Երեխայի գոյատևումը սերտորեն կապակցված է ծնվելու ժամանակի ընտրության, երեխաների միջև միջակայքի և երեխաների թվի, ինչպես նաև մոր վերարտադրողական առողջության հետ: Վաղ, ուշ, քանակաշատ և մոտ հղիությունները կարող են մեծապես նպաստել նորածնային և մանկական մահացության և հիվանդացության ցուցանիշների բարձրացմանը, հատկապես այն վայրերում, որտեղ կա առողջապահական ծառայությունների անբավարարություն: Այն վայրերում, որտեղ նորածնային մահացության ցուցանիշը բարձր է, ամուսնական զույգերը հաճախ ավելի շատ երեխաներ են ունենում, քան կցանկանային, որպեսզի ապահովեն իրենց ցանկացած թվով երեխաների քանակը:

Նպատակներ

8.15. Նպատակներն են՝

(ա) Նպաստել երեխաների առողջության ապահովմանը և երեխաների գոյատևմանը: Հնարավորինս արագ նվազեցնել տարբերությունները զարգացած և զարգացող երկրների միջև և նրանց ներսում՝ հատուկ ուշադրություն դարձնելով իգական սեռի նորածինների և աղջիկ երեխաների ավելորդ և կանխարգելման ենթակա մահացության վերացմանը:

(բ) Բարելավել նորածինների և երախանների առողջապահական և սնուցման կարգավիճակը:

(գ) Խրախուսել կրծքով կերակրումը, որպես երեխայի գոյատևման ռազմավարություն:

Գործողություններ

8.16. Առաջիկա 20 տարիների ընթացքում միջազգային համագործակցության և ազգային ծրագրերի իրականացման միջոցով զգալիորեն պետք է պակասեցվի զարգացած և զարգացող երկրների միջև գոյություն ունեցող նորածնային և մանկական մահացության միջին ցուցանիշների տարբերությունը, ինչպես նաև անհրաժեշտ է վերացնել երկրների, այդ թվում աշխարհագրական տարածաշրջանների, էթնիկ և մշակութային, ինչպես նաև սոցիալ-տնտեսական խմբերի միջև առկա տարբերությունները: Այն երկրները,որոնց տարածքներում ապրում են բնիկ ժողովուրդներ, պետք է հավասարեցնեն իրենց ընդհանուր ազգաբնակչության և բնիկ ժողովուրդների նորածնային և մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշները: Երկրները պետք է ձգտեն 1/3-ով նվազեցնելու իրենց երկրներում նորածնային և մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշները կամ մինչև 2000թ. 1,000 կենդանածնի հաշվով համապատասխանաբար 50 կամ 70, կախված այն փաստից, թե որ ցուցանիշը ավելի ցածր կլինի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է համապատասխանաբար ճշգրտել այդ նպատակային ցուցանիշը յուրաքանչյուր երկրի դեպքում գործածելիս: Մինչև 2005թ. մահացության միջանկյալ մակարդակ ունեցող երկրները պետք է ձգտեն նորածնային մահացության ցուցանիշը պահել 1,000 ծնունդների հաշվով 50-ից պակաս, իսկ մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը՝ 1,000 ծնունդի հաշվով՝ 60-ից ցածր: Մինչև 2015թ. բոլոր երկրները պետք է ձգտեն հասնելու նորածնային մահացության՝ 1,000 ծնունդների հաշվով 35-ից ցածր ցուցանիշին, իսկ մինչև 5 տարեկան երեխաների մահացության դեպքում՝ 1,000 ծնունդի հաշվով 45-ից ցածր ցուցանիշի: Այն երկրները, որոնք շուտ կհասնեն այդ ցուցանիշներին, պետք է ձգտեն էլ ավելի նվազեցնել դրանք:

8.17. Բոլոր երկրները պետք է ուսումնասիրեն մանկական մահացության ցուցանիշների խորքային պատճառները և առաջնային բուժօգնության համակարգի շրջանակներում ընդգրկեն վերարտադրողական առողջության ու երեխաների առողջության պահպանման ծառայությունները, որոնք նաև ներառում են անվտանգ մայրության(21), երեխաների գոյատևման ծրագրերը և ընտանիքի պլանավորման ծառայությունները ամբողջ ազգաբնակչության և մասնավորապես այն խմբերի համար, որոնք առավել խոցելի են և գտնվում են առավել անբարենպաստ պայմաններում: Այդպիսի ծառայությունները պետք է ներառեն մինչծննդյան խնամքը և խորհրդատվությունը, հատուկ շեշտ դնելով բարձր ռիսկի հղիությունների, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ վարակի կանխարգելման վրա, պատշաճ ծննդօգնությունը և նեոնատալ խնամքը, այդ թվում բացառապես կրծքով կերակրման խրախուսումը, կրծքով կերակրման օպտիմալ պրակտիկայի և կրծքից հետ սովորեցնելու գործընթացը, ինչպես նաև համապատասխան դեպքերում միկրոէլեմենտներ և տետանուս տոքսոիդ պարունակող սննդային հավելումների ապահովումը: Մարմնի ցածր քաշ ունեցող երեխաների ծնունդների և թերսնուցման հետևանք հանդիսացող այլ թերությունների, այդ թվում անեմիաների նվազեցմանն ուղղված միջոցները պետք է ներառեն մայրերի ճիշտ սնուցման լուսաբանումը՝ տեղեկատվության, կրթության և խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև ծննդաբերությունների միջև ավելի երկար ժամանակահատվածի անհրաժեշտության խրախուսման միջոցով: Բոլոր երկրները առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնեն հիմնական մանկական հիվանդությունների, հատկապես վարակային և պարազիտար հիվանդությունների նվազեցմանն ուղղված միջոցառումների կիրառմանը, ինչպես նաև երեխաների, մասնավորապես աղջիկ երախաների թերսնուցման

կանխարգելմանը՝ կիրառելով այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են աղքատության նվազեցմանը և երաշխավորում են այն, որ բոլոր երեխաները ապրում են նորմալ սանիտարահիգիենիկ պայմաններում, ինչպես նաև հիգիենայի և սնուցման հարցերով տեղեկատվության տարածման միջոցով: Կարևոր է նաև զինել ծնողներին երեխայի խնամքի, այդ թվում երեխայի զարգացման համար մտավոր և ֆիզիկական խթանների կիրառման վերաբերյալ տեղեկություններով և գիտելիքներով:

8.18. Անհրաժեշտ է պաշտպանել, խրախուսել և լուսաբանել կրծքով կերակրումը, որպեսզի նորածինները և երեխաները ստանան լավագույն սնուցումը և հատուկ պաշտպանվածություն ունենան մի շարք հիվանդություններից: Իրավական, տնտեսական, պրակտիկ և էմոցիոնալ աջակցության միջոցով մայրերին անհրաժեշտ է խրախուսել, որ բացառապես կրծքով կերակրեն իրենց նորածիններին 4-6 ամիսների ընթացքում՝ առանց որևէ սննդային կամ խմիչքային հավելումների և խրախուսել հետագա, համապատասխան լրացուցիչ հավելյալ սնունդի հետ համատեղ, կրծքով կերակրումը մինչև երեխայի երկու տարեկանը և ավելի դառնալը: Այս նպատակներին հասնելու համար կառավարությունները պետք է հասարակական լուսաբանում իրականացնեն կրծքով կերակրելու առավելությունների մասին, բուժանձնակազմը պետք է անցնի համապատասխան վերապատրաստում՝ կրծքով կերակրման թեմաներով, իսկ երկրները պետք է ուսումնասիրեն բոլոր միջոցներն ու ճանապարհները ԱՀԿ-ի Մայրական կաթի փոխարինող հավելումների մարքեթինգի միջազգային օրենսգիրքը լիովին իրականացնելու համար:

Գ. Կանանց առողջություն և անվտանգ մայրություն

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

8.19. Զարգացող տարածաշրջաններում վերարտադրողական տարիքի կանանց մահացության առաջատար պատճառները կապված են հղիության և ծննդաբերության հետ: Համաձայն գնահատումների, աշխարհում հղիության հետ առնչվող պատճառներով տարեկան մահանում է մոտավորապես կես միլիոն կին, այդ թվի 99 տոկոսը՝ զարգացող երկրներում: Զարգացած և զարգացող երկրների միջև գոյացած մայրական մահացության ցուցանիշների տարբերությունը շատ մեծ է. 1988թ. այն տատանվում էր զարգացող երկրներում 100,000 կենդանածնի հաշվով ավելի քան 700-ից մինչև մոտ 26-ի զարգացած տարածաշրջաններում: 100,000 կենդանածինների հաշվով 1,000 և ավելի մայրական մահերի ցուցանիշը արձանագրվել է Աֆրիկայի որոշ երկրների գյուղական հատվածներում, որի հետևանքով բազմաթիվ հղիություններ ունեցող կանայք ենթարկվում են վերարտադրողական տարիքում մահացության մեծ վտանգի: Համաձայն Համաշխարհային առողջապահական կազմակերպության տվյալների, հղիության և ծննդաբերության ընթացքում մահանալու հավանականության ցուցանիշը զարգացող երկրներում կազմում է 1-ը 20-ից, ինչը զարգացած երկրներում կազմում է 1-ը 10,000-ից: Մայրական հիվանդացության և մահացության վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպես օրինակ՝ առաջին կամ վերջին հղիության ժամանակ կնոջ տարիքը, ծննդաբերությունների միջև ընկած ժամանակահատվածը, կյանքի ընթացքում ունեցած հղիությունների ընդհանուր քանակը և այն սոցիալ մշակութային և տնտեսական պայմանները, որտեղ ապրում է կինը: Ներկայումս աշխարհի երկրների մոտավորապես 90 տոկոսը, ներկայացնելով աշխարհի ազգաբնակչության 96 տոկոսը, վարում է այնպիսի

քաղաքականությունների իրականացում, որոնք համապատասխան իրավական պայմանների ներքո թույլ են տալիս աբորտների իրականացումը՝ կնոջ կյանքը փրկելու նպատակով: Ինչևէ, իրականացվող աբորտների զգալի մասնաբաժին են կազմում կնոջ կողմից խթանված կամ անվտանգ պայմաններում իրականացված աբորտները՝ հանգեցնելով մայրական մահացության դեպքերի մեծ քանակի կամ այդ կանանց առողջությանը հասցված անդառնալի վնասի: Մայրական մահացությունները շատ լուրջ հետևանքներ են ունենում ընտանիքի վրա, հաշվի առնելով մոր կողմից երեխաների առողջության պահպանման և նրանց բարեկեցության ապահովման դերը: Մոր մահը զգալիորեն ավելացնում է իր մանկահասակ երեխաների մահվան վտանգը, հատկապես, եթե ընտանիքը չի կարողանում մորը փոխարինող գտնել: Դեռահաս աղջիկների և երիտասարդ կանանց վերարտադրողական առողջության կարիքներին ավելի մեծ ուշադրության տրամադրումը կարող է կանխարգելել մայրական հիվանդացությունների և մահացությունների մեծ մասը՝ անցանկալի հղիությունների և հետագա վատ պայմաններում կատարված աբորտի կանխման միջոցով: Առողջ մայրությունը շատ երկրներում ընդունվել է որպես մայրական հիվանդացությունը և մահացությունը նվազեցնելուն ուղղված ռազմավարություն:

Նպատակներ

8.20. Նպատակներն են՝

(ա) Խրախուսել կանանց առողջության պահպանումը և անվտանգ մայրությունը, հասնել մայրական հիվանդացության զգալի իջեցման և նվազեցնել զարգացող ու զարգացած երկրների միջև և նրանց ներսում նկատվող տարբերությունները: Հիմք ընդունելով կանանց առողջության պահպանման և բարեկեցության գործին նվիրվածությունը, զգալիորեն նվազեցնել անվտանգ աբորտների հետևանք հանդիսացող մայրական հիվանդացության և մահացության դեպքերը:(20)

(բ) Բարելավել կանանց, մասնավորապես հղի և կերակրող կանանց, առողջության և սնուցման կարգավիճակը:

Գործողություններ

8.21. Երկրները պետք է ձգտեն մինչև 2015թ զգալիորեն նվազեցնել մայրական մահացությունը. մինչև 2000թ. կիսով չափ իջեցնել 1990թ մայրական մահացության մակարդակը և այդ ցուցանիշի ևս կեսով նվազեցում՝ մինչև 2015թ.: Այս նպատակների իրականացումը տարբեր ազդեցություններ կունենա 1990-ական թվականներին մայրական մահացության տարբեր ցուցանիշներ ունեցող երկրների համար: Մահացության միջանկյալ ցուցանիշներ ունեցող երկրները պետք է ձգտեն մինչև 2005թ. հասնելու մայրական մահացության 100,000 կենդանածինների հաշվով 100-ից ցածր ցուցանիշի, իսկ մինչև 2015թ.՝ 60-ից ցածր ցուցանիշի: Մահացության բարձր ցուցանիշ ունեցող երկրները պետք է ձգտեն մինչև 2005թ. հասնելու մայրական մահացության 100,000 կենդանածինների հաշվով 125-ից ցածր ցուցանիշի, իսկ մինչև 2015թ.՝ 75-ից ցածր ցուցանիշի: Ինչևէ, բոլոր երկրները պետք է նվազեցնեն մայրական հիվանդացության և մահացության ցուցանիշները՝ հասցնելով այնպիսի մակարդակի, որ դրանք այլևս չհամարվեն հասարակության առողջապահական խնդիր: Անհրաժեշտ է փոքրացնել

մայրական մահացության ցուցանիշների տարբերությունները երկրների և աշխարհագրական տարածաշրջանների, սոցիալ-տնտեսական և էթնիկ խմբերի միջև:

8.22. Միջազգային հանրության բոլոր հատվածների օժանդակությամբ՝ բոլոր երկրները պետք է ընդլայնեն առաջնային բուժօգնության կոնտեքստում մայրական առողջության ապահովման ծառայությունները: Հիմնված լինելով իրազեկված ընտրության գաղափարի վրա՝ այս ծառայությունները պետք է ներառեն անվտանգ մայրության ուսուցանում, օժանդակություն մինչծննդյան ընթացքում, որը կունենա նպատակաուղղված և արդյունավետ բնույթ, մայրերի ճիշտ սնուցման ծրագրեր, կեսարյան հատման ավելորդ կիրառումից ազատող պատշաճ ծննդաբերական օգնություն, որը նաև երաշխավորում է անհետաձգելի մանկաբարձական օգնության ապահովումը, հղիության, ծննդաբերության և աբորտներից առաջացող բարդությունների դեպքում՝ ուղեգրման ծառայություններ, հետծննդյան խնամք և ընտանիքի պլանավորում: Բոլոր ծննդաբերությունների ժամանակ պետք է ներկա լինի մասնագիտացված բուժանձնակազմ, ցանկալի է՝ քույրեր և մանկաբարձուհիներ, կամ ծայրահեղ դեպքում վերապատրաստում անցած անձնակազմ: Անհրաժեշտ է բացահայտել մայրական հիվանդացության և մահացության հիմնապատճառները, և հատուկ ուշադրություն դրանց վերացմանը և պատշաճ գնահատմանը, մոնիթորինգի մեխանիզմներին ուղղված ռազմավարությունների մշակմանը, ինչը հնարավորություն կտա գնահատել մայրական մահացության և հիվանդացության նվազեցման հարցերում առաջընթացը և բարձրացնել ընթացիկ ծրագրերի արդյունավետությունը: Անհրաժեշտ է մշակել մայրական առողջությանը և անվտանգ մայրությանն ուղղված ծրագրեր ու կրթական դասընթացներ:

8.23. Բոլոր երկրները, մասնավորապես զարգացող երկրները, միջազգային հանրության օժանդակության միջոցով պետք է ձգտեն մայրական մահացության դեպքերի հետագա նվազեցմանը՝ հիմնվելով այնպիսի միջոցառումների իրականացման վրա, որոնք ուղղված են բարձր ռիսկի հղիությունների և ծննդաբերությունների նվազեցմանը և համապատասխան բուժօգնության ապահովմանը, հատկապես դեռահասների և տարիքով առաջնածինների դեպքերում:

8.24. Բոլոր երկրները պետք է մշակեն և իրականացնեն այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված են մանկածնման տարիքում գտնվող կանանց սնուցման կարիքների բավարարմանը, մասնավորապես հղի կամ կերակրող կանանց և պետք է հատուկ ուշադրություն դարձնել սննդային անեմիաների և յոդ-դեֆիցիտային խանգարումների կանխարգելման և բուժման խնդիրներին: Առաջնահերթ կարևորություն պետք է տրվի երիտասարդ աղջիկների բավարար սնուցման և առողջապահական կարգավիճակի բարելավմանը՝ մայրական առողջության և անվտանգ մայրության ծրագրերի շրջանակներում ուսուցման և դասընթացների կազմակերպման միջոցով: Անհրաժեշտ է դեռահաս աղջիկների և տղաների համար կազմակերպել տեղեկատվություն, ուսուցում և խորհրդատվություն՝ օգնելու նրանց հետաձգել վաղ ամուսնությունները, վաղաժամ սեռական ակտիվությունը և վաղաժամ առաջին հղիությունը:

8.25. Ցանկացած դեպքում աբորտը չի կարող խրախուսվել որպես ընտանիքի պլանավորման մեթոդ: Բոլոր կառավարություններին և համապատասխան հասարակական կազմակերպություններին կոչ է արվում ավելի մեծ նշանակություն տալ կնոջ առողջությանը, զբաղվել կնոջ առողջության վրա անվտանգ պայմաններում

կատարված աբորտի թողած հետևանքներով(20), համարելով այն գերակա առողջապահական խնդիր և նվազեցնել աբորտի դիմելու հաճախականությունը՝ ընդլայնված և բարելավված ընտանիքի պլանավորման ծառայությունների ապահովման միջոցով: Միշտ առաջնահերթ կարևորություն պետք է հատկացվի անցանկալի հղիությունների կանխարգելմանը և ցանկացած ջանք պետք է գործադրվի աբորտի անհրաժեշտությունը բացառելու նպատակով: Անցանկալի հղիություն ունեցող կանանց համար անհրաժեշտ է ապահովել անարգել հասանելիություն դեպի հուսալի տեղեկատվություն և կարեկից խորհրդատվություն: Առողջապահական համակարգի ներքո աբորտին վերաբերող ցանկացած միջոցներ և փոփոխություններ պետք է իրականացվեն ազգային կամ տեղական մակարդակում՝ համաձայն ազգային օրենսդրական գործընթացի: Այն դեպքերում, երբ աբորտի իրականացումը չի հակասում օրենքին, այն պետք է կատարվի անվտանգ պայմաններում: Բոլոր դեպքերում կանայք պետք է ունենան հասանելիություն դեպի որակյալ բուժծառայություններ՝ աբորտի կատարման կամ դրա հետևանքով առաջացած բարդությունների վերացման համար: Աբորտից հետո անհրաժեշտ է իրականացնել խորհրդատվություն, լուսաբանում և ժամանակին ընտանիքի պլանավորման միջոցների տրամադրում, որը թույլ կտա խուսափել հետագա աբորտներից:

8.26. Մայրական հիվանդացության ու մահացության նվազեցմանն ուղղված ծրագրերը պետք է ներառեն տեղեկատվական և վերարտադրողական առողջության ապահովման, այդ թվում ընտանիքի պլանավորման ծառայություններ: Բարձր ռիսկի հղիությունները նվազեցնելու նպատակով մայրական առողջության և անվտանգ մայրության ծրագրերը պետք է ներառեն խորհրդատվություն և ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության ապահովում:

8.27. Բոլոր երկրները պետք է անհապաղ ձգտեն փոփոխությունների՝ կապված անվտանգ սեռական վարքագծի հետ և մշակեն այնպիսի ռազմավարություններ, որոնք երաշխավորում են տղամարդու հավասար պատասխանատվությունը սեռական և վերարտադրողական առողջության, այդ թվում ընտանիքի պլանավորման և վերահսկվող սեռավարակների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի փոխանցման կանխարգելման հարցերում:

Դ. Մարդու իմունային անբավարարության վիրուս (ՄԻԱՎ) և Ձեռքքերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՁԻԱՀ)

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

8.28. ՁԻԱՀ-ի համաճարակը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների մտահոգության ամենամեծ խնդիրներից մեկն է: Ըստ ԱՀԿ-ի տվյալների, 1993թ. կեսերին աշխարհում ՁԻԱՀ-ով հիվանդ մարդկանց ընդհանուր թիվը հասել է 2.5 միլիոնի, իսկ ավելի քան 14 միլիոն մարդ վարակվել է ՄԻԱՎ վիրուսով համաճարակի բռնկման պահից սկսած և կանխատեսվում է, որ եթե չձեռնարկվեն համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ, մինչև տասնամյակի վերջը այդ թիվը կհասնի 30-ից 40 միլիոնի: 1993թ. կեսերին ՄԻԱՎ վարակակիր անձանց 4/5-ը ապրում էր զարգացող երկրներում, որտեղ փոխանցման հիմնական ձևը հետերոսեքսուալ սեռական հարաբերությունն էր և վարակման նոր դեպքերի թիվը առավել արագ էր աճում կանանց շրջանում: Որպես հետևանք, ավելի ու ավելի շատ երեխաներ որբանում են, իրենք իսկ լինելով հիվանդության

և մահանալու մեծ վտանգի առջև: Ներկայումս շատ երկրներում համաճարակը տարածվում է քաղաքայինից դեպի գյուղական վայրեր կամ գյուղական վայրերի միջև և իր բացասական ազդեցությունն է թողնում տնտեսական և գյուղատնտեսական արդյունաբերության վրա:

8.29. Նպատակներն են՝

(ա) Կանխարգելել, նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածումը և մինիմումի հասցնել դրա թողած ազդեցությունը, բարձրացնել ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի ու նրանց հետ կապված մահացու հիվանդությունների աղետալի հետևանքների, դրանց կանխարգելման ճանապարհների վերաբերյալ իրազեկվածությունը անհատական, համայնքային և ազգային մակարդակներում, նպաստել հիվանդության նկատմամբ խոցելիությունը առավել մեծացնող սոցիալական, տնտեսական, գենդերային և ռասայական անհավասարությունների վերացմանը:

(բ) Ապահովել ՄԻԱՎ վարակակիր անհատների հասանելիությունը դեպի համապատասխան բուժօգնության ծառայություններ և երաշխավորել նրանց դեմ խտրականության բացառումը, տրամադրել խորհրդատվություն և այլ օժանդակություն ՄԻԱՎ վարակակիր անձանց համար և թեթևացնել ՁԻԱՀ-ից տառապող մարդկանց, նրանց ընտանիքների և հատկապես որբերի տառապանքները, ապահովել ՄԻԱՎ վարակակիր անձանց անհատական իրավունքների պաշտպանությունը և գաղտնիությունը, երաշխավորել այն, որ սեռական և վերարտադրողական առողջության ծրագրերը ուղղված լինեն ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի խնդիրների լուծմանը:

(գ) Ինտենսիվացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակը վերահսկելու հետազոտման մեթոդները և զբաղվել առավել արդյունավետ բուժում գտնելու հարցերով:

Գործողություններ

8.30. Կառավարությունները պետք է գնահատեն ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի թողած ազդեցությունը ժողովրդագրական և զարգացման բնագավառներում: ՁԻԱՀ-ի համաճարակը անհրաժեշտ է վերահսկել բազմասեկտորային մոտեցման միջոցով, որը հատուկ ուշադրություն է դարձնում դրա սոցիալ-տնտեսական ճյուղավորումների և տնային տնտեսության եկամուտների վրա, ներառելով առողջապահական ենթակառույցների և տնային տնտեսությունների եկամուտների վրա դրանց ունեցած ծանր ազդեցությունը, դրա բացասական ներգործությունը աշխատուժի և արտադրողականության, ինչպես նաև որբ երեխաների թվի աճի վրա: Բազմասեկտորային ազգային նախագծերը և ՁԻԱՀ-ի խնդիրների հետ պայքարող ռազմավարությունները պետք է ինտեգրվեն ազգաբնակչության և զարգացման ռազմավարություններում: Անհրաժեշտ է ուսումնասիրել ՄԻԱՎ վարակի տարածման հիմքում ընկած սոցիալ-տնտեսական գործոնները և մշակել ծրագրեր՝ ուղղված այն խնդիրների լուծմանը, որոնց հետ բախվում են ՁԻԱՀ-ի համաճարակի արդյունքում որբացած երեխաները:

8.31. ՄԻԱՎ վարակի տարածման տեմպերի նվազեցմանը ուղղված ծրագրերը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնեն տեղեկատվական, կրթական և հաղորդակցական միջոցառումների իրականացմանը՝ ապահովելու համար իրազեկվածության բարձրացման

և վարքի փոփոխությունը: Սեռական հարցերով իրազեկության բարձրացումը և տեղեկատվության տրամադրումը անհրաժեշտ է տրամադրել ինչպես վարակված, այնպես էլ առողջ մարդկանց, մասնավորապես՝ դեռահասներին: Բուժաշխատողների, այդ թվում ընտանիքի պլանավորման ծառայություններ տրամադրողների համար անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ վարակի հարցերում խորհրդատվության, այդ թվում հատուկ ուշադրություն և ծառայություններ պահանջող բարձր ռիսկի վարքագծի գնահատման և բացահայտման հարցերով, դասընթացներ անվտանգ և պատասխանատու սեռական վարքագծի խրախուսման, այդ թվում պահպանակների օգտագործման և կամավոր ինքնազսպման, վարակված բուժ պարագաներից և արյունից, ինչպես նաև խուսափելու թմրամոլների շրջանում նույն ասեղից օգտվելու թեմաներով: Կառավարությունները պետք է մշակեն ՁԻԱՀ-ի և սեռավարակների վերաբերյալ ուղեցույցներ և խորհրդատվական ծառայությունների համակարգ առաջնային բուժօգնության ծառայությունների շրջանակում: Որտեղ հնարավոր է, վերարտադրողական առողջության , այդ թվում ընտանիքի պլանավորման ծրագրերը պետք է ներառեն հարմարությունների առկայություն տարածված սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում վերարտադրողական օրգանների վարակների ախտորոշման և բուժման համար, ելնելով այն հանգամանքից, որ սեռավարակները մեծացնում են ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգը: Անհրաժեշտ է նաև երաշխավորել ՄԻԱՎ-ի և տուբերկուլյոզի կանխարգելման և բուժման փոխկապակցվածությունը:

8.32. ՁԻԱՀ-ի համաճարակի հետ պայքարելու համար կառավարությունները պետք է մոբիլիզացնեն հասարակության բոլոր հատվածները, այդ թվում հասարակական կազմակերպությունները, համայնքային հաստատությունները, կրոնական առաջնորդներին, մասնավոր սեկտորը, լրատվամիջոցներին, դպրոցներին և բուժ հաստատություններին: Առաջնահերթ ուշադրություն պետք է հատկացվի ընտանիքի և համայնքի մակարդակներում մոբիլիզացիային: Համայնքները պետք է մշակեն այնպիսի ռազմավարություններ, որոնք արձագանքում են ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների տարածման առողջապահական խնդիրների տեղական ընկալմանը:

8.33. Միջազգային հանրությունը պետք է մոբիլիզացնի բոլոր մարդկային և ֆինանսական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ՄԻԱՎ վարակի փոխանցման ցուցանիշները նվազեցնելու համար: Դրա համար բոլոր երկրները պետք է խրախուսեն և օժանդակեն ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելմանը և բուժման միջոցների որոնումներին վերաբերող բոլոր մոտեցումները: Մասնավորապես, դոնորները և գիտնականները պետք է աջակցեն և ամրապնդեն պատվաստանյութի փնտրտուքների ներկայիս ջանքերը և զարգացնեն ՄԻԱՎ վարակի կանխարգելման այնպսի մեթոդներ, որոնք վերահսկվում են կնոջ կողմից, ինչպես օրինակ՝ հեշտոցային մանրէասպան միջոցները: Անհրաժեշտ է նաև մեծացնել ՄԻԱՎ վարակակիր և ՁԻԱՀ-ով տառապող մարդկանց բուժման և խնամքի օժանդակությունը: Անհրաժեշտ է ուժեղացնել ՁԻԱՀ-ի համաճարակի դեմ պայքարող գործունեության համակարգումը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Միավորված ազգերի կազմակերպության համակարգի գործունեությանը տեղական մակարդակում, որտեղ այնպիսի միջոցների կիրառումը, ինչպես օրինակ համատեղ իրականացվող ծրագրերը, կարող են երաշխավորել սակավ միջոցների ռացիոնալ օգտագործումը: Միջազգային հանրությունը պետք է նաև մոբիլիզացնի բոլոր ջանքերը՝ ուղղված նոր

ռազմավարություններ գտնելու տարբեր գործունեությունների արդյունքների մոնիտորինգի և գնահատման գործում:

8.34. Կառավարությունները պետք է մշակեն քաղաքականություններ և ուղեցույցներ անհատների իրավունքների պաշտպանության և ՄԻԱՎ վարակակիր անձանց և նրանց ընտանիքների հանդեպ խտրականության վերացման նպատակով: Անհրաժեշտ է զարգացնել ՄԻԱՎ վարակի բացահայտման թեստերի ծառայությունները՝ համոզված լինելով, որ նրանք ապահովում են գաղտնիությունը: Անհրաժեշտ է խրախուսել ՁԻԱՀ-ով հիվանդ կանանց և տղամարդկանց, նրանց ընտանիքների և մոտ բարեկամների համար ծառայությունների մատուցման և էմոցիոնալ աջակցության ապահովումը:

8.35.ՄԻԱՎ վարակի տարածումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է խրախուսել և լուսաբանել պատասխանատու սեռական վարքագիծ, այդ թվում կամավոր սեռական ինքնազսպում և այդ առարկան անհրաժեշտ է ընդգրկել ուսումնական ու տեղեկատվական ծրագրերի մեջ: Անհրաժեշտ է ապահովել պահպանակների և դեղամիջոցների լայն հասանելիություն ու մատչելիություն, և պետք է դրանք ներառել հիմնական դեղամիջոցների ցանկում: Պետք է նաև միջոցներ ձեռնարկել արյան պատրաստուկների և սարքավորումների ախտահանման որակի ապահովման համար:

Գլուխ IX

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ, ՈՒՐԲԱՆԻԶԱՑԻԱ և ՆԵՐՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ

Ա. Բնակչության բաշխում և կայուն զարգացում

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

9.1. 1990-ական թվականների սկզբում աշխարհի կառավարությունների մոտավորապես կեսը, մեծամասամբ զարգացող երկրների կառավարությունները, իրենց տարածքներում բնակչության բաշխվածության իրավիճակը համարում էին անբավարար և ցանկություն ունեին փոփոխելու դա: Հիմնական խնդիրներից մեկը բնակչության թվի արագ աճն էր քաղաքային վայրերում, որտեղ, ըստ կանխատեսումների, մինչև 2005թ. պետք է ապրի աշխարհի բնակչության կեսից ավելին: Հետևաբար, հիմնական ուշադրությունը հատկացվում էր գյուղական վայրերից դեպի քաղաքային վայրեր տեղի ունեցող միգրացիային, չնայած որ շատ երկրներում քաղաքային և գյուղական վայրերի շրջանակում տեղի ունեցող միգրացիան հանդիսանում է բնակչության տարածքային տեղաշարժերի գերակշռող տեսակը: Ուրբանիզացիայի գործընթացը տնտեսական և սոցիալական զարգացման բնորոշ ասպեկտներից մեկն է և, հետևաբար, ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրները անցնում են հիմնականում գյուղական վայրերից դեպի քաղաքային վայրեր անցման գործընթացի միջով: Անհատների համար միգրացիան հաճախ կյանքում նոր հնարավորություններ գտնելու ռացիոնալ և դինամիկ միջոց է: Քաղաքները հանդիսանում են տնտեսական աճի կենտրոններ, ապահովելով խթանների առկայություն սոցիալ-տնտեսական և նորարարության և փոփոխությունների համար: Ինչևէ, միգրացիայի են դրդում նաև այնպիսի խթանող գործոններ, ինչպիսիք են

զարգացման ռեսուրսների անարդար բաշխումը, անհամապատասխան տեխնոլոգիաների ընտրությունը և հասանելիության բացակայությունը դեպի առկա հողատարածքներ: Շատ երկրներում ուրբանիզացիայի տագնապալի տեսանելի հետևանքները կապված են իր սրընթացության հետ, որին կառավարությունները անկարող են եղել արձագանքել իրենց առկա կառավարման ունակությունների և հմտությունների պայմաններում: Ինչևէ, նույնիսկ զարգացող երկրներում արդեն տեսանելի են բնակչության բաշխման փոփոխությունների օրինակներ, երբ մեծ քաղաքներում կենտրոնացվածության միտումը իր տեղը զիջում է միջին չափի քաղաքային վայրերում բնակչության լայնատարած բաշխմանը: Այսպիսի շարժում է նկատվում նաև որոշ զարգացած երկրներում, որտեղ մարդիկ նախընտրում են բնակություն հաստատել ավելի փոքր քաղաքներում: Արդյունավետ են համարվում բնակչության բաշխման այնպիսի քաղաքականությունները, որոնք հարգում են անհատի իրավունքը՝ ընտրելու իր նախընտրելի ապրելու և աշխատելու վայրը՝ հաշվի առնելով բնակչության բաշխվածության վրա ունեցած զարգացման ռազմավարությունների ազդեցությունը: Ուրբանիզացիան խորը ազդեցություն է ունենում անհատների ապրուստի, կենսակերպի և արժեքների վրա: Միևնույն ժամանակ միգրացիան ունի թե դրական, և թե բացասական տնտեսական, սոցիալական և էկոլոգիական հետևանքներ միգրանտների սկզբնական և վերջնական բնակավայրերի վրա:

Նպատակներ

9.2. Նպատակներն են՝

(ա) Խթանել բնակչության ավելի հավասարակշռված տարածքային բաշխվածությունը՝ հիմնական ուղարկող և ընդունող տարածաշրջանների արդար և էկոլոգիապես կայուն զարգացմանը համալիր օժանդակություն ցուցաբերելու միջոցով, հատուկ շեշտ դնելով տնտեսական, սոցիալական և գենդերային հավասարության խրախուսման վրա՝ հաշվի առնելով մարդու իրավունքները և հատկապես զարգացման իրավունքը:

(բ) Նվազեցնել խթանող գործոնների ազդեցության դերը, եթե դրանք կապված են միգրացիայի հոսքերի հետ:

Գործողություններ

9.3. Բնակչության բաշխումների ոլորտում քաղաքականությունների մշակման ժամանակ կառավարությունները պետք է երաշխավորեն, որ այդ քաղաքականությունների նպատակներն ու խնդիրները համապատասխանում են զարգացման այլ նպատակներին, քաղաքականություններին և մարդու իրավունքների պաշտպանմանը: Տեղական, տարածաշրջանային և միջկառավարական գործակալությունների օժանդակությամբ կառավարությունները պետք է կանոնավոր կերպով գնահատեն այն, թե ինչպիսի ազդեցություն ունեն իրենց վարած տնտեսական և էկոլոգիական քաղաքականությունների, սեկտորալ գերակայությունների, ենթակառույցների մեջ ներդրումների և տարածաշրջանային, կենտրոնական, շրջանային և տեղական կառավարական մարմինների միջև ռեսուրսների բաշխման հետևանքները՝ բնակչության հիմնական և ժամանակավոր բաշխման և ներքին միգրացիայի վրա:

9.4. Արտադրության, աշխատատեղերի և բնակչության հավասարակշռված տարածքային բաշխման հասնելու համար երկրները պետք է ընդունեն տարածաշրջանային զարգացման կայուն ռազմավարություններ, ինչպես նաև քաղաքային համախմբումների , փոքր և միջին քաղաքային կենտրոնների մեծացմանը և գյուղական վայրերի կայուն զարգացմանը նպաստող ռազմավարություններ, այդ թվում աշխատատար ծրագրերի իրականացում, երիտասարդների համար ոչ գյուղատնտեսական մասնագիտությունների ուսուցում և արդյունավետ տրանսպորտային ու հաղորդակցման համակարգեր: Տեղական զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելու, այդ թվում ծառայություններ մատուցելու համար կառավարությունները պետք է քննարկեն իրենց վարչական համակարգերի ապակենտրոնացման հարցը: Դա նաև ներառում է տարածաշրջանային, շրջանային և տեղական կառավարման մարմիններին լիազորությունների տրամադրումը ծախսերի և ֆինանսական միջոցների ներգրավման հարցերում: Չնայած այն բանին, որ քաղաքային բնակչության համար առողջ միջավայր ստեղծելու նպատակով զարգացող շատ երկրներում առանձնահատուկ կարևոր նշանակություն ունեն քաղաքային ենթակառույցների զարգացումը և շրջակա միջավայրի պաշտպանության ռազմավարությունները, նմանօրինակ գործունեություն պետք է ծավալվի նաև գյուղական վայրերում:

9.5. Քաղաքային վայրերի զարգացման առաջնահերթությունը և գյուղական վայրերի մեկուսացված զարգացումը նվազեցնելու նպատակով կառավարությունները պետք է ուսումնասիրեն քաղաքային վայրերից դեպի գյուղական վայրեր արտադրությունների և ձեռնարկությունների վերաբաշխման և տեղափոխման խրախուսման միջոցները, ինչպես նաև խրախուսեն գյուղական վայրերում նոր ձեռնարկությունների, արտադրական միավորների և եկամուտ բերող ծրագրերի հիմնումը:

9.6. Այն կառավարությունները, որոնք ցանկանում են ստեղծել գյուղական վայրերից միգրացիայի այլընտրանքներ, պետք է ստեղծեն գյուղական վայրերի զարգացման նախապայմաններ, ակտիվորեն աջակցեն հողատիրության հնարավորություններին և ջրային ռեսուրսների հասանելիությանը, մասնավորապես ընտանիքների համար իրականացնեն և խրախուսեն ներդրումների կատարում գյուղական վայրերում արտադրողականության զարգացման համար, բարելավեն գյուղական ենթակառույցները և սոցիալական ծառայությունները, ինչպես նաև օժանդակեն վարկավորման, արտադրական և մարքեթինգային կոոպերատիվների և այլ շարքային կազմակերպությունների ստեղծմանը, որոնք բնակչությանը հողի ավելի մեծ վերահսկողություն են տրամադրում և բարելավում են նրանց կյանքի մակարդակը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել երաշխավորելու այն, որ այս հնարավորությունները տրամադրվեն նաև միգրանտների ընտանիքներին, որոնք մնում են իրենց հայրենի բնակավայրերում:

9.7. Կառավարությունները պետք է կյանքի կոչեն զարգացման ոլորտի այնպիսի ռազմավարություններ, որոնք առաջարկում են զգալի արտոնություններ գյուղական վայրերում ներդրողների և արտադրություն հիմնողների համար: Կառավարությունները պետք է նաև ձգտեն նվազեցնել սահմանափակումները գյուղատնտեսական մթերքների միջազգային վաճառքի հարցերում:

9.8. Կառավարությունները պետք է ամրապնդեն արագ ուրբանիզացիայի առաջացրած ճնշումներին դիմակայելու իրենց ունակությունները՝ անհրաժեշտության դեպքում վերանայելով և վերափոխելով քաղաքային կառավարման գործակալությունները և մեխանիզմները, ինչպես նաև երաշխավորելով տեղային զարգացմանը վերաբերող նախագծման և որոշումների կայացման հարցերում բնակչության բոլոր խմբերի լայն մասնակցությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, որպեսզի երաշխավորվի հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, փխրուն էկոհամակարգերի պաշտպանությունը և ապահովվի հողի հասանելիությունը աղքատների համար թե քաղաքային և թե գյուղական վայրերում:

9.9. Երկրները պարտավոր են ընդունելու, որ բնիկ ժողովուրդների և նրանց համայնքների հողերը պետք է պաշտպանվեն այնպիսի գործունեությունից, որը էկոլոգիայի առումով հիմնավորված չէ կամ, որը բնիկ ժողովուրդների կողմից համարվում է սոցիալական կամ մշակութային առումով անընդունելի: «Հողեր» տերմինը բացատրվում է որպես տարածք, որը ներառում է ավանդաբար այնտեղ բնակվող ժողովուրդների շրջակա միջավայրը:

9.10. Երկրները պետք է ընդլայնեն բնապահպանությանը վերաբերող տեղեկատվության տարածման և ուսուցման գործունեությունը և նպաստեն գյուղացիական բնակչության համար կայուն, գյուղատնտեսության հետ կապ չունեցող, աշխատատեղերի ստեղծմանը, որպեսզի սահմանափակվի դեպի փխրուն էկոհամակարգերով տարածաշրջաններ բնակավայրերի տարածումը:

9.11. Բնակչության բաշխման քաղաքականությունը պետք է, որտեղ որ հնարավոր է, համապատասխանի այնպիսի միջազգային փաստաթղթերի դրույթներին, ինչպիսին է օրինակ՝ Պատերազմների ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանությանը վերաբերող Ժնևյան կոնվենցիան (1949թ.), ներառնով 49-րդ հոդվածը:

Բ. Բնակչության աճ մեծ քաղաքային ագլոմերացիաներում

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

9.12. Շատ երկրներում քաղաքային համակարգին բնորոշ է մեկ մեծ քաղաքի կամ ագլոմերացիայի գոյությունը, որը իր չափսերով կտրուկ տարբերվում է մնացած բնակավայրերից: Մեգաքաղաքների քանակի և չափերի ավելացմանը նպաստում է նաև որոշ քաղաքներում հասարակական և մասնավոր ռեսուրսների համակենտրոնացմամբ պայմանավորված բնակչության համակենտրոնացման միտումը: 1992թ. կար ընդհանուր առմամբ 13 քաղաք, որոնք ունեին 10 միլիոնից ոչ պակաս բնակչություն և ակնկալվում է, որ երբ մեգաքաղաքների մեծամասնությունը կլինի զարգացող երկրներում, մինչև 2010թ. դրանց թիվը կկրկնապատկվի: Կենտրոնական քաղաքներում, և մասնավորապես մեգաքաղաքներում, բնակչության շարունակվող համակենտրոնացումը կառավարությունների համար առաջացնում է յուրահատուկ տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ: Միևնույն ժամանակ շատ երկրներում մեծ ագլոմերացիաները հանդիսանում են տնտեսական և մշակութային գործունեության առավել դինամիկ զարգացող կենտրոններ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, մեծ քաղաքների յուրահատուկ խնդիրները վերլուծելով և դրանցով զբաղվելով, լիովին գիտակցել, որ մեծ քաղաքները ունեն իրենց դրական ներդրումը երկրի տնտեսական և

սոցիալական զարգացման հարցերում: Քաղաքների խնդիրները հաճախ ավելանում են բնակչության համակենտրոնացման, սոցիալ-տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների և այդ ամենի փոխկապակցվածության հարցերում տեղական մակարդակում թույլ կառավարման հնարավորությունների պատճառով:

Նպատակ

9.13. Բարձրացնել քաղաքային ագլոմերացիաների կառավարման արդյունավետությունը ավելի լայն և ռեսուրսները հաշվի առնող նախագծման և ղեկավարման, մեծ քաղաքներում բնակչության համակենտրոնացմանը նպաստող քաղաքականությունների և մեխանիզմների վերլուծության և վերանայման, ինչպես նաև գյուղական և քաղաքային վայրերում ցածր եկամուտներ ունեցող մարկանց անվտանգությունը և կյանքի որակը բարելավելու միջոցով:

Գործողություններ

9.14. Կառավարությունները պետք է ընդլայնեն քաղաքային և շրջանային ղեկավար մարմինների հնարավորություններն ու լիազորությունները այն հարցերում, որոնք կապված են քաղաքային զարգացման ղեկավարման, շրջակա միջավայրի պաշտպանության, բոլոր բնակիչների, այդ թվում քաղաքային ապօրինի հողակալների կարիքների բավարարման, նրանց անձնական անվտանգության ապահովման, բժշկական և սոցիալական բնագավառի խնդիրների վերացման հարցերով, ներառելով այն խնդիրները, որոնք կապված են թմրադեղերի և հանցագործությունների հետ և այն խնդիրների հարցերում, որոնք ի հայտ են գալիս գերբնակեցվածության կամ աղետների պատճառով, ինչպես նաև բնական կամ մարդածին աղետների ենթարկված տարածաշրջաններում բնակվող մարդկանց այլընտրանքային բնակեցման վայրերի տրամադրման հարցերում:

9.15. Քաղաքներում ապրող աղքատների ապրուստը թեթևացնելու նպատակով, որոնցից շատերը աշխատում են տնտեսության չգրանցված հիմնարկներում, կառավարություններին կոչ է արվում նպաստել գյուղական վայրերի միգրանտների ինտեգրմանը քաղաքային վայրերում և զարգացնել ու բարելավել նրանց եկամուտ ունենալու հնարավորությունները՝ հեշտացնելով նրանց համար հասանելիությունը դեպի աշխատանքի տեղավորում, վարկեր, արտադրություն, սպառման հնարավորություններ, հիմնական կրթություն, առողջապահական ծառայություններ,մասնագիտական պատրաստվածություն և տրանսպորտային ծառայություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատող կանանց և տնային տնտեսությունների գլուխ կանգնած կանանց: Անհրաժեշտ է ստեղծել երեխաների խնամքի կենտրոններ և փողոցային երեխաների պաշտպանության ու ռեաբիլիտացիայի ծրագրեր:

9.16. Հավասարակշռված կերպով անհրաժեշտ ենթակառուցվածքները և ծառայությունները ֆինանսավորելու համար տեղական և ազգային կառավարական գործակալությունները պետք է մտածեն համապատասխան միջոցառումների միջոցով ծախսերի փոխհատուցման արդարացի համակարգերի ստեղծման և եկամուտների ավելացման մասին՝ հաշվի առնելով հասարակության աղքատ շերտերի կարիքները :

9.17. Կառավարությունները պետք է ամրապնդեն հողի կառավարման հնարավորությունները, այդ թվում բոլոր մակարդակների քաղաքային նախագծումները, որպեսզի ապահովեն ժողովրդագրական միտումների հաշվառումը և խրախուսեն քաղաքների խնդիրների լուծման համար նոր մոտեցումների որոնումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն ճնշումներին և խնդիրներին, որոնք ի հայտ են գալիս բնակչության աճի հետևանքով:

9.18. Կառավարությունները պետք է նպաստեն քաղաքային ագլոմերացիաների կառավարման արդյունավետ ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը, հատուկ ուշադրություն դարձնելով ջրի, օդի որակի և թափոնների վերացման կառավարմանը, ինչպես նաև էկոլոգիապես անվտանգ էներգետիկ և տրանսպորտային համակարգերին:

Գ. Ներքին տարահանված մարդիկ

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

9.19. Անցյալ տասնամյակի ընթացքում ավելի մեծ ուշադրություն է հատկացվել այն մարդկանց իրավիճակներին, ովքեր տարբեր պատճառներով ստիպված են եղել լքել իրենց ավանդական բնակավայրերը: Քանի որ չկա երկրի ներսում տարահանված մարդկանց եզակի սահմանում, տարբերվում են նրանց քանակի, ինչպես նաև միգրացիայի պատճառների մասին տվյալները: Ինչևէ, ընդունված է, որ այդ պատճառները տատանվում են շրջակա միջավայրի դեգրադացիայից մինչև բնական աղետներ և ներքին կոնֆլիկտներ, որոնք վերացնում են մարդկային բնակավայրերը և ստիպում մարդկանց փախչել մեկ վայրից՝ մյուսը, մեկ երկրից՝ մյուսը: Շատ դեպքերում տարահանումների են ենթարկվում հատկապես բնիկ ժողովուրդները: Հաշվի առնելով նրանց տարահանումների ստիպողական բնույթը՝ ներքին տարահանումների ենթարկված մարդիկ հաճախ հայտնվում են հատուկ խոցելի իրավիճակում, մասնավորապես կանայք, որոնք զինված հակամարտությունների ժամանակ կարող են ենթարկվել բռնաբարությունների կամ սեռական ոտնձգությունների: Ներքին տարահանումին հաճախ հաջորդում են փախստականների և արտաքին տարահանված անձանց արտահոսքերը: Վերադարձող փախստականները նույնպես կարող են ենթարկվել ներքին տարահանումների:

Նպատակներ

9.20. Նպատակներն են՝

(ա) Ապահովել պատշաճ պաշտպանություն և աջակցություն երկրի ներսում տարահանված մարդկանց, մասնավորապես կանանց, երեխաներին և տարեց մարդկանց, որոնք առավել խոցելի են և գտնել լուծումներ նրանց տարահանումների պատճառները գտնելու, այն կանխարգելելու և համապատասխան դեպքերում նրանց վերադարձին կամ վերաբնակեցմանը օժանդակելու համար:

(բ) Վերջ դնել ստիպողական միգրացիայի բոլոր ձևերին, ներառելով «էթնիկ մաքրումը»:

Գործողություններ

9.21. Երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ վերացնելու երկրի ներսում տարահանումների պատճառները, այդ թվում շրջակա միջավայրի հետընթացը, բնական աղետները, զինված հակամարտությունը և ստիպողական վերաբնակեցումը և ստեղծել մեխանիզմներ տեղահանված մարդկանց պաշտպանելու համար, ներառյալ, հնարավորության դեպքում, վնասների փոխհատուցումը, մասնավորապես նրանց համար, ովքեր չունեն կարճ ժամանակահատվածում իրենց ապրելու վայր վերադառնալու հնարավորություն: Անհրաժեշտ է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ աղետներին նախապատրաստվելու համար: Կառավարությունների և բոլոր միջկառավարական և հասարակական կազմակերպությունների հետ երկխոսության շրջանակներում Միավորված ազգերի կազմակերպությանը խրախուսվում է շարունակել հետազոտել երկրների ներսում տարահանված մարդկանց օժանդակման և պաշտպանման անհրաժեշտությունը, ներքին տարահանումների հիմնապատճառները, դրանց կանխարգելումը և երկարատև լուծումները՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակները:

9.22. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ երաշխավորելու այն, որ երկրի ներսում տարահանված մարդկիկ ստանան բազային կրթություն, ունենան աշխատելու հնարավորություն, մասնագիտական ուսուցում և ունենան հասանելիություն դեպի առաջնային բուժօգնության ծառայություններ, այդ թվում՝ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ծառայություններ:

9.23. Շրջակա միջավայրի հետընթացի գործընթացը կրկին փոխելու և արոտավայրերի հասանելիության կոնֆլիկտը նվազեցնելու համար, անհրաժեշտության դեպքում, երկկողմանի և բազմակողմանի համաձայնությունների միջոցով անհրաժեշտ է վարել նորարարական արոտավայրատնտեսական քաղաքականություն:

9.24. Կառավարությունները, միջազգային և հասարակական կազմակերպությունները խրախուսվում են երկրի ներսում տեղահանված անձանց օժանդակությունը ամրապնդելու համար, որպեսզի նրանք կարողանան վերադառնալ իրենց հայրենի վայրեր:

9.25. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն համապատասխան միջազգային համագործակցության միջոցով ազգային մակարդակում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այնպիսի խնդիրների երկարատև լուծումներ գտնելու համար, որոնք վերաբերում են այն անձանց, ովքեր ենթարկվել են տեղահանումների երկրի ներսում, ներառյալ իրենց հայրենի վայրեր նրանց կամավոր վերադառնալու իրավունքը:

Գլուխ X

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ

Ա. Միջազգային միգրացիա և զարգացում

Գործողությունների համար անհրաժեշտ հիմքերը

10.1. Միջազգային, տնտեսական, քաղաքական և մշակութային փոխհարաբերակցությունները կարևոր դեր են խաղում երկրից երկիր մարդկանց տեղաշարժերի գործում՝ անկախ երկրի զարգացող, զարգացած լինելու կամ անցումային տնտեսություն ունենալու փաստից: Բազմաբնույթ լինելով միջազգային միգրացիան

կապված է նմանատիպ փոխհարաբերակցությունների հետ և ազդում է զարգացման գործընթացների վրա: Միջազգային տնտեսական անհավասարակշռությունները, աղքատությունը և շրջակա միջավայրի հետընթացը անվտանգության և խաղաղության բացակայության, մարդու իրավունքների ոտնահարման հետ մեկտեղ, ինչպես նաև արդարադատության և դեմոկրատական հաստատությունների զարգացածության տատանվող աստիճանները բոլոր այն գործոններն են, որոնք ազդում են միջազգային միգրացիայի վրա: Չնայած միջազգային միգրացիոն բոլոր հոսքերը տեղի են ունենում հարևան երկրների միջև, միջտարածաշրջանային միգրացիան, մասնավորապես այն, որն ուղղված է դեպի զարգացած երկրներ, աճել է: Գնահատված է, որ միջազգային միգրանտների թիվն աշխարհում փախստականներին ներառյալ 125 միլիոն է կազմում, որի կեսը զարգացող երկրներում են: Վերջին տարիներին զարգացած աշխարհի հիմնական ստացող երկրներում տարեկան կտրվածքով գրանցվել է մոտավորապես 1.4 միլիոն մարդու ներհոսք, որոնց մոտ երկու երրորդը եկել են զարգացող երկրներից: Ընդհանուր առմամբ, միջազգային միգրացիան կարող է դրական ազդեցություն ունենալ և ելքի և նշանակման երկրների վրա՝ ելքի երկրին տրամադրելով դրամական փոխանցումներ, իսկ ժամանման երկրին ապահովելով անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով: Միջազգային միգրացիան ապահովում է նաև հմտությունների փոխանակումը և նպաստում է մշակութային հարստացմանը: Այնուամենայնիվ, միջազգային միգրացիան ելքի շատ երկրների համար մարդկային ռեսուրսների կորստի պատճառ է և կարող է բերել քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ճնշումների նշանակման երկրներում: Որպեսզի միջազգային միգրացիոն քաղաքականությունները լինեն ավելի արդյունավետ, դրանք պետք է հաշվի առնեն նշանակման երկրի տնտեսական սահմանափակումները, միգրացիայի ազդեցությունը ընդունող հասարակության վրա և դրա հետևանքները ելքի երկրի վրա: Կայուն տնտեսական աճն ունենալով զարգացման ռազմավարություններ, որը համապատասխանում է այս նպատակին, անհրաժեշտ միջոց է հանդիսանում այս խնդրի լուծման հարցում: Ի լրումն, կարելի է ավելի արդյունավետ օգտագործել էմիգրանտների պոտենցիալ ներդրումը նրանց ելքի երկրի տնտեսական զարգացման գործում:

Նպատակներ

10.2. Նպատակներն են.

(ա) Միգրացիայի հիմնական պատճառների բացահայտումը, հատկապես աղքատությանն առնչվող:

(բ) Խթանել ելքի և ժամանման երկրների միջև համագործակցությունն ու երկխոսությունը, որպեսզի առավելագույնի հասցնել միգրացիայից ստացվող շահույթը և բարձրացնել հավանականությունն առ այն, որ միգրացիոն գործընթացներն ունենան դրական հետևանքներ և ընդունող և ելքի երկրների զարգացման վրա:

(գ) Կազմակերպել վերադարձող միգրանտների վերաինտեգրացման գործընթացները:

Գործողություններ

10.3. Ելքի և ժամանման երկրների կառավարությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի այդ երկրներում մնալն արդյունավետ լինի բոլոր մարդկանց համար: Այդ կապակցությամբ, պետք է ամրապնդել ջանքերն ուղղված կայուն տնտեսական և սոցիալական զարգացմանը հասնելուն, զարգացած և զարգացող երկրների և անցումային տնտեսությամբ երկրների միջև տնտեսական հավասարակշռությանը: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել նվազեցնելու միջազգային և ներքին կոնֆլիկտները մինչև դրանց սրվելը, համոզվել, որ ենթնիկ, կրոնական կամ փոքրամասնություններ կազմող մարդկանց իրավունքները պաշտպանված են և հարգել օրենքը, խթանել արդյունավետ կառավարումը, ամրապնդել դեմոկրատիան և մարդու իրավունքները: Ավելին, առավել աջակցություն պետք է ցուցաբերվի ազգային և տնային տնտեսությունների սննդի ապահովմանը, կրթությանը, սնուցմանը, առողջապահությանը և բնակչությանն ուղղված ծրագրերին, ինչպես նաև բնապահպանական հարցերին: Նման ջանքերը կպահանջեն ազգային և միջազգային ֆինանսական օժանդակություն, համաշխարհային շուկաների առավել հասանելիություն: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները պետք է ջանքեր գործադրեն ստեղծելու կայուն տնտեսական զարգացման համար անհրաժեշտ ներքին շրջանակ՝ շեշտը դնելով աշխատատեղերի ստեղծմանը: Այդ երկրների տնտեսական իրավիճակը քայլ առ քայլ կբարելավվի և այդ իսկ պատճառով այդ երկրներից միգրացիոն հոսքերը կնվազեն միայն երկարատև ժամանակահատվածում: Այդ ժամանակ, ներկայումս դիտարկվող սուր խնդիրները կբերեն միգրացիոն հոսքերի, որոնք կշարունակվեն կարճատև կամ միջին ժամանակահատվածում: Կառավարությունները պետք է որդեգրեն միջազգային միգրացիային ուղղված թափանցիկ ռազմավարություններ և ծրագրեր կառավարելու այդ հոսքերը:

10.4. Ելքի երկրների կառավարությունները, որոնք ցանկանում են խրախուսել դրամական փոխանցումների ներհոսքը և դրանց արդյունավետ կիրառումը երկրի զարգացման համար, պետք է որդեգրեն ամուր և հուսալի տարադրամի փոխանակում, մոնետար և տնտեսական քաղաքականություններ, բանկային այնպիսի ենթակառուցվածք, որը կապահովի միգրանտների միջոցների ապահով և ժամանակին փոխանցումների կատարմանը և կապահովի այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են ավելացնելու ներքին խնայողությունները և ուղղորդելու դրանք դեպի առավել արդյունավետ ներդրումներ:

10.5. Ժամանման երկրների կառավարությունները պետք է դիտարկեն ժամանակավոր միգրացիայի որոշակի ձևերի կիրառումը, օրինակ՝ կարճաժամկետ միգրացիա, որպես միջոց բարելավելու ելքի երկրների քաղաքացիների հմտությունները, հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների: Այդ կապակցությամբ, նրանք պետք է քննարկեն երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի որդեգրումը: Համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն պաշտպանելու և միգրանտների և բնիկների աշխատավարձերը և աշխատանքային պայմանները համապատասխան ոլորտներում: Ելքի երկրների կառավարությունները պետք է կազմակերպեն միգրանտների վերադարձը և նրանց վերաինտեգրումը բնակության երկրներում, և պետք է մշակեն մեթոդներ նրանց հմտությունների օգտագործման համար: Ելքի երկրների կառավարությունները պետք է համագործակցեն ժամանման երկրների հետ և ներգրավեն համապատասխան միջազգային կազմակերպությունների աջակցությունը խրախուսելու որակյալ միգրանտների վերադարձը կամավոր հիմունքներով, ովքեր կարող են կարևոր դեր խաղալ փորձի, հմտությունների և գիտելիքների փոխանակման հարցերում: Ժամանման երկրներին խորհուրդ է տրվում կազմակերպել միգրանտների վերադարձը, որդեգրելով

ճկուն քաղաքականություններ, ինչպիսիք են կենսաթոշակների փոխանցվելիությունը և աշխատանքային այլ արտոնություններ:

10.6. Այն երկրների կառավարությունները, որոնց վրա ազդել են միջազգային միգրացիոն գործընթացները, հրավիրվում են համագործակցության, որպեսզի համալրեն իրենց քաղաքական և տնտեսական օրակարգերը այս հարցերով, և ընդգրկվեն տեխնիկական համագործակցության գործընթացում օգնելու զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին՝ հասցեականացնելու միջազգային միգրացիայի ազդեցությունը: Կառավարությունները պետք է տեղեկատվություն փոխանակեն իրենց երկրների միջազգային միգրացիոն քաղաքականությունների և կանոնակարգերի վերաբերյալ, որոնց միջոցով կառավարվում և վերահսկվում են իրենց տարածքներում միգրանտների ընդունման և կացության գործընթացները: Այն երկրները, որոնք դեռ չեն արել այն, հրավիրվում են որդեգրելու աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիան:

10.7. Կառավարությունները պետք է դիտարկեն միգրացիայի պահանջները այն երկրներից, որոնց, ըստ գոյություն ունեցող գիտական վկայությունների, սպառնում է համաշխարհային տաքացման կամ կլիմայի փոփոխության վտանգը:

10.8. Համագործակցելով միջազգային և հասարակական կազմակերպությունների և հետազոտական հաստատությունների հետ կառավարությունները պետք է աջակցեն միջազգային միգրանտների հոսքերի և միգրացոն գործընթացների պատճառների, ինչպես նաև միջազգային միգրացիայի մոնիթորինգի վերաբերյալ տվյալների հավաքագրմանը: Անհրաժեշտ է նաև օժանդակել այն ռազմավարությունները, որոնք ուղղված են միգրացիայի ներգործությանը զարգացման և միջազգային հարաբերություններին: Միգրացիոն գործընթացներում առաքելություն ունեցող միջազգային կազմակերպությունների դերը պետք է հզորացնել այնպես, որ նրանք կարողանան տրամադրել անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն զարգացող երկրներին, խորհուրդ տալ միջազգային միգրացիոն հոսքերի կառավարման վերաբերյալ և, անհրաժեշտության դեպքում, խթանեն միջկառավարական համագործակցությունը երկկողմանի և բազմակողմանի երկխոսությունների միջոցով:

Բ. Փաստաթղթային միգրանտներ

Գործունեության հիմք

10.9. Փաստաթղթային միգրանտներն այն միգրանտներն են, ովքեր բավարարում են նշանակման երկիր մուտք գործելու, մնալու և, եթե կիրառելի է, աշխատելու բոլոր օրինական պահանջները: Որոշ երկրներում շատ փաստաթղթային միգրանտներ ունեն ժամանակի ընթացքում ձեռք բերված երկարաժամկետ բնակության իրավունք:Նման դեպքերում, ցանկալի է փաստաթղթային միգրանտների ինտեգրումը ընդունող հասարակություն, և հենց այդ նպատակով, կարևոր է տարածել նրանց վրա այն նույն սոցիալական,տնտեսական և օրինական իրավունքները, որոնք տարածվում են քաղաքացիների վրա ազգային օրենսդրությանը համաձայն: Փաստաթղթային միգրանտների ընտանիքների վերամիավորումը կարևոր գործոն է միջազգային միգրացիայում: Նաև շատ կարևոր է պաշտպանել փաստաթղթային միգրանտներին և

նրանց ընտանիքներին ռասայականությունից, ազգայնականությունից, օտարատյացությունից և հարգել նրանց ֆիզիկական ամբողջականությունը, արժանապատվությունը, կրոնական դավանանքները և մշակութային արժեքները; Փաստաթղթային միգրացիան, ընդհանուր առմամբ շահավետ է ընդունող երկրի համար, քանի որ միգրանտները ընդհանրապես կենտրոնացված են ամենաարտադրողական տարիքում և ունեն ընդունող երկրին անհրաժեշտ հմտություններ և նրանց ընդունումը համապատասխանում է պետության վարած քաղաքականության հետ; Փաստաթղթային միգրանտների դրամական փոխանցումները դեպի իրենց ծագման երկրներ, հաճախ արտարժույթի շատ կարևոր աղբյուր են և օգտակար են երկրում մնացած իրենց հարազատների բարեկեցության կատարելագործման համար:

Հիմնախնդիրներ

10.10. Հիմնախնդիրներն են.

(ա)փաստաթղթային միգրանտների սոցիալ-տնտեսական ինտեգրում և օրենքի առաջ հավասար վերաբերմունք ապահովել, հատկապես այն միգրանտներին, ովքեր ունեն նշանակման երկրում ձեռք բերված երկարաժամկետ բնակության իրավունք,

(բ) վերացնել փաստաթղթային միգրանտների, հատկապես կանանց, երեխաների և տարեցների նկատմամբ խտրական գործելակերպը,

(գ)պաշտպանություն ապահովել ընդդեմ ռասայականության, ազգայնականության, օտարատյացության,

(դ) նպաստել փաստաթղթային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների բարեկեցությանը,

(ե)փաստաթղթային միգրանտների մշակութային և կրոնական արժեքների, դավանանքների և ավանդույթների հանդեպ հարգանքի ապահովում, այնքանով, որքանով դրանք համապատասխանում են ազգային օրենսդրությանը և մարդու համընդհանուր ճանաչված իրավունքներին,

(զ) հաշվի առնել ժամանակավոր միգրանտների հատուկ կարիքները և հանգամանքները:

Գործողություններ

10.11. Փաստաթղթային միգրանտների նկատմամբ, ովքեր համապատասխանում են մնալու ժամկետի պահանջներին և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ ում մնալը ընդունող երկրում մշտական է, ընդունող երկրների իշխանությունները պետք է տարածեն հավասար վերաբերմունք, որը համապատասխանում է նրանց իսկ սեփական ազգությանը, օգտվելու հիմնական մարդու իրավունքներից, ներառյալ ապահովելով հավասար հնարավորություն և վերաբերմունք կրոնական պաշտամունքների, աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, արհմիություններում մասնակցության նկատմամբ, առողջապահական, կրթական, մշակութային և այլ սոցիալական ծառայությունների նկատմամբ, ինչպես նաև հավասար վերաբերմունք դատական

համակարգի և օրենքի նկատմամբ: Ընդունող երկրների իշխանությունները պետք է հետամուտ լինեն համապատասխան քայլեր ձեռնարկեն խուսափելու միգրանտների նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունից, վերացնելով խտրական գործելակերպը կապված նրանց և նրանց երեխաների ազգության հետ և պաշտպանեն նրանց իրավունքները և անվտանգությունը: Կանայք և երեխաները, ովքեր տեղաշարժվել են որպես ընտանիքի անդամներ պետք է պաշտպանվեն իրենց հովանավորի կողմից կատարած մարդու իրավունքների խախտումից կամ չարաշահումից, և իշխանությունները պետք է հաշվի առնեն, որ նրանց մնալու երկարաձգումը կքայքայի ընտանեկան հարաբերությունները, ազգային օրենսդրության սահմաններում:

10.12. Երկարաժամկետ բնակության իրավունք ունեցող փաստաթղթային միգրանտների ինտեգրմանը նպաստելու համար, ընդունող երկրների իշխանությունները հետամուտ պետք է լինեն տրամադրելու նրանց քաղաքացիական և քաղաքական իրավունքներ և պարտականություններ, ինչպես հարկն է դյուրին դարձնելով նրանց հպատակագրումը: Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն երկարաժամկետ միգրանտների երեխաների ինտեգրումը հզորացնելու գործում, ընձեռելով նրանց քաղաքացիներին հավասար կրթական և ուսումնական հնարավորություններ՝ թույլ տալով նրանց իրականացնել տնտեսական գործունեություն և դյուրին դարձնելով նրանց հպատակագրումը ովքեր կրթվել են ընդունող երկրում: Երեխայի իրավունքների Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն և համապատասխան, բոլոր այլ համընդհանուր ճանաչված Մարդու իրավունքների համաձայն, բոլոր իշխանությունները, հատկապես ընդունող երկրների իշխանությունները պետք է ճանաչեն ընտանիքի վերամիավորման էական նշանակությունը և նպաստեն դրա ինտեգրմանը ազգային օրենսդրություն, փաստաթղթային միգրանտների ընտանիքների միավորման պաշտպանության ապահովման համար: Ընդունող երկրների իշխանությունները պետք է ապահովեն միգրանտների և նրանց ընտանիքների պաշտպանությունը, նախապատվությունը տալով ծրագրերին և ռազմավարություններին, որոնք պայքարում են կրոնական անհանդուրժողականության, ռասայականության, ազգայնականության, օտարատյացության և գենդերային խտրականության դեմ և այդ կապակցությամբ առաջացնում անհրաժեշտ հասարակության դյուրազգացություն:

10.13. Նշանակման երկրների իշխանությունները պետք է հարգեն փաստաթղթային միգրանտների հիմնական մարդու իրավունքները, քանի որ այդ իշխանությունները հաստատում են իրենց տարածք մուտք գործելու իրավունքի կարգավորումը և քաղաքականություն են որդեգրում իմիգրացիոն հոսքերը կարգի բերելու համար: Միգրանտների ընդունման հետ կապված, երկրները պետք է խուսափեն ռասայական, կրոնական, սեռական և անգործունակության խտրականությունից մինչդեռ հաշվի առնելով առողջապահական և այլ հարցեր ազգային իմիգրացիոն նորմերին համապատասխան, հատկապես հաշվի առնելով տարեցների և երեխաների հատուկ կարիքները, երկրները հետամուտ պետք է լինեն նպաստելու երկարաժամկետ բնակության իրավունք ունեցող օրինական միգրանտների ընտանեկան կյանքի կարգավորմանը ընտանիքի վերամիավորման միջոցով:

10.14. Երկրները պետք է տրամադրեն աջակցություն և համագործակցություն այն ծրագրերին, որոնք ուղղված կլինեն ստիպողական միգրացիայի անբարենպաստ սոցիալ-տնտեսական արդյունքներին:

Գ. Ոչ փաստաթղթային միգրանտներ

Գործունեության հիմք

10.15. Ամեն ազգի, պետության իրավունքն է որոշելու, թե ով կարող է մուտք գործել և մնալ իր տարածքում և ինչ պայմաններում: Այսպիսի իրավունք, ինչևէ, պետք է կիրառվի խուսափելով ռասայական և օտարատյացական գործունեություններից և քաղաքականություններից: Ոչ փաստաթղթային կամ անկանոն միգրանտները այն միգրանտներն են, ովքեր չեն կատարում նշանակման երկրի հաստատած պահանջները կապված երկիր մուտք գործելու, մնալու կամ տնտեսական գործունեություն իրականացնելու հետ: Դրանով պայմանավորված, միգրացիայի ճնշումները գնալով աճում են մի շարք զարգացող երկրներում, հատկապես, քանի դեռ իրենց աշխատուժը շարունակում է աճել, կաճի նաև ոչ փաստաթղթային կամ անկանոն միգրացիան:

Հիմնախնդիրներ

10.16. Հիմնախնդիրներն են.

(ա) Հասցեագրել ոչ փաստաթղթային միգրացիայի հիմնական պատճառները;

(բ) Զգալիորեն նվազեցնել ոչ փաստաթղթային միգրանտների քանակը, ապահովելով նրանց ստանալ միջազգային պաշտպանություն անհրաժեշտության դեպքում, կանխել ոչ փաստաթղթային միգրանտների շահագործումը և երաշխավորել, որ պաշտպանված են նրանց հիմնական մարդու իրավունքները;

(գ) Կանխել միգրանտների միջազգային թրաֆիքինգը (առքուվաճառքը), հատկապես մարմնավաճառության նկատառումներով;

(դ) Պաշտպանություն ապահովել ընդդեմ ռասայականության, ազգայնականության, օտարատյացության:

Գործողություններ

10.17. Ծագման և նշանակման երկրների իշխանությունները պետք է հետամուտ լինեն համագործակցելու ոչ փաստաթղթային միգրացիայի պատճառների նվազեցման գործում,պաշտպանելով ոչ փաստաթղթային միգրանտների հիմնական մարդու իրավունքները, ներառյալ այլ երկրներում ապաստանի իրավունք փնտրելու և ստանալու հետապնդումից և կանխել նրանց շահագործումը: Իշխանությունները պետք է պարզեն ոչ փաստաթղթային միգրացիայի պատճառները և դրա տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ներգործությունը,ինչպես նաև դրա առնչությունը սոցիալական, տնտեսական և միջազգային միգրացիայի քաղաքականություններ մշակելու համար:

10.18. Ընդունող և ծագման երկրների իշխանությունները պետք է ընդունեն արդյունավետ պատժամիջոցներ (սանկցիաներ) այն անձանց նկատմամբ, ովքեր կազմակերպում են ոչ փաստաթղթային միգրացիա,շահագործում ոչ փաստաթղթային միգրանտներին կամ զբաղվում ոչ փաստաթղթային միգրանտների թրաֆիքինգով, հատկապես նրանց

նկատմամբ, ովքեր զբաղվում են կանանց, երիտասարդների, երեխաների միջազգային թրաֆիքինգի տարբեր տեսակներով: Ծագման երկրների իշխանությունները, որտեղ գործակալների կամ այլ միջնորդների գործունեությունները միգրացիայի հարցում օրինական են, պետք է գործունեություն ծավալեն կանխելու չարաշահումները, հատկապես շահագործումը, մարմնավաճառությունը և բռնի որդեգրումը:

10.19. Իշխանությունները, համապատասխան միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, պետք է կանխարգելեն ոչ փաստաթղթային միգրացիան պոտենցիալ միգրանտներին իրազեկելով ընդունող երկրների մուտքի,մնալու և զբաղվածության օրինական պայմանների վերաբերյալ, ծագման երկրներում տեղեկատվական գործունեություններ ծավալելու միջոցով:

10.20. Ծագման երկրների իշխանությունները պատասխանատու են ընդունելու ապաստանի հայցը մերժած ոչ փաստաթղթային միգրանտների և անձանց վերադարձը և վերաինտեգրումը, և չպետք է տուգանեն այդ անձանց նրանց վերադարձի դեպքում:Ի լրումն, ծագման և նշանակման երկրների իշխանությունները պետք է ոչ փաստաթղթային միգրացիայից առաջացած խնդիրների համար բավարար լուծումներ գտնեն երկկողմանի կամ բազմակողմանի բանակցությունների միջոցով, մասնավորապես վերստին ընդունելու համաձայնագրերի վերաբերյալ, որոնք պաշտպանում են ներգրավված անձանց հիմնական մարդու իրավունքները՝ համաձայն համապատասխան միջազգային նորմերին:

Դ. Փախստականներ, անօթևաններ և տեղահանվածներ

Գործունեության հիմք

10.21. Ավելի քիչ քան 10 տարի, 1985թ. մինչև 1993թ., փախստականների թվաքանակը ավելի քան կրկնապատկվել է, 8.5 միլիոնից դարձել 19 միլիոն: Դրա պատճառը բազմաթիվ բարդ գործոններն են, ներառյալ մարդու իրավունքների մասսայական խախտումները: Այդ փախստականներից շատերը ապաստան են գտնում զարգացող երկրներում, հաճախ մեծ բեռ դառնալով այդ պետությունների համար: Անօթևանների ինստիտուտը գտնվում է խիստ լարված վիճակում տարբեր պատճառներով, ներառյալ փախստականների և անօթևանների աճող թվաքանակը և միգրանտների կողմից անօթևանների ընթացակարգային չարաշահումը, փորձելով շրջանցել ներգաղթի սահմանափակումները: Մինչդեռ աշխարհում բոլոր երկրների երկու երրորդը վավերացրել է Փախստականների կարգավիճակին կամ 1967 Արձանագրությանը վերաբերող 1951 Կոնվենցիան, որը սահմանել է փախստականներին պաշտպանելու չափորոշիչներ: Անհրաժեշտություն կա հզորացնելու աջակցությունը փախստականների, հատկապես կին և երեխա փախստականների, միջազգային պաշտպանության և օժանդակության հարցում, ովքեր ավելի խոցելի են: Տեղահանվածները, ովքեր չեն որակվում որպես փախստականի կարգավիճակի տակ, և որոշ դեպքերում իրենց երկրից դուրս են գտնվում, նույնպես խոցելի են և միջազգային աջակցության կարիք ունեն: Անհրաժեշտ է ռեգիոնալ համաձայանգրեր, որոնք կպաշտպանեն պատերազմից փախած անձանց:

Հիմնախնդիրներ

10.22. Հիմնախնդիրներն են.

(ա) Նվազեցնել փախստականների շարժը և տեղաշարժը հանգեցնող ճնշումները, պայքարելով նրանց պատճառների դեմ բոլոր մակարդակներով և ձեռնարկելով կանխարգելիչ միջոցներ;

(բ) Գտնել և իրականացնել փախստականների և տեղահանվածների կացության հետ կապված տևական լուծումներ;

(գ)Ապահովել փախստականներին արդյունավետ պաշտպանությամբ և օժանդակությամբ, հատուկ ուշադրություն դարձնելով կին և երեխա փախստականների կարիքները և ֆիզիկական անվտանգությունը;

(դ) Կանխարգելել անօթևանների ինստիտուտի քայքայումը;

(ե)Ապահովել փախստականներին և տեղահանվածներին համապատասխան առողջապահական,կրթական և սոցիալական ծառայություններով;

(զ)Ինտեգրել փախստականների և վերադարձողների աջակցության և վերականգնողական ծրագրերը և զարգացման ծրագիրը, հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային հավասարությանը:

Գործողություններ

10.23. Իշխանությունները պետք է հետամուտ լինեն ուշադրություն դարձնելու փախստականների և տեղահանվածների տեղաշարժի պատճառները, ձեռք առնելով համապատասխան միջոցառումներ, մասնավորապես հակամարտության լուծման, խաղաղության և հաշտության խթանման, մարդու, մասնավորապես, փոքրամասնություններին պատկանող մարդկանց իրավունքների հարգանքի, պետության անկախության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության նկատմամբ հարգանքի ապահովման հարցում: Եվ ավելին, հարկադիր տեղահանությանը նպաստող գործոնները, կարիք ունեն հանդես գալու աղքատության նվազեցման, դեմոկրատացման, լավ կառավարման և շրջակա միջավայրի դեգրադացիայի կանխման վերաբերող նախաձեռնություններով: Իշխանությունները և բոլոր այլ պատկան մարմինները պետք է հարգեն և պաշտպանեն մարդկանց իրենց տներում ապահով մնալու իրավունքը, և պետք է խուսափեն այն քաղաքականությունից կամ գործելակերպից, որը ստիպում է մարդկանց փախչել:

10.24.Իշխանությունները պետք է հզորացնեն իրենց աջակցությունը փախստականների ինչպես նաև տեղահանվածների, միջազգային պաշտպանության և օժանդակության գործունեությունների գործում և նպաստեն նրանց կացության համար տևական լուծումներ որոնելու առնչությամբ: Այս քայլով, իշխանությունները կփորձեն գործի դնել ռեգիոնալ և միջազգային մեխանիզմները, որը կապահովի համապատասխան ընդհանուր պատասխանատվություն՝ պաշտպանելու և աջակցելու փախստականներին: Պետք է

ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները փախստականներին, մասնավորապես կին և երեխա փախստականներին, պաշտպանելու նրանց հատկապես շահագործումից, չարաշահումից և բռնության այլ տեսակներից:

10.25. Համապատասխան միջազգային աջակցություն պետք է տրամադրվի ապաստան տվող երկրներին, փախստականների հիմնական կարիքները բավարարելու և աջակցելու տևական լուծումներ որոնելու հարցում: Պետք է աջակցել փախստականներին, ինքնահաստատվելու գործում: Փախստականները, հատկապես կին փախստականները պետք է ներգրավվեն փախստականների աջակցության ծրագրերում և դրանց իրականացման մեջ: Փախստականների աջակցության ծրագրերի պլանավորման և իրականացման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել կին և երեխա փախստականների առանձնահատուկ կարիքների վրա: Փախստականները պետք է ապահովվեն համապատասխան կացարանով, կրթական և առողջապահական ծառայություններով, ներառելով ընտանիքի պլանավորման և այլ անհրաժեշտ սոցիալական ծառայությունները: Փախստականները պետք է հարգեն իրենց ապաստանող երկրի օրենքները և կանոնները:.

10.26. Իշխանությունները պետք է ստեղծեն ապահով և արժանավայել պայմաններ փախստականների կամավոր հայրենադարձության համար: Հայրենադարձող փախստականների վերականգնողական աջակցությունը պետք է հնարավորինս առնչվի երկարաժամկետ վերականգման և զարգացման ծրագրերի հետ: Միջազգային համայնքը պետք է աջակցի փախստականների հայրենադարձության և վերականգնողական ծրագրերին, և ականների ու այլ չպայթած սարքերի հեռացման հարցերին, որոնք լուրջ վտանգ են սպառնում հայրենադարձների և տեղական բնակչության ապահովության համար:

10.27. Իշխանությունները պետք է հետևեն փախստականներին առընչվող միջազգային օրենքներին: Այն պետությունները, որոնք դեռ չեն հետևել, պետք է ձեռնամուխ լինեն հետևելու փախստականներին առնչվող միջազգային նորմերին, հատկապես Փախստականների կարգավիճակին վերաբերող 1951 Կոնվենցիային և 1967 Արձանագրությանը: Եվ ավելին, իշխանությունները պետք է հարգեն հարկադիր հայրենադարձության մերժման սկզբունքը (այսինքն՝ մարդկանց ոչ բռնի վերադարձը այն վայրեր, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայի, կրոնի, ազգության, հատուկ սոցիալական խմբի անդամակցության, կամ քաղաքական կարծիքի պատճառով): Իշխանությունները պետք է երաշխավորեն, որ անօթևանները իրենց երկրի տարածքում անաչառ դատալսումների իրավունք ունենան և պետք է նպաստեն անօթևանների հայցերի արագ մշակմանը, ապահովելով, որ փախստականի կարգավիճակի որոշման ուղեցույցերը և ընթացակարգերը մեղմ լինեն կնոջ առանձնահատուկ վիճակի նկատմամբ:

10.28. Միջազգային պաշտպանության կարիք ունեցող փախստականների և տեղահանվածների անսպասելի և մասսայական ժամանման դեպքերում ընդունող երկրների իշխանությունները պետք է առնվազն ժամանակավոր պաշտպանություն ապահովեն միջազգայնորեն ճանաչված չափորոշիչներին և ազգային օրենքին, նորմերին և կանոններին համաձայն, մինչդեռ նրանց կացության վերաբերյալ լուծումներ չի գտնվել: Պաշտպանության կարիք ունեցող անձինք պետք է մնան ապահով տարածքներում և

հնարավորինս մոտ իրենց ծագման երկրներին: Իշխանությունները պետք է հզորացնեն պաշտպանության մեխանիզմները և օգնություն տրամադրեն այդ տարածքների բնակչությանը: Հավաքական համագործակցության և միջազգային համերաշխության սկզբունքները պետք է կիրառվեն աջակցություն հայցող ընդունող երկրներին:

10.29. Հարկադիր միգրացիայից ծագած փախստականների և տեղահանվածների խնդիրները, ներառյալ հայրենադարձման նրանց իրավունքը, պետք է կարգավորվի ՄԱԿ-ի կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, այլ միջազգային նորմերի և ՄԱԿ-ի համապատասխան բանաձևի սկզբունքներին համաձայն:

Գլուխ XI

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. Կրթություն, բնակչություն և կայուն զարգացում

Գործունեության հիմք

11.1. Վերջին 20 տարիների ընթացքում, աշխարհի կրթական մակարդակում աճ է դիտվել: Չնայած տղամարդկանց և կանանց միջև եղած կրթական մակարդակի տարբերությունը նվազել է, աշխարհում անգրագետ մարդկանց 75%-ը կանայք են: Ամենն տեղ հիմնական կրթության պակասը և չափահասների գրագիտության ցածր մակարդակը շարունակում է խորընդոտել զարգացման ընթացքին: Համաշխարհային հասարակությունը հատուկ պատասխանատվություն ունի ապահովելու, որ բոլոր երեխաները ստանան որակյալ կրթություն և ավարտեն տարրական դպրոց: Կրթությունը պարտադիր միջոց է կյանքի որակի կատարելագործման համար: Ինչևէ, ավելի դժվար է բավարարել կրթական պահանջները, եթե կա կտրուկ բնակչության աճ:

11.2. Կրթությունը կայուն զարգացման հիմնական գործոնն է; այն միևնույն ժամանակ բարեկեցության բաղադրիչն է և բարեկեցության զարգացման գործոնը, որը կապված է ժողովրդագրական, ինչպես նաև տնտեսական և սոցիալական գործոնների հետ: Կրթությունը նաև միջոց է անհատին հնարավորություն տալու ձեռք բերել գիտելիք, որը ցանկացած մարդու դժվարություններ հաղթահարելու նախապայման է հանդիսանում այժմյան բարդ աշխարհում: Ծնելիության, հիվանդության և մահացության մակարդակների նվազումը, կանանց դերի հզորացումը, աշխատող բնակչության որակի կատարելագործումը, իրական ժողովրդավարության ամրապնդումը մեծապես նպաստում են կրթության ոլորտում առաջընթացին: Կրթության համընդհանուր մատչելիությունը նույնպես նպաստում է միգրանտների ինտեգրմանը, որը հարգում է միգրանտների կրոնական և մշակութային ակունքները:

11.3. Կրթության և ժողովրդագրական ու սոցիալական փոփոխությունների միջև կապը փոխկախվածություններից մեկն է: Կրթության, ամուսնական տարիքի, ծնելիության, մահացության, փոփոխականության և գործունեության միջև գոյություն ունի սերտ կապ:Կանանց և աղջիկների կրթության մակարդակի աճը նպաստում է կանանց հնարավորությունների ավելի մեծացմանը, ամուսնության հետաձգմանը և ընտանիքների չափի նվազեցմանը: Երբ մայրերը ավելի կրթված են, նրանց երեխաների գոյատևման

մակարդակը աճի միտում ունի: Կրթության ավելի լայն մատչելիությունը նույնպես ներքին միգրացիայի և աշխատող բնակչության կառուցվածքի գործոն է:

11.4. Կրթությունը և ուսուցումը պետք նախապատրաստի երիտասարդներին կարիերայի զարգացման և մասնագիտական կյանքի համար, որպեսզի նրանք հաղթահարեն դժվարությունները այժմյան բարդ աշխարհում: Ճահավետ աշխատանքի հնարավորությունների հեռանկարները կախված են կրթական ծրագրերից և ստացված ուսման բնույթից: Անհամապատասխանությունները և տարբերությունները կրթական և արտադրողական համակարգերի միջև կարող են հանգեցնել գործազրկության և թերզբաղվածության, արժեզրկելով որակավորումները և, որոշ դեպքերում, հանգեցնել որակյալ անձանց տեղաշարժին գյուղական բնակավայրերից դեպի քաղաքային և “ուղեղների արտահոսքին”:Ուստի, կարևոր է խթանել կայուն զարգացմանը նպաստող կրթական, տնտեսական և սոցիալական համակարգերի ներդաշնակ մշակումը:

Հիմնախնդիրներ

11.5. Հիմնախնդիրներն են.

(ա) Ձեռք բերել կրթության որակի համընդհանուր մատչելիություն, հատուկ նախապատվություն տալով տարրական և տեխնիկական կրթությանն ու մասնագիտական ուսուցմանը, պայքարելով անգրագիտության դեմ և վերացնելով գենդերային անհավասարությունը կրթության մատչելիությունը ապահովելու, այն պահպանելու և աջակցելու համար;

(բ) Նպաստել երիտասարդների ոչ ֆորմալ կրթությանը, երաշխավորելով կրթական կենտրոնների հավասար մատչելիություն կանանց և տղամարդկանց համար;

(գ) Ներկայացնել և կատարելագործել կրթական ծրագրի բովանդակությունը այնպես, որ ավելի մեծացնել պատասխանատվությունը և տեղեկացվածությունը բնակչության և կայուն զարգացման միջև փոխհարաբերությունների, առողջապահական հարցերի վերաբերյալ, ներառյալ վերարտադրողական առողջությունը; և գենդերային հավասարությունը:

Գործողություններ

11.6. Մարդկային զարգացման նախադրայալներից մեկը անգրագիտության վերացումն է: Բոլոր երկրները 90-ականներին նվաճած առաջընթացը պետք է ամրապնդեն, տարրական կրթության մատչելիություն ապահովելով, հիմք ընդունելով “Կրթություն բոլորի համար” Համաշխարհային համաժողովը, որը տեղի է ունեցել Ջոմտիենում (Թաիլանդ) 1990 թվականին: Բոլոր երկրները պետք է հետագայում ձգտեն ապահովելու տարրական դպրոցի կամ կրթության համարժեք մակարդակների լրիվ մատչելիություն տղաների և աղջիկների համար հնարավորինս արագ, բոլոր դեպքերում մինչև 2015 թվականը: Նաև ուշադրություն պետք է դարձնել կրթության որակին և տեսակին՝ ներառելով ավանդույթների արժեքների ճանաչումը: Համընդհանուր տարրական

կրթության նպատակին հասած երկրները պետք է հետամուտ լինեն ընդլայնեն կրթությունը և ուսուցումը և ապահովեն մատչելիություն ավարտելու կրթությունը միջնակարգ դպրոցներում և ավելի բարձր մակարդակներում:

11.7 Բոլոր մակարդակներում բյուջեն մշակելիս մեծ նախապատվություն պետք է տալ ներդրումներին՝ կրթության և մասնագիտական ուսուցման բնագավառում, և պետք է հաշվի առնել ապագա աշխատուժի հմտությունների պահանջների ոլորտը և մակարդակը:

11.8. Երկրները պետք է հաստատական քայլեր ձեռնարկեն պահելու աղջիկներին և դեռահասներին դպրոցում, կառուցելով ավելի շատ համայնքային դպրոցներ, վերապատրաստելով ուսուցիչներին ունենալ հավասար վերաբերմունք գենդերի գործոնի նկատմամբ, տրամադրելով կրթաթոշակներ և այլ համապատասխան խրախուսանքներ, և զգացնել տալով ծնողներին կրթություն ստացող աղջիկների կարևորությունը, մինչև 2005 թվականը փակելով գենդերին առնչվող բացթողումները տարրական և միջնակարգ դպրոցի կրթության մեջ: Ի լրումն այս գործողությունների, երկրները պետք է նաև իրականացնեն ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների լրիվ կիրառումը: Պետք է հնարավորություն տալ հղի դեռահասներին շարունակել իրենց կրթությունը դպրոցում:

11.9. Ամենաարդյունավետ լինելու համար,բնակչության հիմախնդիրների վերաբերյալ ուսուցումը պետք է սկսել տարրական դպրոցում և շարունակել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում, հաշվի առնելով ծնողների իրավունքները և պատասխանատվությունները և երեխաների ու դեռահասների կարիքները: Երբ արդեն գոյություն ունեն նմանատիպ ծրագրեր, պետք է վերանայել, արդիականացնել և ընդլայնել կրթական ծրագրերը, ընդգրկելով այնպիսի կարևոր հարցեր առնչվող սեռերին, վերարտադրողական ընտրություններին և պատասխանատվություններին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը: Բնակչության կրթության վերաբերյալ նախագծերում պետք է շեշտը դրվի ծնողների և համայնքի ղեկավարների հետ խորհրդատվության վրա, որպեսզի բնակչության կրթության վերաբերյալ ծրագրերը ընդունվի համայնքի կողմից:

11.10. Պետք է հզորացնել բնակչության մասնագետների վերապատրաստումը համալսարանի մակարդակով, և պետք է խրախուսվի ժողովրդագրական փոփոխականների, ինչպես նաև առողջապահության և շրջակա միջավայրին վերաբերող բովանդակության միավորումը և դրանց փոխհարաբերությունները սոցիալական ու տնտեսական կարգապահության զարգացման ծրագրի հետ:

Բ. Բնակչության տեղեկատվություն, կրթություն և հաղորդակցություն

Գործունեության հիմք

11.11. Ավելի լայն հասարակական իրազեկությունը, ըմբռնումը և պարտավորությունները բոլոր մակարդակներում, անհատականից մինչև միջազգային, կարևոր են այս Գործողության Ծրագրի նպատակներին և հիմնախնդիրների լուծմանը հասնելու հարցում: Ուստի պետք է հզորացնել բնակչության և կայուն զարգացման հիմնահարցերին առնչվող տեղեկատվության, կրթության և հաղորդակցության գործունեությունները բոլոր երկրներում և բոլոր խմբերում: Այս ներառում է գենդերային և մշակութային բնույթի

տեղեկատվության, կրթության և հաղորդակցության պլանների և բնակչության և զարգացման ռազմավարությունների հաստատում: Ազգային մակարդակով, ավելի համարժեք և համապատասխան տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռում ծրագիր կազմողներին և քաղաքականություն մշակողներին բնակչության և կայուն զարգացման հետ կապված համապատասխան ծրագրեր և որոշումներ կայացնել: Առավել հիմնական մակարդակում, համարժեք և համապատասխան տեղեկատվությունը հանգեցնում է ստացված տեղեկատվության հիման վրա պատասխանատու որոշման կայացմանը, որը առնչվում է առողջապահությանը, սեռական և վերարտադրողական վարքագծին, ընտանեկան կյանքին և արտադրման ու սպառման տեսակներին: Բացի դրանից, միգրացիայի պատճառների և օգուտների վերաբերյալ ավելի շատ և լավ տեղեկատվությունը կարող է հասարակության համար ստեղծել ավելի դրական միջավայր հասցեագրելու և արձագանքելու միգրացիայի մարտահրավերներին:

11.12.Արդյունավետ տեղեկատվությունը, կրթությունը և հաղորդակցությունը նախադրյալներ են կայուն զարգացման համար և ճանապարհ են հարթում վարքագծի փոփոխության համար: Անշուշտ, այն սկսվում է գիտակցելով, որ ազատ և պատասխանատու որոշումներ պետք է կայացնել տեղեկացված լինելով երեխաների քանակի և նրանց միջև միջակայքի, առօրյա կյանքի բոլոր այլ ասպեկտների վերաբերյալ, ներառյալ սեռական և վերարտադրողական վարքագիծը: Ավելի լայն հասարակական իրազեկությունը և պարտավորությունները ժողովրդավարական կարգավորման մեջ ստեղծում է նպաստող կլիմա ստացված տեղեկատվության հիման վրա պատասխանատու որոշման կայացման և վարքագծի համար: Կարևորագույնն այն է, որ դրանք ևս ճանապարհ են հարթում ժողովրդավարական հասարակական քննարկման համար և, այդպիսով, կատարում հնարավոր խիստ քաղաքական պարտավորություններ և աջակցություն ցուցաբերում պահանջվող գործողության համար տեղական, ազգային և միջազգային մակարդակներով:

11.13. Արդյունավետ տեղեկատվությանը, կրթությանը և հաղորդակցությանը առնչվող գործունեությունները ներառում են մի շարք հաղորդակցության միջոցներ, միջանձնական հաղորդակցության ամենահայտնի մակարդակներից մինչև ֆորմալ դպրոցական ծրագրերը, ավանդական ժողովրդական արվեստից մինչև ժամանակակից մասսայական միջոցառումները և տեղական համայնքի ղեկավարների համար սեմինարներից մինչև ազգային և միջազգային միջոցների կողմից գլոբալ հարցերի ընդգրկվածությունը: Բազմամիջոց մոտեցումները սովորաբար ավելի արդյունավետ են, քան ցանկացած եզակի հաղորդակցության միջոց: Բոլոր այս հաղորդակցության միջոցները կարևոր դեր են խաղում նպաստելու բնակչության և կայուն զարգացման միջև փոխհարաբերությունների ըմբռնմանը: Դպրոցները և կրոնական կազմակերպությունները, հաշվի առնելով նրանց արժեքները և ուսուցումը, բոլոր երկրներում կարող են կարևոր միջոց հանդիսանալ աստիճանաբար ներշնչելու սեռական և ռասայական հավասարություն, հարգանք, հանդուրժողականություն և հավասարություն, ընտանեկան պատասխանատվություն և այլ կարևոր վարքագծեր ցանկացած տարիքում: Շատ երկրներում գոյություն ունեն նաև գործուն ընկերակցություններ բնակչության և կայուն զարգացման հարցերի վերաբերյալ ոչ ֆորմալ ուսուցում անցկացնելու համար աշխատանքային վայրերի, առողջապահական ենթակառուցվածքների, արհմիությունների, համայնքային կենտրոնների, երիտասարդական խմբերի, կրոնական կազմակերպությունների, կանանց կազմակերպությունների և այլ հասարակական կազմակերպությունների միջոցով:

Նմանատիպ հարցեր կարելի է նաև ներառել չափահասների ավելի կառուցվածքային կրթության, մասնագիտական կրթության և գրագիտության ծրագրերի մեջ հատկապես կանանց համար: Այս ընկերակցությունները վճռական են իրենց կողմ ներգրավելու ամբողջ բնակչությանը, մասնավորապես տղամարդկանց, դեռահասներին և երիտասարդ զույգերին: Խորհրդարանականները, ուսուցիչները, կրոնական և այլ համայնքային ղեկավարները, ավանդական բուժողները, բժիշկ մասնագետները, ծնողները և մեծահասակ հարազատները իրենց ազդեցությունն ունեն հասարակական կարծիք կազմելիս և պետք է հաշվի առնել այդ տեղեկատվության, կրթության և հաղորդակցության գործունեությունների նախապատրաստման ժամանակ: Լրատվամիջոցները նույնպես առաջարկում են շատ ներուժով հզոր նմանատիպ մոդելներ:

11.14. Ընթացիկ տեղեկատվության, կրթության և հաղորդակցության տեխնոլոգիաները, ինչպիսիք են գլոբալ հեռախոսակապը, հեռուստատեսությունը և տվյալների փոխանցման ցանցերը, լազերային սկավառակները և նոր մուլտիմեդիայի տեխնոլոգիաները, կարող են օգնել լրացնելու աշխարհագրական, սոցիալական և տնտեսական բացթողումները, որ ներկայումս գոյություն ունեն աշխարհում տեղեկատվության մատչելիության հարցում: Դրանք կարող են օգնել ապահովելու, որ աշխարհի մարդկանց կշռող մեծամասնությունը ներգրավվի տեղական, ազգային և գլոբալ մակարդակներով ժողովրդագրական փոփոխությունների և կայուն մարդկային զարգացման, տնտեսական և սոցիալական անհավասարությունների, կանանց դերի հզորացման կարևորության, վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման, առողջապահության զարգացման, բնակչության ծերացման, կտրուկ ուրբանիզացիայի և միգրացիայի վերաբերյալ բանավեճերում: Ազգային իշխանությունների և համայնքի ավելի լայն հասարակական ներգրավվումը կապահովի այդպիսի տեխնոլոգիաների լայնածավալ տարածում և տեղեկատվության ավելի ազատ հոսք երկրների ներսում և նրանց միջև: Էական է, որ խորհրդարանները ունենան որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության լրիվ մատչելիություն:

Հիմնախնդիրներ

11.15. Հիմնախնդիրներն են.

(ա) Բարձրացնել հասարակության բոլոր մակարդակներում իրազեկությունը, գիտելիքը, ըմբռնումը և պարտավորությունները, այնպես, որ ընտանիքները, զույգերը, անհատները,կարծիքի կրողները և համայնքի ղեկավարները, հասարակական կազմակերպությունները, քաղաքականություն մշակողները, կառավարությունները և միջազգային համայնքը գնահատեն բնակչությանը վերաբերող հարցերի կարևորությունը և անհրաժեշտությունը և ձեռնարկեն համապատասխան գործողություններ, որոնք կնպաստեն առաջ քաշելու այդպիսի հարցեր կայուն տնտեսական աճի ներքո կայուն զարգացման համատեքստում:

(բ) Ապահովել դիրքորոշքում ի օգուտ բնակչության և զարգացման համապատասխան վարքագծի, հատկապես այնպիսի տարածքներում որտեղ առկա են շրջակա միջավայրի, ընտանիքի, սեռական հակումների, վերարտադրողականության, գենդերային և ռասսայական գործոնները;

(գ) Երաշխավորել բնակչության ու զարգացման հարցերին առնչվող քաղաքական պարտավորությունների կատարում ազգային կառավարությունների կողմից, խթանելով բոլոր մակարդակներում պետական և մասնավոր հատվածների մասնակցությունը բնակչության և զարգացման քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման և վերահսկման գործում:

(դ) Բարձրացնել զույգերի և անհատների կարողությունը գործի դնելու իրենց իրավունքը ազատ և պատասխանատվությամբ երեխաների քանակի և նրանց միջև միջակայքի որոշում կայացնելու գործում, և ունենալ դա անելու համար համապատասխան տեղեկատվություն, կրթություն և միջոցներ:

Գործողություններ

11.16. Տեղեկատվությունը, կրթությունը և հաղորդակցությունը պետք է բարձրացնեն իրազեկվածությունը հասարակության կրթության քարոզարշավների միջոցով արծարծելով այնպիսի առաջնային հարցեր, ինչպիսիք են՝ ապահով մայրությունը, վերարտադրողական առողջությունը և իրավունքները, մոր և երեխայի առողջությունն ու ընտանիքի պլանավորումը, աղջիկ երեխայի և թերություններով անձանց նկատմամբ խտրականությունը և վալորիզացիան, երեխայի նկատմամբ բռնությունը, կանանց նկատմամբ բռնությունը, տղամարդու պատասխանատվությունը, գենդերային հավասարությունը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, համապատասխան սեռական վարքագիծը, անչափահասների հղիությունը, ռասայականությունը և օտարատյացությունը, բնակչության ծերացումը, անկայուն սպառման և արտադրման կառուցվածքները: Ավելի շատ կրթության կարիք է զգացվում այն բոլոր հասարակություններում, որոնք առնչություն ունեն բնակչություն-միջավայր փոխհարաբերությունների հետ, ազդեցություն գործելով վարքագծի փոփոխության և սպառողի ապրելաոճի վրա, խթանելով բնական ռեսուրսների կայուն կառավարումը: Լրատվամիջոցները պետք է լինեն գիտելիքը և շահագրգռվածությունը ընդլայնելու հիմնական միջոցը:

11.17. Ընտրված ներկայացուցիչները բոլոր մակարդակներում, գիտական համայնքը, ավանդական և համայնքային ղեկավարները, հասարակական կազմակերպությունները, ծնողական կոմիտեները, սոցիալական ոլորտի աշխատակիցները, կանանց խմբերը, մասնավոր հատվածը, հաղորդակցության որակյալ մասնագետները և ազդեցիկ պաշտոններ գրավող անձինք պետք է ունենան բնակչության և կայուն զարգացման ու նմանատիպ հարցերին վերաբերող տեղեկատվության մատչելիություն: Նրանք պետք է խթանեն տվյալ Գործողության Ծրագրում արծարծվող հարցերի ըմբռնմանը և հասարակական կարծիքը կենտրոնացնեն առաջարկվող գործողություններին աջակցելու համար:

11.18. Խորհրդարանի անդամները խրախուսվում են շարունակելու ընդլայնել բնակչության և կայուն զարգացմանն առնչվող հարցերի իրազեկվածությունը և ապահովելու այս Գործողության Ծրագրի արդյունավետ իրականացմանն անհրաժեշտ օրենքի ընդունումը:

11.19. Պետք է որդեգրել համակարգված ռազմավարական մոտեցում տեղեկատվության, կրթության և հաղորդակցության ոլորտում, որպեսզի առավելագույնի հասցնել

տեղեկատվության, կրթության և հաղորդակցությանն առնչվող տարբեր գործունեությունների ներգործությունը, լինեն դրանք ժամանակակից, թե ավանդական, որոնք կարող են իրականացվել տարբեր կողմերում տարբեր կատարողների կողմից և լրիվ տարբեր լսարանների մոտ: Հատկապես կարևոր է, որ տեղեկատվության, կրթության և հաղորդակցության ոլորտի ռազմավարությունները կապ ունենան ազգային բնակչության և զարգացման քաղաքականությունների և ռազմավարությունների, վերարտադրողական առողջության ծառայությունների լրիվ շարքի հետ, ներառյալ ընտանիքի պլանավորումը և սեռական առողջությունն ու լրացնեն դրանք, որպեսզի բարձրացնեն այդ ծառայությունների կիրառումը և կատարելագործեն խորհրդատվության և խնամքի որակը:

11.20. Տեղեկատվության, կրթության և հաղորդակցության գործունեությունները պետք է հիմնվեն արդի հետազոտության արդյունքների վրա, որոշելու տեղեկատվության պահանջները և ընտրված լսարանին նվաճելու ամենաարդյունավետ մշակութորեն ընդունելի ճանապարհները: Այդ նպատակով, պետք է ներգրավվեն ավանդական և ոչ ավանդական միջոցների փորձառու մասնագետներ: Պետք է ապահովել ընտրված լսարանի մասնակցությունը տեղեկատվության, կրթության և հաղորդակցությանն առնչվող գործունեությունների մշակման, իրականացման և վերահսկման գործում, այդ գործունեությունների կարևորությունն ու ներգործությունը բարձրացնելու համար:

11.21. Միջանձնային հաղորդակցության հմտությունները, մասնավորապես պետական, մասնավոր, հասարակական կազմակերպությունների ծառայություններ տրամադրողների, համայնքի ղեկավարների, ուսուցիչների, հասակակիցների և այլոց խորհրդատվական հմտությունները պետք է կատարելագործվեն, վերարտադրողական առողջություն մատուցող ծառայությունների, ներառյալ ընտանիքի պլանավորման և սեռական առողջության ծառայությունների մատուցման հարցում հնարավորինս հասնելու համագործակցության և որակի ապահովման: Այսպիսի հաղորդակցությունը պետք է լինի առանց հարկադրանքի:

11.22. Տպագրության ահռելի ներուժը, տեսալսողական և էլեկտրոնային միջոցները, ներառյալ տվյալների բազան և ցանցերը, ինչպես օրինակ ՄԱԿ-ի Բնակչության տեղեկատվության ցանցը պետք է տարածի տեխնիկական տեղեկատվությունը և նպաստի ու ամրապնդի բնակչության, սպառման, արտադրման և կայուն զարգացման միջև փոխհարաբերությունների ըմբռնումը:

11.23. Իշխանությունները, հասարակական կազմակերպությունները և մասնավոր հատվածը պետք է լայնորեն և ավելի արդյունավետ օգտագործեն ժամանցի միջոցները, ներառյալ ռադիոն և հեռուստատեսային սերիալներն ու դրամաները, ժողովրդական թատրոնները և այլ ավանդական միջոցները՝ ապահովելով այս Գործունեությունների ծրագրին առնչվող հասարակական քննարկման կարևոր, բայց երբեմն նուրբ թեմաներ: Երբ ժամանցի միջոցները, հատկապես դրամաները օգտագործվում են խորհրդատվության նկատառումներով կամ նպաստելու հատուկ ապրելաոճը, հասարակությունը պետք է տեղեկացված լինի և ամեն դեպքում հովանավորների ինքնությունը պետք է նշվի համապատասխան ձևով:

11.24. Տարիքային կրթությունը, մասնավորապես դեռահասների համար, այս Գործողությունների Ծրագրում արծարծվող հարցերի վերաբերյալ պետք է սկսել տանը, և

համայնքում և շարունակել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության բոլոր մակարդակների և տեսակների միջոցով, հաշվի առնելով ծնողների իրավունքները և պարտավորությունները ու դեռահասների կարիքները: Եթե արդեն նմանատիպ կրթություն գոյություն ունի, կրթական ծրագրերը և նյութերը պետք է վերանայվեն, թարմացվեն և ընդլայնվեն ապահովելով բնակչությանը վերաբերվող կարևոր հարցերի համապատասխան ընդգրկվածությամբ և չեզոքացնեն դրանց վերաբերյալ միֆերը և սխալ պատկերացումները: Եթե գոյություն չունի նմանատիպ կրթություն, պետք է մշակվեն համապատասխան ծրագրեր և նյութեր: Ապահովելու համայնքի ընդունումը, արդյունավետությունը և օգտակարությունը, կրթության նախագծերը պետք է հիմնված լինեն սոցիալ-մշակութային ուսումնասիրությունների արդյունքների վրա և պետք է ներգրավեն ծնողների և ընտանիքների, կանանց, երիտասարդների, տարեցների և համայնքների ղեկավարների ակտիվ մասնակցությունը:

11.25. Իշխանությունները պետք է նախապատվությունը տան տեղեկատվության, կրթության և հաղորդակցության ոլորտի մասնագետների, հատկապես ուսուցիչների վերապատրաստմանը և պահպանմանը, և բոլոր նրանց, ովքեր ներգրավված են տեղեկատվության, կրթության և հաղորդակցության ոլորտի ծրագրերի պլանավորման, իրականացման, վերահսկման և գնահատման գործում: Անհրաժեշտ է վերապատրաստել այն մասնագետներին, ովքեր նպաստում են բնակչության և նմանատիպ հարցերին առնչվող կրթության կարևոր մեթոդաբանական մշակմանը: Ուստի, մասնագիտական վերապատրաստման համար, համակարգերը պետք է ստեղծվեն և հզորացվեն մասնագիտություններով, որը կպատրաստի նրանց արդյունավետ աշխատելու իշխանությունների և այս ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ: Բացի դրանից, պետք է ծավալել ավելի լայն համագործակցություն ակադեմիական համայնքի և այլ մարմինների հետ, հզորացնելու մեթոդաբանական աշխատանքը և ուսումնասիրությունը այս ոլորտում:

11.26. Բոլոր երկրները բնակչության և զարգացման հարցերի վերաբերյալ անընդհատ տեղեկացված լինելու կարիք ունեն, համերաշխության հասնելու և զարգացման աջակցություն հաստատելու համար: Երկրները պետք է ստեղծեն տեղեկատվության մեխանիզմներ, հնարավորինս հեշտացնելու ազգային և միջազգային մակարդակներով բնակչությանը վերաբերող տեղեկատվության սիստեմատիկ հավաքագրումը, վերլուծումը, տարածումը և օգտագործումը: Ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով պետք է ստեղծվեն կամ հզորացվեն ցանցեր, նպաստելու տեղեկատվության և փորձի փոխանակմանը:

Գլուխ XII

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ա. Հիմնական տվյալների հավաքագրում, վերլուծություն և տարածում

Գործունեության հիմք

12.1. Հիմնավորված, արժանահավատ, արդի, մշակութային նշանակությամբ և միջազգայնորեն համադրելի տվյալները հիմք են հանդիսանում քաղաքականության և

ծրագրի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման համար: Մինչդեռ եղել են ընդգծված կատարելագործումներ բնակչության և զարգացման տվյալների առկայության մեջ: Հաջորդ կարևոր հաջողությունները եղել են վերջին երկու տասնամյակների ընթացքում տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդաբանությունների և տեխնոլոգիայի մեջ, շատ բացթողումներ մնացել են տեղեկատվության բազայի որակի և ընդգրկվածության հետ կապված, ներառյալ ծնունդ և մահ կենսական տվյալները, ինչպես նաև ժամանակի ընթացքում տվյալների խմբի հաջորդականությունը: Գենդերային և էթնիկական բնույթի տեղեկատվությունը, որը կարիք ունի կատարելագործելու և վերահսկելու քաղաքականությունների ու ծրագրերի զարգացման գործոնը, շատ տարածքներում դեռ թերի է: Միգրացիայի մակարդակը, հատկապես տարածաշրջանային և միջազգային կտրվածքով, նույնպես թերի է և շատ քիչ ընդգրկված: Որպես սկզբունք, անհատները, կազմակերպությունները և զարգացող երկրները պետք է ունենան իրենց իսկ երկրում անցկացրած հետազոտության վրա հիմնված տվյալների և արդյունքների անվճար մատչելիություն, ներառյալ նրանք, որոնք պահպանվում են այլ երկրների և միջազգային գործակալությունների կողմից:

Հիմնախնդիրներ

12.2. Հիմնախնդիրներն են.

(ա) Հաստատել փաստացի բազա բնակչության և սոցիալ-տնտեսական, ներառյալ շրջակա միջավայրի փոփոխականների փոխհարաբերությունների ըմբռնման և կանխատեսման համար և ծրագրի մշակման, իրականացման, վերահսկման ու գնահատման կատարելագործման համար:

(բ) Հզորացնել ազգային կարողությունը՝ որոնելու նոր տեղեկատվություն և բավարարելու պահանջները կապված հիմնական տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման հետ, հատուկ ուշադրություն դարձնելով ըստ տարիքի, սեռի, ազգության և տարբեր աշխարհագրական միավորների դասակարգված տեղեկատվությանը, արդյունքները օգտագործելով ընդհանուր կայուն զարգացման ռազմավարությունների ձևավորման, իրականացման, վերահսկման և գնահատման մեջ և նպաստելով միջազգային համագործակցությանը, ներառյալ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կտրվածքով համագործակցությունը:

(գ) Ապահովել քաղաքական պարտավորություններ, տվյալների կանոնավոր հավաքագրման, վերլուծության, տարածման և տվյալների լրիվ օգտագործման պահանջի ըմբռնման համար:

Գործողություններ

12.3. Բոլոր երկրների իշխանությունները, հատկապես զարգացող երկրները, որոնց աջակցությունը իրականացվում է համապատասխան երկկողմանի համագործակցության և միջազգային կազմակերպությունների միջոցով, և անհրաժեշտության դեպքում միջտարածաշրջանային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցության միջոցով, պետք է հզորացնեն իրենց ազգային կարողությունը իրականացնելով կայուն և համապարփակ ծրագրեր՝ բնակչության և զարգացման

տվյալների հավաքագրման,վերլուծության, տարածման և օգտագործման համար: Հատուկ ուշադրություն պետք է տրվի բնակչության միտումների և ժողովրդագրական նախագծման նախապատրաստման մոնիթորինգին ու առողջապահության, կրթության, սեռական, էթնիկ և սոցիալական հավասարության նպատակների ձեռքբերման հաջողության մոնիթորինգին և ծառայության մատչելիության ու խնամքի որակի մոնիթորինգին , ինչպես որ նշված է Գործողության Ծրագրում:

12.4. Ծրագրերը, բնակչության և զարգացման տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության և ժամանակին տարածելու և օգտագործելու համար, պետք է ներառեն դիսագրեգացիա, ներառյալ գենդերային դիսագրեգացիա, ընդգրկվածություն և ներկայացում բնակչության և զարգացման վերաբերյալ գործող ծրագրի իրականացման պահանջներին համաձայն: Փոխազդեցությունը տվյալներ սպառողների և տրամադրողների միջև, պետք է բարելավել, որպեսզի օգնել տվյալներ տրամադրողներին արձագանքել սպառողների պահանջներին: Հետազոտություն պետք է անցկացվի հաշվի առնելու իրավական և էթիկական չափորոշիչները, պետք է անցկացվի տեղական համայնքների ու ինստիտուտների ակտիվ մասնակցությամբ և արդյունքները պետք է մատչելի և առկա լինի քաղաքականության մշակողների, որոշում կայացողների, ծրագիր կազմողների և ծրագրի ղեկավարների համար՝ դրանք ժամանակին օգտագործելու համար: Համադրելիություն պետք է ապահովվի բոլոր հետազոտություններում և տվյալների հավաքագրման ծրագրերում:

12.5. Համապարփակ և արժանահավատ որակական, ինչպես նաև քանակական տվյալների բազաները, որոնք կապ են ապահովում բնակչության, կրթության,առողջապահության, աղքատության, ընտանիքի բարեկեցության, շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ հարցերի միջև, տրամադրում են դիսագրեգացված տեղեկատվություն համապատասխան և ցանկալի մակարդակներում, պետք է հաստատվեն և պահպանվեն բոլոր երկրների կողմից բավարարելու հետազոտության, ինչպես նաև քաղաքականության և ծրագրի զարգացման, իրականացման, վերահսկման ու գնահատման պահանջները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել խնամքի որակի և մատչելիության գնահատման ու չափման վրա՝ զարգացման համապատասխան ցուցանիշների միջոցով:

12.6. Ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ կարևոր տեղեկատվության ցանցեր պետք է ստեղծվեն կամ հզորացվեն, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով՝ դյուրին դարձնելով ծրագրի գործունեության իրականացման, բնակչության, շրջակա միջավայրի և զարգացման գործունեությունների վերահսկումը ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով:

12.7. Բոլոր տվյալների հավաքագրման և վերլուծության գործունեությունները պետք է լրջորեն ուշադրություն դարձնեն գենդերային դիսագրեգացիային, կատարելագործելով սոցիալական և ժողովրդագրական պրոցեսներում գենդերի դերի և դիրքի վերաբերյալ իմացությունը: Հատկապես, որպեսզի տնտեսական զարգացման մեջ կանանց ընթացիկ և ներուժային ներդրման վերաբերյալ ավելի ճշգրիտ պատկեր կազմվի, տվյալների հավաքագրումը պետք է ավելի մանրամասն ուրվագծի կանանց սոցիալական և աշխատուժի կարգավիճակի բնույթը և դա հիմք ծառայեցնի կանանց եկամուտների բարելավման վերաբերյալ քաղաքականության և ծրագրերի որոշման համար: Այսպիսի

տվյալները պետք է մատնանշեն, մասնավորապես, կանանց չվճարված տնտեսական գործունեությունները ընտանիքում և ոչ ֆորմալ (ստվերային) հատվածում:

12.8. Վիճակագրության, ժողովրդագրության և բնակչության ու զարգացման ուսումնասիրությունների ոլորտների վերապատրաստման ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն ազգային և տարածաշրջանային մակարդակներով, մասնավորապես զարգացող երկրներում տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ, միջազգային համագործակցության և ազգային ռեսուրսների միջոցով:

12.9. Բոլոր երկրները համապատասխան կազմակերպությունների աջակցությամբ, պետք է հզորացնեն ժողովրդագրական տվյալների, ներառյալ միջազգային միգրացիայի տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, որպեսզի ավելի լավ ընկալեն այդ երևույթը և այդպիսով աջակցեն միջազգային միգրացիայի վերաբերյալ ազգային և միջազգային քաղաքականությունների ձևավորմանը:

Բ. Վերարտադրողական առողջության հետազոտություն

Գործունեության հիմք

12.10. Հետազոտությունը, հատկապես բիոբժշկական հետազոտությունը, օգտակար է ծնելիության կարգավորման համար մի շարք ապահով և արդյունավետ ժամանակակից միջոցների մատչելիություն ընձեռելով շատ ու շատ մարդկանց: Ինչևիցե, ոչ բոլոր մարդիկ կարող են գտնել իրենց համապատասխան ընտանիքի պլանավորմանն առնչվող միջոցներ և տղամարդկանց մոտ ընտրությունների շարքը ավելի սահմանափակ է, քան կանանց մոտ: Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների աճը, ներառյալ ՄԻԱՎ-ը, պահանջում է ավելի մեծ ներդրումներ կանխարգելման, ախտորոշման և բուժման նոր մեթոդների համար: Չնայած նրան, որ վերարտադրողական առողջության հետազոտության համար ֆինանսավորումը կտրուկ նվազել է, խոստումնալից են ծնելիության կարգավորման և կանխարգելման նոր մեթոդների ու արտադրանքների մշակման և ներկայացման հեռանկարները: Գործունեությունների կատարելագործված համագործակցությունը և համակարգումը միջազգային մակարդակով կբարձրացնի ծախսարդյունավետությունը, սակայն իշխանություններից և արդյունաբերության ոլորտից անհրաժեշտ է նշանակալի աջակցություն իրականացնելու մի շարք հնարավոր,նոր, ապահով և թույլատրելի մեթոդներին, հատկապես արգելքի մեթոդներին: Այս հետազոտությունը կարիք ունի ուղեկցվելու գենդերային, մասնավորապես կանանց հեռանկարների բոլոր փուլերով և սպառողների պահանջները պետք է իրականացվի խիստ համապատասխանեցնելով բիոբժշկական հետազոտության համար միջազգայնորեն ընդունված իրավական, էթիկական, բժշկական և գիտական չափորոշիչներին:

Հիմնախնդիրներ

12.11. Հիմնախնդիրներն են.

(ա) Նպաստել համընդհանուր վերարտադրողական առողջության, ներառյալ սեռական առողջության վրա ազդող գործոնների ըմբռնմանը և ընդլայնել վերարտադրողական ընտրությունը:

(բ) Երաշխավորել սկզբնական և շարունակելի ապահովություն և որակ, առողջությանն առնչվող միջոցներ ծնելիության կարգավորման համար:

(գ) Ապահովել, որ բոլոր մարդիկ ունենան հնարավորություն ձեռք բերելու և պահպանելու կայուն վերարտադրողական և սեռական առողջություն: Միջազգային համայնքը պետք է կենտրոնացնի հիմնական բիոբժշկական, սոցիալական, վարքագծային ու վերարտադրողական առողջության և սեռական բնույթի հետազոտության ծրագրի լրիվ սպեկտրը:

Գործողություններ

12.12. Իշխանությունները, միջազգային համայնքի և դոնոր կազմակերպությունների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների և ակադեմիական համայնքի աջակցությամբ պետք է բարձրացնեն հիմնական և կիրառվող բիոբժշկական, տեխնիկական, կլինիկական, համաճարակային և սոցիոլոգիական հետազոտության համար աջակցությունը, հզորացնելով վերարտադրողական առողջության ծառայությունները, ներառելով ծնելիության կարգավորման համար նոր մեթոդների գոյության և մշակման կատարելագործումը, որոնք բավարարում են սպառողների պահանջները կիրառելի են, հեշտ են օգտագործման մեջ, ապահով են, առանց երկարաժամկետ ու կարճաժամկետ ազդեցությունների և երկրորդ սերնդի ազդեցությունների, արդյունավետ են, կիրառելի և հարմար տարբեր տարիքային և մշակութային խմբերի ու վերարտադրողական շրջանի տարբեր փուլերի համար: Բոլոր նոր տեխնոլոգիաների փորձարկումը և ներկայացումը պետք է շարունակաբար վերահսկվի կանխելու պոտենցիալ չարաշահումը: Հիմնականում, մեծ ուշադրության կարիք ունեցող տարածքները պետք է ներառեն արգելքի միջոցները, կանանց և տղամարդկանց, ծնելիության վերահսկման և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխման համար, ինչպես նաև միկրոբները և վարակահարուցիչ մանրէները, որոնք հնարավոր է կկանխեն կամ չեն կանխի հղիությունը:

12.13. Ուսումնասիրությունը սեռական և գենդերային դերի և կապի վերաբերյալ տարբեր մշակութային միջավայրերում խիստ անհրաժեշտ է, ընդգծելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են չարաշահումը, կանանց նկատմամբ խտրականությունը և բռնությունը, սեռական օրգանների անդամահատումը, այնտեղ, որտեղ կիրառվում է սեռական վարքագիծը և բարքերը, տղամարդու վերաբերմունքը սեռական կյանքի և սերունդի շարունակման, ծնելիության, ընտանիքի և գենդերի դերի նկատմամբ, ռիսկային վարքագիծը կապված սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, չպլանավորված հղիությունների հետ, ծնելիության կարգավորման և սեռական առողջության ծառայությունների համար մեթոդների կանանց և տղամարդկանց գիտակցված պահանջները և գոյություն ունեցող ծառայությունների ու տեխնոլոգիաների չկիրառման կամ ոչ արդյունավետ կիրառման պատճառները:

12.14. Մեծ նախապատվություն նաև պետք է տրվի տղամարդու վերարտադրողականության կարգավորման համար նոր մեթոդների մշակմանը: Հատուկ ուսումնասիրություն պետք է անցկացնել տղամարդու մասնակցությունը խոչընդոտող գործոնների վերաբերյալ, ձեռք բերելու տղամարդու ներգրավումը և պատասխանատվությունը ընտանիքի պլանավորման գործում: Անցկացնելով սեռական և

վերարտադրողական առողջության վերաբերյալ հետազոտություն, պետք է հատուկ ուշադրություն դարձնել դեռահասների պահանջների վրա, մշակել համապատասխան քաղաքականություններ և ծրագրեր ու համապատասխան տեխնոլոգիաներ՝ բավարարելու նրանց առողջությանն առնչվող պահանջները: Հատուկ նախապատվություն պետք է տրվի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ներառյալ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությանը և չբերությանն առնչվող հետազոտությանը:

12.15. Նպաստել ծնելիության կարգավորման համար կատարելագործված և նոր մեթոդների առկայությանը, միջոցներ պետք է ձեռնարկել բարձրացնելու արդյունաբերության ներառյալ զարգացող երկրների և անցումային երկրների արդյունաբերության, ներգրավումը: Պետական և մասնավոր հատվածի, ներառյալ կանանց և սպառողների խմբերի միջև, նոր տեսակի համագործակցությունը կարիք ունի մոբիլիզացնելու արդյունաբերության փորձը և ռեսուրսները, հասարակական շահը պաշտպանելու համար: Ազգային դեղորայքի և սարքավորումների հարցերը կարգավորող գործակալությունները պետք է ակտիվորեն ներգրավվեն ընթացակարգի մշակման բոլոր փուլերում, ապահովելով, որ բավարարվեն բոլոր իրավական և էթիկական չափորոշիչները: Զարգացած երկրները պետք է աջակցեն զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների հետազոտության ծրագրերին իրենց գիտելիքով, փորձով և տեխնիկական փորձագիտությամբ ու նպաստեն նրանց փոխանցելու համապատասխան տեխնոլոգիաներ: Միջազգային համայնքը պետք է աջակցի հակաբեղմնավորիչների արտադրության հնարավորությունների հաստատմանը զարգացող երկրներում, մասնավորապես, թերզարգացած և անցումային տնտեսությամբ երկրներում:

12.16. Ծնելիության կարգավորման և սեռական ու վերարտադրողական առողջության համար ապրանքների վերաբերյալ բոլոր հետազոտությունները պետք է անցկացվեն համաձայն միջազգայնորեն ընդունված էթիկական և տեխնիկական չափորոշիչների և մշակութային պայմանների համաձայն բիոբժշկական հետազոտությունների: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հակաբեղմնավորիչների ապահովության և դրանց ազդեցությունների շարունակական հսկողությանը: Սպառողների, մասնավորապես կանանց հեռանկարները և կանանց կազմակերպությունները պետք է միավորվեն հետազոտության զարգացման ընթացքի բոլոր փուլերում:

12.17. Քանի դեռ անապահով արհեստական վիժումը (20) հանդիսանում է կանանց առողջությանն ու կյանքին սպառնացող հիմնական վտանգը, հետազոտությունը պետք է նպաստի հասկանալու և ընդգծելու հարկադրված արհեստական վիժումի վճռական գործոնները և հետևանքները, ներառյալ դրա ազդեցությունը հաջորդող ծնելիության, վերարտադրողական և մտավոր առողջության ու հակաբեղմնավորիչների կիրառման վրա, ինչպես նաև ուսումնասիրի արհեստական վիժումից ծագած բարդությունների բուժումը և հետ-վիժումային խնամքը:

12.18.Պետք է իրականացնել ընդլայնված հետազոտություն ծնելիության կարգավորման բնական միջոցների վերաբերյալ, փնտրելով ավելի արդյունավետ ընթացակարգեր բացահայտելու օվուլյացիոն շրջանը ամսենկան ցիկլի ժամանակ և երեխայի ծնունդից հետո:

Գ. Սոցիալ- տնտեսական հետազոտություն

Գործունեության հիմք

12.19. Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, բնակչությանն առնչվող քաղաքականությունների, ծրագրերի և գործունեությունների ձևավորումը, իրականացումը, վերահսկումը և գնահատումը օգտվել է սոցիալ-տնտեսական հետազոտությունների արդյունքներից, որոնք լուսաբանում են սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի գործոնների բարդ փոխազդեցությունների ներգործություններից առաջացած բնակչության փոփոխությունը: Ինչևէ, այս փոխազդեցությունների ասպեկտները դեռ թերի են ընկալվում և նրանց վերաբերյալ գիտելիքը սահմանափակ է, հատկապես զարգացող երկրներում, այն տարածքներում, որոնք առնչվում են բնակչության և զարգացման վերաբերյալ մի շարք քաղաքականություններին, հատկապես բնիկներին: Սոցիալ-տնտեսական հետազոտությունները անհրաժեշտ են հնարավորություն տալու ծրագրերին, հաշվի առնելու կանանց, երիտասարդների և այլ ավելի քիչ լիազորված խմբերի տեսակետներն ու արձագանքել այդ խմբերի և համայնքների յուրահատուկ պահանջներին: Անհրաժեշտ է գլոբալ և ռեգիոնալ տնտեսական գործոններին ու ազգային ժողովրդագրական պրոցեսների փոխհարաբերություններին առնչվող հետազոտություն: Կարելի է հասնել ծառայությունների կատարելագործված որակի միայն այնտեղ, որտեղ որակը որոշվում է երկուսի՝ ծառայությունների սպառողների և տրամադրողների կողմից և որտեղ կանայք ակտիվորեն ներգրավված են որոշումների կայացման և ծառայությունների տրամադրման մեջ:

Հիմնախնդիրներ

12.20. Հիմնախնդիրներն են.

(ա) Օժանդակել սոցիալ-մշակութային և տնտեսական հետազոտությանը, որն աջակցում է ծրագրերի, գործունեությունների և ծառայությունների մշակմանը՝ կատարելագործելու կյանքի որակը և բավարարելու անհատների, ընտանիքների և համայնքների, հատկապես բոլոր անապահով խմբերի պահանջները: (22)

(բ) Օժանդակել հետազոտության արդյունքների օգտագործմանը, կատարելագործելու քաղաքականությունների մշակումը և ծրագրերի ու նախագծերի իրականացումը, վերահսկումը և գնահատումը, որոնք նպաստում են անհատների ու ընտանիքների բարեկեցությանը և անհրաժեշտությանը, հասնելու որակի, արդյունավետության, հաճախորդի հավասարությանը և բարձրացնել ազգային ու միջազգային արտադրողականությունը նման հետազոտության համար:

(գ) Ընկալել, որ սեռական և վերարտադրողական վարքագիծը ծագում է փոփոխվող սոցիալ-մշակութային համատեքստում և հասկանալ այդ համատեքստի կարևորությունը սպասարկու ծրագրերի մշակման և իրականացման համար:

Գործողություններ

12.21. Իշխանությունները, ֆինանսավորող գործակալությունները, գիտահետազոտական կազմակերպությունները պետք է խրախուսեն և նպաստեն բնակչության և զարգացման քաղաքականություններին ու ծրագրերին առնչվող սոցիալ-մշակութային և տնտեսական

հետազոտությանը, ներառելով բնիկների գործոնը, հատկապես հաշվի առնելով կապը բնակչության, աղքատության նվազեցման, շրջակա միջավայրի, կայուն տնտեսական աճի և կայուն զարգացման միջև:

12.22. Սոցիալ-մշակութային և տնտեսական հետազոտությունը պետք է ներկառուցվի բնակչության և զարգացման ծրագրերի ու ռազմավարությունների մեջ՝ ցուցումներ տալով ծրագրի ղեկավարներին, ինչպես և ինչ միջոցներով հասնել անապահով հաճախորդներին և արձագանքել նրանց պահանջներին: Այսպիսով, ծրագրերը պետք է տրամադրեն գործողությունների հետազոտություն, գնահատման հետազոտություն և կիրառելի այլ սոցիոլոգիական հետազոտություն: Այս հետազոտությունը պետք է համատեղ հետազոտության բնույթ ունենա: Մեխանիզմներ պետք է մշակել ապահովելով, որ հետազոտության արդյունքները իրենց մեջ ներառեն որոշում կայացնելու պրոցես:

12.23. Քաղաքականություն մշակած հետազոտությունը, ազգային և միջազգային մակարդակներով, պետք է անցկացվի այն տարածքներում, որտեղ կա մեծածավալ բնակչություն, աղքատություն, գերսպառման գործոններ, էկոհամակարգի ոչնչացում, ռեսուրսների դեգրադացում, հատուկ ուշադրություն դարձնելով այս գործոնների փոխազդեցությունների վրա: Երկու տեղում էլ՝ և զարգացած և զարգացող երկրներում, հետազոտություն պետք է անցկացվի նաև կայուն սննդի արտադրության, բերքի ու անասնագլխաքանակի համակարգերին վերաբերող մեթոդների կատարելագործման և զարգացման վերաբերյալ:

12.24. Իշխանությունները, շահագրգռված միջկառավարական և հասարակական կազմակերպությունները, ֆինանսավորող գործակալությունները, գիտահետազոտական կազմակերպությունները հետամուտ են նախապատվությունը տալ կանանց դերի և կարգավիճակի ու ժողովրդագրական և զարգացման պրոցեսների միջև կապի վերաբերյալ հետազոտությանը: Հետազոտության համար կենսական նշանակություն ունեցող ոլորտներն են՝ փոփոխվող ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան բարեկեցությունը, կանանց և տղամարդկանց տարբեր դերերի միջև փոխազդեցությունները, ներառյալ նրանց ժամանակի օգտագործումը, իշխանության և որոշման կայացման մատչելիությունն ու ռեսուրսների վերահսկումը, առնչվող նորմերը, օրենքները, արժեքները և դավանանքները և գենդերային անհավասարության տնտեսական ու ժողովրդագրական արդյունքները: Կանայք պետք է ներգրավվեն գենդերային հետազոտության մշակման բոլոր փուլերում և պետք է վարձել ու վերապատրաստել ավելի շատ կին հետազոտողների:

12.25. Բնակչության փոփոխական բնույթը և տեղաշարժի ծավալը հաշվի առնելով, խիստ անհրաժեշտ է, որ հետազոտությունը կատարելագործի միգրացիայի և տեղաշարժման հետևանքների ու պատճառների ընկալումը, կլինի այն ներքին, թե միջազգային: Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել կատարելագործելու ներքին և միջազգային միգրացիայի տվյալների որակը, ժամանակայնությունը և մատչելիությունը, միտումները և քաղաքականությունները, որպեսզի այն կայուն հիմք հանդիսանա այս հետազոտության համար:

12.26. Երկրներում բնակչության ենթախմբերի միջև մահացության և հիվանդացության էական տարբերությունների գոյության պարագայում, կարևոր է միջոցներ ձեռնարկել ուսումնասիրելու այդպիսի տարբերությունների հիմքում ընկած գործոնները, որպեսզի

մշակել ավելի արդյունավետ քաղաքականություն և ծրագրեր՝ դրանց նվազեցման համար:Հատուկ նշանակություն ունեն տարբերությունների, ներառյալ գենդերային տարբերությունների պատճառները, մահացության և հիվանդացության մեջ, հատկապես երիտասարդ և ծեր տարիքներում: Մեծ ուշադրություն նաև պետք է դարձնել տարբեր սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի գործոնների հարաբերական նշանակությանը, որոշելու մահացության տարբերություններն ըստ տարածքի կամ սոցիալ-տնտեսական ու էթնիկ խմբի: Մայրական մահացության, նախածննդյան շրջանում մահացության և մանկամահացության ու հիվանդացության պատճառները և միտումները նույնպես հետագա ուսումնասիրության կարիք ունեն:

Գլուխ XIII

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ա. Ազգային քաղաքականություններ և գործունեության նախագծեր

Գործունեության հիմք

13.1. Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում աշխարհում զգալի փորձ է ձեռք բերվել, թե ինչպես կարելի է մշակել և իրականացնել կառավարության քաղաքականություններ և ծրագրեր, որոնք ուղղված լինեն բնակչության և զարգացմանն առնչվող հարցերին, բարձրացնեն մարդկանց ընտրության հնարավորությունները և նպաստեն սոցիալական առաջընթացի ընդլայնմանը: Ինչպես այլ սոցիալական զարգացման ծրագրերի դեպքում, փորձը ցույց է տվել, որ օրինակ՝ որտեղ առաջնությունը խիստ տրվում է տնտեսական աճին, մարդկային ռեսուրսների զարգացմանը, գենդերային հավասարությանն ու անաչառությանը և բնակչության առողջության, հատկապես վերարտադրողական առողջությանն առնչվող պահանջների բավարարմանը, նաև ընտանիքի պլանավորմանը և սեռական առողջությանը, երկրները ստիպված են կենտրոնացնել երկարատև պարտավորություններ հաջողության հասցնելու բնակչության և զարգացմանն առնչվող ծրագրերում և նախագծերում:

13.2. Մինչդեռ համընդհանուր սոցիալական և տնտեսական համատեքստում զարգացումները և առաջընթացը այլ զարգացումներում կարող են հասնել այնպիսի հաջողության, որտեղ բնակչությունը և զարգացումը էականորեն փոխկապակցված են և ցանկացած գործոնի առաջընթացը կարող է նպաստել մյուսների բարելավմանը: Բնակչության շատ ասպեկտներ առնչվում են զարգացման շատ ասպեկտների հետ: Մեծ անհրաժեշտություն կա, որ երկրները հաշվի առնեն ներքին և միջազգային միգրացիայի ներգործությունները, մշակելով դրանց համապատասխան քաղաքականություններ և ծրագրեր: Կա նաև մեծ անհրաժեշտություն, որ բնակչությանն առնչվող քաղաքականությունները, նախագծերը և ծրագրերը լինեն երկարատև, լիովին ներգրավելով իրենց ծրագրած օգտառուներին դրանց մշակման և հետագա իրականացման գործում:

13.3. Հասարակական կազմակերպությունների դերը՝ որպես գործընկերներ, շատ կարևոր է ազգային քաղաքականությունների և ծրագրերի մեջ, նույքան կարևոր է մասնավոր հատվածի դերը: Ազգային օրենսդիր մարմնի անդամները կարող են մեծ դեր ունենալ,

հատկապես համապատասխան ներքին օրենքների ընդունման գործում տվյալ Գործողության Ծրագրի համար, համապատասխան ֆինանսական աղբյուրների հատկացման, ծախսերի նկատմամբ պատասխանատվության ապահովման և բնակչությանն առնչվող հարցերի նկատմամբ հասարակական իրազեկվածության գործում:

Հիմնախնդիրներ

13.4. Հիմնախնդիրներն են.

(ա) Ներգրավել բնակչությանն առնչվող խնդիրները բոլոր համապատասխան ազգային զարգացման ռազմավարություններում, նախագծերում, քաղաքականություններում և ծրագրերում:

(բ) Ընտրված ներկայացուցիչներին՝ կլինեն դրանք մարդիկ, խորհրդարանականներ, շահագրգռված խմբեր, հատկապես շարքային մակարդակի անհատներ, ակտիվորեն ներգրավել բնակչության և զարգացման ոլորտում ռազմավարությունների, քաղաքականությունների, նախագծերի և ծրագրերի մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման մեջ:

Գործողություններ

13.5. Իշխանությունները, ակտիվորեն ներգրավված խորհրդարանականների, տեղական ընտրված մարմինների, համայնքների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների և կանանց խմբերի հետ պետք է աշխատեն բարձրացնել բնակչության ու զարգացմանը առնչվող հարցերի իրազեկվածությունը և ձևավորեն, իրականացնեն, գնահատեն ազգային ռազմավարությունները, ծրագրերը և նախագծերը, որոնք ուղղված են բնակչության ու զարգացմանը առնչվող հարցերին, ներառյալ միգրացիային, որպես իրենց ճյուղային, միջճյուղային և համընդհանուր զարգացման մշակման և իրականացման ընթացքի անբաժանելի մաս: Նրանք նաև պետք է խթանեն և աշխատեն ապահովել համապատասխան մարդկային ռեսուրսներով և հաստատություններով համակարգելու և իրականացնելու բնակչության ու զարգացմանը առնչվող գործունեությունների մշակում, իրականացում, վերահսկում և գնահատում:

13.6. Իշխանությունները և խորհրդարանականները համագործակցելով միջազգային համայնքի և հասարակական կազմակերպությունների հետ, պետք է համապատասխան պլան կազմեն ազգային խնդիրներին և առաջնահերթություններին համաձայն և համապատասխան գործողություն ծավալեն չափելու, գնահատելու, վերահսկելու առաջընթացը, բավարարելով այս Գործողության Ծրագրի նպատակները: Դրանով պայմանավորված, խրախուսվում է մասնավոր հատվածի և գիտահետազոտական համայնքի ակտիվ մասնակցությունը:

Բ. Ծրագրի կառավարում և մարդկային ռեսուրսների զարգացում

Գործունեության հիմք

13.7. Մարդկանց համար հիմնարար նպատակ է ձևավորելով երկրների կարողությունը և ինքնավստահությունը՝ իրականացնել միասնական ազգային գործողություն, նպաստելու կայուն տնտեսական զարգացմանը, խթանելու կայուն ազգային զարգացմանը և կատարելագործելու կյանքի որակը: Դա պահանջում է ինչպես հարկն է վերապատրաստված, գործող ելակետային միջոցառումների ներքո աշխատող անձնակազմի պահպանում, շահագրգռում, մասնակցություն, ինչպես նաև մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համապատասխան ներգրավում:Համապատասխան կառավարման հմտությունների պակասը, հատկապես ավելի թերզարգացած երկրներում, էականորեն նվազեցնում է ռազմավարական պլանավորման կարողությունը, թուլացնում է ծրագրի իրականացումը, իջեցնում է ծառայությունների որակը և այսպիսով, նվազեցնում է ծրագրերի օգտակարությունը իրենց նպաստառուների շրջանում: Իշխանությունների ապակենտրոնացման վերջին միտումը բնակչության և զարգացման ազգային ծրագրերում, հատկապես պետական ծրագրերում, էականորեն բարձրացնում է վերապատրաստված անձնակազմի համար պահանջը բավարարելու նոր կամ ընդլայնված պարտավորությունները ավելի ցածր վարչական մակարդակներում: Այդ նաև ձևափոխում է կենտրոնական հաստատություններում պահանջվող զբաղվածության մասնագիտական կառուցվածքը, քաղաքականության վերլուծությամբ, գնահատմամբ և ռազմավարական պլանավորմամբ, որոնք ունեն ավելի բարձր առավելություն, քան նախկինում:

Հիմնախնդիրներ

13.8. Հիմնախնդիրներն են.

(ա) Նպաստել ազգային կարողություններին և ծախսարդյունավետությանը, ազգային բնակչության և զարգացման ռազմավարությունների որակին և ներգործությանը, նախագծերին, քաղաքականություններին և ծրագրերին, վերահսկողություն ապահովելով բոլոր անձանց նկատմամբ, հատկապես հասարակության ամենախոցելի և անապահով խավի, ներառյալ գյուղական բնակչության և դեռահասների նկատմամբ:

(բ) Օժանդակել և արագացնել տվյալների և տեղեկատվության հավաքագրումը,վերլուծությունը և հոսքը բնակչության և զարգացման ազգային ծրագրերի կատարողների շրջանում, մշակելու ռազմավարություններ, քաղաքականություններ, նախագծեր և ծրագրեր, վերահսկելու և գնահատելու դրանց իրականացումը և ներգործությունը:

(գ) Բարձրացնել ղեկավարների և այլոց հմտությունների մակարդակը և պատասխանատվությունները, ովքեր ներգրավված են բնակչության և զարգացման ազգային ռազմավարությունների, քաղաքականությունների, նախագծերի և ծրագրերի իրականացման, վերահսկման և գնահատման մեջ:

(դ) Միավորելու սպառողների և սեռերի հեռանկարները վերապատրաստման ծրագրերում և ապահովել ինչպես հարկն է վերապատրստված անձնակազմի, ներառյալ կանանց առկայությունը, շահագրգռումը և պահպանումը, բնակչության և զարգացման ազգային ռազմավարությունների, քաղաքականությունների, նախագծերի և ծրագրերի մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման համար:

Գործողություններ

13.9. Երկրները պետք է.

(ա) Մշակեն և իրականացնեն մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրեր, այնպես որ մանրամասնորեն նշվի բնակչության և զարգացման ռազմավարություններին, քաղաքականություններին, նախագծերին և ծրագրերին առնչվող պահանջները, հատուկ ուշադրություն դարձնելով հիմնական կրթության, կանանց վերապատրաստման և աշխատանքի տեղավորման վրա բոլոր մակարդակներով՝ հատկապես որոշման կայացման և վարչական մակարդակներով, վերապատրստման ծրագրերում սպառողների և սեռերի հեռանկարների միավորման վրա:

(բ) Ապահովեն վերապատրաստված անձնակազմին համընդհանուր և արդյունավետ աշխատանքի տեղավորմամբ, գործի դնելով զարգացման ռազմավարությունները, քաղաքականությունները, նախագծերը և ծրագրերը:

(գ) Անընդհատ կատարելագործեն ծառայություն մատուցող անձնակազմի կառավարման հմտությունները, նպաստեն ծախսարդյունավետությանը, սոցիալական ապահովության արդյունավետությանը և ներգործությանը:

(դ) Կատարելագործեն աշխատավարձը և հարակից հարցերը, ծառայության ժամկետները և պայմանները, ապահովելով հավասար աշխատավարձ կնոջ և տղամարդու կողմից հավասար կատարած աշխատանքի համար, բնակչության և զարգացման ծրագրերում ներգրավված կառավարման և տեխնիկական անձնակազմի պահպանում և առաջխաղացում, այդպիսով կատարելագործել այս ծրագրերի կատարումը ազգային մակարդակով:

(ե) Հաստատեն նոր մեխանիզմներ՝ խթանելով փորձի փոխանակումը բնակչության և զարգացման ծրագրի կառավարման ժամանակ երկրների ներսում և միջև, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային, միջտարածաշրջանային և միջազգային մակարդակներով, նպաստեն ազգային իրազեկությանը:

(զ) Ստեղծեն և պահպանեն ազգային փորձագետների և բարձրագույն հաստատությունների տվյալների բազա, խթանեն ազգային կարողության օգտագործմանը, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երիտասարդության ներգրավմանը:

(է) Ապահովեն արդյունավետ հաղորդակցություն ծրագրի նպաստառուների հետ և ներգրավեն նրանց բոլոր մակարդակներով, հատկապես գյուղական մակարդակով, երաշխավորելով ավելի լավ, համընդհանուր ծրագրի կառավարում:

13.10. Իշխանությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հաճախորդներին առնչվող կառավարման տեղեկատվական համակարգի մշակմանը և իրականացմանը բնակչության և զարգացման համար և հատկապես վերարտադրողական առողջության համար, ներառյալ ընտանիքի պլանավորման և սեռական առողջության ծրագրերը, ներառելով պետական և հասարակական գործունեությունները, պարունակելով

կանոնավորապես արդիականացվող տվյալներ հաճախորդների, ծախսերի, ենթակառուցվածքների, ծառայության մատչելիության և ծառայությունների արտադրանքի ու որակի վերաբերյալ:

Գ. Ռեսուրսների կենտրոնացում և տեղաբաշխում

Գործունեության հիմք

13.11. Կայուն մարդկային զարգացման ռեսուրսների տեղաբաշխումը բաժանվում է տարբեր ճյուղային դասերի: Թե ինչպես երկիրը կարող է ամենաշահավետ կերպով տեղաբաշխել ռեսուրսները տարբեր ճյուղերի միջև, մեծապես կախված է ամեն երկրի սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական իրականությունից, ինչպես նաև նրա քաղաքականության և ծրագրի առաջնահերթություններից: Ընդհանրապես, ծրագրերի որակը և հաջողությունը գալիս է հավասարակշռված տեղաբաշխումից: Բնակչությանն առնչվող ծրագրերը կարևոր դեր են խաղում կայուն մարդկային զարգացման ծրագրերի առաջընթացին օժանդակելու, նպաստելու, արագացնելու գործում, հատկապես նպաստելու կանանց դերի հզորացման,մարդկանց առողջության բարելավման (մասնավորապես կանանց և երեխաների ու գյուղական բնակավայրերի մարդկանց), սոցիալական ապահովության պահանջների աճի մակարդակը նվազեցնելով և մոբիլիզացնելով համայնքային գործունեությունը, շեշտելով սոցիալական ապահովության ներդրումների երկարատև նշանակությունը:

13.12. Ներքին ռեսուրսները տրամադրում են միջոցների ամենամեծ մասնաբաժին զարգացման հիմնախնդիրները նվաճելու համար: Ներքին ռեսուրսների մոբիլիզացիան ամենաառաջնահերթ ոլորտներից մեկն է ուշադրությունը կենտրոնացնելու համար, ապահովելով պահանջվող ժամանակային գործունեություններ Գործողության Ծրագրի հիմնախնդիրների բավարարման համար: Երկուսն էլ, և պետական և մասնավոր հատվածները կարող են հնարավորինս օժանդակել պահանջվող ռեսուրսներին: Երկրներից շատերը ձգտում են հետևել Գործողության Ծրագրի լրացուցիչ նպատակներին և հիմնախնդիրներին, հատկապես ամենաթերզարգացած երկրները և այլ աղքատ երկրները, որտեղ տեղի են ունենում տանջալից կառուցվածքային փոփոխություններ, շարունակում են ճաշակել անկման միտումները իրենց տնտեսությունում: Նրանց ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի ջանքերը՝ բնակչության և զարգացման ծրագրերը ընդլայնելու և կատարելագործելու համար, միջազգային համայնքի կողմից ահռելի մեծ չափի ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների տրամադրման կարիք կունենան, ինչպես նշված է գլուխ XIV-ում: Նոր և լրացուցիչ ներքին ռեսուրսների և դոնորների կողմից տրամադրված ռեսուրսների մոբիլիզացիայի համար, հատուկ ուշադրության կարիք ունեն համապատասխան միջոցառումները նշելու բնակչության ամենախոցելի խմբերի, հատկապես գյուղական բնակավայրերի հիմնական պահանջները, ապահովելու սոցիալական ապահովության ծառայությունների մատչելիություն:

13.13. Հիմնվելով ընթացիկ մեծ թվով չբավարարված պահանջների վրա, վերարտադրողական առողջության ծառայությունների, ներառյալ ընտանիքի պլանավորման ոլորտում և վերարտադրողական տարիքի կանանց և տղամարդկանց թվաքանակի սպասվելիք աճը, հաջորդ երկու տասնամյակների ընթացքում ծառայությունների նկատմամբ պահանջը կշարունակի շատ կտրուկ աճել: Ուշացած

երեխա ունենալու, ծնված երեխաների միջև միջակայքի և ցանկալի ընտանիքի չափի ավելի վաղ համալրման վերաբերյալ աճող հետաքրքրությունը և ծառայությունների նկատմամբ մատչելիությունը արագացնում են այս պահանջը: Անհրաժեշտ է ամրապնդել ներքին ռեսուրսների ավելի բարձր մակարդակներ ստեղծելու և առկա դարձնելու ջանքերը և ապահովելու նրանց արդյունավետ օգտագործումը ծառայություն մատուցող ծրագրերի և հարակից տեղեկատվության, կրթության, հաղորդակցության գործունեությունների աջակցությամբ:

13.14. Հիմնական վերարտադրողական առողջությունը, ներառյալ ընտանիքի պլանավորման ծառայությունները, ներառելով աջակցություն անհրաժեշտ վերապատրաստման, ռեսուրսների, ենթակառուցվածքային և կառավարման համակարգերի համար, հատկապես առաջնային բժշկական օգնության մակարդակում, կներառեն հետևյալ հիմնական բաղադրիչները, որոնք պետք է ինտեգրվեն հիմնական ազգային ծրագրեր բնակչության և վերարտադրողական առողջության համար:

(ա) Ընտանիքի պլանավորման ծառայությունների բաղադրիչը այն է՝ հակաբեղմնավորիչները և ծառայության մատուցումը, տեղեկատավության, կրթության և հաղորդակցության ոլորտում կարողությունների զարգացումը, կապված ընտանիքի պլանավորման և բնակչության ու զարգացմանն առնչվող հարցերին, վերապատրաստման, ենթակառուցվածքային զարգացման և սարքավորումների կատարելագործման աջակցության միջոցով ազգային կարողությունների զարգացումը, քաղաքականության զարգացումը և ծրագրի գնահատումը, կառավարման տեղեկատվական համակարգերը, հիմնական ծառայության վիճակագրությունը՝ պետք է ապահովի որակյալ խնամք:

(բ) Հիմնական վերարտադրողական առողջության ծառայությունների բաղադրիչը՝ նախածննդյան շրջանի, նորմալ և ապահով ծննդաբերության և հետծննդյան շրջանի խնամքի, արհեստական ճանապարհով հղիության դադարեցման (ինչպես նշված է բաժին 8.25-ում) վերաբերյալ տեղեկատվության և պլանային ծառայություններ, վերարտադրողական առողջության, ներառյալ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, մարդկային սեռականության և պատասխանատու հայրության ու մայրության վերաբերյալ տեղեկատվություն, կրթություն և հաղորդակցություն, համապատասխան խորհրդատվություն, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և այլ վերարտադրողական տրակտի վարակների ախտորոշում և բուժում հնարավորության դեպքում, չբերության կանխում և համապատասխան բուժում հնարավորության դեպքում, ուղղորդում, կրթության ու խորհրդատվությանն առնչվող ծառայություններ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և հղիության ու ծննդաբերության բարդությունների համար ուղղորդում, կրթության ու խորհրդատվությանն առնչվող ծառայություններ:

(գ) Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրի բաղադրիչը զանգվածային լրատվամիջոցների և դպրոցական կրթության ծրագրեր, կամավոր ինքնազսպման և համապատասխան սեռական վարքագծի ապահովում և պահպանակների ընդլայնված բաշխում:

(դ) Հիմնական հետազոտության մեջ, տվյալների և բնակչության ու զարգացման քաղաքականության վերլուծության բաղադրիչը ժողովրդագրական, ինչպես նաև ծրագրին առնչվող տվյալների հավաքագրման և վերլուծության, հետազոտության, քաղաքականության զարգացման և վերապատրաստման աջակցության միջոցով ազգային կարողությունների զարգացում:

13.15. Գնահատվել է, որ զարգացող և անցումնային տնտեսությամբ երկրներում, վերարտադրողական առողջության (ներառյալ ընտանիքի պլանավորումը, մայրական առողջություն, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները), ինչպես նաև այլ հիմնական գործունեություններին (տվյալների հավաքագրում և վերլուծություն) առնչվող ծրագրերի իրականացումը կարժենա 17.0 միլիարդ ԱՄՆ դոլար 2000 թվականին, 18.5 միլիարդ ԱՄՆ դոլար 2005 թվականին, 20,5 միլիարդ ԱՄՆ դոլար 2010 թվականին և 21.7 միլիարդ ԱՄՆ դոլար 2015 թվականին: Սրանք ծախսերի գնահատականներն են պատրաստած փորձագետների կողմից հիմնված վերոնշյալ չորս բաղադրիչների տվյալների վրա: Այս գնահատականները պետք է վերանայվեն և արդիականացվեն Գործողության Ծրագրի բաժին 13.14–ում արտացոլված համընդհանուր մոտեցման հիման վրա, հատկապես հատուկ ուշադրություն դարձնելով վերարտադրողական առողջության ծառայության իրականացման ծախսերին: Սրա մոտ 65%-ը ծննդաբերության համակարգի համար է: Ծրագրի ծախսերը սերտ առնչվող բաղադրիչներում, որոնք պետք է ինտեգրվեն հիմնական ազգային ծրագրերում բնակչության և վերարտադրողական առողջության համար, ունեն հետևյալ գնահատականը.

(ա) Ընտանիքի պլանավորման բաղադրիչը գնահատվում է 10.2 միլիարդ ԱՄՆ դոլար 2000 թվականին, 11.5 միլիարդ ԱՄՆ դոլար 2005 թվականին, 12.6 միլիարդ ԱՄՆ դոլար 2010 թվականին և 13.8 միլիարդ ԱՄՆ դոլար 2015 թվականին: Այս գնահատականը հիմնված է մարդահամարի և հետազոտության տվյալների վրա, որը օգնում է նախագծել զույգերի և անհատների թվաքանակը, ովքեր հավանաբար օգտագործում են ընտանիքի պլանավորմանն առնչվող տեղեկատվություն և ծառայություններ: Հետագա ծախսերի նախագծերը թույլ են տալիս խնամքի որակի բարելավումներ: Մինչդեռ, կատարելագործված խնամքի որակը կբարձրացնի որոշ չափով գինն ըստ 1 շնչի, այս աճը հնարավոր է հատուցվի նվազեցնելով 1 շնչի հաշվով գնի կշռի և ծրագրի արդյունավետության բարձացման հաշվին:

(բ) Վերարտադրողական առողջության բաղադրիչը (առանց ծննդաբերության գործոնի գների ընտանիքի պլանավորման ամփոփ բաղադրիչի ներքո) գնահատվում է. 5.0 միլիարդ ԱՄՆ դոլար 2000 թվականին, 5.4 միլիարդ ԱՄՆ դոլար 2005 թվականին, 5.7 միլիարդ ԱՄՆ դոլար 2010 թվականին և 6.1 միլիարդ ԱՄՆ դոլար 2015 թվականին: Վերարտադրողական առողջության գնահատականը համընդհանուր է, հիմնված զարգացման տարբեր մակարդակների երկրներում մայրական առողջության ծրագրերի վրա, մասնակիորեն ներառելով այլ վերարտադրողական առողջության ծառայություններ: Այս միջամտությունների մայրական և մանկական առողջության լրիվ ներգործությունները կախված կլինեն երրորդ աստիճանի բժշկական կենտրոններից և շտապ օգնության ապահովումից, որոնց ծախսերը կբավարարվեն համընդհանուր առողջապահության սեկտորի բյուջեներից:

(գ) Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների /ՄԻԱՎ-ի/ կանխարգելման ծրագիրը գնահատվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության օգնությունների համընդհանուր ծրագրի կողմից. 1.3 միլիարդ ԱՄՆ դոլար 2000 թվականին, 1.4 միլիարդ ԱՄՆ դոլար 2005 թվականին, 1.5 միլիարդ ԱՄՆ դոլար 2010 թվականին և 1.5 միլիարդ ԱՄՆ դոլար 2015 թվականին:

(դ) Հիմնական հետազոտությունը՝ տվյալների և բնակչության ու զարգացման քաղաքականությունների վերլուծության ծրագիրը գնահատվում է. 500 միլիոն ԱՄՆ դոլար 2000 թվականին, 200 միլիոն ԱՄՆ դոլար 2005 թվականին, 700 միլիոն ԱՄՆ դոլար 2010 թվականին և 300 միլիոն ԱՄՆ դոլար 2015 թվականին:

13.16. Նախապես հաշվարկվել է, որ ծախսերի մինչև երկու երրորդը, երկրները ինքնուրույնաբար կբավարարեն և մեկ երրորդի կարգի կլինի արտաքին աղբյուրների ֆինանսավորումը: Ինչևիցե, ամենաթերզարգացած երկրները և այլ ցածր եկամուտի զարգացող երկրներ, կպահանջեն արտաքին աղբյուրների ավելի մեծ մասը արտոնյալ վիճակի համար կամ դրամաշնորհի տեսքով: Այսպիսով, կարիքների մեջ կլինի զգալի փոփոխություն արտաքին աղբյուրների համար, բնակչության ծրագրերի համար, տարածաշրջանների միջև և ներսում: Միջազգային աջակցության համար ակնկալվող համընդհանուր պահանջները նշվում են բաժին 14.11- ում:

13.17. Անհրաժեշտ կլինեն լրացուցիչ ռեսուրսներ աջակցելու բնակչության և զարգացման ծրագրերի նպատակներին, հատկապես այն ծրագրերը , որոնք ձգտում են հասնել յուրահատուկ սոցիալական և տնտեսական հատվածի նպատակներին և ներառված են Գործողության Ծրագրում: Առողջապահության հատվածը կպահանջի լրացուցիչ աղբյուրներ հզորացնելու առաջնային բժշկական օգնության համակարգը, երեխայի գայատնման ծրագրերը, շտապ ծննդօգնությունն ու լայնածավալ ծրագրերը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերահսկման համար, ինչպես նաև մարդկային բուժում և խնամք նրանց համար, ովքեր վարակվել են սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն: Կրթության հատվածը ևս կպահանջի կայուն և լրացուցիչ ներդրումներ տրամադրելու համընդհանուր հիմնական կրթություն և վերացնելու գենդերային, աշխարհագրական դիրքի,սոցիալական կամ տնտեսական կարգավիճակի և այլ անհավասարություններ:

13.18. Անհրաժեշտ կլինեն լրացուցիչ ռեսուրսներ գործունեության ծրագրի համար, որոնք ուղղված կլինեն կատարելագործելու կանանց կարգավիճակը և նրանց դերի հզորացումը ու նրանց լիովին մասնակցությունը զարգացման ընթացքի մեջ (ապահովելով նրանց հիմնական կրթություն): Կանանց լիովին ընդգրկումը զարգացման բոլոր ծրագրերի մշակման, իրականացման, կառավարման և վերահսկման մեջ այս գործունեությունների կարևոր բաղադրիչը կլինի:

13.19. Անհրաժեշտ կլինեն լրացուցիչ ռեսուրսներ գործունեության ծրագրերի գործողության համար, արագացնելու զարգացման ծրագրերը,ստեղծել զբաղվածություն, ուղղել շրջակա միջավայրին առնչվող հարցեր, ներառելով արտադրության և սպառման անկայուն գործոնները, տրամադրել սոցիալական ապահովություն, հասնել բնակչության հավասարակշռված տեղաբաշխմանը և կայուն տնտեսական աճի միջոցով կայուն

տնտեսական համատեքստում վերացնել աղքատությունը: Կարևոր համապատասխան ծրագրեր ներառելով՝ նշվածները Օրակարգ 21-ում են:

13.20. Անհրաժեշտ ռեսուրսներն իրականացնելու այս Գործողության Ծրագիրը պահանջում է զգալի ներդրումներ մոտ ժամանակահատվածում: Այդ ներդրումների նպաստները կարող են գնահատվել ճյուղային պահանջների ապագա խնայողությունների մեջ, արտադրության և սպառման անկայուն գործոնները և կայուն տնտեսական աճը կայուն տնտեսական համատեքստում և համընդհանուր կատարելագործումները կյանքի որակի մեջ:

Հիմնախնդիր

13.21. Հիմնախնդիրն է հասնել ռեսուրսների մոբիլիզացիայի և տեղաբաշխման համապատասխան մակարդակի՝ համայնքային, ազգային և միջազգային մակարդակներով, բնակչության ծրագրերի և բոլոր այն նմանատիպ ծրագրերի համար, որոնք ձգտում են խթանել և արագացնել սոցիալական և տնտեսական զարգացումը, կատարելագործել կյանքի որակը բոլորի համար, խրախուսել հավասարությունը և լրիվ հարգանքը անհատի իրավունքների նկատմամբ և, այդպես վարվելով, օժանդակել կայուն զարգացմանը:

Գործողություններ

13.22. Իշխանությունները, հասարակական կազմակերպությունները, մասնավոր հատվածը և տեղական համայնքները, միջազգային համայնքի աջակցությամբ, պետք է փորձեն մոբիլիզացնել և արդյունավետ կերպով օգտագործել բնակչության և զարգացման համար ծրագրերի ռեսուրսները, որոնք ընդլայնում և կատարելագործում են վերարտադրողական առողջության խնամքի որակը, ընտանիքի պլանավորման և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ջանքերը: Գործողության Ծրագրի նպատակներին համապատասխան, ապահովել վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման բարձր որակի ծառայությունների առկայությունը և մատչելիությունը, հատկապես շեշտը դնելով անապահով բնակչության խմբերի, ներառյալ դեռահասների պահանջների բավարարման վրա, հաշվի առնելով ծնողների իրավունքները և պարտավորությունները, դեռահասների գյուղական և քաղաքային աղքատ բնակչության պահանջները, երաշխավորելով ապահով ծառայություններ և դրանց արագ արձագանքում կանանց, տղամարդկանց և դեռահասների նկատմամբ: Մոբիլիզացնելով ռեսուրսները այս նկատառումներով, երկրները պետք է ուսումնասիրեն նոր եղանակներ, ինչպիսիք են՝ մասնավոր հատվածի ակտիվ ներգրավումը, սպառողի վճարների մասնակի օգտագործումը, սոցիալական մարքեթինգ, ծախսերի բաժանում և ծախսերի փոխհատուցման և այլ ձևեր: Ինչևէ, այս եղանակները չպետք է խանգարեն ծառայության մատչելիությանը և պետք է ուղեկցվեն համապատասխան «ապահովագիր» միջոցառումներով:

13.23. Իշխանությունները, հասարակական կազմակերպությունները, մասնավոր հատվածը և տեղական համայնքները, միջազգային համայնքի աջակցությամբ, պետք է փորձեն մոբիլիզացնել ռեսուրսները, որոնք կարիք ունեն վերազինվելու սոցիալական զարգացման նպատակներով և հատկապես բավարարելու իշխանությունների նախկինում

ձեռնարկված պարտավորությունները կապված Կրթություն բոլորի համար (Ջոմտիենի Հռչակագրի), Երեխաների համաշխարհային գագաթաժողովի բազմաճյուղային նպատակների, Օրակարգ 21 և այլ համապատասխան միջազգային համաձայնագրերի հետ և նպաստելու մոբիլիզացնել ռեսուրսները այս Գործողության Ծրագրի նպատակները բավարարելու համար: Դրանով պայմանավորված, իշխանությունները պետք է պետական հատվածի ծախսերի ճնշող մասնաբաժինը, ինչպես նաև պաշտոնական զարգացման աջակցության ճնշող մասնաբաժինը, տրամադրեն սոցիալական հատվածին, հատկապես շեշտը դնելով աղքատության վերացման վրա կայուն զարգացման համատեքստում:

13.24. Իշխանությունները, միջազգային և հասարակական կազմակերպությունները պետք է անընդհատ համագործակցեն, մշակելով հստակ և արժանահավատ ծախսերի գնահատում, եթե հնարավոր է, ներդրման ամեն տեսակի համար:

Գլուխ XIV

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ա. Գործընկերների պարտավորությունները զարգացման ընթացքում

Գործունեության հիմք

14.1. Ապացուցվել է, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում միջազգային համագործակցությունը էական դեր ունի բնակչության և զարգացման ծրագրերում: Ֆինանսական դոնորների քանակը աճել է և դոնոր կազմակերպությունների պատկերը կտրուկ ձևավորվել է հասարակական և մասնավոր կազմակերպությունների առկայության հիման վրա: Երկրների միջև բազմաթիվ բարեհաջող համագործակցությունների փորձը կոտրեց «լինել բացառապես զարգացած երկրներում» դոնորների տեսակետի կարծրատիպը: Դոնոր գործընկերությունները դարձել են ավելի գերակշռող մի շարք ձևերում,այնպես որ, այլևս արտասովոր չէ տեսնել իշխանություններին և բազմակողմանի կազմակերպություններին սերտորեն աշխատելիս ազգային, միջազգային, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի մի մասի հետ: Բնակչության և զարգացման գործունեությունների միջազգային համագործակցության այս զարգացումը արտացոլեց զգալի փոփոխություններ, որոնք տեղի են ունեցել վերջին երկու տասնամյակների ընթացքում, հատկապես փոփոխություններ կապված չբավարարված պահանջների չափի, տարբերության և հրատապության մասին ավելի շատ տեղեկացվածության հետ: Երկրները, որ նախկինում քիչ կարևորություն էին տալիս բնակչությանն առնչվող հարցերին, այժմ գիտակցում են, որ դրանք զարգացման մարտահրավերի հիմքն են: Միջազգային միգրացիան և ՁԻԱՀ-ը, օրինակ, եթե նախկինում մի քանի երկրների համար համարվում էր ոչ կարևոր խնդիր, ապա ներկայումս այն մի շարք երկրների առաջնահերթ խնդիրներից է:

14.2. Բնակչության և զարգացման ոլորտում միջազգային համագործակցության կողմից անցած ընթացքը ընդգծվում է մի շարք դժվարություններով և թերություններով, որոնց պետք է ուշադրություն դարձնել: Օրինակ, զարգացման գործընկերների աճող քանակը և տեսքը ենթարկվում են ստացող երկրների և դոնոր երկրների աճող ճնշմանը՝ որոշելու զարգացման բազմաթիվ մրցունակ առաջնահերթություններ, մի խնդիր, որը ստացող

երկրները չափազանց բարդ կարող են համարել իրականացնելու համար: Համապատասխան ֆինանսական աղբյուրների պակասը և գործող համակարգման մեխանիզմները ազդեցությունն են թողնում անօգուտ կրկնօրինակման փորձերի և ծրագրի անհամապատասխանության վրա: Դոնորների զարգացման քաղաքականությունների կտրուկ փոփոխությունները կործանիչ է ծրագրի գործունեությունների համար աշխարհում: Ազգային առաջնահերթությունների վերահաստատումը և նրանց հավատարիմ լինելը պահանջում է զարգացման գործընկերների միջև փոխադարձ պարտավորությունների նոր հստակեցում և դրանց կատարում:

Հիմնախնդիրներ

14.3. Հիմնախնդիրներն են.

(ա) Բնակչության և զարգացման ոլորտում ապահովել միջազգային համագործակցություն համաձայն բնակչության և զարգացման ազգային առաջնահերթությունների, որոնք կենտրոնացված են ծրագրված նպաստառուների բարեկեցության վրա և ծառայում են նպաստելու կարողությունների զարգացմանը և ինքնավստահությանը:

(բ) Կոչ անել միջազգային համայնքին ընդունելու բարենպաստ մակրոտնտեսական քաղաքականություններ նպաստելու զարգացող երկրների կայուն տնտեսական աճին և կայուն զարգացմանը:

(գ) Հստակեցնել զարգացման գործընկերների միջև փոխադարձ պարտավորությունները և կատարելագործել իրենց ջանքերի համակարգումը;

(դ) Մշակել երկարատև համատեղ ծրագրեր ստացող երկրների միջև և ստացող ու դոնոր երկրների միջև:

(ե) Կատարելագործել և հզորացնել բնակչության և զարգացման ծրագրերի և գործունեությունների քաղաքականության երկխոսությունը և համակարգումը միջազգային մակարդակով , ներառելով երկկողմանի և բազմակողմանի գործակալությունները:

(զ) Կոչ անել, որ բնակչության և զարգացման բոլոր ծրագրերը, տարբեր կրոնական և էթիկական արժեքների և ցանկացած երկրի մարդկանց մշակութային ակունքների նկատմամբ լիովին հարգանք տածելով, հետևեն միջազգային համայնքի կողմից ճանաչված և այս Գործողության Ծրագրում հիշատակված մարդու հիմնարար իրավունքներին:

Գործողություններ

14.4.Ծրագրի մակարդակով, բնակչության և զարգացման համար ազգային կարողությունների զարգացումը և համապատասխան տեխնոլոգիայի և գործիմացության փոխանցումը զարգացող երկրները, ներառելով անցումային տնտեսությամբ երկրները, միջազգային համագործակցության համար պետք է հանդիսանան էական հիմնախնդիրների և գործունեությունների հիմքը: Սրանով պայմանավորված, կարևոր

բաղադրիչներից է՝ գտնել մատչելի ուղիներ բավարարելու ընտանիքի պլանավորման ծրագրերի լայն սպառման ապրանքի պահանջները, որակյալ և մատչելի հակաբեղմնավորիչների տեղական արտադրության միջոցով, որի համար անհրաժեշտ է տեխնոլոգիական համագործակցություն, համատեղ ձեռնարկություն և տեխնիկական աջակցության այլ ձևեր:

14.5. Միջազգային համայնքը պետք է նպաստի աջակցող տնտեսական միջավայրին՝ ընդունելով բարենպաստ մակրոտնտեսական քաղաքականություններ, նպաստելու զարգացող երկրների կայուն տնտեսական աճին և զարգացմանը:

14.6. Իշխանությունները պետք է երաշխավորեն, որ ազգային զարգացման նախագիծը հաշվի առնի բնակչության և զարգացման իրենց ծրագրերի համար ակնկալվող միջազգային ֆինանսավորումը և համագործակցությունը, ներառյալ փոխառությունները միջազգային ֆինանսական կազմակերպություններից: Ինչ վերաբերվում է ազգային կարողությունների զարգացմանը՝ տեխնոլոգիական համագործակցություն և համապատասխան տեխնոլոգիայի փոխանցում, որը կտրամադրվի բարենպաստ պայմաններով, երկկողմանի համաձայնեցված արտոնյալ և նախապատվելի պայմաններով, հաշվի առնելով միջազգային սեփական իրավունքների պաշտպանման, ինչպես նաև զարգացող երկրների հատուկ պահանջների անհրաժեշտությունը:

14.7. Ստացող երկրները պետք է հզորացնեն իրենց ազգային համակարգման մեխանիզմները, բնակչության և զարգացմանն առընչվող միջազգային համագործակցության համար և դոնորների հետ խորհրդակցելիս հստակեցնեն տարբեր տեսակի զարգացման գործընկերների, ներառյալ միջկառավարական և միջազգային կազմակերպություններին վերապահված պարտավորությունները, լուրջ ուշադրություն դարձնելով դրանց համեմատական առավելությունների վրա ազգային զարգացման առաջնահերթությունների համատեքստում և ազգային զարգացման գործընկերների հետ նրանց փոխազդեցության ունակության վրա: Միջազգային համայնքը պետք է աջակցի ստացող երկրներին համակարգման քայլեր ձեռնարկելու հարցում:

Բ. Դեպի նոր հանձնարարականներ բնակչության և զարգացման ֆինանսավորման հարցում

Գործունեության հիմք

14.8. Զգալի լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացիայի անհրաժեշտության հարցի վերաբերյալ կա միջազգային համայնքի և զարգացող երկրների ու անցումային տնտեսությամբ երկրների միջև խիստ համընկնում, աջակցելով բնակչության ազգային զարգացման ծրագրերի կայուն զարգացմանը: «Ավելի Լավ Կյանք Ապագա Սերունդների Համար» խորագրով Ամստերդամյան Հռչակագիրը, որն ընդունվել է 1989 թվականին Ամստերդամում անցկացված «Բնակչությունը 21-րդ դարում» Միջազգային Ֆորումի ժամանակ, կոչ է անում երկրներին՝ կրկնապատկել բնակչության զարգացման համար համընդհանուր ծախսերը, իսկ դոնոր երկրներին՝ զգալիորեն մեծացնել նրանց օժանդակության չափը, բավարարելու զարգացող երկրներում ընտանիքի պլանավորման և բնակչության այլ ոլորտներում միլիոնավոր մարդկանց պահանջները մինչև 2000 թվականը: Ինչևէ, այդ պահից ի վեր բնակչության գործունեությունների համար

միջազգային ռեսուրսները, շատ խիստ ճնշման ենթարկվեցին շնորհիվ երկարատև տնտեսական անկմանը ավանդական դոնոր երկրներում: Զարգացող երկրները ևս դժվարությունների հանդիպեցին իրենց բնակչության և հարակից ծրագրերի համար զգալի ֆինանսական միջոցներ հատկացնելու հարցում: Լրացուցիչ աղբյուրները խիստ հարկավոր են ավելի լավ ճանաչելու և բավարարելու բնակչության և զարգացմանն առընչվող հարցերի չբավարարված պահանջները, ինչպես, օրինակ, վերարտադրողական առողջության խնամքին, ներառյալ ընտանիքի պլանավորման ու սեռական առողջության տեղեկատվության և ծառայություններին առնչվող պահանջները, ինչպես նաև արձագանքել պահանջների հետագա աճին, միջոց պահելով աճող պահանջները բավարարելու համար և կատարելագործելու ծրագրերի որակը:.

14.9. Աջակցելով բնակչության և վերարտադրողական առողջության խնամքի, ներառյալ ընտանիքի պլանավորման և սեռական առողջության ծրագրերի իրականացմանը, երկկողմանի և բազմակողմանի գործակալությունների կողմից տրամադրվել են ներգրավված ազգային և տեղական կազմակերպություններին ֆինանսական և տեխնիկական աջակցություն: Քանի որ դրանցից որոշը հաջողություններ ունեցան, երկրներն սկսեցին ձգտել իմանալ մեկը մյուսի փորձը տարբեր եղանակների միջոցով (ինչպես օրինակ երկարատև և կարճատև վերապատրաստման ծրագրեր,ուսուցման գործուղումներ և խորհրդատվական ծառայություններ):

Հիմնախնդիրներ

14.10. Հիմնախնդիրներն են.

(ա) Բարձրացնել միջազգային աջակցության կայունությունը և առկայությունը բնակչության և զարգացման ոլորտում, հնարավորություն տալով զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին նվաճելու այս Գործողության Ծրագրի նպատակները, քանի նրանք հետևում են իրենց ինքնավստահ և կարողությունների զարգացման քայլերին:

(բ) Բարձրացնել միջազգային ֆինանսական աջակցության նկատմամբ պարտավորությունը և նրա կայունությունը բնակչության և զարգացման ոլորտում, փոփոխելով աջակցության ռեսուրսները, փորձելով որքան հնարավոր է խուսափել ռեսուրսների կրճատումից այլ զարգացման ոլորտների համար: Լրացուցիչ ռեսուրսների կարիք կա անցումային տնտեսությամբ երկրների կարճատև աջակցություն ցուցաբերելու համար:

(գ) Բարձրացնել միջազգային ֆինանսական աջակցությունը ուղղելով Հարավ-Հարավ համագործակցությանը և նպաստել Հարավ-Հարավ համագործակցության ֆինանսավորմանը:

Գործողություններ

14.11. Միջազգային համայնքը պետք է պայքարի համընդհանուր պետական զարգացման աջակցության համախառն ներքին արդյունքի 0.7% հաստատված նպատակի իրականացման համար և փորձի բարձրացնել բնակչության և զարգացման ծրագրերի

համար ֆինանսավորման մասնաբաժինը համապատասխանեցնելով պահանջվող գործունեությունների շրջանակին և ծավալին, հասնելու հիմնախնդիրներին և նպատակներին: Զափազանց հրատապ խնդիր է միջազգային դոնոր համայնքի համար Գործողության Ծրագրի հիմախնդիրների և քանակական նպատակների հանձնարարականների թարգմանությունը համապատասխան զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում բնակչությանն առնչվող ծրագրերի ֆինանսական հատկացումներին: Տրված ֆինանսական ռեսուրսի չափը անհրաժեշտ է ազգային բնակչության և զարգացման ծրագրերի համար (ինչպես նշված է գլուխ XIII-ում) և ենթադրելով, որ ստացող երկրները կարող են ստեղծել զգալի աճ ներքին կարգով ստեղծված ռեսուրսներից, դոնոր երկրների կողմից լրացուցիչ աղբյուրների հոսքի դեպքում դրանք կլինեն 1993թ. ԱՄՆ դոլարին համարժեք: 5.7 միլիարդ ԱՄՆ դոլար 2000 թվականին, 6.1 միլիարդ ԱՄՆ դոլար 2005 թվականին, 6.8 միլիարդ ԱՄՆ դոլար 2010 թվականին և 7.2 միլիարդ ԱՄՆ դոլար 2015 թվականին: Միջազգային համայնքը հաշվի է առնում ռեսուրսների մոբիլիզացնելու նախաձեռնությունը, ընձեռելով բոլոր մարդկանց սոցիալական ապահովության մատչելիություն, որը հայտնի է ինչպես 20/20 նախաձեռնություն և դեռ կուսումնասիրվի ավելի ուշ Սոցիալական զարգացման համաշխարհային գագաթնաժողովի համատեքստում:

14.12. Ստացող երկրները պետք է երաշխավորեն, որ միջազգային աջակցությունը բնակչության և զարգացման համար օգտագործվում են արդյունավետորեն, բավարարելով ազգային բնակչության և զարգացման հիմնախնդիրները, այնպես, որ աջակցեն դոնոր երկրներին ապահովել ծրագրերի համար հետագա ռեսուրսները:

14.13. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, և ՄԱԿ-ի այլ կազմակերպություններ, բազմակողմանի ֆինանսական հաստատություններ, տարածաշրջանային բանկեր և երկկողմանի ֆինանսական հաստատություններ հրավիրվում են խորհրդակցելու իրենց ֆինանսական քաղաքականությունները համակարգելու և ընթացակարգեր մշակելու իրենց ներդրումների ներգործությունը, լրացումը և ծախսարդյունավետությունը կատարելագործելու՝ զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների բնակչության ծրագրերի հաջողության համար:

14.14 Զարգացող երկրներում բնակչության գործունեությունների համար արտաքին ֆինանսական ռեսուրսների հատկացման չափանիշը պետք է ներառի հետևյալը.

(ա) Հետևողական ազգային ծրագրեր, նախագծեր և ռազմավարություններ բնակչության և զարգացման վերաբերյալ:

(բ) Ընդունված առաջնահերթություն ամենաթերզարգացած երկրների նկատմամբ:

(գ) Անհրաժեշտություն ավելացնելու բնակչության առնչվող ազգային ֆինանսական նախաձեռնությունները:

(դ) Անհրաժեշտություն անտեսելու խոչընդոտները կամ, հակառակը, մինչև հիմա հասած առաջընթացը:

(ե) Սոցիալական հատվածի կամ ոլորտի խնդիրները, որոնք չեն արտացոլվում ազգային միջին ցուցանիշներում:

14.15. Անցումային տնտեսությամբ երկրները պետք է ստանան ժամանակավոր աջակցություն բնակչության և զարգացման գործունեությունների համար, բարդ տնտեսական և սոցիալական խնդիրների պարագայում, որոնց հետ այս երկրները բախվում են ներկայումս:

14.16. Ֆինանսավորման ռեսուրսները համապատասխանաբար հավասարակշռելով, մեծ ուշադրություն պետք է դարձնել Հարավ-Հարավ համագործակցությանը, ինչպես նաև մասնավոր ներդրումների մոբիլիզացման նոր ուղիներին, հատկապես հասարակական կազմակերպությունների հետ գործընկերությանը: Միջազգային համայնքը պետք է կոչ անի դոնոր կազմակերպություններին կատարելագործելու և ձևափոխելու իրենց ֆինանսավորման ընթացակարգը, օժանդակելու և բարձր նախապատվություն տալու ուղիղ Հարավ-Հարավ համատեղ միջոցառման աջակցմանը:

14.17. Պետք է գտնվի նոր ֆինանսավորման միջոցներ, ներառյալ նոր ուղիներ ստեղծելու պետական և մասնավոր ֆինանսավորման ռեսուրսներ և պարտքի մարման տարբեր ձևեր:

14.18. Միջազգային ֆինանսական հաստատությունները խրախուսվում են մեծացնելու իրենց ֆինանսական աջակցությունը, հատկապես բնակչության և վերարտադրողական աքռողջության, ներառյալ ընտանիքի պլանավորման և սեռական առողջության խնամքի ոլորտում:

Գլուխ XV

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԵՏ

Ա. Տեղական, ազգային և միջազգային հասարակական կազմակերպություններ

Գործունեության հիմք

15.1 Քանի որ հասարակական կազմակերպությունների իրական և հնարավոր համագործակցությունը մեծ ճանաչում ստացավ շատ երկրներում տարածաշրջանային և միջազգային մակարդակներով, կարևոր է հաստատել դրա կարևորությունը Գործողության Ծրագրի նախապատրաստման և իրականացման համատեքստում: Բնակչության և զարգացման մարտահրավերները արդյունավետ կերպով հասցեագրելու համար, կարևոր է պետական և հասարակական կազմակերպությունների (բաղկացած է ոչ-առևտրային կազմակերպություններից և տեղական, ազգային ու միջազգային մակարդակի կազմակերպություններից) միջև ընդլայնված և արդյունավետ համագործակցությունը, աջակցելու բնակչության և զարգացման հիմախնդիրների և գործունությունների ձևավորումը, իրականացումը, վերահսկումը և գնահատումը:

15.2. Չնայած լայնորեն տարբերվող իրավիճակների իշխանությունների հետ իրենց կապի և ներգործության ժամանակ, հասարակական կազմակերպությունները կատարել են և կատարում են շատ կարևոր ներդրումներ բնակչության և զարգացման

գործունեությունների ոլորտում, բոլոր մակարդակներով: Բնակչության և զարգացման գործունեությունների շատ ոլորտներում, ի տարբերություն պետական կազմակերպությունների, հասարակական խմբերը արդեն լավ հայտնի են իրենց համեմատական առավելության համար՝ նորացված, ճկուն և արձագանքող ծրագրերի մշակման և իրականացման պատճառով, ներառելով շարքային մարդկանց մասնակցությունը, որովհետև շատ հաճախ նրանք հիմնվում և շփվում են անապահով խավի հետ և բարդ է նրանց համար հասնել պետական օղակներին:

15.3. Հասարակական կազմակերպությունները մարդկանց կարևոր ձայներն են և նրանց միավորումները և կապերը տրամադրում են արդյունավետ ու զգալի միջոցներ, ուշադրությունն ավելի լավ կենտրոնացնելու տեղական և ազգային նախաձեռնությունների վրա, ճնշող բնակչությանը ուղղելով շրջակա միջավայրին,միգրացիային, տնտեսական և սոցիալական զարգացմանը վերաբերող խնդիրներ:

15.4. Հասարակական կազմակերպությունները ակտիվորեն ներգրավված են ծրագրերի և նախագծերի ապահովման մեջ սոցիալ-տնտեսական զարգացման համարյա ամեն ոլորտում, ներառյալ բնակչությանն առնչվող ոլորտը: Նրանցից շատերը մի շարք երկրներում ունեն բնակչությանը, հատկապես ընտանիքի պլանավորմանն առնչվող գործունեությունների մասնակցության և ներգրավման երկար պատմություն: Նրանց ուժը և վստահելիությունը ընկած է հասարակության մեջ նրանց ունեցած պատասխանատու և կառուցողական դերում: Ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունները և ցանցերը, ներառյալ շարքային մարդկանց շարժումները, արժանացնում է ավելի լայն ճանաչման տեղական, ազգային և միջազգային մակարդակներով, որպես գործող և արժեքավոր գործընկերներ այս Գործողության Ծրագրի իրականացման համար: Որպեսզի այսպիսի համագործակցություններ ստեղծվեն և բարգավաճեն. անհրաժեշտ է, որ պետական և հասարակական կազմակերպությունները ստեղծեն համապատասխան համակարգեր և մեխանիզմներ օժանդակելու կառուցողական երկխոսությունը ազգային ծրագրերի և քաղաքականությունների համատեքստում, ճանաչելով նրանց հատուկ դերը, պարտավորությունները և առանձնահատուկ կարողությունները:

15.5. Հասարակական կազմակերպությունների և տեղական համայնքային խմբերի փորձը, կարողությունները և փորձարարությունը ուղղակի նշանակություն ունեն Գործողության Ծրագրի հետ: Հասարակական կազմակերպությունները հատկապես նրանք, ովքեր աշխատում են սեռական և վերարտադրողական առողջության ու ընտանիքի պլանավորման ոլորտում, կանանց կազմակերպություններում և ներգաղթողների ու փախստականների աջակցության խորհրդատվական խմբերում, ունեն համընդհանուր բարձր գիտելիք և կանանց ու տղամարդկանց տրամադրվող կրթական ծառայությունները նպաստում են բնակչության և զարգացման քաղաքականությունների հաջողակ իրականացման վրա: Երիտասարդական կազմակերպությունները գնալով աճում են և դառնում արդյունավետ գործընկերներ զարգացող ծրագրերում, կրթելու երիտասարդներին վերարտադրողական առողջության, գենդերի և շրջակա միջավայրին առնչվող հարցերի ոլորտում: Այլ խմբերը, ինչպես օրինակ տարեցների, միգրանտների, հաշմանդամների կազմակերպությունները և ոչ պաշտոնական շարքայինների խմբերը, նույնպես իրենց արդյունավետ ներդրումն ունեն ծրագրերի կատարելագործման մեջ իրենց առանձնահատկության համար: Այս տարբեր կազմակերպությունները կարող են օգնել ապահովելու ծրագրերի և մարդկանց ծառայելու ստեղծված ծառայությունների որակը և

կարևորությունը: Նրանց պետք է հրավիրել մասնակցելու տեղական, ազգային և միջազգային որոշում կայացնող մարմինների հետ, ներառյալ ՄԱԿ-ի կառույցները, ապահովելու Գործողության Ծրագրի արդյունավետ իրականացում, վերահսկում և գնահատում:

15.6. Գիտակցելով արդյունավետ գործընկերության կարևորությունը, հասարակական կազմակերպությունները հրավիրվում են խթանելու համակարգմանը, համագործակցությանը և հաղորդակցությանը՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով, տեղական ինքնակառավարման մարմինների ու կառավարության հետ, ամրապնդելով իրենց արդյունավետությունը որպես կարևոր մասնակիցներ բնակչության և զարգացման ծրագրերի ու քաղաքականությունների իրականացման մեջ: Հասարակական կազմակերպությունների ներգրավումը կդիտվի որպես լրացուցիչ գործոն իշխանությունների պարտավորությունների՝ ապահովելու լրիվ, ապահով և մատչելի վերարտադրողական առողջության ծառայություններ, ներառյալ ընտանիքի պլանավորման և սեռական առողջության ծառայությունները: Ինչպես իշխանությունները, այնպես էլ հասարակական կազմակերպությունները պետք է հաշվետու լինեն իրենց գործողությունների համար և պետք է թափանցիկություն ապահովեն իրենց ծառայություններում և գնահատման ընթացակարգերում:

Հիմնախնդիր

15.7. Հիմնախնդիրն է խթանել կառավարության բոլոր մակարդակների և լրիվ հասարակական կազմակերպությունների ու տեղական համայնքային խմբերի միջև արդյունավետ գործընկերությանը, բնակչության, զարգացման և շրջակա միջավայրի ծրագրերի մշակման, իրականացման, համակարգման, վերահսկման և գնահատման վերաբերյալ քննարկման և որոշումների կայացման գործում, համաձայն իշխանությունների շրջանակում ընդհանուր քաղաքականությանը՝ հաշվի առնելով համապատասխան գործընկերների պարտավորությունները և դերը:

Գործողություններ

15.8. Կառավարության և միջկառավարական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունների ու տեղական համայնքային խմբերի հետ երկխոսելով և լիովին հարգելով նրանց անկախությունը, պետք է ինտեգրեն նրանց որոշում կայացնելու մեջ և օժանդակեն հասարակական կազմակերպությունների ներդրումներին, որ այն կարող են անել բոլոր մակարդակներում, գտնելով բնակչության ու զարգացմանն առնչող խնդիրների լուծումներ, հատկապես ապահովելով Գործողության Ծրագրի իրականացում: Հասարակական կազմակերպությունները պետք է ունենան կարևորագույն դեր ազգային և միջազգային զարգացման ընթացքների մեջ:

15.9. Իշխանությունները պետք է ապահովեն կանանց կազմակերպությունների էական դերը և մասնակցությունը բնակչության և զարգացման ծրագրերի մշակման, իրականացման մեջ: Ներառելով կանանց բոլոր մակարդակներում, հատկապես կառավարման մակարդակում, շատ կարևոր է Գործողության Ծրագրի հիմնախնդիրների բավարարման և ծրագրի իրականացման համար:

15.10. Եթե հնարավոր է և եթե հայցվում է իշխանությունների, միջկառավարական կազմակերպությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից պետք է տրամադրվեն համապատասխան ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ և տեղեկատվություն այնպես, որ չփոխզիջի նրանց լիովին անկախությունը , ապահովելով անհրաժեշտ հասարակական կազմակերպությունների արդյունավետ մասնակցություն բնակչության և զարգացման գործունեությունների ուսումնասիրման, մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման մեջ: Այս նույն կազմակերպությունները պետք է մատչելի դարձնեն անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը այդ հասարակական կազմակերպությունների համար ապահովելու թափանցիկություն և աշխատանքի արդյունավետ բաշխում: Միջազգային կազմակերպությունները կարող են տրամադրել հասարակական կազմակերպություններին ֆինանսական և տեխնիկական աջակցություն համաձայն ամեն երկրի օենքների և նորմերի:

15.11. Իշխանությունները և դոնոր երկրները, ներառյալ միջկառավարական կազմակերպություններ և միջազգային ֆինանսական հաստատությունները պետք է ապահովեն, որ հասարակական կազմակերպությունները և նրանց ցանցերը ի վիճակի լինեն պահպանելու իրենց անկախությունը և ամրապնդեն իրենց կարողությունը կանոնավոր երկխոսությունների և խորհրդատվությունների, համապատասխան վերապատրաստման գործունեությունների միջոցով, այսպիսով մեծ գործընկերության դեր ունենալ բոլոր մակարդակներում:

15.12. Հասարակական կազմակերպությունները և նրա ցանցերն ու տեղական համայնքները պետք է ամրապնդեն իրենց ներգործությունը իրենց ընտրողների հետ, ապահովելով թափանցիկություն իրենց գործողություններում, մոբիլիզացնելով հասարակական կարծիքը, մասնակցելով բնակչության և զարգացման ծրագրերին և ակտիվորեն մասնակցեն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով բնակչության և զարգացման հարցերին վերաբերող բանավեճերին: Իշխանությունները պետք է, հնարավորինս ներառեն հասարակական կազմակերպությունների ներկայացումը երկրի պատվիրակության մեջ ռեգիոնալ և միջազգային ֆորումներին, որտեղ քննարկվում են բնակչության և զարգացման վերաբերյալ հարցեր:

Բ. Մասնավոր հատված

Գործունեության հիմք

15.13.Մասնավոր, շահույթ հետապնդող հատվածը կարևոր դեր է խաղում սոցիալ տնտեսական զարգացման վրա, ներառյալ վերարտադրողական առողջության խնամքի ծառայությունների և ապրանքների արտադրությունը և առաքումը, բնակչության և զարգացման ծրագրերին առնչվող համապատասխան կրթությունը և տեղեկատվությունը: Մեծաթիվ երկրներում մասնավոր հատվածը ունի կամ զարգացնում է ֆինանսական,կառավարչական և տեխնոլոգիական կարողություն, կազմելու բնակչության և զարգացման գործունեությունների մի ամբողջություն ծախսարդյունավետ և արդյունավետ կերպով: Այս փորձը հիմնաքար է հանդիսանում օգտակար գործընկերությունների համար, որը մասնավոր հատվածը կարող է զարգացնել և ընդլայնել: Մասնավոր հատվածի ներգրավումը կարող է աջակցել կամ լրացնել, բայց չպետք է նվազեցնի իշխանությունների պարտավորությունները տրամադրելու լրիվ,

ապահով և մատչելի վերարտադրողական առողջության ծառայություններ բոլոր մարդկանց: Մասնավոր հատվածը նաև պետք երաշխավորի, որ բնակչության և զարգացման բոլոր ծրագրերը, տարբեր կրոնական և էթիկական արժեքների և ցանկացած երկրի մարդկանց մշակութային ակունքների նկատմամբ լիովին հարգանք տածելով, հետևի միջազգային համայնքի կողմից ճանաչված և այս Գործողության Ծրագրում հիշատակված մարդու հիմնարար իրավունքներին:

15.14. Մասնավոր հատվածի դերի մեկ այլ ասպեկտ ևս կարևոր է որպես գործընկեր տնտեսական աճի և կայուն զարգացման համար: Դրա գործողությունների և դիրքորոշումների միջոցով, մասնավոր հատվածը կարող է վճռական ներգործություն ունենալ իր աշխատողների կյանքի որակի և հաճախ, հասարակության մեծ մասի և նրա դիրքորոշումների վրա: Այս ծրագրերից ձեռք բերված փորձը օգտակար է իշխանությունների և հասարակական կազմակերպությունների համար իրենց շարունակական քայլերի նման, գտնել նորացված ուղիներ արդյունավետ կերպով ներգրավելու մասնավոր սեկտորը բնակչության և զարգացման ծրագրերում: Կորպորատիվ պատասխանատվությունների աճող ենթագիտակցությունը առաջնորդում է մասնավոր հատվածի որոշում կայացնողներին փնտրելու նոր ուղիներ, որում շահույթ հետապնդող կազմակերպությունները կաշխատեն իշխանությունների և հասարակական կազմակերպությունների հետ բնակչության և կայուն զարգացման առնչվող հարցերի վերաբերյալ: Գիտակցելով մասնավոր հատվածի մասնակցությունը և փնտրելով ավելի շատ ծրագրի ոլորտներ փոխշահավետ համագործակցության համար, իշխանությունները և հասարակական կազմակերպությունները նույնպես կարող են հզորացնել իրենց բնակչության և զարգացման գործունեությունների արդյունավետությունը:

Հիմնախնդիրներ

15.15. Հիմնախնդիրներն են.

(ա) Ամրապնդել գործընկերությունը իշխանությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի միջև, սահմանելով համագործակցության նոր ոլորտներ:

(բ) Խթանել մասնավոր հատվածի դերը բարձր որակի վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ապրանքների և հակաբեղմնավորիչների ծառայության առաքման, արտադրության ու բաշխման ոլորտում, որոնք մատչելի և թույլատրելի են ցածր եկամուտ ունեցող բնակչության համար, աշխարհի ցանկացած տարածաշրջանում:

Գործողություններ

15.16. Իշխանությունները հասարակական և միջազգային կազմակերպությունները պետք է խորացնեն իրենց համագործակցությունը մասնավոր, եկամուտ հետապնդող հատվածի հետ, բնակչության և կայուն զարգացմանն առնչվող հարցերի հետ կապված ամրապնդելու այդ հատվածի մասնակցությունը բնակչության և զարգացման ծրագրերում, ներառյալ որակյալ հակաբեղմնավորիչների արտադրությունը և առաքումը և համապատասխան տեղեկատվության ու կրթության ծառայությունները, սոցիալապես պատասխանատու, մշակութորեն հավասար, ընդունելի և ծախսարդյունավետ կերպով:

15.17. Եկամուտ չհետապնդող և եկամուտ հետապնդող կազմակերպությունները և նրանց ցանցը պետք է մշակեն մեխանիզմներ, որտեղ նրանք կարող են փոխանակել կարծիքներ և փորձեր բնակչության և զարգացման ոլորտում, նորացված մոտեցումներ և գիտահետազոտական նախաձեռնություններ կիսելու նպատակով: Առաջնահերթ են տեղեկատվության տարածումը և հետազոտությունը:

15.18. Իշխանությունները խիստ խրախուսվում են հաստատելու չափորոշիչներ ծառայության առաքման համար և վերանայելու իրավական, կարգավորող և ներմուծման քաղաքականություններ գտնելու և վերացնելու այն քաղաքականությունները, որոնք անհաջող կերպով կանխում կամ սահմանափակում են մասնավոր հատվածի ներգրավվումը վերարատադրողական առողջության համար ապրանքների արդյունավետ արտադրության, ներառյալ ընտանիքի պլանավորման և ծառայության առաքման մեջ: Իշխանությունները, հաշվի առնելով մշակութային և սոցիալական տարբերությունները, պետք է խիստ խրախուսեն մասնավոր հատվածին կատարելու իր պարտավորությունները կապված սպառողների համար տեղեկատվության տարածման հետ:

15.19. Եկամուտ հետապնդող հատվածը պետք է վերանայի, թե ինչպես ավելի լավ աջակցի ոչ առևտրային հասարակական կազմակերպություններին հասարակության մեջ ավելի մեծ դեր խաղալու, համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ուղղի ֆինանսական և այլ համապատասխան աջակցություն ոչ առևտրային հասարակական կազմակերպություններին և իրենց ասոցիացիաներին:

15.20. Մասնավոր հատվածի գործատուները պետք է շարունակեն մշակել և իրականացնել հատուկ ծրագրեր, որոնք կօգնեն բավարարելու իրենց աշխատողների պահանջները՝ տեղեկատվության, կրթության և վերարատադրողական առողջության ծառայությունների համար, և բավարարելու իրենց աշխատողների պահանջները համադրելու աշխատանքային և ընտանեկան պարտավորությունները: Կազմակերպված առողջապահություն տրամադրողները և առողջության ապահովության գործակալները պետք է նույնպես շարունակեն ներառել ընտանիքի պլանավորման և վերարատադրողական առողջության ծառայություններ իրենց տրամադրված առողջապահական նպաստի փաթեթի մեջ:

*Վատիկանի Սուրբ Եպիսկոպոսությունն արտահայտել է ընդհանուր վերապահում այս գլխի առնչությամբ: Վերապահումը կթարգմանվի 14-րդ Լիագումար Նիստի ժամանակ, 13 սեպտեմբերի, 1994թ. Սուրբ Աթոռ ներկայացուցչի կողմից նշված պայմաններով:

Գլուխ XVI

ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ազգային մակարդակի գործունեություն

Գործունեության հիմք

16.1. Բնակչության և Զարգացման Միջազգային Կոնֆերանսի նշանակությունը կախված կլինի կառավարությունների, տեղական համայնքների, հասարակական հատվածի,

միջազգային համայնքի և բոլոր այլ շահագրգիռ կազմակերպությունների և անհատների պատրաստակամությունից գործի դնելու համաժողովի հանձնարարականները:Այս պարտավորությունը առանձնահատուկ նշանակություն կունենա ազգային և անհատների մակարդակով: Այս պատրաստակամությունը, բնակչության անհանգստացնող հարցերը ինտեգրելու տնտեսական և սոցիալական գործունեության մեջ և նրանց փոխկապակցվածությունը, մեծապես կաջակցի հասնելու բոլոր անհատների, ինչպես նաև ապագա սերնդի համար կյանքի որակի բարելավմանը: Բոլոր ուժերը պետք է կենտրոնացվեն դեպի կայուն տնտեսական աճ, կայուն զարգացման համատեքստի ներքո:

16.2. Լայնածավալ և տարբեր նախապատրաստական ընթացքներ միջազգային,տարածաշրջանային, ենթատարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակի իրենց լուման են դրել Գործողության Ծրագրի ձևավորման մեջ: Զգալի ինստիտուցիոնալ զարգացում է տեղի ունեցել շատ երկրներում, կառավարելու ազգային նախապատրաստական ընթացքը: Բնակչության խնդիրների մեծապես իրազեկվածությունը իրականացվել է հասարակական տեղեկատվության և ուսումնական քարոզարշավների միջոցով և պատրաստվել են ազգային զեկույցներ համաժողովի համար: Կոնֆերանսին մասնակցող երկրների ճնշող մեծամասնությունը ընդունում էին առաջարկությունը պատրաստելու համընդհանուր ազգաբնակչության զեկույցներ: Այդ զեկույցների փոխլրացումը մյուսներով, որոնք կազմվել են վերջին միջազգային համաժողովների կողմից և նախաձեռնությունները շրջակա միջավայրին, տնտեսական ու սոցիալական զարգացմանն առնչվող, շատ կարևոր են և խրախուսվում են: Նշանակալի կարևորություն է զգացվում մշակել համաժողովին հաջորդող գործողություններ:.

16.3. Կոնֆերանսին հաջորդող գործողություններին առնչվող հիմնական գործառույթները ներառում է քաղաքականության ուղեցույց, ներառյալ հզոր քաղաքական աջակցության մշակում բոլոր մակարդակներով բնակչության և զարգացման, ռեսուրսների մոբիլիզացման, Գործողության Ծրագրի իրականացման համար ուժերի համակարգում և փոխադարձ հաշվետարություն, խնդրի լուծում և փորձի փոխանակում երկրների ներսում և միջև և Գործողության Ծրագրի իրականացման հաջողության մոնիթորինգ և հաշվետվություն: Այս գործառույթներից յուրաքանչյուրը պահանջում է կենտրոնացված և համակարգված հաջորդող գործողություններ ազգային և միջազգային մակարդակներով և պետք է լիովին ներառեն համապատասխան անհատներին և կազմակերպություններին, ներառյալ հասարակական և համայնքային կազմակերպությունները: Գործողության Ծրագրի իրականացումը, վերահսկումը և գնահատումը բոլոր մակարդակներով պետք է իրականացվի համաձայն սկզբունքներին և հիմնախնդիրներին:

16.4. Գործողության Ծրագրի իրականացումը բոլոր մակարդակներով պետք է դիտվի որպես միջազգային համաժողովների, ներառյալ այս համաժողովը, Առողջություն բոլորի համար համաշխարհային համաժողովը, Կրթություն բոլորի համար համաշխարհային համաժողովը, Երեխաների համաշխարհային գագաթնաժողովը, Միավորված ազգերի թերզարգացած երկրների համաժողովը, Միավորված ազգերի շրջակա միջավայրի և զարգացման համաժողով, սննդի միջազգային համաժողով, մարդու իրավունքների համաշխարհային համաժողովը, Փոքր կղզու զարգացող երկրների կայուն զարգացման համաշխարհային համաժողովը, Սոցիալական զարգացման համաշխարհային գագաթնաժողովը, Կանանց համաշխարհային չորրորդ համաժողովը, և Միավորված

ազգերի մարդկային բնակավայրեր (Բնակավայր II) համաժողովը հաջորդող գործողություններին ինտեգրված մաս.

16.5. Գործողության Ծրագրի նպատակների, հիմնախնդիրների, և գործողությունների իրականացումը շատ առումներով պահանջում է լրացուցիչ միջոցներ:

Հիմնախնդիր

16.6. Հիմախնդիրն է խրախուսել և օժանդակել երկրներին լիովին և արդյունավետորեն իրականացնել Գործողության Ծրագիրը, համապատասխան քաղաքականությունների և ծրագրերի միջոցով, ազգային մակարդակով:

Գործողություններ

16.7. Իշխանությունները պետք է.

(ա) Իրենց վրա պարտավորություն վերցնեն բարձրագույն քաղաքական մակարդակով հասնել Գործողության Ծրագրում ներառված նպատակներին և հիմնախնդիրներին:

(բ) Առաջատար դեր խաղալ համակարգելու իրականացումը, վերահսկումը և հաջորդող գործողությունների գնահատումը:

16.8. Իշխանությունները, ՄԱԿ-ի կազմակեպությունները և խոշոր խմբեր, հատկապես հասարակական կազմակերպություններ, պետք է լայն հնարավորություն տան Գործողության Ծրագրի տարածման համար և պետք է որոնեն հասարակական աջակցություն Գործողության Ծրագրի նպատակների, հիմնախնդիրների և գործողությունների համար: Սա կարող է ներգրավել հանդիպմանը հաջորդող գործողություններ, հրապարակումներ, տեսալսողական օգնություն և տպագիր ու էլեկտրոնային լրատվամիջոցներ:

16.9. Բոլոր երկրները պետք է վերանայեն իրենց ընթացիկ ծախսերի առաջնահերթությունները, մտադրվելով կատարել լրացուցիչ ներդրումներ Գործողության Ծրագրի իրականացման համար, հաշվի առնելով գլուխ XIII-ի և գլուխ XIV-ի դրույթները և տնտեսական սահմանափակումները, որոնց բախվում են զարգացող երկրները:

16.10. Բոլոր երկրները պետք է հաստատեն համապատասխան ազգային հաջորդող գործողությունները, հաշվետարություն և վերահսկող մեխանիզմները համագործակցելով հասարակական կազմակերպությունների, համայնքային խմբերի և լրատվամիջոցների ներկայացուցիչների ու ակադեմիական համայնքի հետ, ինչպես նաև խորհրդարանականների աջակցությամբ:

16.11. Միջազգային համայնքը պետք է աջակցի շահագրգիռ իշխանություններին կազմակերպելու համապատասխան ազգային մակարդակի հաջորդող գործողություններին, ներառելով ազգային կարողությունների զարգացում՝ նախագծի ձևավորման և ծրագրի կառավարման համար, ինչպես նաև հզորացնել մեխանիզմների

համակարգումը ու գնահատումը Գործողության Ծրագրի իրականացման գնահատման համար:

16.12. Իշխանությունները, միջազգային համայնքի աջակցությամբ, հնարավորության սահմաններում արագ պետք է մշակեն կամ հզորացնեն ազգային տվյալների բազաներ, տրամադրելու բազիսային տվյալներ և տեղեկատվություն, որը կարելի է օգտագործել չափելու կամ գնահատելու հաջողությունը Գործողության Ծրագրի նվաճած նպատակների և հիմնախնդիրների միջոցով և այլ հարակից միջազգային փաստաթղթեր, պարտավորություններ և համաձայնագրեր:Հաջողության գնահատման նպատակով, բոլոր երկրները պետք է կանոնավորապես գնահատեն իրենց հաջողությունները Գործողության Ծրագրի նվաճած նպատակների և հիմնախնդիրների միջոցով և այլ հարակից պարտավորություններ և համաձայնագրեր և պարբերական կտրվածքով զեկույց, համագործակցելով հասարակական կազմակերպությունների և համայնքային խմբերի հետ:

16.13. Այս գնահատականների և զեկույցների նախապատրաստման մեջ, իշխանությունները պետք է ընդգծեն նվաճած հաջողությունը, ինչպես նաև հանդիպած խնդիրները և խոչընդոտները: Հնարավորության դեպքում, այս ազգային զեկույցները պետք է համադրվեն ազգային կայուն զարգացման նախագծերի հետ, որը երկրները կպատրաստեն Օրակարգ 21-ի իրականացման համատեքստում: Ջանքեր պետք է գործադրվեն նաև մշակելու համապատասխան համախմբված հաշվետվական համակարգ, հաշվի առնելով ՄԱԿ-ի բոլոր համաժողովները, որոնք ունեն ազգային հաշվետվության պահանջներ այդ ոլորտում:

Բ. Ենթատարածաշրջանային և տարածաշրջանային գործունեություններ

Գործունեության հիմք

16.14. Ձեռնարկված գործունեությունները ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով կարևոր ասպեկտ են համարվում համաժողովի նախապատրաստական աշխատանքներում: Ենթատարածաշրջանային և տարածաշրջանային բնակչության և զարգացման վերաբերյալ նախապատրաստական հանդիպման արդյունքը հստակորեն հանդես են բերել և միջազգային և ազգային գործունեությունների ճանաչման կարևորությունը, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային շարունակական ներդրումը:

Հիմնախնդիր

16.15. Հիմնախնդիրն է խթանելու Գործողության Ծրագրի իրականացմանը ենթատարածաշրջանային և տարածաշրջանային կտրվածքով, հատուկ ուշադրություն դարձնելով ենթատարածաշրջանի և տարածաշրջանին առանձնահատուկ ռազմավարություններին և պահանջներին:

Գործողություններ

16.16. Տարածաշրջանային հանձնաժողովները, տարածաշրջանային մակարդակում գործող ՄԱԿ-ի կառույցի կազմակերպությունները, և այլ ենթատարածաշրջանային և տարածաշրջանային կազմակերպությունները իրենց լիազորությունների շրջանակում պետք է ակտիվ դեր ունենան Գործողության Ծրագրի իրականացմանը ենթատարածաշրջանային և տարածաշրջանային նախաձեռնությունների միջոցով բնակչության և զարգացման առնչությամբ: Այսպիսի գործողություն պետք է համակարգվի ենթատարածաշրջանային և տարածաշրջանային կտրվածքով կազմակերպությունների շրջանում, ապահովելով էական և արդյունավետ գործողություն ընդգծելով բնակչության և զարգացման առնչվող հարցերը:

16.17. Ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներ;

(ա) Ենթատարածաշրջանի և տարածաշրջանի իշխանությունները, և համապատասխան կազմակերպությունները հրավիրվում են, հնարավորինս, ամրապնդելու գոյություն ունեցող հետևողական մեխանիզմները, ներառյալ հանդիպումները բնակչության և զարգացման վերաբերյալ շրջանային հռչակագրերի հաջորդող գործողությունների համար:

(բ) Բազմապլանային փորձագիտությունը պետք է, անհրաժեշտության դեպքում, օգտագործվի, խաղալով գլխավոր դեր Գործողության Ծրագրի իրականացման և հաջորդող գործողությունների մեջ:

(գ) Կարողությունների զարգացման ճգնաժամային տարածքներում համագործակցությունը, տեղեկատվության և փորձի փոխանակումը, հաջորդող գործողությունները և տեխնիկական փորձագիտությունը, պետք է ամրապնդվի միջազգային համայնքի համապատասխան աջակցությամբ, հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների և այլ խոշոր խմբերի հետ համագործակցության պահանջը Գործողության Ծրագրի իրականացման և հաջորդող գործողությունների մեջ տարածաշրջանային մակարդակներով:

(դ) Իշխանությունները պետք է ապահովեն, որ ամրապնդվեն բնակչության և զարգացման վերապատրաստումը և հետազոտությունը երրորդային մակարդակով, և որ հետազոտության արդյունքները և ներգործությունները լայնորեն տարածվեն:

Գ. Միջազգային մակարդակի գործողություններ

Գործունեության հիմք

16.18. Գործողության Ծրագրի հիմնախնդիրների և նպատակների իրականացումը կպահանջի նոր և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ պետական և մասնավոր հատվածից, հասարակական կազմակերպություններից և միջազգային համայնքից: Մինչդեռ պահանջվող ռեսուրսներից որոշը կարող են ստեղծվել առաջնահերթությունների վերադասավորությունից, կլինի լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտություն: Այս համատեքստում, զարգացող երկրները , հատկապես ամենաթեր զարգացած երկրները, կպահանջեն լրացուցիչ ռեսուրսներ, նշելով արտոնյալ և դրամաշնորհի պայմանները, համաձայն օբյեկտիվ գործոնների: Անցումային տնտեսությամբ երկրները կարող են նույնպես պահանջել ժամանակավոր աջակցություն, տնտեսական և սոցիալական

խնդիրների պարագայում, որոնց հետ այժմ բախվում են այս երկրները: Զարգացած երկրները և այդ անելու համապատասխան իրավասություններ ունեցողները, պետք է մտածեն անհրաժեշտության դեպքում տրամադրեն լրացուցիչ ռեսուրսներ, աջակցելու այս համաժողովի որոշումների կայացման համար երկկողմանի և բազմակողմանի ուղիներով, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով:

16.19. Հարավ-Հարավ համագործակցությունը բոլոր մակարդակներում զարգացման շատ կարևոր գործիք է: Սրանով պայմանավորված, այսպիսի համագործակցությունը, տեխնիկական համագործակցությունը զարգացող երկրներում, պետք է կարևոր դեր ունենա այս Գործողության Ծրագրի իրականացման մեջ:

Հիմնախնդիրներ

16.20 Հիմնախնդիրներն են.

(ա) Ապահովել լիովին և շարունակական աջակցություն ներառյալ ֆինասական և տեխնիկական աջակցությունը միջազգային համայնքից ներառյալ ՄԱԿ-ի կառույցը, բոլոր ուժերի համար ուղղված այս Գործողության Ծրագրի իրականացմանը, բոլոր մակարդակներում:

(բ) Ապահովել համակարգված մոտեցում և աշխատանքի ավելի հստակ բաժանում բնակչությանն առնչվող քաղաքականության և զարգացման համագործակցության գործառնական ասպեկտների մեջ: Սա պետք է լրացվի ռեսուրսների մոբիլիզացիայի ընդլայնված համակարգմամբ և մշակմամբ:

(գ) Ապահովել, որ բնակչության և զարգացման հարցերը համապատասխանաբար կենտրոնացվեն և ինտեգրվեն ՄԱԿ-ի կառույցների համապատասխան մարմինների աշխատանքի մեջ:

Գործողություններ

16.21. Գլխավոր Ասամբլեան ամենաբարձր միջկառավարական մեխանիզմն է քաղաքականության ձևավորման և գնահատման համար այս համաժողովին հաջորդող գործողությունների առնչությամբ: Ապահովելու համաժողովին հաջորդող արդյունավետ գործողություններ, ինչպես նաև ապահովել միջկառավարական որոշում կայացնող կարողություն բնակչության և զարգացման հարցերի ինտեգրման համար, Գլխավոր Ասամբլեան պետք է կազմակերպի այս Գործողության Ծրագրի իրականացման կանոնավոր վերանայում: Այս առաջադրանքը իրականացնելով, Ասամբլեան պետք է մտածի ժամանակայնության, ձևաչափի և այս վերանայման կազմակերպչական ասպեկտի վերաբերյալ:

16.22. Գլխավոր Ասամբլեան և տնտեսական ու սոցիալական խորհուրդը պետք է կատարեն համապատասխան պարտավորությունները, ինչպես հանձնարարված է նրանց ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, քաղաքականությունների ձևակերպման և ուղեցույցի

դրույթներում համապատասխան ՄԱԿ-ի գործողությունների բնակչության և զարգացման ոլորտում:

16.23. Տնտեսական ու սոցիալական խորհուրդը, համաձայն կանոնադրության մեջ իր դերի համատեքստում, Գլխավոր Ասամբլեայի առնչությամբ և Ասամբլեայի 45/264, 46/235 և 48/162 բանաձևերին համապատասխան պետք է աջակցի Գլխավոր Ասամբլեային, ձեռնարկելու ինտեգրված մոտեցում և տրամադրելու լայնածավալ համակարգում և ուղենշում Գործողության Ծրագրի իրականացման վերահսկման մեջ, այս առընչությամբ հանձնարարականներ տալով: Համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն հայցելու կանոնավոր զեկույցներ մասնագիտացված գործակալություններից նրանց նախագծերի և ծրագրերի առնչությամբ Գործողության Ծրագրի իրականացման հետ կապված, համապատասխանելով Կանոնադրության 64-րդ հոդվածին:

16.24. Տնտեսական ու սոցիալական խորհուրդը հրավիրվում է վերանայելու հաշվետվության համակարգը ՄԱԿ-ի Կառույցի ներքո բնակչության և զարգացման հարցերի առնչությամբ, հաշվի առնելով հաշվետվության ընթացակարգերը, որ պահանջվում են միջազգային համաժողովներին հաջորդող գործողություններ, ստեղծելով հնարավորությաո սահմաններում, ավելի համընդհանուր հաշվետվության համակարգ:

16.25.Համապատասխան լիազորությունները (մանդատ), ներքո և Ասամբլեայի 48/162 բանաձևին համապատասխան, Ասամբլեան իր 49-րդ նիստի ընթացքում, Տնտեսական ու սոցիալական խորհուրդը 1995 թ., պետք է վերանայի դերերը, պարտավորությունները, լիազորությունները, երկուսի և միջկառավարական ու ՄԱԿ-ի Կառույցի մարմինների համադրելի առավելությունները, մատնանշելով բնակչության և զարգացման ոլորտը, հետևյալ նպատակով:

(ա) Ապահովելով ՄԱԿ-ի գործառնական գործունեությունների արդյունավետ և էական իրականացում, վերահսկում և գնահատում, որը կիրականացվի համաձայն այս Գործողության Ծրագրի:

(բ) Նպաստելով ՄԱԿ-ի ընթացիկ կառուցվածքի և մեխանիզմի արտադրողականությանը և արդյունավետությանը, պատասխանատու լինելով բնակչության և զարգացման գործունեությունների իրականացմանը և վերահսկմանը, ներառյալ համակարգման և միջկառավարական վերանայման համար նախատեսված ռազմավարությունները:

(գ) Ապահովելով քաղաքականության ցուցումների, հետազոտության, չափորոշիչների հաստատման և գործառնական գործունեությունների միջև փոխհարաբերությունների հստակ ճանաչումը բնակչության և զարգացման ոլորտում, ինչպես նաև հետաքրքրված մարմինների միջև աշխատանքի բաժանում:

16.26. Որպես այս վերանայման մի մաս, Տնտեսական ու սոցիալական խորհուրդը Գլխավոր Ասամբլեայի 48/162 բանաձևի համատեքստում, ՄԱԿ-ի բնակչության և զարգացման հարցերով զբաղվող մարմինների համար համապատասխան դերեր է ենթադրում, ներառյալ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՄԱԿ-ի քարտուղարության տնտեսական և սոցիալական տեղեկատվության և քաղաքականության վերլուծության

վարչության բնակչության բաժինը, կապված Գործողության Ծրագրի հաջորդող գործողությունների հետ:

16.27. Գլխավոր Ասամբլեան իր 49-րդ նիստի ընթացքում, 48/162 բանաձևին համապատասխան, պետք է իր հետագա դատողությունները ներկայացնի ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր կոմիտեի առանձին ստեղծման վերաբերյալ, հաշվի առնելով վերոնշյալ վերանայման արդյունքները և նմանօրինակ առաջարկի վարչական, բյուջետային և ծրագրային կիրառությունները:

16.28. ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարը պետք է խորհրդակցի ՄԱԿ-ի տարբեր մարմինների հետ, ինչպես նաև միջազգային ֆինանսական հաստատությունների և տարբեր երկկողմանի օգնության կազմակերպությունների և գործակալությունների հետ, խթանելով նրանց միջև տեղեկատվության փոխանակմանը համաձայն միջազգային աջակցության համար պահանջների, և կանոնավոր կերպով վերանայի բնակչության և զարգացման ոլորտում հատուկ կարիքներ ունեցող երկրները, ներառյալ անհրաժեշտ և ժամանակավոր կարիքները, և առավելագույնի հասցնել ռեսուրսների առկայությունը և նրանց ամենաարդյունավետ օգտագործումը:

16.29. ՄԱԿ-ի կառույցի բոլոր մասնագիտացված գործակալությունները և առընչվող կազմակերպությունները հրավիրվում են հզորացնելու և կարգավորելու նրանց գործունեությունները, ծրագրերը և միջնաժամկետ ռազմավարությունները, ինչպես հարկն է, հաշվի առնելով համաժողովին հաջորդող գործողությունը: Համապատասխան կառավարող մարմինները պետք է վերանայեն իրենց քաղաքականությունները, ծրագրերը, բյուջեները և գործունեությունները:

*Վատիկանի Սուրբ Եպիսկոպոսությունն արտահայտել է ընդհանուր վերապահում այս գլխի առընչությամբ: Վերապահումը կթարգմանվի 14-րդ լիագումար նիստի ժամանակ, 13 սեպտեմբերի, 1994թ. Սուրբ Եպիսկոպոսության ներկայացուցչի կողմից նշված պայմաններով:

Գլուխ II

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորև բերված գրավոր հայտարարությունները ներկայացվել էին կոնֆերասնի քարտուղարություն, որպեսզի դրանք ներառվեն համաժողովի զեկույցում:

Արգենտինայի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Հետևելով համաժողովի ընթացակարգի կանոնների 33-րդ կանոնին (A/CONF.171/2), Արգենտինայի Հանրապետությունը միանում է գործողությունների վերաբերյալ հիմնական համաձայնությանը:

Այնուամենայնիվ, մենք ներկայացնում ենք հետևյալ գրավոր վերապահումը՝ հետևելով 38-րդ կանոնին և մենք պահանջում ենք, որպեսզի այն ամբողջությամբ ներառվի համաժողովի վերջնական զեկույցում:

Գլուխ II (Սկզբունքներ)

Սկզբունք I

Արգենտինայի Հանրապետությունն ընդունում է առաջին սկզբունքը, որը վերաբերվում է այն հասկացությանը, որ կյանքը գոյություն ունի սկսած բեղմնավորումից և այդ պահից ի վեր յուրաքանչյուր անձ՝ լինելով յուրահատուկ և անկրկնելի, վայելում է ապրելու իրավունքը, որն իր հերթին մնացած բոլոր իրավունքների սկզբնաղբյուրն է:

Գլուխ V (Ընտանիքը, դրա դերը, իրավունքները, կազմը և կառուցվածքը)

Պարբերություն 5.1

Արգենտինայի Հանրապետությունն ընդունում է պարբերություն 5.1-ը, չնայած ընտանիքը կարող է գոյություն ունենալ տարբեր ձևերով և ոչ մի դեպքում դրա հիմքը և ծագումը չի կարող փոխվել, այսինքն, տղամարդու և կնոջ միջև միությունը, որի արդյունքում ծնվում են երեխաներ:

Գլուխ VII (Վերարտադրողական իրավունքներ և վերարտադրողական առողջություն)

Պարբերություն 7.2

Արգենտինայի Հանրապետությունը չի ընդունում հղիության արհեստական ընդհատման ներառումը "վերարտադրողական առողջություն" գաղափարում և որպես ծառայություն և որպես ծնելիությունը կարգավորող մեթոդ:

Այս վերապահումը նույնպես վերաբերվում է այս գաղափարի բոլոր համանման հղումներին՝ ապրելու իրավունքի համաշխարհային բնույթից ելնելով:

Ջիբութիի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Ջիբութիի Հանրապետության պատվիրակությունը պատիվ ունի տեղեկացնելու Ձեզ առ այն, որ մենք ցանկանում ենք արտահայտել մեր վերապահումները բնակչության և զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագրի բոլոր պարբերությունների վերաբերյալ, որոնք հակասում են Իսլամի սկզբունքներին և Ջիբութիի Հանրապետության օրենսդրությանը, օրենքներին և մշակութային նորմերին:

Ջիբութիի Հանրապետության պատվիրակությունը ցանկանում է, որպեսզի բոլոր վերապահումները արտացոլվեն համաժողովի վերջնական զեկույցում:

Դոմինիկյան Հանրապետության ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Կոնֆերանսի (A/CONF.171/2) ընթացակարգի 33-րդ կանոնին հետևելով Դոմինիկյան Հանրապետությունը միանում է գործողությունների ծրագրի հիմնական համաձայնագրին: Այնուամենայնիվ, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան և որպես Մարդու Իրավունքների Ամերիկյան Կոնվենցիայի անդամ, լիովին հաստատում ենք և հավատում ենք այն պնդմանը, որ յուրաքանչյուր անձ ունի ապրելու հիմնարար և անքակտելի իրավունք և որ այդ իրավունքը սկսվում է բեղմնավորման պահից:

Համապատասխանաբար, մենք ընդունում ենք հետևյալ արտահայտությունները. “վերարտադրողական առողջություն”, “սեռական առողջություն”, “անվտանգ մայրություն”, “վերարտադրողական իրավունքներ”, “սեռական իրավունքներ” և “ծնելիության կարգավորում”, սակայն հայտնում ենք մեր վերապահումները, եթե այս արտահայտությունների կամ այլ արտահայտությունների բովանդակությունը վերաբերվի հղիության արհեստական ընդհատման գաղափարին:

Մենք նույնպես վերապահումներ ունենք “զույգ” արտահայտության վերաբերյալ, երբ այն վերաբերվում է միևնույն սեռի անձանց կամ երբ անհատի վերարտադրողական իրավունքների մասին է խոսվում ամուսնության կամ ընտանիքից դուրս համատեքստում:

Վերոնշյալ վերապահումները նույնպես վերաբերվում են բոլոր այն տարածաշրջանային կամ միջազգային համաձայնագրերին, որոնց մեջ խոսվում է այս գաղափարների մասին:

Գլուխներ V և X

Դոմինիկյան Հանրապետության Կառավարությունը ցանկանում է արձանագրել, որ ողջ համաժողովի ընթացքում և մասնավորապես գլուխներ V և X-ի վերաբերյալ շատ դժվար էր համաձայնության գալ, քանի որ նկատվում էր միջազգային գործիքների սակավություն, որոնք ներկայացնում էին ընտանիքի ամբողջականության իրավունքը:

Մենք քաջ գիտակցում ենք, որ խրախուսելով ընտանիքի միությունը և ամբողջականությունը, որպես բնական զարգացման համակարգ, մենք հաստատում ենք մեր համայնքների ամբողջական և կայուն զարգացումը: Այդ իսկ պատճառով մենք առաջարկում ենք, որպեսզի ընտանիքի ամբողջականության այդ իրավունքը հաշվի առնվի Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից և այն ընդունվի որքան հնարավոր է սեղմ ժամկետներում:

Հետամուտ լինելով ընթացակարգի 38-րդ կանոնին մենք պահանջում ենք, որ այն վերապահումների ամբողջական արձանագրությունն ընդգրկվի համաժողովի վերջնական զեկույցում:

Էկվադորի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Հետամուտ լինելով համաժողովի (A/CONF.171/2) ընթացակարգի 33-րդ կանոնին Էկվադորի Կառավարությունը միանում է Գործողությունների ծրագրի հիմնական համաձայնագրին:

Այնուամենայնիվ, հետամուտ լինելով ընթացակարգի 38-րդ կանոնին, մենք արտահայտում ենք հետևյալ վերապահումները, որոնք պետք է ներառվեն համաժողովի վերջնական զեկույցում:

Վերապահում

Կահիրեում կայացած բնակչության և զարգացման վերաբերյալ միջազգային համաժողովի ուղղությամբ և համաձայն Էկվադորի սահմանադրության, օրենքների և միջազգային օրենքի նորմերի, Էկվադորի պատվիրակությունը վերահաստատում է սահմանադրությամբ նախատեսված հետևյալ սկզբունքները. կյանքի անձեռնմխելիությունը, երեխաների պաշտպանություն բեղմնավորման պահից սկսած, գիտակցության և կրոնի ազատություն, ընտանիքի, որպես հասարակության հիմնարար տարրի պաշտպանություն, պատասխանատու հայրություն և մայրություն, երեխաներ դաստիարակելու ծնողների իրավունքը և Կառավարության կողմից բնակչության և զարգացմանն ուղղված նախագծերի ձևավորում, որոնք համապատասխանում են ինքնավարության սկզբունքներին:

Համապատասխանաբար, Էկվադորի պատվիրակությունը վերապահումներ ունի բոլոր այն արտահայտությունների վերաբերյալ, որոնք վերաբերվում են "ծնելիության կարգավորմանը", "հղիության արհեստական ընդհատմանը", "վերարտադրողական առողջությանը", "վերարտադրողական իրավունքներին" և "անցանկալի երեխաներին", որոնք այս կամ այն կերպ կարող են ներառել հղիության արհեստական ընդհատում գործողությունների ծրագրի համատեքստում:

Էկվադորի պատվիրակությունը վերապահումներ ունի ընտանիքին վերաբերող որոշակի անբնական գաղափարների վերաբերյալ, որոնք թերի են դարձնում սահմանադրությամբ ամրագրված սկզբունքները:

Էկվադորի կառավարությունը ցանկանում է համագործակցել բոլոր այն ասպարեզներում, որոնք ուղղված են հասնելու ընդհանուր բարեկեցության, չնայած այն չի կարող և չի ընդունի այն սկզբունքները, որոնք կխախտեն երկրի ինքնավարությունը, սահմանադրությունը և օրենքները:

Եգիպտոսի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Մենք ցանկանում ենք մատնանշել, որ Եգիպտոսի պատվիրակությունը մեծաթիվ դիտողություններ է արել գործողությունների ծրագրի բովանդակության և "զույգեր և անհատներ" արտահայտության վերաբերյալ:

Մինչդեռ գիտակցելով, որ այս արտահայտությունը համաձայնեցված ընդունվել է նախորդ երկու համաժողովների ընթացքում՝ 1974 և 1984թթ-ին, մեր երկրի պատվիրակությունը ցանկանում է ջնջել "անհատներ" արտահայտությունը, քանի որ մենք միշտ կարծել ենք, որ գործողությունների ծրագրում արծարծվող բոլոր հարցերը վերաբերվում են զույգերի ներդաշնակ հարաբերություններին, ովքեր միմյանց հետ կապված են ամուսնությամբ՝ ընտանիքը որպես հասարակության հիմանական բջիջ համատեքստում:

Մենք ցանկանում ենք, որպեսզի համաժողովի վերջնական զեկույցը արտահայտի վերոնշյալ դիրքորոշումները:

Գվատեմալայի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Գվատեմալայի պատվիրակությունն իր խորին շնորհակալությունն է հայտնում Եգիպտոսի ժողովրդին և իշխանություններին, ինչպես նաև համաժողովի կազմակերպիչներին նրանց հյուրընկալության և մատուցած ծառայությունների համար: Նրանց շնորհիվ հնարավորություն ընձեռնվեց մտորել կյանքի և մարդասիրության հետագա զարգացումների մասին, որոնց շնորհիվ հուսով ենք կզարգացնենք կյանքի նկատմամբ հարգանքը, ինչպես նաև կանանց, տղամարդկանց և հատկապես նոր սերնդի արժանապատվությունը: Այդ ամենին հնարավոր կլինի հասնել մեր հավատքի միջոցով, որպեսզի ունենանք համերաշխ, արդար և հավատքով ապագա:

Հետամուտ լինելով համաժողովի (A/CONF.171/2) ընթացակարգի 33-րդ կանոնին Գվատեմալայի կառավարությունը միանում է գործողությունների ծրագրի հիմնական համաձայնագրին:

Այնուամենայնիվ, հետամուտ լինելով ընթացակարգի 38-րդ կանոնին մենք արտահայտում ենք հետևյալ վերապահումները, որոնք պետք է ներառվեն համաժողովի վերջնական զեկույցում:

Գվատեմալայի կառավարությունը արտահայտում է իր վերապահումները այն արտահայտությունների, տերմինների կամ դիրքորոշումների վերաբերյալ, որոնք այս կամ այն կերպ հակասում են ստորև բերվածին.

1. Տղամարդու իրավունքների և պարտականությունների վերաբերյալ Ամերիկյան Հռչակագիր;
2. Մարդու իրավունքների Ամերիկյան Կոնվենցիա (Սան Ժոզեի Պակտ);
3. Կենտրոնական Ամերիկայի Նախագահների 15-րդ հանդիպման ժամանակ ընդունված ուղեցույցները;
4. Գվատեմալայի Հանրապետության Սահմանադրությունը;
5. Քաղաքացիական, քրեական և մարդու իրավունքների օրենսդրություն;
6. Գվատեմալայի կրթության նախարարության կողմից հրատարակված բնակչության կրթության բազմասեկտորային համաձայնագիրը և դասավանդման մեթոդները նմանատիպ կրթական համակարգում;
7. Երկրի նախագահի՝ Ռամիրո դե Լեոն Կապրիոյի ելույթի խոսքը համաժողովի ժամանակ: Մենք ցանկանում ենք ներկայացնել մեր վերապահումները հետևյալի վերաբերյալ:

ա/ Գլուխ II (Սկզբունքներ). մենք ընդունում ենք այս գլուխը, բայց նշելով, որ կյանքը գոյություն ունի բեղմնավորման պահից և ապրելու այդ իրավունքը բոլոր այլ իրավունքների սկզբնաղբյուրն է:

բ/ Գլուխ V, պարբերություն 5.1. մենք ընդունում ենք այս դիրքորոշումն առ այն, որ չնայած ընտանիքը կարող է գոյություն ունենալ տարբեր ձևերով, ոչ մի դեպքում չի

կարող փոփոխվել դրա հիմնական կարևոր իմաստը, որը ենթադրում է կնոջ և տղամարդու միությունը՝ սիրո վրա հիմնված:

գ/ Գլուխ VII. մենք վերապահումներ ունենք ամբողջ գլխի վերաբերյալ, գլխավոր ասամբլեայի համաժողովի մանդատը չի շարունակում իրավունքների ստեղծումը կամ ձևավորումը: Այդ իսկ պատճառով սույն վերապահումը վերաբերվում է փաստաթղթում տեղ գտած բոլոր այն հղումներին, որոնք վերաբերվում են "վերարտադրողական իրավունքներին", "սեռական իրավունքներին", "վերարտադրողական առողջությանը", "ծնելիության կարգավորմանը", "սեռական առողջությանը", "անհատներին", "փոքրամասնությունների համար նախատեսված սեռական կրթությանը և ծառայություններին", "հղիության արհեստական ընդհատման բոլոր ձևերին", "հակաբեղմնավորման մեթոդների տարածմանը" և "անվտանգ մայրությանը":

դ/ Գլուխ VIII. բոլոր այն պարբերություններին կամ նախադասություններին, որոնք վերաբերվում կամ պարունակում են վերոնշյալ արտահայտություններն ու դիրքորոշումները:

ե/ Գլուխներ IX, XII, XIII և XV նշված բոլոր արտահայտություններին և դիրքորոշումներին:

Սուրբ Եպիսկոպոսության ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Մեր համաժողովին մասնակցեցին տարբեր ավանդույթներ, մշակույթ և չափազանց տարբեր տեսակետներ ունեցող մարդիկ: Կոնֆերանսի աշխատանքները տեղի ունեցան խաղաղ և հարգալից մթնոլորտում: Վատիկանի սուրբ եպիսկոպոսությունը ողջունում է այս օրերին գրանցված առաջընթացը, սակայն կարծում ենք որոշակի սպասումներ չիրականացան: Ես վստահ եմ, որ պատվիրակություններից շատերը կիսում են նույն մտահոգությունները:

Մենք քաջ գիտակցում ենք, որ մեր որոշ դիրքորոշումներ չեն ընդունվում այստեղ ներկա շատերի կողմից: Սակայն, աշխարհի բոլոր երկրներում գոյություն ունեն շատ հավատացյալներ և հավատք չունեցողներ, ովքեր կիսում են մեր կողմից արտահայտված կարծիքները: Սուրբ Եպիսկոպոսությունը ողջունում է այն ճանապարհը, թե ինչպես պատվիրակությունները լսեցին և հաշվի առան այն տեսակետները, որոնց հետ նրանք ոչ միշտ էին համաձայն: Սույն համաժողովն ավելի աղքատիկ կլիներ, եթե այդ կարծիքներն ու տեսակետները չլսվեին և հաշվի չառնվեին: Միջազգային համաժողովը, որը չի ողջունում տարբեր արձագանքները, չի կարող համարվել փոխզիջող բնույթ ունեցող համաժողով:

Ինչպես ձեզ բոլորիդ քաջ հայտնի է Սուրբ Եպիսկոպոսությունը չկարողացավ փոխզիջման ճանապարհներ գտնել Բուխարեստում և Մեխիկոյում կայացած համաժողովների ընթացքում որոշակի հիմնարար վերապահումների պատճառով: Այնուամենայնիվ, ներկայումս Կահիրեում, առաջին անգամ, զարգացումը կապվեց բնակչության հետ, որը և հանդիսացավ քննարկման հիմնական առարկան: Ներկայիս գործողությունների ծրագիրը, այնուամենայնիվ, նոր հորիզոններ բացահայտեց բնակչության ոլորտում հետագա քաղաքականությունների ուղղությամբ: Սույն փաստաթուղթը ուշագրավ է, քանի որ այն

միանշանակ դեմ է բնակչության քաղաքականություններում բռնության որևէ արտահայտությանը: Մշակված հստակ և պարզ սկզբունքները՝ հիմնվելով միջազգային հանրության ամենագլխավոր փաստաթղթի վրա, պարզաբանում և լուսաբանում են հետագա գլուխները: Սույն փաստաթուղթը ճանաչում և պաշտպանում է ամուսնության վրա հիմնված ընտանիքը որպես հասարակության հիմնական միավորի: Այստեղ շեշտադրվում է կնոջ առաջխաղացումը և կնոջ դերի հզորացումը կրթության և ավելի որակյալ առողջապահական ծառայությունների միջոցով: Միգրացիոն գործընթացները, որոնք առավել հաճախ են անտեսվում բնակչության քաղաքականություններում, նույնպես ուսումնասիրվել է: Սույն համաժողովի ընթացքում հստակ լուսաբանվեցին կանանց առողջության սպառնալիքներին առնչվող հարցերը, որոնք մտահոգում էին միջազգային ողջ հանրությանը: Խնդրվեց ավելի մեծ հարգանքով վերաբերվել անձերի և համայնքների կրոնական և մշակութային համոզմունքներին:

Սակայն սույն փաստաթղթի մեկ այլ ասպեկտի հետ Սուրբ Եպիսկոպոսությունը չի կարող համաձայնվել և օժանդակել: Ամբողջ աշխարհի մեծաթիվ մարդկանց հետ միասին Սուրբ Եպիսկոպոսությունը հաստատում է, որ կյանքը սկսվում է բեղմնավորման պահից: Կյանքը պետք է պահպանել և պաշտպանել: Այդ իսկ պատճառով Սուրբ Եպիսկոպոսությունը երբեք չի կարող հղիության արհեստական ընդհատումը կամ դրա օգտին որևէ քաղաքականություն: Վերջնական փաստաթուղթը՝ ի տարբերություն Բուխարեստում և Մեխիկոյում կայացած համաժողովների նախորդ փաստաթղթերի, ճանաչում է հղիության արհեստական ընդհատումը որպես բնակչության քաղաքականության և առաջնային բուժօգնության մի ուղղություն, չնայած այն շեշտում է, որ հղիության արհեստական ընդհատումը չպետք է խրախուսվի որպես ընտանիքի պլանավորման միջոց և դիմում է ազգերին գտնելու հղիության արհեստական ընդհատմանը փոխարինող տարբերակ: Վերոնշյալը վկայում է, որ սույն փաստաթուղթը չի հաստատում հղիության արհեստական ընդհատման նոր, միջազգայնորեն ճանաչված իրավունքը:

Մեր պատվիրակությունը ներկայումս հնարավորություն ունեցավ ուսումնասիրելու և գնահատելու սույն փաստաթուղթն ամբողջությամբ: Այս կապակցությամբ Սուրբ Եպիսկոպոսությունը ինչ-որ չափով միանում է սույն համաձայնագրին, նույնիսկ եթե այն անավարտ է կամ մասնակի:

Նախ և առաջ մեր պատվիրակությունն իր համաձայնությունն է տալիս սկզբունքներին (Գլուխ II) ի նշան մեր համերաշխությանը հիմնական ոգեշնչումներին, որոնք ուղղորդում և կշարունակեն ուղղորդել մեր աշխատանքը: Համանման կերպով մենք համաձայն ենք ընտանիքի, որպես հասարակության հիմնական միավորի, վերաբերյալ Գլուխ V-ին:

Սուրբ Եպիսկոպոսությունն իր համաձայնությունն է տալիս Գլուխ III-ին, որը վերաբերվում է բնակչության հարցերին, կայուն տնտեսական աճին և կայուն զարգացմանը, չնայած մենք կցանկայինք, որ այս հարցն ավելի մանրամասն քննարկվեր: Սուրբ Եպիսկոպոսությունը իր համաձայնությունն է տալիս Գլուխ IV-ին (գենդերային հավասարություն, արդարություն և կանանց դերի հզորացում) և գլուխներ IX-ին և X-ին, որոնք վերաբերվում են միգրացիոն գործընթացներին և հարցերին:

Սուրբ Եպիսկոպոսությունը հատուկ բնույթ ունենալով չի կարող տալ իր համաձայնությունը սույն փաստաթղթի գործող գլուխներին (գլուխներ XII և XVI):

Ամբողջ կոմիտեի կողմից գլուխներ VII-ի և VIII-ի հաստատումից հետո հնարավոր դարձավ գնահատել այդ գլուխների կարևորությունը ամբողջ փաստաթղթի համատեքստում, ինչպես նաև առողջապահական համակարգի քաղաքականության շրջանակում: Այս օրերի բանակցությունների արդյունքում ստացվեց բոլորի կողմից հավանության արժանացած մի փաստաթուղթ, որի վերաբերյալ, սակայն, Սուրբ Եպիսկոպոսությունն ունի բավականին լուրջ և ծանրակշիռ վերապահումներ: Մինչդեռ, երբ հիմնական կոմիտեն տալիս էր իր համաձայնությունը, մեր պատվիրակությունն արդեն իսկ վերապահումներ էր արտահայտել հղիության արհեստական ընդհատման հարցի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, սույն փաստաթղթի գլուխները պարունակում են այնպիսի հղումներ, որոնք ենթադրում են արտամուսնական սեռական ակտիվության ընդունումը, հատկապես դեռահասների շրջանում: Դրանք կարծես թե հռչակում են, որ հղիության արհեստական ընդհատումների ծառայություններն առողջության առաջնային պահպանման շրջանակում դասվում են որպես ընտրության մեթոդ:

Չնայած գլուխներ VII-ը և VIII-ը պարունակում են շատ դրական կողմեր, մեզ ներկայացված տեքստն ավելի լայն կիրառում ունի, որն էլ դրդեց Սուրբ Եպիսկոպոսությանը կայացնել որոշում և չհամաձայնվել այս գլուխների հետ: Վերոնշյալը չի բացառում այն փաստը, որ Սուրբ Եպիսկոպոսությունն աջակցում է վերարտադրողական առողջության գաղափարին, որպես գլոբալ գաղափար, որը խրախուսում է կանանց և տղամարդկանց առողջությունը և մյուսների հետ զուգահեռ կշարունակի աշխատել հասնելու այս և շատ ուրիշ հասկացությունների ավելի հստակ սահմանման զարգացմանը:

Այդ իսկ պատճառով, մեր պատվիրակության նպատակն է մասնակի միանալ այս համաձայնությանը՝ ունենալով իր սեփական դիրքորոշումը և վերապահումները որոշ հատվածների վերաբերյալ, չխանգարել այլ երկրների համաձայնությանը:

Այս համաձայնության գործընթացում Սուրբ Եպիսկոպոսության և ոչ մի գործողություն չպետք է դիտվի կամ բացատրվի որպես այնպիսի գաղափարների խրախուսում, որոնք չեն կարող ընդունվել բարոյական պատճառներով: Հատկապես, ոչ մի դեպքում չպետք է հասկանալ, որ Սուրբ Եպիսկոպոսությունն ընդունում է հղիության արհեստական ընդհատումը կամ որևէ կերպ փոխել է իր բարոյական դիրքորոշումը հղիության արհեստական ընդհատումների, հակաբեղմնավորման մեթոդների, կնոջ և տղամարդու ստերիլացման/ամլացման կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերում պահպանակների օգտագործման վերաբերյալ:

Ես խնդրում եմ, որ այս հայտարարության տեքստը և ստորև բերվող վերապահումները ներառվեն համաժողովի վերջնական զեկույցում:

Վերապահումներ

Համաձայն իր բնույթի և առաքելության առանձնահատկությունների, համաձայնություն տալով բնակչության և զարգացման միջազգային համաժողովի (Կահիրե, սեպտեմբերի 5-13, 1994թ.) վերջնական փաստաթղթի բոլոր մասերին՝ Սուրբ Եպիսկոպոսությունն իր ըմբռնումն է արտահայտում սույն համաժողովի գործողությունների ծրագրին:

“Սեռական առողջություն”, “սեռական իրավունքներ”, “վերարտադրողական առողջություն” և “վերարտադրողական իրավունքներ” տերմինները Սուրբ Եպիսկոպոսությունը ենթադրում է որպես առողջապահական համապարփակ գաղափար, որոնք դիտարկում են անձն իր անհատականության, մտքի և մարմնի ամբողջականության մեջ՝ խրախուսելով սեռական հարցերի և փոխադարձ սիրո ու որոշում կայացնելու վերաբերյալ մարդու հասունացումը, որը բնութագրական է ամուսնական փոխհարաբերություններին բարոյական նորմերի շրջանակում: Սուրբ Եպիսկոպոսությունը չի դիտարկում հղիության արհեստական ընդհատումը կամ դրա հասանելիությունն այս տերմինների շրջանակում:

Ինչ վերաբերվում է սույն փաստաթղթում տեղ գտած “հակաբեղմնավորման մեթոդներ”, “ընտանիքի պլանավորում”, “սեռական և վերարտադրողական առողջություն”, “սեռական և վերարտադրողական իրավունքներ”, “կնոջ կարողությունը վերահսկել ծնելիությունը”, “ընտանիքի պլանավորման ծառայությունների լայն շրջանակ” և ընտանիքի պլանավորման ծառայությունների ու ծնելիության կարգավորման վերաբերյալ շատ ու շատ այլ արտահայտություններին, Սուրբ Եպիսկոպոսության համաձայնանությունը ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվի որպես ընտանիքի պլանավորման այդ մեթոդների վերաբերյալ իր հայտնի դիրքորոշման փոփոխության, այն է՝ Կաթոլիկ Եկեղեցին դրանք բարոյապես անընդունելի է համարում, ինչպես նաև ընտանիքի պլանավորման այն ծառայությունները, որոնց չեն հարգում ամուսնական զույգերի ազատությունը, մարդու արժանապատվությունը և իրավունքները:

Միջազգային բոլոր համաձայնագրերի վերաբերյալ Սուրբ Եպիսկոպոսությունն իր վերապահ դիրքորոշումն ունի, մասնավորապես, սույն գործողությունների ծրագրում գոյություն ունեցող բոլոր այն համաձայնագրերի վերաբերյալ, որոնք առնչվում են դրանց ընդունման կամ չընդունման հետ:

“Զույգեր և անհատներ” արտահայտության վերաբերյալ Սուրբ Եպիսկոպոսությունն իր իր վերապահ դիրքորոշումն է հայտնում՝ հասկանալով, որ այս արտահայտությունը պետք է վերաբերվի ամուսնական զույգերին և այն անհատ կանանց և տղամարդկանց, որոնք իրենց ամուսնական զույգ են հռչակում: Այնուամենայնիվ, տերմինների օգտագործման համատեքստում սույն փաստաթուղթն ունի սեռականության ընկալման անհատական մոտեցում, որը բավարար ուշադրություն չի դարձնում փոխադարձ սիրուն և որոշումներ կայացնելուն, որն իր հերթին բնութագրական է ամուսնական փոխհարաբերություններին:

Գլուխ V-ի կապակցությամբ Սուրբ Եպիսկոպոսությունն այն բացատրում է 9-րդ սկզբունքի համատեքստում, այն է՝ ընտանիքի, որպես հասարակության հիմնական միավորի, և ամուսնության, որպես ամուսնու ու կնոջ միջև հավասար փոխհարաբերությունների ամրապնդման տեսանկյունից:

Սուրբ Եպիսկոպոսությունն իր հիմնական վերապահումներն է արտահայտում գլուխներ VII-ի, VIII-ի, XI-ի, XII-ի, XIII-ի, XIV-ի, XV-ի և XVI-ի վերաբերյալ: Այս վերապահումը պետք է բացատրվի 1994թ. սեպտեմբերի 13-ի համաժողովի պլենար հանդիպման ընթացքում պատվիրակության կողմից հնչեցրած հայտարարության համատեքստում: Մենք պահանջում ենք, որպեսզի այս հիմնական վերապահումը նշվի վերոնշյալ յուրաքանչյուր գլխում:

Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Գործողությունների ծրագիրն իր մեջ պարունակում է որոշակի դրական տարրեր, սակայն զարգացման կարողությունների կենտրոնացման գործընթացում այն հաշվի չի առնում կրոնը և կրոնական համակարգերը: Մեր համար բավական է միայն իմանալ, որ օրինակ՝ Իսլամի համաձայն յուրաքանչյուր մուսուլման պարտավոր է բավարարել համայնքի կենսական կարիքները և պետք է լավագույն կերպով իր շնորհակալությունը հայտնի դրանցից օգտվելու համար, ինչպես նաև պետք է արդարացի և հավասարակշռված լինի:

Այդ իսկ պատճառով, մենք հավատում ենք, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը պետք է հավաքներ կազմակերպի այս հարցն ուսումնասիրելու նպատակով:

Գոյություն ունեն մի քանի արտահայտություններ, որոնք կիրառելի են ամուսնությունից դուրս սեռական հարաբերություններին, ինչն ընդհանրապես ընդունելի չէ: "Անհատներ և զույգեր" արտահայտության օգտագործումը և 8-րդ սկզբունքի բովանդակությունը դրա վառ օրինակն է: Մենք վերապահումներ ունենք բոլոր նմանատիպ հղումների վերաբերյալ սույն փաստաթղթում:

Մենք հավատում ենք, որ դեռահասների սեռական կրթությունը կարող է արդյունավետ լինել, եթե դրա համար կան նախատեսված համապատասխան նյութեր և եթե նմանատիպ կրթությունն ապահովվում է ծնողների կողմից և նպատակ ունի կանխարգելել բարոյահոգեբանական շեղումները:

Մալթայի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Վերապահումներ Գլուխ VII-ի վերաբերյալ

Միանալով համաձայնագրին՝ Մալթայի պատվիրակությունը հայտարարում է.

Մալթայի պատվիրակությունն իր վերապահ դիրքորոշումն է հայտնում սույն գլխի վերնագրի և բովանդակության վերաբերյալ, մասնավորապես, այնպիսի տերմինների և արտահայտությունների օգտագործման վերաբերյալ, ինչպիսիք են "վերարտադրողական առողջությունը", "Վերարտադրողական իրավունքները" և "ծնելիության կարգավորումը" այս գլխում և սույն փաստաթղթի այլ մասերում:

Մալթայի պատվիրակության կողմից տրված բացատրությունը համապատասխանում է ազգային օրենսդրությանը, որը ենթադրում է, որ հղիության արհեստական ընդհատումն անօրինական է:

Ավելին, Մալթայի պատվիրակությունը իր վերապահ դիրքորոշումն ունի 7.2 պարբերության վերաբերյալ, մասնավորապես, "մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի և Միավորված Ազգերի Կազմակերպության այլ համապատասխան փաստաթղթերի" հետ, որոնք համապատասխանում են դրա ընդունմանը կամ չընդունմանը:

Գլուխ VIII, պարբերություն 8.25-ի վերաբերյալ վերապահումներ

Միանալով համաձայնությանը՝ Մալթայի պատվիրակությունը հայտարարում է.

Հղիության արհեստական ընդհատումը, հրահրված աբորտի միջոցով, անօրինական է Մալթայում: Այդ իսկ պատճառով Մալթայի պատվիրակությունը չի կարող ընդունել պարբերություն 8.25-ի այդ մասն առանց վերապահումների, որի մեջ բերված են "դեպքեր, երբ հղիության արհեստական ընդհատումը չի հակասում օրենքին":

Մալթայի պատվիրակությունն իր վերապահ դիրքորոշուն է արտահայտում "հղիության նման արհեստական ընդհատումը պետք է անվտանգ լինի" արտահայտության կապակցությամբ, քանի որ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ դրան կարելի բազմաթիվ բացատրություններ տալ և որ հղիության արհեստական ընդհատումը կարող է զերծ լինել առողջապահական և հոգեբանական որևէ ռիսկերից՝ արհամարհելով պտղի իրավունքները:

Պերուի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր հայտարարությունը.

Պերուի պատվիրակությունը միանում է գործողությունների ծրագրի համաձայնությանը: Մեր կարծիքով այսօրվա բանակցությունները, որոնք հասել են իրենց կիզակետին, ցույց տվեցին, որ ծրագրի որոշակի գաղափարների վերաբերյալ դիրքորոշումները շեղվում են և որ միջազգային հանրությունը հստակորեն ցանկանում է համաձայնության գալ, որի արդյունքում, կարծում ենք, կշահեն բոլորը: Մենք ողջունում ենք համաձայնության գալու այս ձգտումը:

Այնուամենայնիվ, Պերուի կառավարությունը ցանկանում է հայտնել հետևյալը.

1. Գործողությունների ծրագրի հիմնական գծերը կիրականացվեն Պերուի սահմանադրության և օրենքների շրջանակներում և ընդհանուր առմամբ մարդու միջազգային իրավունքների և երեխայի իրավունքների կոնվենցիայի ներքո, որը հաստատվել և վավերացվել է Պերուի կողմից:

2. Այս կապակցությամբ մենք պետք է նշենք սահմանադրության 2-րդ հոդվածը, որը համապատասխանեցնում է յուրաքանչյուրի ապրելու իրավունքը բեղմնավորման պահից սկսած: Հղիության արհեստական ընդհատումը դասակարգվում է որպես հանցագործություն Պերուի քրեական օրենսգրքով, բացառությամբ թերապևտիկ աբորտը:

3. Հղիության արհեստական ընդհատումը Պերուն դիտարկում է որպես հասարակական առողջության հիմնախնդիր, որի դեմ պետք է պայքարել հիմնականում կրթական և ընտանիքի պլանավորման միջոցների օգնությամբ: Համապատասխանաբար երկրի սահմանադրությունը գիտակցում է ընտանիքի և ծնողների դերը պատասխանատու հայրության և մայրության գործում, որը ոչ այլ ինչ է, քան ծնողների իրավունքն ազատորեն ընտրելու երեխաների թիվը և նրանց միջև ընկած ժամանակը: Նույնը վերաբերվում է նրանց կողմից ընտրվող ընտանիքի պլանավորման մեթոդին, որը ենթադրում է, որ կյանքին որևէ վտանգ չի սպառնում:

4. Գործողությունների ծրագիրը այնպիսի գաղափարներ է պարունակում, ինչպիսիք են “վերարտադրողական առողջությունը”, “վերարտադրողական իրավունքները” և “ծնելիության կարգավորումը”, որը Պերուի կառավարության կարծիքով ավելի հստակ սահմանում է պահանջում՝ ընդհանրապես բացառելով հղիության արհեստական ընդհատումը, որը չի համապատասխանում ապրելու իրավունքին:

Մենք շատ երախտապարտ կլինենք, եթե գործողությունների ծրագրի սույն բացատրական վերապահումներն ամբողջությամբ տեղ գտնեն վերջնական զեկույցում:

Ի վերջո, մենք միանում ենք այլ պատվիրակությունների կողմից հնչեցված շնորհակալություններին և շնորհավորանքներին:

Նշումներ

1. Շրջակա միջավայրի և զարգացման միավորված ազգերի համաժողովի զեկույց, Ռիո դե Ժանեյրիո, հունիսի 3-14, 1992թ., հատոր I, համաժողովում ընդունված որոշումներ (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, վաճառք No. E.93.I.8), որոշում 1, հավելված II:

2. Պարբերություններ 1.3 և 1.4-ում բնակչության թվաքանակի աղբյուրն է՝ Համաշխարհային ազգաբնակչության հեռանկարներ. 1994թ. վերանայում (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն):

3. Տես՝ Միավորված ազգերի համաշխարհային ազգաբնակչության համաժողովի զեկույց, Բուխարեստ, օգոստոսի 19-30, 1974թ. (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, վաճառք No. E.75.XIII.3):

4. Տես՝ Ազգաբնակչության միջազգային համաժողովի զեկույց, Մեխիկո, օգոստոսի 6-14, 1984թ. (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, վաճառք No. E.84.XIII.8):

5. Տես՝ Կանանց տասնամյակի Միավորված ազգերի ձեռքբերումների և գնահատման վերանայման համաշխարհային համաժողովի զեկույց. հավասարություն, զարգացում և խաղաղություն, Նայրոբի, հուլիսի 15-26, 1985թ. (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, վաճառք No. E.85.IV.10):

6. Տես՝ Առաջին կանչ երեխաների համար (Նյու-Յորք, Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ, 1990թ.):

7. Տես՝ Շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության համաժողովի զեկույց, Ռիո դե Ժանեյրիո, հունիսի 3-14, 1992թ. (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, վաճառք No. E.93.I.8):

8. Տես՝ Սնուցման վերաբերյալ միջազգային համաժողովի վերջնական զեկույց, Հռոմ, դեկտեմբերի 5-11, 1992թ. (Հռոմ, Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, 1993թ):

9. Տես՝ Մարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային համաժողովի զեկույց, Վիեննա, հունիսի 14-25, 1993թ. (A/CONF.157/24 (Մաս I)):

10. Գլխավոր Ասամբլեայի որոշում 47/75:

11. Գլխավոր Ասամբլեայի որոշում 48/163:

12. Տես՝ զարգացող փոքր կղզի-նահանգների կայուն զարգացման գլոբալ համաժողովի զեկույց, Բրիջթաուն, Բարբադոս, ապրիլի 25-ից մայիսի 6-ը, 1994թ. (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, վաճառք No. 94.I.18):

13. Գլխավոր Ասամբլեայի որոշում 44/82:

14. Գլխավոր Ասամբլեայի որոշում 47/92:

15. Կանանց կարգավիճակի վերաբերյալ հանձնաժողովի որոշումներ 36/8 և 37/7 (տնտեսական և սոցիալական խորհրդի պաշտոնական փաստաթղթեր, 1992թ., լրացումներ No. 4 (E/1992/24), գլուխ I, բաժին C, 1993թ, լրացում No. 7 (E/1993/27), գլուխ I, բաժին C):

16. Գլխավոր Ասամբլեայի որոշում 45/199, հավելված:

17. Տես՝ ամենաթերզարգացած երկրների վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության համաժողովի զեկույց, Փարիզ, սեպտեմբերի 3-14, 1990թ. (A/CONF.147/18), մաս առաջին:

18. Գլխավոր Ասամբլեայի որոշում 46/151, հավելված, բաժին II.

19. Երեխաներ, դեռահասներ, կանայք, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, բնիկներ, գյուղական բնակչություն, քաղաքային բնակչություն, միգրանտներ, փախստականներ, տարհանված անձինք և ետնախորշերում բնակվողներ:

20. Անապահով աբորտը սահմանվում է որպես անցանկալի հղիության ընդհատում կամ անհրաժեշտ փորձառություն չունեցող անձի կողմից կամ այնպիսի միջավայրում, որտեղ բացակայում են նվազագույն չափորոշիչները կամ երկուսը միասին (հիմնվելով առողջապահության համաշխարհային կազմակերպության վրա, անապահով աբորտների կանխարգելում և կառավարում, տեխնիկական աշխատանքային խմբի զեկույց, Ժնև, Ապրիլ, 1992թ. (WHO/MSM/92.5)):

21. Անվտանգ մայրությունը դա մայրական և նորածնային օպտիմալ առողջություն է: Այն վերաբերվում է մայրական մահացության և հիվանդացության նվազեցմանը և նորածինների առողջության բարելավմանը առաջնային բուժօգնության ծառայությունների հասանելիության միջոցով, ներառյալ ընտանիքի պլանավորումը, նախածննդյան, ծննդաբերության և հետծննդյան խնամքը մոր և մանկան համար, և հիմնական մանկաբարձական և նեոնատալ խնամքի հասանելիությունը (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, առողջություն, բնակչություն և զարգացում, ԱՀԿ փաստաթուղթ, Ժնև, 1994թ. (WHO/FHE/94.1)):

22. Որը կարող է ներառել երեխաներին, դեռահասներին, կանանց, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, բնիկներին, գյուղական բնակչությանը, քաղաքային բնակչությանը, միգրանտներին, փախստականներին, տարհանված անձանց և ետնախորշերում բնակվողներին: